S. M. Ter. Martirosian.

1911.

36665

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՀՌՈՎՄԻ

ԿԱՄ

ՀԱՄԱՌՕՏՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ

ԱԻԾ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ
1960
ՆՈՐ - ՋՈՒՂԱ

ԳՐԱԴԱՐԱՆ



APPROBATION

Sur le témoignage compétent qui m'en a été donné, j'approuve le Catéchisme arménien du Père Joseph Khudaverdi, en tant qu'il est l'exacte traduction du Catéchisme de Sa Sainteté Pie X, imposé à la province romaine, et j'en permets l'impression.

† Fr. Lesné

Archevêque de Philippopoli et Délégué Apostolique de la Perse

Ourmiah le 31 Janvier 1907

ՎԱՒԵՐԱՑՈՒՄՆ

Հիմնուելով ինձ տրուած օրինաւոր վկայութեան վրայ՝ հաւանում ու թոյլ եմ տալիս, որ տպագրուի Յովսէփ Վ. Խիւտավէրտեանցի թարգմանած հայերէն Քրիստոնէականը, միայն թէ Պիոս Ժ. Սրբազան Քահանայապետից՝ Հռովմէական գաւառին հարկադրիչ Քրիստոնէականի ճշգրիտ թարգմանութիւնը լինի:

† ՓՐ. ԼԵՆԷ՝

Արքեպիսկոպոս Փիլիպպուպոլսի եւ Առաքելական Նուիրակ Պարսկաստանի

Ուրմիայ 31 Յունուարի 1907.

ԱԶԴԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Մանկանց Քրիստոնէական Վարդապետութիւնը Սովորեցնելու համար, կարելի է նրան բաժանել երկու դասակարգի կամ բաժանմունքի, առաջինին՝ համապատասխանում է *համառօտ Քրիստոնէականը*, որ այն մանկանց համար է որոշել, որոնք տակաւին առաջին Հաղորդութիւն չեն առել. երկրորդին՝ *ընդարձակ Քրիստոնէականը*, նրանց համար, որ արդէն սովորել են ինչ որ ուսուցանում են համառօտ Քրիստոնէականի մէջ: Սրանից առաջ դրուած կան մի քանի երես *նախնական ծանօթութիւններ Քրիստոնէական վարդապետութեան* վրայօք մատաղահաս մանկանց համար, որոնք՝ թէ տունը լինի եւ թէ մանկապարտէզների մէջ, սկսում են սովորել Հաւատքի սկզբնատարրերը:

Ընդարձակ Քրիստոնէականից յետոյ դրուած կան նաեւ *Եկեղեցու գլխաւոր տօնախմբութիւնների վրայօք տեղեկութիւններ* ու *կրօնի մի ամենահամառօտ պատմութիւն*, որպէս զի պակասաւոր չը լինի ինչ որ հարկաւոր է մանկանց կրօնական կրթութեանը:

ԱՌԱՒՕՏԵԱՆ ԱՂՕԹՔ

Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. Ամէն։

Երկրպագում եմ Քեզ Աստուած իմ, սիրում եմ Քեզ բոլոր սրտովս, շնորհակալ եմ Քեզանից ինձ ստեղծելուդ, քրիստոնեայ անելուդ և այս գիշեր պահելուդ համար։ Քեզ եմ նւիրում բոլոր գործերս ու խնդրում եմ, որ հեռու պահես ինձ այսօր մեղքից և ազատես ամեն չարից. ամէն։

ՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆ ՀԱՒԱՏՈՑ

Ես հաւատում եմ հաստատապէս՝ որովհետև Աստուած՝ անսխալ ճշմարտութիւն, այսպէս յայտնեց սուրբ կաթուղիկէ Եկեղեցուն ու Նրա միջոցով մեզ էլ է յայտնում թէ միայն մէկ Աստուած կայ և երեք աստուածային Իրարու հաւասար ու Միմեանցից զանազան Անձինք, որոնք կոչւում են Հայր, Որդի և Սուրբ Հոգի. և

թէ Որդին մարդ եղաւ Սուրբ Հոգու գործութեամբ ամենամաքուր կոյս Մարիամի որովայնում մարդկային մարմին ու Հոգի առնելով. և թէ մեզի համար խաչի վրայ մեռաւ, յարութիւն առաւ, երկինք ելաւ, ուսկից պիտի գայ աշխարհիս վերջը բոլոր կենդանիներին ու մեռելներին դատաստան անելու, բարիներին յաւիտենական արքայութիւն ու չարերին յաւիտենական դժոխք տալու։

Դարձեալ նոյն պատճառով հաւատում եմ այն ամեն բաներին, որոնց հաւատում ու սովորեցնում է նոյն Սուրբ Եկեղեցին։

ՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆ ՅՈՒՍՈՅ

Ո՛վ Աստուած իմ, որովհետև ամեն բանի կարող, անհուն բարի ու ողորմած ես, յոյս ունիմ որ՝ Տեառն մերոյ և Փրկչին Յիսուս Քրիստոսի չարչարանքների ու մահուան արդիւնքների համար,

ինձ կը տաս յաւիտենական կեանք, որին Դու՝ որ ամեն բանի մէջ հաւատարիմ ես, խոստացար տալու նրան, որ բարեպաշտ քրիստոնէի պէս ապրի, ինչպէս որ ես առաջադրում եմ այսուհետև ապրելու քո սուրբ օգնութեամբդ։

ՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆ ՍԻՐՈՅ

Ո՛վ Աստուած իմ, որովհետև Դու գերագոյն ու կատարեալ բարի ես, սիրում եմ Քեզ բոլոր սրտով և ամեն բանից վեր, և պատրաստ եմ ամեն բան կորցնելու քան թէ Քեզ վշտացնելու և Քո սիրոյդ համար էլ սիրում և ուզում եմ սիրել ընկերոջս իմ անձիս պէս։

ՏԷՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՕԹՔ

Հայր մեր՝ որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն Քո. եկեսցէ արքայութիւն Քո. եղիցին կամք Քո որպէս յերկինս և յերկրի։ Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր. և թո՛ղ մեզ զպարտիս մեր որպէս և

մեք թողումք մերոց պարտապանաց, և մի տանիր զմեզ ի փորձութիւն. այլ փրկեա ի չարէ։ Զի Քո է արքայութիւն, և զօրութիւն և փառք յաւիտեանս. ամէն։

ՈՂՋՈՒՆԱՏՐՈՒԹԻՒՆ ՀՐԵՇՏԱԿԱՑԻՆ

Ողջոյն քեզ, Մարիամ, լի շնորհօք, Տէր ընդ Քեզ. օրհնեալ ես Դու ի կանայս, և օրհնեալ է պտուղ որովայնի Քոյ՝ Յիսուս։ Սրբուհի Մարիամ, մայր Աստուծոյ, բարեխօսեա վասն մեր մեղաւորացս այժմ և ի ժամու մահուան մերոյ. ամէն։

ՀԱՆԳԱՆԱԿ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ

Հաւատամ ի մի Աստուած՝ Հայրն ամենակալ յԱրարիչն երկնի և երկրի։ Եւ ի մի տէր մեր՝ Յիսուս Քրիստոս, յՈրդի Նորա միածին, որ յղացաւ ի Հոգւոյն Սրբոյ, ծնաւ 'ի Մարիամայ Կուսէն, չարչարեցաւ ընդ Պոնտացւով Պիղատոսիւ, խաչեցաւ, մեռաւ և թաղե-

ցաւ, էջ ի դժոխս, յերրորդ աւուր յարեաւ ի մեռելոց, համբարձաւ յերկինս, նստաւ ընդ աջմէ Աստուծոյ Հօր ամենակալի, ուստի գալոց է ի դատել զկենդանիս և զմեռեալս։ Հաւատամ ի Սուրբ Հոգին, ի սուրբ կաթուղիկէ Եկեղեցի, ի հաղորդութիւն սրբոց, ի թողութիւն մեղաց, ի յարութիւն մարմնոց ի կեանս յաւիտենականս. ամէն։

Մտաբերենք Աստծու և Եկեղեցու պատուիրանները, խնդրելով շնորհք նրանց լաւ պահելու համար։

ԵՍ ԵՄ ՏԷՐ ԱՍՏՈՒԱԾ ՔՈ

1. Մի ունիցիս զայլ Աստուած առաջի իմ.
2. Մի առնուցուս զանուն Աստուծոյ քո ընդունայն
3. Յիշեա զօր շաբաթուն սրբել զնա. այսինքն զԿիւրակէս
4. Պատուեա զհայր քո և զմայր.

5. Մի՛ սպանաներ.
6. Մի՛ շնար.
7. Մի՛ գողանար.
8. Մի՛ սուտ վկայեր զընկերէ քումմէ.
9. Մի՛ ցանկար կնոջ ընկերի քո,
10 Մի՛ ցանկար ամենայնի՝ որ նորա է։

---

1. Յաւուրս Կիւրակէից և տօնից տեսանել զպատարագ.
2. Պահել զպահս և ծոմապահս հրամայեալս.
3. Ի տարւոջ գոնէ մի անգամ խոստովանիլ.
4. Հաղորդիլ գոնէ ի տարւոջ մի անգամ, այսինքն ի Զատկի յարութեան Տեառն
5. Տալ զտասանորդս ընչից։

ՕԳՆՈՒԹԵԱՆ ԿԱՆՉԸՆՔ ՍՈՒՐԲ ԿՈՒՍԻՆ ՄԵՐ ՊԱՀԱՊԱՆ ՀՐԵՇՏԱԿԻՆ ՈՒ ՄԵՐ ՊԱՇՏՊԱՆ ՍՐԲԻՆ

Ամենասուրբ Կոյս, Մայր Յիսուսի, և ամենազօր բարեխօսդ իմ. ես ինձ Քո

մայրենի պաշտպանութեանդ եմ յանձնում։ Ո՛վ ամենասիրելի Մայր. եղիր իմ ապաւէնս՝ ամեն կարօտութիւններիս մէջ, իմ մխիթարութիւնս՝ ամեն վշտերիս մէջ և իմ միջնորդն՝ ամենօրհնեալ Որդուդ մօտ այս օր, կեանքիս ամեն օրերում, և մանաւանդ մահուանս ժամին։

Ո՛վ պահապան Սուրբ Հրեշտակ, սիրելի առաջնորդդ իմ, ընդունիր ինձ համար Աստծուց շնորհք՝ քո փրկարար ազդեցութիւններից հնազանդելու և իմ քայլերս այնպէս ուղղելու, որ Աստծու պատուիրանների շաւիղից ամենևին չը շեղիմ։

Ո՛վ փառաւորեալ Պաշտպան Սուրբ, որի անունն եմ կրում, պաշտպանիր ինձ և բարեխօսիր ինձ համար. որպէս զի կարենամ քեզի պէս աշխարհիս վրայ Աստծուն ծառայել և յաւիտեանս քեզի հետ Իրան երկինքը փառաւորել. ամէն։

ՀՐԵՇՏԱԿ ՏԵԱՌՆ

Հրեշտակ Տեառն աւետեաց կուսին Մարիամու—և յղացաւ ի Հոգւոյն Սրբոյ։ Ողջոյն քեզ Մարիամ. . . .

Ահաւասիկ կամ աղախին Տեառն—եղիցի ինձ ըստ բանի քում։ Ողջոյն քեզ, Մարիամ. . .

Եւ Բանն մարմին եղև—և բնակեաց ի մեզ։ Ողջոյն քեզ, Մարիամ . . .

Աղաչեա վասն մեր սուրբ Աստուածածին—զի արժանի լիցուք խոստմանցն Քրիստոսի։

Զշնորհս քո՛ աղաչեմք Տէր, հեղ ի միտս մեր զի որ աւետեօք Հրեշտակին Քրիստոսի Որդւոյ քոյ զմարդեղութիւնն ծանեաք, ի ձեռն չարչարանաց և խաչի նորա ժամանեսցուք ի փառս յարութեան, Տերամբ մերով Յիսուսիւ Քրիստոսիւ. ամէն։

ՄԱՂԹԱՆՔ
ՅԻՍՈՒՍԻ ՍՈՒՐԲ ԱՆՈՒԱՆ

Տէր ողորմեա,

Քրիստոս ողորմեա,
Տէր ողորմեա,
Յիսուս լուր մեզ,
Յիսուս անսա մեզ,
Հայր երկնաւոր Աստուած,
Որդի Փրկիչ աշխարհի Աստուած,
Հոգիդ սուրբ Աստուած,
Սուրբ Երրորդութիւն մի Աստուած,
Յիսուս Որդի Աստուծոյ կենդանւոյ,
Յիսուս լոյս փառաց Հօր,
Յիսուս պայծառութիւն յաւիտենական լուսոյ
Յիսուս Թագաւոր փառաց,
Յիսուս արեգակն արդարութեան,
Յիսուս Որդի Կուսին Մարիամու,
Յիսուս սիրելի,
Յիսուս զարմանալի,
Յիսուս Աստուած հզօր,
Յիսուս Հայր հանդերձելոյ աշխարհին,
Յիսուս Հրեշտակ մեծի խորհրդոյ,
Յիսուս ամենակարող,

(ողորմեա մեզ)

Յիսուս ամենահամբեր,
Յիսուս ամենահնազանդ,
Յիսուս հեզ և խոնարհ սրտիւ,
Յիսուս սիրող ողջախոհութեան,
Յիսուս որ սիրես զմեզ,
Յիսուս Աստուած խաղաղութեան,
Յիսուս Տէր կենաց,
Յիսուս տիպար առաքինութեանց,
Յիսուս նախանձասէր հոգւոց,
Յիսուս Աստուած մեր,
Յիսուս ապաստան մեր,
Յիսուս հայր աղքատաց,
Յիսուս գանձ հաւատացելոց,
Յիսուս հովիւ բարի,
Յիսուս լոյս ճշմարիտ,
Յիսուս յաւիտենական ճշմարտու-
թիւն,
Յիսուս անսահման բարութիւն,
Յիսուս ճանապարհ մեր և կեանք,
Յիսուս ուրախութիւն հրեշտակաց,
Յիսուս թագաւոր նահապետաց,
Յիսուս ուսուցիչ առաքելոց

ողորմեա՛ մեզ

36665

Յիսուս վարդապետ աւետարանչաց
Յիսուս զօրութիւն մարտիրոսաց,
Յիսուս լոյս խոստովանողաց,
Յիսուս մաքրութիւն կուսանաց,
Յիսուս պսակ ամենայն սրբոց,

ողորմեա՛ մեզ

Քաւիչ մեր Յիսուս խնայեա՛ 'ի մեզ։
Քաւիչ մեր Յիսուս անսա՛ մեզ։

Յամենայն չարէ,
Յամենայն մեղաց,
Ի բարկութենէ քումմէ,
Ի դաւաճանութենէ դիւին,
Ի յոգւոյ պոռնկութեան,
Ի յաւիտենական մահուանէ,
Յանփոյթ առնելոյ զշնորհաց քոց
Վասն խորհրդոյ սուրբ մարդեղու-
թեան Քո,
Վասն ծննդեան Քո,
Վասն մանկութեան Քո,
Վասն աստուածային կենաց Քոց,
Վասն աշխատանաց Քոց,
Վասն տագնապելոյ և չարչարա-
նաց Քոց,

ազատեա՛ զմեզ Յիսուս

Վասն խաչի և լքման Քո,
Վասն նուաղման Քո,
Վասն մահուան և թաղման Քո,
Վասն յարութեան Քո,
Վասն համբարձման Քո,
Վասն ուրախութեան Քո,
Վասն փառաց Քոց,
Գառն Աստուծոյ, որ բառնաս զմե-
ղըս աշխարհի, խնայեա՛ ՚ի մեզ Տէր։
Գառն Աստուծոյ, որ բառնաս զմե-
ղըս աշխարհի, անսա՛ մեզ Տէր։
Գառն Աստուծոյ, որ բառնաս զմե-
ղըս աշխարհիս, ողորմեա՛ մեզ։
Յիսուս լո՛ւր մեզ։
Յիսուս անսա՛ մեզ։

Ողորմեա՛ Տէր Յիսուս

ԱՂՕԹՔ

Տէր Յիսուս Քրիստոս, որ ասացեր՝ հայցեցէք և ընկալջիք, խնդրեցէք և գտջիք, բախեցէք և բացցի ձեզ. լո՛ւր հայցուածս, աղաչեմք, զաստուածային սէր Քո, զի սիրեսցուք զՔեզ բոլորով

սրտիւ և անդադար փառաւորեսցուք ըզ-Քեզ բանիւ և արդեամբ, որ կենդանի ես և թագաւորես յաւիտեանս. ամէն։ Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. ամէն։

ԵՐԵԿՈՅԵԱՆ ԱՂՕԹՔ

Ով Աստուած իմ, երկրպագում ու սիրում եմ Քեզ բոլոր սրտովս, շնորհակալ եմ Քեզանից ինձ ստեղծելուդ, քրիստոնեայ անելուդ, և այս օրս պահելուդ համար։ Քեզ եմ նւիրում ինչ բարիք որ գործեցի, և խնդրում եմ որ, ազատես ինձ ամեն չարից։

Աղաչում եմ, Տէր, օրւանս ընթացքում ինձ արած շնորքներին պսակը՝ առաքելով սուրբ Հոգուն, որ միտքս լուսաւորէ և ճանաչեցնէ ինձ այսօր գործած մեղքերս, որպէս զի նրանց վրայ զղջալով արժանի լինիմ թողութիւն գտնել անսահման բարութիւնիցդ. ամէն։

Քննիր քեզ, եթէ՝

Աղօթքդ եռանդեամբ ու մտադրութեամբ արիր—հայհոյեցիր—Կիրակի ու տօն օրերը պատարագից զրկեցար քո յանցանքովդ—այս օրերը առանց հարկաւորութեան աշխատեցար—ծընողներիդ, մեծաւորներիդ հնազանդեցար—յարգեցիր նրանց—ուրիշին չարութեամբ ծեծեցիր, կռւոց տուիր—գայթակղութիւն տուիր, անպարկեշտ բաների վրայ նայւածք նետեցիր—անհամեստ խօսակցութիւն, գործեր արիր—վատ բաների վրայ հաճոյքով մտածեցիր —չար բաղձանքներին հաւանեցար—լկտի երգեր երգեցիր—չար գըրքեր կարդացիր—գողութիւն արիր—սուտ խօսեցար—ուրիշի անունը կոտրեցիր—չարիքը կամեցար—անվաւեր խոստովանութիւն արիր—արգիլւած օրերը պահքդ չարութեամբ կերար—հպարտացար—ագահութիւն արիր—նախանձեցար—որկրամոլութիւն արիր

—ծոյլ գտնւեցար·

ՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆ ԶՂՋՄԱՆ

Ո՛վ Աստւած իմ, որովհետև Դու անհուն բարի ես, Քեզ ամէն բանից վեր եմ սիրում, զղջում ու ցաւում եմ բոլոր սրտով Քեզ վշտացնելուս համար ու հաստատապէս առաջադրում եմ քո սուրբ օգնութեամբդ, այլ ևս մեղք չը գործելու, ու մասնաւորապէս մեղքի առիթներից փախչելու։

ՄԵՋ ՑԱՆՁՆԵՆՔ ԱՍՏԾՈՒՆ, ՍՈՒՐԲ ԿՈՒՍԻՆ, ՄԵՐ ՊԱՀԱՊԱՆ ՀՐԵՇՏԱԿԻՆ ՈՒ ՊԱՇՏՊԱՆ ՍՐԲԻՆ

Այցելիր, Տէր, մեր բնակարանին ու հեռացրու նրանից թշնամու ամէն դարանները, թող քո սուրբ հրեշտակները այստեղ բնակւեն՝ մեզ խաղաղութեան մէջ պահելու համար, ու քո սուրբ օրհնութիւնդ միշտ մեր վրայ լինի Տէրըն մեր Յիսուս Քրիստոսով։

Քո պաշտպանութեան հովանաւորու-

թեանն ենք ապաւինում, սուրբ Աստուածածին մի մերժիր մեր աղաչանքները մեր կարօտութիւնների մէջ, այլ փրկիր մեզ ամեն վտանգից, ո՜վ փառաւորեալ և օրհնեալ սուրբ Կոյս։

Ո՛վ Աստծու հրեշտակ՝ որ իմ պահապանն ես, լուսաւորիր, ուղղիր, պահպանիր ու կառավարիր ինձ՝ որ վերնական գթութեամբ քեզ եմ յանձնուել։

Եւ դու, ով իմ պաշտպան սուրբս, խնամիր և յանձնիր ինձ Աստծուն որ այս գիշեր պահէ հոգիս ու մարմինս թշնամու որոգայթներից որպէս զի առանց մեղքի անցնելով կարենամ դարձեալ փառաւորել Աստծուն. ամէն։

ԱՂՕԹԵՆՔ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՈՒ ՆՆՋԵՑԵԱԼՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Օրհնիր, Տէր, ծնողներիս, ազգականներիս, բարերարներիս, հոգևոր ու մարմնաւոր մեծաւորներիս, թշնամիներիս։ Օգնիր աղքատներին, ազատութիւն շնորհիր բանտարկեալներին, մխիթարութիւն՝ վշտացեալներին, նաւահանգիստ՝ նաւորդներին, առողջութիւն՝ հիւանդներին ու բարի մահ՝ հոգեվարքներին։ Դարձրու, Տէր, մոլորեալներին, լուսաւորիր անհաւատներին։

Աստուած բարութեան ու ողորմութեան, գթա՛ քաւարանի անճար հոգիներին, վերջ տո՛ւր նրանց տանջանքներին, հանգիստ ու յաւիտենական լոյս պարգևիր նրանց՝ որոնց համար պարտաւոր եմ աղօթելու։

ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ԿՈՒՍԻ ԼԻԹԱՆԻԱՆ

Տէր ողորմեա՛,
Քրիստոս ողորմեա՛,
Տէր ողորմեա՛,
Քրիստոս լո՛ւր մեզ,
Քրիստոս անսա՛ մեզ,
Հայր երկնաւոր Աստուած,
Որդի փրկիչ աշխարհի Աստուած,
Հոգիդ սուրբ Աստուած,
Սուրբ Երրորդութիւն մի Աստուած,
ողորմեա՛ մեզ

Սրբուհի Մարիամ,
Սուրբ Աստուածածին,
Սուրբ Կոյս կուսանաց,
Մայր Քրիստոսի,
Մայր աստուածային շնորհաց,
Մայր մաքուր,
Մայր սուրբ,
Մայր անարատ,
Մայր անբիծ,
Մայր սիրելի,
Մայր սքանչելի,
Մայր բարի խորհրդոյ,
Մայր Արարչին,
Մայր Փրկչին,
Կոյս իմաստուն,
Կոյս յարգոյ,
Կոյս քարոզելի,
Կոյս հզօր,
Կոյս գթած,
Կոյս հաւատարիմ,
Հայելի արդարութեան,
Աթոռ իմաստութեան,

(աղօթէ՛ վասն մեր)

Պատճառ մերոյ խնդութեան,
Անօթ հոգեւորական,
Անօթ պատուելի,
Անօթ ընտիր աստուածպաշտու-
թեան,
Վարդ խորհրդական,
Աշտարակ դաւթեան,
Աշտարակ փղոսկրեայ,
Տուն ոսկեղէն,
Տապանակ ուխտի,
Դուռն երկնից,
Աստղ առաւօտեան,
Առողջութիւն հիւանդաց,
Ապաստան մեղաւորաց,
Մխիթարիչ վշտացելոց,
Օգնական քրիստոնէից,
Թագուհի հրեշտակաց,
Թագուհի նահապետաց,
Թագուհի մարգարէից,
Թագուհի առաքելոց,
Թագուհի մարտիրոսաց,
Թագուհի խոստովանողաց,

(աղօթէ՛ վասն մեր)

Թագուհի կուսանաց,
Թագուհի ամենայն սրբոց,
Թագուհի առանց սկզբնական ա-
  բատոյ յղացեալ,
Թագուհի ամենասուրբ վարդարա-
  նի,
(աղօթէ վասն մեր)

Գառն Աստուծոյ որ բառնաս զմե-
ղս աշխարհի, խնայեա՛ ի մեզ Տէր։
Գառն Աստուծոյ որ բառնաս զմե-
ղս աշխարհի, անսա՛ մեզ Տէր։
Գառն Աստուծոյ որ բառնաս զմե-
ղս աշխարհի, ողորմեա՛ մեզ
Աղօթեա՛ վասն մեր, սուրբ Աստը-
ւածածին զի արժանի լիցուք խոստ-
մանցն Քրիստոսի։

Ա Ղ Օ Թ Ք

Աստուած անճառելի ողորմութեան, որ ոչ միայն մարդ, այլ և որդի մարդոյ լինել հաճեցար. և ծնանելով ի կուսէ՝ զմայր ի յերկրի ստացար որ զԱստըւած ունէիր Հայր ի յերկինս. տուր մեզ

աղաչեմք գլխաւորակ նորա յօժարութեամբ կատարել. զմայրութիւն նորա գերագոյն յարգանօք պատուել, գերազանցագոյն վսեմութեան նորա զմեզ խոնարհութեամբ հպատակել, որ զՔեզ Հոգւով սրբով յղացաւ, զՔեզ կուսութեամբ ծնաւ, և զՔեզ ի յերկրի ինքեան հնազանդ կալաւ զՏէրդ մեր Յիսուս Քրիստոս։ Որ կենդանի ես և թագաւորես ընդ Հօր և ընդ սրբոյ Հոգւոյն յաւիտեանս. ամէն։

ՊԱՂԱՏԱՆՔ ԱՌ ՏԻՐԱՄԱՅՐՆ ՄԱՐԻԱՄ

Միտբդ բեր, ով գթած Կոյս Մարիամ Աստւածածին. որ ամենևին լսած չէ թէ մէկը քո պաշտպանութեանդ ապաւինած, Քեզ օգնութեան կանչած ու Քո խնամքիդ իրան յանձնած լինի. Դու նրանից երեսդ դարձրած լինիս։ Ես էլ նոյն յուսով զօրացած Քեզ եմ գալիս ու դիմում, քո առջևդ եմ լալիս ու ողբում, ով Կոյսերի Կոյս քաղցր Մայր,

Բանին Աստծու Մայր, իմ այս խօսքերից երես մի դարձնիր, այլ սիրով մըտիկ արա և ընդունիր աղաչանքներս։

Յիսուս, Մարիամ, Յովսէփ, ձեզ
եմ տալիս սիրտս ու հոգիս.
Յիսուս, Մարիամ, Յովսէփ, ինձ
հետ եղեք հոգեվարքիս.
Յիսուս, Մարիամ, Յովսէփ, ձեր
ձեռք տամ խաղաղ՝ հոգիս։
Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն
Սրբոյ. Ամէն։

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԵԱՆ

Խղճի քննութիւնից առաջ

Ո՛վ ամենասիրելի Փրկիչդ իմ, տո՛ւր ինձ շնորհքդ որ կարենամ՝ հոգուս փըրկութեան ու Քո փառքի համար, ապաշխարութեան խորհրդին արժանապէս մերձենալու։

Ո՛վ ամենասուրբ Կոյս՝ Յիսուսի և իմ Մայր, ընդունիր ինձ համար Քո օրհնեալ Որդուցդ բոլոր մեղքերս ճանաչելու, ատելու և անկեղծաբար խոստովանելու շնորհքը։

ԽՂՃԻ ԼԱՒ ՔՆՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄԻ ՔԱՆԻ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

1. Խիղճը քննելուց առաջ. Միտքը ամփոփել, մտադրութեամբ ու ջերմեռանդութեամբ Աստծու օգնութիւնը խնդրել՝ վերը դրուած աղօթքն ասելով, մեր մեղքերը ճանաչելու ու նրանց վրայ ճշմարտապէս զղջալու համար։
2. Խիղճը քննելիս. Փութով փնտռել թէ ինչ մեղքեր ենք գործել—արդեօք նիւթը ծանր էր կամ թեթև—կատարեալ հաւանութեամբ գործեցինք թէ անկատար—քանի՞ անգամ նրանց մէջ ընկանք—արդեօք տեղի ունեցան այնպիսի պարագաներ որ կարող էին մեղքի տեսակը փոխել խոստովանութեան մէջ յայտնե-

լու համար։

ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԵԱՆ ԿԵՐՊԸ

Գնա, չոքիր քահանայի առաջ. խաչակնքիր քեզ և յետոյ ասա

Խոստովանիմ առաջի Աստուծոյ ամենակարողի և երանուհի Մարիամու միշտ կուսին, երանելի Միքայէլի հրեշտակապետին, երանելի Յովհաննու Մկրտչին, սրբոց առաքելոցն Պետրոսի և Պօղոսի և սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին և ամենայն սրբոց և առաջի քո, հայր սուրբ. քանզի մեղայ յոյժ խորհրդով բանիւ և գործով. վա՜յ ինձ, վա՜յ ինձ և յաւէտ վա՜յ ինձ։

Ասա թէ՝

Որչափ ժամանակից է, որ չես խոստովանել

Ընդունել ես արձակումն թէ ոչ,

Եթէ ապաշխարանքդ կատարել ես,

Եթէ անցած խոստովանութեանդ մէջ մոռացել կամ չես ասել մի մեղք։

ՔՆՆՈՒԹԻՒՆ ԽՂՃԻ ԱՍՏԾՈՒ ՊԱՏՈՒԻՐԱՆՆԵՐԻ ՎՐԱՅ

Ա. Ես եմ Տէր Աստուած քո, մի ունիցիս զայլ աստուած առաջի իմ։

Ասա եթէ՝ 1. աղօթքդ չես արել (որչափ ժամանակից ի վեր). 2. նրա մէջ կամաւոր մտքի ցնդումներ ունեցել ես. 3. հաւատքի ճշմարտութիւններին վրայ երկմտել ես. 4. քրիստոնեայ կամ ուղղափառ լինելուդ վրայ ամաչել ես. 5. կախարդութիւններին, հըմայութիւններին մտիկ արել ես, 6. կախարդական կամ հաւատքի դէմ գրքեր պահել, կարդացել ես. 7. երազներին և ուրիշ աւելորդապաշտութիւններին հաւատացել ես։

Բ. Մի առնուցուս զանուն Աստուծոյ քո ընդունայն

1. պարապ, սուտ, չար բաների համար երդում արել ես. 2. Աստծու անունն առանց յարգանքի յիշել ես.

3. Հայհոյել ես, Աստծու դէմ տրտընջացել ես. 4. արած ուխտերդ կատարել ես. 5. անիծել ու չարամաղթել ես (սրտով թէ միայն լեզւով)։

Գ. *Յիշեա զօր շաբաթուն սրբել զնա, այսինքն զԿիւրակէս*

1. Կիւրակի ու տօն օրերը պատարագ տեսել ես, պատարագին ուշ հասել ես, կամ լաւ չես տեսել. եկեղեցու մէջ խօսել, ծիծաղել, անպարկեշտ ես եղել. 2. առանց հարկաւորութեան կամովին աշխատել, ուրիշին էլ աշխատացրել ես։

Դ. *Պատուեա զհայր քո եւ զմայր*

1. ծնողներիդ, մեծաւորներիդ, վարժապետներիդ, յարգել ես—նրանց պատասխան դարձրել—նախատական խօսքեր ասել—ծաղրել, պակասութիւնները յայտնել—կամեցել ես ծեծել—նրանց մահւան ցանկացել ես—բարկացրել ու սիրտը կոտրել ես—նրանց հնազանդել ես (ինչքանի մէջ).

Ե. *Մի սպանաներ*

1. Ուրիշին չարութեամբ ծեծել, վիրաւորել, սպանել ես, անձամբ կամ ուրիշի ձեռքով. 2. անարգել, նախատական խօսքեր ասել ես. 3. մէկին ատել, նրա դէմ ոխ պահել, ու նրանից վրէժ առել ես. 4. ուրիշին գայթակղեցրել ես՝ խօսքով կամ գործով մեղքի մէջ ձգելով. 5. խռովութիւն ու թշնամութիւն սերմանել ես. 6. օգնել ես մէկին որ չարգործէ.

Զ. *Մի շնար.* Թ. *Մի ցանկար կնոջ ընկերի քո*

1. Կամովին աղտեղի մտածմունքների մէջ կեցել ես, հաւանել ես նրանց. 2. անհամեստ գործելու ցանկացել ես. 3. Կամովին չար ակնարկներ նետել ես անվայել բաների վրայ. 4. անհամեստ խօսքեր, պատմութիւններ, երգեր, ասել կամ հաճոյքով լսել ես. 5. անվայել ինչ արել

ես, անձիդ պատիւը չես պահել, ապօրինաւոր կատակներ արել ես. 6. անմեղներին չար բան սովորեցրել ես, կամ ուրիշի անկման պատճառ եղել ես.

Է. *Մի գողանար.* Ժ. *Մի ցանկար ամենայնի՝ որ նորա է։*

1. Գողութիւն արել ես (ասա՛ եթէ ծանր էր նիւթը կամ թեթեւ) ծնողներիցդ, ուրիշից, գողացած բանըն յետ չես դարձրել. 2. փափագ ունեցել ես գողանալու. 3. առուտուրի մէջ խաբէութիւն արել ես. 4. գտած բանը տիրոջը չես դարձրել. 5. կեղծ ստակ կամաւ գործածել ես. 6. գողութեան կամ ուրիշին վնասելու՝ մասնակցել ես օգնելով, յորդորելով.

Ը. *Մի սուտ վկայեր զընկերէ քումմէ։*

1. Սուտ ասել ես ուրիշին վնասելու համար. 2. սուտ վկայութիւն տուել ես. 3. ընկերոջդ լաւ անունը կոտրել ես, նրա պակասութիւնները

առանց հարկաւորութեան յայտնել ես. 4. ընկերոջդ բամբասել, զրպարտել ես. 5. ընկերոջդ վրայ եղած բամբասանքին հաճոյքով ականջ կախել ես. 6. ուրիշի գաղտնիքը յայտնել ես։

ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՈՒԻՐԱՆՆԵՐԸ

Բ. *Պահել զպասս եւ ծոմապահս հրամայեալս*

1. Պահքը կերել ես. (առանց հարկաւորութեան, տնօրինութեան խնդրելու), 2. ուրիշին պատճառ եղել ես որ պահքն ուտէ.

Դ. *Ի տարւոջ գոնէ մի անգամ խոստովանիլ*

1. Տարին անց կացրել ես առանց և ոչ իսկ մի անգամ խոստովանելու. 2. անվաւեր խոստովանել ես մահուչափ մեղք պահելուդ, առաջադրութիւն չանելուդ, զղջում չունենալուդ համար. 3. ուրիշին պատճառ եղել ես որ խոստովանութեան մէջ մեղք

պահէ ասելով թէ մեղք չէ.

Դ. Հաղորդիլ ի տարւոջ գոնէ մի անգամ, այսինքն ի Զատկի յարութեան Տեառն

1. Զատկական հաղորդուելու պարտքդ չես կատարել. 2. մահու չափ մեղքով ընդունել ես ամենասուրբ Հաղորդութիւնը։ 3. Պատճառ եղել ես որ ուրիշներն էլ Սրբութիւն չառնեն այս օրերը.

ԵՕԹԸ ՄԱՀՈՒՉԱՓ ՄԵՂՔԵՐԻ ՎՐԱՑ

Ա. Հպարտութիւն

1. Շատ սիրել ես որ քեզ գովեն, ուրիշներից վերադասեն. 2. քեզ գովել ես, ուռել ես հագուստներիդ, ձիրքերիդ, ազնուութեանդ համար. 3. ուրիշներին վար զարկել ես. 4. քեզանից մեծին երեսը կեցել, և չես ուզեցել ուրիշների խրատներին մտիկ անել. 5. տրտմել ես երբ քեզ բանի տեղ չեն դրել, չեն գովել կամ

մոռացել են. 6. քեզի հաւանել ես.

Բ. Ագահութիւն

1. Կարծրասիրտ ես եղել ուրիշների նկատմամբ. 2. սիրտդ շատ կապել ես աշխարհային բաներին. 3. անողոք ես եղել աղքատների ձայնին.

Գ. Նախանձ

1. Նախանձել ես ուրիշների ունեցած ձիրքերի կամ ստացուածքի վրայ, 2. տրտմել ես նրանց բարիքի և ուրախացել ես նրանց վնասի վրայ.

Դ. Բարկութիւն

1. Բարկացել ես. անհամբեր ես եղել. 2. այնպէս սաստիկ վրդովել ես որ արածդ չես իմացել. 3. ուրիշի հետ խռովել ես. 4. ուրիշներին բարկացրել ես, կռուել ես. 4. քէն պահել ես, բարկութիւնդ հանել ես. բարկացրել ես.

Ե. Ծուլութիւն

1. Անփոյթ գտնուել ես քրիստոնէական պարտքերդ սովորելու. 2. ժա-

մանակդ պտրապ անց կացրել եմ.

3. Ծուլութիւն արել եմ աղօթելու, եկեղեցի գնալու համար.

Զ. Որկրամոլութիւն

1. չափից դուրս կերել կամ այնչափ խմել եմ որ խելքդ կորցած լինիս
2. շատ շտապով, անյագաբար, սաստիկ ախորժակով, դողդողացել եմ ուտել խմելու համար.

Է. Բղջախոհութիւն

Եթէ ամօթալի մտքերով հեշտացել եմ ինչ կերպով որ լինի մտքով, խօսքով, գործով։

ԽԻՂՃԸ ՔՆՆԵԼՈՒՑ ԵՏՈՅ

Պետք է մտածել մեղքի չարութեան վրայ, այսինքն՝ թէ վշտացրել ու անհաճութիւն եմ պատճառել Աստծուն որ անսահման բարի է ու կատարեալ և այնչափ բարիքներ է արել ինձ— պատճառ եմ եղել Յիսուս Քրիստոսի չարչարանքներին ու մահուան—կորցրել եմ Աստծու շնորհքը, արքայութիւնը և արժանացել եմ դժոխքի յաւիտենական ու քաւարանի ժամանակաւոր տանջանքներին։

ՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆ ԶՂՋՄԱՆ

Ողորմիր ինձ, ով արիւնաթաթախ խաչելեալդ իմ Յիսուս, զղջում եմ Քեզ իմ մեղքերով վշտացնելուս համար ցաւում եմ, որովհետև կորցրի Քո շնորհքըդ ու արքայութիւնը, և արժանացայ դժոխքի յաւիտենական տանջանքներին։ Ո՜հ, ինչ կը լինէր իմ հոգուս, եթէ արդարութեամբդ վարուէիր իմ հետ։

Բայց ամենից աւելի Նրա համար եմ խորշում մեղքերիցս, որովհետև անարգեցի Քեզ՝ իմ Ստեղծողիս, Հօրս, Փրկչիս և անչափ բարի և անսահման սիրելի Աստծուս։ Ո՜հ ամբերջանիկ օրեր, որ այնպէս չարաչար անցկացրի Տիրոջս վշտացնելու և իմ հոգիս կորցնելու համար։ Երանի թէ մեռած լինէի քանի որ շնորհքի մէջ էի գտնւում, քան

թէ այնպիսի մեծ չարիք գործէի։ Բայց հիմայ վստահանալով Քո օգնութեանդ վրայ՝ առաջադրում եմ էլ Քեզ չը վշտացնելու և մեղքի ամեն առիթներից փախչելու։

ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆԻՑ ՅԵՏՈՅ

Նախ եւ առաջ շնորհակալ եղիր Աստծուց՝ մեղքերդ թողնելով քեզ արած մեծ բարերարութեան փոխարէն. շուտով կատարիր խոստովանահոր դրած ապաշխարանքը, կրկին առաջադրիր փախչելու մեղքից ու նրա առիթներից:

Յետոյ ասա այս աղօթքը

Որչափ բարի գտնւեցար իմ նկատմամբս, ո՜վ Տէր իմ, Փոխանակ ինձ պատժելու այնչափ գործած մեղքերիս պատճառով, այս սուրբ խոստովանութեան մէջ՝ Քո անհուն ողորմութեամբդ՝ բոլորին էլ ներեցիր. Վերստին բոլոր սրտով զղջում եմ ու խոստա-

նում, որ Քո սուրբ շնորհքովդ էլ Քեզ չը վշտացնեմ, և Քեզի պատճառած տհաճութիւններիս սիրով փոխարէնն անեմ։

Ո՛վ ամենասուրբ Կոյս, երկնքի Հրեշտակներ ու Սրբեր, շնորհակալ եմ Ձեզանից ինձ օգնելուդ համար, Դուք էլ իմ փոխարէն շնորհակալութիւն մատուցէ՛ք Աստծուն՝ Իւր ինձ արած ողորմութեան համար, և ընդունեցէ՛ք ինձ համար բարուն մէջ յարատևելու և առաջանալու շնորհքը։

Հայր մեր. ողջոյն Քեզ Մարիամ. Փառք Հօր. ո՜վ Աստծու Հրեշտակ.

ՀԱՄԱՌՕՏ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ

ՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆ ՀԱՒԱՏՈՅ

Տէր իմ Յիսուս Քրիստոս, հաստատապէս հաւատում եմ, որ Դու Մարմնովդ, Արեամբդ, Հոգւովդ ու Աստւածութեամբդ իսկապէս ներկայ ես գտնւում

այս ամենասուրբ խորհրդի մէջ։

ՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆ ԵՐԿՐՊԱԳՈՒԹԵԱՆ

Ո՛վ Տէր, երկրպագում եմ Քեզ այս խորհրդի մէջ, ու ճանաչում եմ Քեզ իբրև իմ Արարիչս, Փրկիչս, գերագոյն Տէրս, ծայրագոյն ու միակ բարիքս։

ՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆ ԽՈՆԱՐՀՈՒԹԵԱՆ

Տէր, արժանի չեմ որ գաս իմ սրտիս մէջ, այլ միայն մի խօսք ասա ու կը փրկուի իմ հոգիս։

ՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆ ԶՂՋՄԱՆ

Տէ՛ր, զարշում եմ բոլոր մեղքերիցս որոնք անարժան են դարձնում ինձ՝ Քեզ սրտումս ընդունելու, և առաջադրում եմ Քո շնորհքովդ էլ նրանց չը գործելու, նրանց առիթներից փախչելու և նրանց վրայ ապաշխարանք անելու։

ՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆ ՅՈՒՍՈՅ

Տէ՛ր, յուսով եմ որ Դու այս աստուա-

ծային խորհրդի մէջ Քեզ բոլորովին ինձ տալով կ'ողորմիս իմ վրայ և կը պարգևես ինձ այն շնորհքները, որոնք հարկաւոր են հոգւոյս փրկութեանը։

ՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆ ՍԻՐՈՅ

Տէր, Դու անհուն սիրելի ես, Դու ես իմ Հայրս, Փրկիչս ու Աստուածս, դրա համար Քեզ ամեն բանից վեր եմ սիրում, Քո սիրոյդ համար իմ ընկերոջս էլ սիրում եմ իմ անձիս պէս ու սրտանց ներում եմ ինձ վշտացնողներին։

ՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆ ՓԱՓԱԳԱՆԱՑ

Ջերմ եռանդով փափագում եմ, Տէր, որ իմ սրտիս մէջ գաս, որպէս զի բընաւ չը բաժանուեմ Քեզանից, այլ ապրեմ միշտ Քո շնորհքիդ մէջ։

ՀԱՄԱՌՕՏ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆԻՑ ՅԵՏՈՅ

Ներգործութիւն Հաւատոյ

Տէր իմ Յիսուս Քրիստոս, ես հաւա-

տում եմ որ Դու ճշմարտապէս մարմընով, Հոգւով, Արեամբ ու Աստուածութեամբ սրտումս ես, և աւելի հաստատապէս հաւատում եմ այդ բանին քան թէ հէնց իսկ աչքերով տեսնէի։

Ներգործութիւն Երկրպագութեան

Ո՛վ Յիսուս իմ, երկրպագում եմ Քեզ որ ներկայ ես սրտումս, միակցում եմ ամենասուրբ Կոյս Մարիամի՝ Հրեշտակների ու Սրբերի հետ, Քեզ արժանապէս երկրպագելու համար։

Ներգործութիւն Շնորհակալութեան

Տէր իմ Յիսուս, շնորհակալ եմ Քեզանից իմ սրտիս մէջ գալուդ համար։ Եւ Դու ո՛վ ամենասուրբ Կոյս Մարիամ, Հրեշտակդ իմ պահապան և դուք երկնքի Սրբեր, իմ փոխարէն շնորհակալութիւն մատուցէք Յիսուսին։

Ներգործութիւն Սիրոյ

Ո՛վ Աստուած իմ Յիսուս, Քեզ սիրում եմ բոլոր կարողութեամբս ու փափա-

գում եմ այնչափ սիրել, որչափ որ արժանի ես. տուր որ ամեն բանից վեր սիրեմ Քեզ, հիմայ և ամբողջ յաւիտենականութեան մէջ։

Ներգործութիւն Նուիրման

Ո՛վ Յիսուս իմ, Դու Քեզ բոլորովին ինձ տուիր, ես էլ ահա ինձ Քեզ եմ տալիս, Քեզ եմ նուիրում սիրտս ու հոգիս, Քեզ եմ ընծայում բոլոր իմ կեանքըս, և ուզում եմ Քոնը լինել մինչև յաւիտեան։

Ներգործութիւն Ցաւոյ

Յիսուս իմ, հիմայ որ եկել ես սրտիս մէջ, յոյս ունիմ որ այլևս ինձանից չես բաժանուի, այլ միշտ հետս կը մնաս աստուածային շնորհքովդ։

Ներգործութիւն Խնդրուածքի

Ո՛վ Յիսուս իմ, խնդրում եմ տուր ինձ բոլոր այն հոգևոր ու մարմնաւոր շնորհքներն, որ ճանաչում ես թէ օգ-

տակար են հոգուս. օգնէր իմ մեծաւորներիս, ծնողներիս, բարեկամներիս, բարերարներիս ու քաւարանի սուրբ հոգիներին։

Հոգի Քրիստոսի սրբեա՛ զիս. Մարմին Քրիստոսի կեցո՛ զիս. Արիւն Քրիստոսի արբեցո՛ զիս. Ջուր կողին Քրիստոսի լուա՛ զիս. Չարչարանք Քրիստոսի զօրացո՛ զիս. բարերար Յիսուս լո՛ւր ինձ, ի վէրս քո ծածկեա՛ զիս և մի՛ թողուր զիս մեկնել ի Քէն, ի չարասէր թշնամւոյն զերծո՛ զիս, և հրամայեա՛ ինձ գալ առ Քեզ, օրհնել զՔեզ ընդ սուրբս Քո յաւիտեանս. ամէն։

Հայր մեր, ողջոյն քեզ Մարիամ, փառք Հօր ևն.



ԸՆԴԱՐՁԱԿ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԴԱՍ

Քրիստոնէական Վարդապետութիւնը և իւր ԳԼԽԱՒՈՐ ՄԱՍԵՐԸ

Հ. Դու քրիստոնեա՞յ ես։

Պ. Այո՛, Աստուծու շնորհքով ես քրիստոնեայ եմ։

Հ. Ինչո՞ւ համար ես ասում Աստուծու շնորհքովը:

Պ. Նրա համար եմ ասում Աստուծու շնորհքովը, որովհետև քրիստոնեայ լինելն Աստուածանից տրուած մի ձրի պարգև է, որին մենք մեզանից չենք կարողացել արժանանալ։

Հ. Ո՞վ է ճշմարիտ քրիստոնեան։

Պ. Նա է ճշմարիտ քրիստոնեան, որ մկրտուած լինելով հաւատում ու դաւանում է քրիստոնէական վարդապետութիւնը և հնազանդում է Եկեղեցու օրհնաւոր Հովիւներին։

Հ. Ի՞նչ է քրիստոնէական վարդապետութիւնը։

Պ. Քրիստոնէական վարդապետութիւնը այն վարդապետութիւնն է, որ Տէրն մեր Յիսուս Քրիստոս է սովորեցրել՝ մեզ փրկութեան ճանապարհը ցոյց տալու համար։

Հ. Հա՞րկ է Յիսուս Քրիստոսի ուսուցրած վարդապետութիւնը սովորել։

Պ. Անհրաժեշտ է Յիսուս Քրիստոսի ուսուցրած վարդապետութիւնը սովորել, ծանրապէս մեղանչում են նրանք որ զանց են առնում այդ բանն անելու։

Հ. Ծնողները ու տէրերը պարտաւո՞ր են իրանց զաւակներին ու

ծառաներին ուղարկել քրիստոնէական վարդապետութիւնը սովորելու համար։

Պ. Ծնողներն ու տէրերն պարտաւոր են հոգ տանելու, որ իրանց զաւակներն ու հպատակները սովորին քրիստոնէական վարդապետութիւնը և Աստուծու առաջ յանցաւոր կը լինին եթէ չը կատարեն այս պարտքը։

Հ. Ու՞մից պէտք է ընդունենք ու սովորինք քրիստոնէական վարդապետութիւնը:

Պ. Պէտք է սուրբ կաթուղիկէ Եկեղեցուց ընդունենք ու սովորինք քրիստոնէական վարդապետութիւնը։

Հ. Ի՞նչպէս ենք կարող հաստատ լինել թէ այն քրիստոնէական վարդապետութիւնը, որ մենք սուրբ կաթուղիկէ Եկեղեցուց ենք ընդունում, իսկ ճշմարիտն է։

Պ. Մենք կարող ենք հաստատ

լինել թէ այն քրիստոնէական վարդապետութիւնը, որ մենք սուրբ կաթուղիկէ Եկեղեցուց ենք ընդունում, իսկ ճշմարիտն է, որովհետև Յիսուս Քրիստոս՝ այս վարդապետութեան աստուածային հեղինակը, Առաքեալների ձեռքով նրան յանձնել է այն Եկեղեցուն, որ Ինքն է հաստատել ու բոլոր մարդկանց անսխալ ուսուցիչ է կարգել խոստանալով թէ իրա հետ կը լինի մինչև աշխարհիս կատարածը։

Հ. *Ուրիշ ապացոյցներ էլ կա՞ն քրիստոնէական վարդապետութեան ճշմարտութիւնն ապացուցանելու համար։*

Պ. Քրիստոնէական վարդապետութեան ճշմարտութիւնը ապացուցւած է նաև այնչափ մարդկանց գերազանց առաքինութեամբը, որոնք դաւանել ու դաւանում էլ են նրան, նահատակների գիւցազնական արիութեամբը, նրա աշխարհիս վրայ արագ ու զարմանալի

տարածմամբն ու բազմահոլով դարերի զանազան և անընդհատ կռիւների մէջ կատարեալ պահպանութեամբը։

Հ. *Քանի՞ ու որո՞նք են քրիստոնէական վարդապետութեան գլխաւոր և հարկաւոր մասերը։*

Պ. Քրիստոնէական վարդապետութեան գլխաւոր և հարկաւոր մասերը չորս են *Հաւատամքը*, *Հայր մերը*, *Սուրբ պատուիրանները* ու *Խորհուրդները*։

Հ. *Ի՞նչ է սովորեցնում մեզ՝ Հաւատամքը։*

Պ. *Հաւատամքը* սովորեցնում է մեզ՝ մեր սուրբ հաւատքի գլխաւոր մասերը։

Հ. *Ի՞նչ է սովորեցնում մեզ՝ Հայր մերը։*

Պ. *Հայր մերը* սովորեցնում է մեզ՝ ինչ որ պարտաւոր ենք Աստծուց յուսալու և Նրանից խնդրելու։

Հ. *Ի՞նչ են սովորեցնում մեզ՝ Աստծու պատուիրանները։*

Պ. Աստծու պատուիրանները սովորեցնում են մեզ՝ ինչ որ պարտաւոր ենք անել Աստծուն հաճոյ լինելու համար, որ բանը բովանդակւում է՝ Աստծուն ամեն բանից վեր ու մեր ընկերոջն էլ՝ Աստծու սիրոյն համար, մեր անձին պէս սիրելու մէջ։

Հ. *Ի՞նչ է սովորեցնում մեզ խորհրդների վարդապետութիւնը։*

Պ. Խորհրդների վարդապետութիւնը մեզի ճանաչել է տալիս այն միջոցների բնութիւնն ու արժանաւոր կիրառութիւնը, որ Յիսուս Քրիստոս հաստատել է մեր մեղքերը թողնելու, մեզի իւր շնորհքը հաղորդելու և Հաւատքի, Յուսոյ ու Սիրոյ առաքինութիւնները մեր մէջ հեղելու և աճեցնելու համար։

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ԱՌԱՔԵԼՆԵՐԻ ՀԱՆԳԱՆԱԿԸ
ԿԱՄ ԸՍՏ ՍՈՎՈՐՈՒԹԵԱՆ «ՀԱՒԱՏԱՄՔԸ»

ԳԼՈՒԽ Ա.

Հաւատամքն ընդհանուր կերպով նկատած

Հ. *Որն է քրիստոնէական վարդապետութեան առաջին մասը։*

Պ. Քրիստոնէական վարդապետութեան առաջին մասն՝ Առաքեալների Հանգանակն է, որ հասարակօրէն Հաւատամք է կոչւում։

Հ. *Ինչո՞ւ Հաւատամքն Առաքեալների հանգանակ է կոչւում։*

Պ. *Հաւատամքն՝* Առաքեալների հանգանակ է կոչւում, որովհետև համառօտիւ բովանդակում է Առաքեալների սովորեցրած հաւատքի ճշմարտութիւնները։

Հ. *Քանի՞ մաս ունի* Հաւատամքը։

Պ. *Հաւատամքը* տասն և երկու մաս ունի՝

1. Հաւատամ ի մի Աստուած— Հայրն Ամենակալ, յարարիչն երկնի և երկրի։

2. Եւ ի Տէր մեր Յիսուս Քրիստոս յՈրդի Նորա միածին։

3. Որ յղացաւ ի Հոգւոյն Սրբոյ, ծնաւ ի Մարիամայ Կուսէն,

4. Չարչարեցաւ ընդ Պոնտացւով Պիղատոսիւ, խաչեցաւ, մեռաւ և թաղեցաւ։

5. Իջ ի դժոխս, յերրորդ յաւուր յարեաւ ի մեռելոց։

6 Համբարձաւ յերկինս, նստաւ ընդ աջմէ Աստուծոյ Հօր ամենակալի։

7. Ուստի գալոց է 'ի դատել զկենդանիս և զմեռեալս։

8. Հաւատամ 'ի Սուրբ Հոգին։

9. 'Ի սուրբ Կաթուղիկէ Եկեղեցի, 'ի հաղորդութիւն Սրբոց։

10. 'Ի թողութիւն մեղաց։

11. 'Ի յարութիւն մարմնոց։

12. 'Ի կեանս յաւիտենականս. ամէն։

Հ. *Հանգանակի սկզբում* Հաւատամ *ասած բառը ի՞նչ է նշանակում։*

Պ. *Հաւատամ* բառը նշանակում է՝ ես դաւանում եմ թէ բոլորովին ճշմարիտ է ինչ որ պարունակւում է այս տասներկու մասերի մէջ և աւելի հաստատապէս հաւատում եմ այս ճշմարտութիւններին, քան թէ նոյն իսկ աչքերովս տեսնէի, որովհետև Աստուած՝ որ չի կարող ոչ ինքը խաբուել և ոչ էլ խաբել մեզ, յայտնել է նրանց Սուրբ Կաթուղիկէ Եկեղեցուն ու Նրա միջոցով մեզ էլ է յայտնում։

Հ. Ի՞նչ են պարունակում Հաւատամքի մասերը։

Պ. Հաւատամքի մասերը պարունակում են, ինչ որ գլխաւորաբար պարտաւոր ենք հաւատալու Աստծու, Յիսուս Քրիստոսի և իւր Եկեղեցու նկատմամբ՝ որ իւր հարսն է։

Հ. Շատ օգտակար բա՞ն է ստէպ Հաւատամքն ասելը։

Պ. Այո, շատ օգտակար բան է ստէպ Հաւատամքն ասելը, հաւատքի ճշմարտութիւնները մեր սրտի մէջ լաւ ևս դրոշմելու համար։

ԳԼՈՒԽ Բ.

ՀԱՆԳԱՆԱԿԻ ԱՌԱՋԻՆ ՄԱՍԸ

Հայրն Աստուած և Արարչագործութիւնը.

Հ. Ի՞նչ է սովորեցնում մեզ Հանգանակի առաջին մասը Հաւատամ յԱստուած Հայրն ամենակալ, յարարիչն երկնի և երկրի։

Պ. Հանգանակի առաջին մասը սովորեցնում է մեզ թէ միայն մէկ Աստուած կայ, որն ամենակարող լինելով՝ ստեղծել է երկինքն, երկիրը և ինչ որ պարունակւում է նրանց մէջ, այսինքն՝ բովանդակ տիեզերքը։

Հ. Ի՞նչպէս ենք իմանում թէ մէկ Աստուած կայ։

Պ. Մենք իմանում ենք թէ մէկ Աստուած կայ, որովհետև մեր բանականութիւնը ցոյց է տալիս մեզ այդ բանը և հաւատքն էլ հաստատում։

Հ. Ինչո՞ւ Աստծուն Հօր անունն ենք տալիս

Պ. Աստծուն Հօր անունն ենք տալիս՝ 1. որովհետև բնութեամբ Հայր է Ամենասուրբ Երրորդութեան երկրորդ Անձին, այսինքն՝ Որդուն, որ Իրանից է ծնւել. 2. Աստուած Հայր է ամեն մարդկանց, որոնց ստեղծել, պահում ու կառավարում է. 3. վերջապէս Աստուած շնորհքով բոլոր բարի քրիստոնեաների Հայրն է, որոնք այս պատճառով Աստծու որդեգրական որդիներն են կոչւում։

Հ. Ինչո՞ւ Հայրն՝ Ամենասուրբ Երրորդութեան առաջին Անձն է:

Պ. Հայրն՝ Ամենասուրբ Երրորդութեան առաջին Անձն է, որովհետև չի բղխում մի ուրիշ Անձից, այլ միւս երկու Անձերի, այսինքն՝ Որդու և Սուրբ Հոգու սկիզբն է։

Ի՞նչ ասել է **ամենակալ** *բառը։*

Պ. *Ամենակալ* **բառը ասել է թէ Աստուած կարող է անել ինչ որ կամենայ։**

Հ. Աստուած չի կարող մեղանչել ու մեռնել, ուրեմն ինչո՞ւ ենք ասում թէ Ինքը կարող է անել ամեն բան։

Պ. Թէպէտև Աստուած չը կարողանայ մեղանչել ու մեռնել, բայց և այնպէս ասում ենք թէ կարող է անել ամեն բան, որովհետև մեղանչելը կամ մեռնելը՝ չէ թէ կարողութեան արդիւնքն է, այլ տկարութեան, որից՝ Աստուած ամենակատարեալ լինելով, ազատ է։

Հ. Ի՞նչ ասել է **Արարիչն երկնի և երկրի.**

Պ. *Ստեղծել* **ասել է ոչնչից մի բան**

գոյացնել, Աստուած նրա համար է կոչւում երկնի և երկրի Ստեղծողը, որովհետև Ինքն է ոչնչից գոյացրել երկինքն, երկիրը և ամեն ինչ որ նրանց մէջ է պարունակւում, այսինքն՝ բովանդակ տիեզերքը։

Հ. Միայն Հայրն է՞ ստեղծել աշխարքը։

Պ. Աստուածային երեք Անձերն էլ հաւասարապէս են ստեղծել աշխարհը որովհետև ինչ որ անում է արարածների նկատմամբ Անձերից մինը, մի և նոյն գործով նոյն բանն անում են և միւսները։

Հ. Ուրեմն ինչո՞ւ արարչագործութիւնը մասնաւորապես Հօրն է ընծայւում։

Պ. Արարչագործութիւնը մասնաւորապես Հօրն է ընծայւում, որովհետև ստեղծագործութիւնը աստուածային ամեն ակարողութեան արդիւնքն է, որը մասնաւոր կերպով Հօրն է տրւում,

ինչպէս որ իմաստութիւնն՝ Որդուն և բարութիւնը՝ Սուրբ Հոգուն, թէպէտև երեք Անձերը միևնոյն ամենակարողութիւնը, իմաստութիւնն ու բարութիւնն ունենան։

Հ. Աստուած հոգ տանո՞ւմ է աշխարհի եւ այն ամեն բաների վրայ որ Ինքն է ստեղծել։

Պ. Այո՛, Աստուած հոգ տանում է աշխարհի և այն ամեն բաների վրայ, որ Ինքն է ստեղծել և Իւր անհուն բարութեամբն ու իմաստութեամբը պահում ու կառավարում է նրանց և ոչ մի բան չի պատահիլ երկրիս վրայ առանց Աստծու կամքին ու թոյլտուութեանը։

Հ. Ինչո՞ւ ես ասում թէ երկրիս վրայ ոչ մի բան չի պատահիլ առանց Աստուծու կամքին ու թոյլտուութեանը։

Պ. Նրա համար եմ ասում թէ երկրիս վրայ ոչ մի բան չի պատահիլ առանց Աստծու կամքին ու թոյլտւութեանը

որովհետև կան բաներ, որ Աստուած է ուզում ու հրամայում, ուրիշ բաներ էլ կան, որ չի խափանում, ինչպէս է մեղքը:

Հ. Աստուած ինչո՞ւ չի խափանում մեղքը։

Պ. Աստուած չի խափանում մեղքը, որովհետև ինքը՝ մարդուն տուած ազատութիւնից՝ նաև երբ սա չարաչար է գործածում նրան, կարող է բարիք հանել, և իւր բարութեանը կամ արդարութեանը աւելի փայլ տալ։

2. ՀՐԵՇՏԱԿՆԵՐԸ

Հ. Որո՞նք են Աստծու ստեղծած ամենաազնիւ արարածները։

Պ. Աստծու ստեղծած ամենաազնիւ արարածները հրեշտակներն են։

Հ. Ի՞նչ են հրեշտակները։

Պ. Հրեշտակները բանական արարածներ ու պարզ ոգիներ են։

Հ. Աստուած ինչո՞ւ է ստեղծել Հրեշտակներին։

Պ. Աստուած ստեղծել է Հրեշտակներին որ Իրան պատուեն, ծառայեն ու յաւիտեան երջանիկ լինին։

Հ. Ի՞նչ ձեւ ու կերպարանք ունին Հրեշտակները։

Պ. Հրեշտակները մի զգալի ձև ու կերպարանք չունին, որովհետև պարզ ոգիներ են, ստեղծուել են Աստծուց, որ առանց որև էմարմնի հետ միանալու մնան։

Հ. Ուրեմն ինչո՞ւ են ներկայացնում Հրեշտակներին զգալի նկարների կերպարանքով։

Պ. Զգալի նկարների կերպարանքով ներկայացնում են Հրեշտակներին՝ 1. մեր երևակայութեանն օգնելու համար որ նրանց վրայ կարենանք մի գաղափար կազմել 2. վասնզի շատ անգամ այսպէս երևացել են մարդկանց, ինչպէս որ վկայում է Սուրբ գիրքը։

Հ. *Բոլոր Հրեշտակնե՞րն էլ հաւատարիմ մնացի՞ն Աստծուն։*

Պ. Ո՛չ, բոլոր հրեշտակներն էլ հաւատարիմ չմնացին Աստծուն, այլ նրանցից շատերը ամբարտաւանութեամբ կամեցան Նրան հաւասար ու Նրանից անկախ լինել, այդ մեղքի պատճառով է, որ յմիշտ մերժւեցան արքայութիւնից ու դատապարտւեցան դըժոխքին։

Հ. *Ի՞նչպէս են կոչւում յաւէտ արքայութիւնից մերժւած ու դժոխքին դատապարտուած հրեշտակները։*

Պ. Այն հրեշտակներն՝ որ յաւէտ մերժւել են արքայութիւնից ու դժոխքին դատապարտւել, կոչւում են սատանաներ, իսկ իրանց գլուխը, Սատանայէլ կամ Արուսեակ։

Հ. *Սատանաները կարո՞ղ են մեզ չարիք հասցնել։*

Պ. Այո՛ սատանաները կարող են՝

թէ մեր հոգուն և թէ մարմնին մեծ չարիք հասցնել եթէ Աստւած թոյլ տալու լինի, մանաւորապէս մեզը գործելու հրապուրելով մեզ։

Հ. *Ի՞նչու համար են փորձում մեզ սատանաները։*

Պ. Սատանաները նրա համար են փորձում մեզ, որովհետև թէ նախանձում են մեր վրայ, դրա համար փափագում են մեր յաւիտենական դատապարտութեանը և թէ ատում են Աստծուն՝ Որի պատկերն ենք կրում մեր մէջ․ Աստւած էլ թոյլ է տալիս որ փորձւենք որպէս զի իւր շնորհքովը նրանց յաղթելով, թէ առաքինութիւն ի գործ դնենք և թէ, արքայութեան համար արժանիքներ շահենք։

Հ, *Մենք ի՞նչպէս ենք կարող փորձութիւնները յաղթել։*

Պ. Մենք կարող ենք փորձութիւնները յաղթել հսկմամբ, աղօթքով ու

բրիստոնէական մահացուցմամբ։

Հ. Ի՞նչպէս են կոչւում Աստուծոյ հաւատարիմ մնացած հրեշտակները։

Պ. Աստուծուն հաւատարիմ մնացած հրեշտակները կոչւում են բարի Հրեշտակներ, երկնային Ոգիներ կամ պարզապէս հրեշտակներ։

Հ. Ի՞նչ եղան Աստուծոյ հաւատարիմ մնացած հրեշտակները։

Պ. Աստծուն հաւատարիմ մնացած Հրեշտակները շնորհքի մէջ հաստատւեցան, միշտ վայելում են Աստծու տեսութիւնը, սիրում, բարեբանում ու գովաբանում են Նրան։

Հ. Աստուած ծառայեցնո՞ւմ է հրեշտակներին, իբրեւ Իւր պաշտօնեաներ:

Պ. Այո, Աստւած ծառայեցնում է Հրեշտակներին իբրև Իւր պաշտօնեաների ու մասնաւորապէս նրանցից շատերին՝ մեզ համար պահապանների կամ պաշտպանների պաշտօնը տալով։

Հ. Պարտաւո՞ր ենք առ մեր պահապան հրեշտակն առանձին ջերմեռանդութիւն ունենալու։

Պ. Այո. պարտաւոր ենք առ մեր պահապան Հրեշտակն առանձին ջերմեռանդութիւն ունենալու, Իւր օգնութիւնը խնդրելու, Իւր ազդեցութեանցն անսալու և իրանից շնորհակալ լինելու մեզ արած պահպանութեանը համար։

3. ՄԱՐԴԸ

Հ. Ո՞րն է երկրիս վրայ Աստուծոյ ազնւագոյն արարածը։

Պ. Երկրիս վրայ Աստծու ազնըւագոյն արարածը՝ մարդն է։

Հ. Ի՞նչ է մարդը։

Պ. Մարդը՝ հոգուց ու մարմնից բաղկացեալ մի բանական արարած է։

Հ. Ի՞նչ է հոգին։

Պ. Հոգին մարդուս ազնուագոյն մասն է, որովհետև մի ազնիւ գոյութիւն է, որն իմացականութեամբ ու կամքով օժտուած լինելով՝ կարող է ճանաչել Աստծուն ու մինչև յաւէտ Նրան ժառանգել:

Հ. *Կարելի՞ է մարդկային հոգին տեսնել ու շօշափել:*

Պ. Կարելի չէ, մեր հոգին տեսնել ու շօշափել, որովհետև աննիւթական է:

Հ. *Մարդու հոգին էլ մեռնո՞ւմ է մարմնի հետ:*

Պ. Մարդուս հոգին երբէք չի մեռնիլ, հաւատքը՝ նոյն իսկ բանականութիւնը հաստատում են թէ՝ անմահ է նա:

Հ. *Մարդս ազա՞տ է իւր գործողութեանց մէջ:*

Պ. Այո, մարդս ազատ է իւր գործողութեանց մէջ, և իւրաքանչիւր ոք

զգում է իւր մէջ թէ կարող է մի բան անել կամ չ'անել, աւելի այս բանն անել քան թէ միւսը:

Հ. *Մի օրինակով մեկնեցէ՛ք մարդու ազատութիւնը:*

Պ. Երբ կամովին սուտ եմ ասում զգում եմ թէ կարող էի չ'ասել՝ այլ լռել և թէ կարող էի ուրիշ կերպով խօսել ճշմարտութիւնն ասելով:

Հ. *Ինչո՞ւ են ասում թէ մարդն ստեղծուեց ըստ պատկերի ու նմանութեան Աստծու:*

Պ. Նրա համար են ասում թէ մարդն ստեղծուեց ըստ պատկերի ու նմանութեան Աստծու, որովհետև մարդկային հոգին աննիւթական է ու բանական, իւր գործողութեան մէջ ազատ, կարող է ճանաչել ու սիրել Աստծուն և յաւէտ Նրան վայելել, այս կատարելութիւնները՝ Աստծու անսահման մեծութեան նշոյլն են, որ կրում ենք՝

մեղանում։

Հ. Աստուած ի՞նչ վիճակի մէջ ստեղծեց մեր Ադամ ու Եւայ նախածնողներին։

Պ. Աստուած՝ Ադամին ու Եւային անմեղութեան ու շնորհքի վիճակի մէջ ստեղծեց, որից շատ չ՚անցաւ որ ընկան մեղքի պատճառով։

Հ. Բացի անմեղութիւնից ու սրբարար շնորհքից՝ Աստուած ուրիշ պարգևներ էլ տուա՞ւ մեր նախածնողներին։

Պ. Բացի անմեղութիւնից ու սրբարար շնորհքից՝ Աստուած ուրիշ պարգևներ էլ տուաւ մեր նախածնողներին, որոնց՝ սրբարար շնորհքի հետ միասին պէտք էին իրանց ցեղին փոխանցնել, և էին՝ *Սրբութիւն*, այսինքն՝ զգայարանքների՝ բանականութեան կատարեալ հպատակութիւն. *Անմահութիւն*, *Ազատութիւն* որև է վշտից ու թշուառութիւնից և իրանց վիճակին յարմար *Գիտութիւն*։

Հ. Ո՞րն եղաւ Ադամի մեղքը։

Պ. Ադամի մեղքը՝ հպարտութեան և անհնազանդութեան մի ծանր մեղք եղաւ։

Հ. Ադամն ու Եւան ի՞նչ պատիժ ունեցան իրանց մեղքին պատճառով։

Պ. Ադամն ու Եւան կորցրին Աստուծու շնորհքը և երկնի ժառանգութեան իրաւունքը, արտաքսւեցան երկրաւոր դրախտից, ենթարկւեցան հոգու ու մարմնի բազմաթիւ աղէտներին, ստացան մեռնելու վճիռը։

Հ. Եթէ Ադամն ու Եւան մեղանչած չը լինէին, արդեօք ազա՞տ պիտի մնային մահուանից։

Պ. Եթէ Ադամն ու Եւան մեղանչած չը լինէին, այլ հաւատարիմ մնային Աստծուն, աշխարհիս վրայ երջանիկ ու խաղաղ կեանք անցկացնելուց յետոյ՝

տռանց մեռնելու Աստծուց պիտի փոխադրւէին երկինքը յաւիտենական ու փառաւոր կեանք վայելելու համար:

Հ. Մարդս իրաւունք ունէ՞ր իրան համար պահանջելու այս պարգևները:

Պ. Մարդս՝ և ոչ մի կերպով իրաւունք չունէր իրան համար պահանջելու այս պարգևները, վասնզի բացարձակապէս ձրի ու գերբնական էին, դրա համար երբոր Ադամ չ'մնաց աստուածային պատուիրանին, Աստուած առանց անիրաւութեան կարողացաւ Ադամին ու բոլոր իւր սերնդին զրկել այս պարգևներից:

Հ. Այս մեղքը միայն Ադամի՞ն է սեփհական:

Պ. Այս մեղքը չէ թէ միայն Ադամին է, այլ նաև մերը թէպէտև տարբեր կերպով. Ադամին է սեփհական, որովհետև ինքը գործեց իւր սեփհական կամքով, այս պատճառով մեղքն իրանում

անձնական եղաւ: Մեզ էլ է սեփհական, որովհետև Ադամ մեղանչած լինելով իբրև գլուխ և արմատ բոլոր մարդկային ազգի, իւր մեղքը բնական ծնընդեամբ փոխանցնում է բոլոր իւր ցեղին. դրա համար իւր մեղքը մեզանում սկըզբնական է:

Հ. Ի՞նչպէս է կարելի որ սկզբնական մեղքը փոխանցվի բոլոր մարդկանց վրայ:

Պ. Սկզբնական մեղքը փոխանցնում է բոլոր մարդկանց վրայ, որովհետև Աստուած՝ Ադամի անձով, այն պայմանով էր տուել մարդկային ազգին սրբարար շնորհքն ու միւս գերբնական պարգևներն, որ Ադամ անհնազանդ չը գտնուէր, իսկ սա 'անհնազանդելով իբրև գլուխ ու հայր մարդկային ազգի, մարդկային բնութիւնն ապստամբեցրեց Աստծու դէմ: Դրա համար մարդկային բնութիւնը փոխանցնում է Ադամի

բոլոր սերնդին, Աստծու դէմ ապստամբութեան վիճակի մէջ, զուրկ աստուածային շնորհքից ու միւս պարգևներից։

Հ. Ուրեմն ի՞նչ վնասներ է հասցրել մեզ սկզբնական մեղքը։

Պ. Սկզբնական մեղքի պատճառով զրկւեցանք շնորհքից, կորցրեցինք արքայութիւնը, ենթարկւեցանք տգիտութեան, դէպի չարը միտման, այս աշխարհիս բոլոր թշւառութիւններին ու վերջապէս մահւան։

Հ. Բոլոր մարդիկ էլ մասնակցո՞ւմ են սկզբնական մեղքին։

Պ. Այո, բոլոր մարդիկ էլ մասնակցում են սկզբնական մեղքին, ի բաց առեալ ամենասուրբ Կոյսն, Որ Աստծու մասնաւոր առանձնաշնորհութեամբ զերծ մնաց նրանից, կանխատեսութեամբ փրկչին մերոյ Յիսուս Քրիստոսի արդիւնքներին։

Հ. Ադամի մեղանչելուց յետոյ մարդիկ այլ ևս չէի՞ն կարող փրկւել։

Պ. Ադամի մեղանչելուց յետոյ այլևս մարդիկ չէին կարող փրկւել եթէ Աստուած նրանց չ'ողորմէր։

Հ. Աստուած ի՞նչպէս ողորմեց մարդկային ազգին։

Պ. Աստուած ողորմեց մարդկային ազգին՝ անմիջապէս աստուածային Փրկիչը կամ Մեսիան խոստանալով Ադամին ու սահմանեալ ժամանակին Նրան ուղարկելով մարդկանց՝ սատանայի գերութիւնից ու մեղքից ազատելու համար։

Հ. Ո՞վ է խոստացեալ Մեսիան։

Պ. Խոստացեալ Մեսիան՝ Յիսուս Քրիստոսն է, ինչպէս որ սովորեցնում է մեզ Հանգանակի երկրորդ մասը։

ԳԼՈՒԽ Գ.

ՀԱՆԳԱՆԱԿԻ ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍԸ.

Հ. *Ի՞նչ է սովորեցնում մեզ Հանգանակի երկրորդ մասը՝* և ի Տէր մեր Յիսուս Քրիստոս յՈրդի Նորա միածին։

Պ. Հանգանակի երկրորդ մասը սովորեցնում է մեզ թէ Աստծու Որդին՝ Ամենասուրբ Երրորդութեան երկրորդ Անձն է, Ինքը՝ Հօր պէս յաւիտենական ամենակարող, Արարիչ, Տէր և Աստուած է, մեզ փրկելու համար մարդ եղաւ և թէ Աստծու մարդացեալ Որդին՝ Յիսուս Քրիստոս է կոչւում։

Հ. *Ինչո՞ւ երկրորդ Անձն* Որդի *է*

կոչւում։

Պ. Երկրորդ Անձն՝ *Որդի* է կոչւում, որովհետև ի յաւիտենից Հօրից է ծնւել, *ի ծնէն մօրաց*, այդ պատճառով կոչւում է նաև Հօր յաւիտենական Բանը։

Հ. *Մենք էլ Աստծու որդիներն ենք, ուրեմն ինչո՞ւ Յիսուս Քրիստոս* Հօր Աստծու միածին Որդին *է կոչւում։*

Պ. Յիսուս Քրիստոս *Հօր Աստծու միածին Որդին* է կոչւում, որովհետև միայն Ինքը բնութեամբ Նրա Որդին է, իսկ մենք Նրա համար Իւր որդիներն ենք կոչւում, որովհետև Ինքն է ստեղծել մեզ ու որդեգրել։

Հ. *Ինչո՞ւ Յիսուս Քրիստոս մեր* Տէրն *է կոչւում։*

Պ. Յիսուս Քրիստոս *մեր Տէրն* է կոչւում, որովհետև ոչ միայն իբրև Աստուած՝ Հօր ու Սուրբ Հոգու հետ

միասին, սատեղծել է մեզ, այլ և փրկել է իբրև Աստուած և Մարդ։

Հ. *Ինչո՞ւ Աստծու մարդացեալ Որդին կոչւում է Յիսուս։*

Պ. Աստծու մարդացեալ Որդին կոչւում է Յիսուս, որ ասել է փրկիչ, որովհետև այն յաւիտենական մահւանից է ազատել մեզ, որին արժանացել էինք մեր մեղքերի պատճառով։

Հ. *Ո՞վ է Յիսուս անունը տուել Աստծու մարդացեալ Որդուն։*

Պ. Նոյն ինքն յաւիտենական Հայրըն է Յիսուս անունը տւել Աստծու Մարդացեալ Որդուն, Գաբրիէլ Հրեշտակապետի միջոցով երբոր սա Մարգեղութեան խորհուրդը սուրբ Կուսին աւետեց։

Հ. *Ինչո՞ւ Աստծու մարդացեալ Որդին Քրիստոս էլ է կոչւում։*

Պ. Աստծու մարդացեալ Որդին Քրիստոս էլ է կոչւում, որ ասել է օծեալ,

նւիրեալ, որովհետև հին ժամանակ օծում էին թագաւորներին, քահանաներին ու մարգարէներին և թէ Յիսուս Քրիստոս թագաւորների թագաւորը, ծայրագոյն Քահանայապետն ու Մարգարէն է։

Հ. *Յիսուս Քրիստոս իւր մարմնաւոր օծմամբ օծւե՞ց։*

Պ. Յիսուս Քրիստոսի օծումը նախնի թագաւորների, քահանաների ու մարգարէների օծման պէս, մարմնաւոր չ՚եղաւ այլ բոլորովին հոգևոր ու աստուածային, որովհետև Աստուածութեան լրութիւնը էապէս Նրա մէջ էր բնակւում։

Հ. *Մարդիկ ծանօթութիւն ունեցա՞ն Յիսուս Քրիստոսի վրայօք՝ Նրա գալստից առաջ։*

Պ. Այո՛, մարդիկ ծանօթութիւն ունեցան Յիսուս Քրիստոսի վրայօք՝ Նրա գալստից առաջ, նախ Մեսիայի խոստմամբն որ Աստուած արեց Ադամ ու

Նուային՝ մեր նախածնողներին և որը կըրկընեց սուրբ Նահապետներին, և ապա մարգարէութիւնների ու Նրան ներկայացնող բազմաթիւ օրինակների ձեռքով։

Հ. Ի՞նչպէս գիտենք թէ Յիսուս Քրիստոսն է իրօք Մեսիան ու խոստացեալ Փրկիչը։

Պ. Մենք գիտենք թէ իրօք Յիսուս Քրիստոսն է Մեսիան ու Խոստացեալ Փրկիչն, որովհետև Նրա վրայ կատարուեցաւ. 1. ինչ որ կանխագուշակում էին մարգարէութիւնները. 2. ինչ որ ներկայացնում էին Հին Կտակարանի օրինակները։

Հ. Ի՞նչ էին կանխագուշակում Փրկչի վրայօք մարգարէութիւնները։

Պ. Մարգարէութիւնները կանխագուշակում էին Փրկչի՝ որ ցեղից և ընտանիքից ծագելը, ծննդավայրն ու ժամանակը, Նրա հրաշքները, չարչարանքների ու մահուան մանրակրկիտ պարագաները, յարութիւնն ու երկինք համբառնալը, Իւր հոգևոր, ընդհանուր ու մշտակայ թագաւորութիւնն՝ որ սուրբ կաթուղիկէ Եկեղեցին է։

Հ. Որո՞նք են Հին Կտակարանի մէջ Փրկչին ներկայացնող գլխաւոր օրինակները։

Պ. Հին Կտակարանի մէջ՝ Փրկչին ներկայացնող գլխաւոր օրինակներն են անմեղ Աբէլը, Մելքիսեդեկ քահանայապետը, Իսահակի զոհուիլը, իւր եղբայրներից ծախուած Յովսէփը, Յովնան մարգարէն, զատկական գառը և անապատում Մովսէսի կանգնեցրած պղնձէ օձը.

Հ. Ի՞նչպէս գիտենք թէ Յիսուս Քրիստոս իրօք Աստուած է։

Պ. Մենք գիտենք թէ Յիսուս Քրիստոս իրօք Աստուած է, 1. վկայութեամբ Հօր Աստծու, որ ասաց՝ Դա է *Որդի իմ սիրելի՝ ընդ Որ հաճեցայ,*

Դիմա շուայտուք 2. նոյն իսկ Յիսուս Քրիստոսի վկայութեամբն, որը հաստատեց զարմանալի հրաշքներով, 3. Առաքեալների վարդապետութեամբը և 4. ուղղափառ Եկեղեցու հաստատուն աւանդութեամբը։

Հ. Որո՞նք են Յիսուս Քրիստոսի գործած գլխաւոր հրաշքները:

Պ. Յիսուս Քրիստոսի գլխաւոր հրաշքները՝ բացի իւր յարութիւնից, են՝ հիւանդներին՝ առողջութիւն, կոյրերին՝ տեսողութիւն, խուլերին՝ լսողութիւն, մեռեալներին՝ կեանք տալը։

ԳԼՈՒԽ Դ.

ՀԱՆԳԱՆԱԿԻ ԵՐՐՈՐԴ ՄԱՍԸ

Հ. Ի՞նչ է սովորեցնում մեզ հանգանակի երրորդ մասը՝ որ յղացաւ ի Հոգւոյն Սրբոյ, ծնաւ ի Մարիամայ Կուսէն։

Պ. Հանգանակի երրորդ մասը՝ սովորեցնում է մեզ թէ՝ Աստծու Որդին ամենամաքուր Կոյս Մարիամի որովայնի մէջ՝ մեր մարմնի ու հոգու նման մարմին ու հոգի առաւ Սուրբ Հոգու զօրութեամբը և թէ ծնուեց այս Կուսից։

Հ. Յիսուս Քրիստոսի մարմինը կազմելու եւ հոգին ստեղծելու համար արդեօք գործակից եղա՞ն նաեւ Հայրն ու Որդին:

Պ. Այո՛, Յիսուս Քրիստոսի մարմինը կազմելու և հոգին ստեղծելու համար աստուածային երեք Անձերն էլ գործակից եղան։

Հ. *Ուրեմն ինչո՞ւ են ասում միայն՝ յղացաւ ի Հոգւոյն սրբոյ։*

Պ. Նրա համար են ասում միայն՝ *յղացաւ ի Հոգւոյն սրբոյ*, որովհետև Աստծու Որդու մարդեղութիւնը բարութեան ու սիրոյ գործ է, ու սիրոյ գործերը Սուրբ Հոգուն են վերաբերում։

Հ. *Աստծու Որդին մարդ լինելով Աստուած լինելուց դադարե՞ց։*

Պ. Ո՛չ, Աստծու Որդին մարդ լինելով Աստուած լինելուց չը դադարեց։

Հ. *Ուրեմն Յիսուս Քրիստոս միաժամանակ թէ՛ Աստուա՞ծ է և թէ՛ մարդ։*

Պ. Այո՛, Աստծու մարդացեալ Որդին, այսինքն՝ Յիսուս Քրիստոս միաժամայն թէ՛ կատարեալ Աստուած է և թէ՛ կատարեալ մարդ։

Հ. *Ուրեմն Յիսուս Քրիստոս երկո՞ւ բնութիւն ունի։*

Պ. Այո՛, Յիսուս Քրիստոս՝ որ Աստուած է ու մարդ, երկու բնութիւն ունի՝ աստուածային և մարդկային։

Հ. *Յիսուս Քրիստոս ունի՞ նաև երկու անձ, այսինքն՝ աստուածային ու մարդկային։*

Պ. Ո՛չ, Աստծու մարդացեալ Որդին միայն մի անձ ունի, որ է աստուածային Անձը։

Հ. *Յիսուս Քրիստոս քանի՞ կամք ունի։*

Պ. Յիսուս Քրիստոս երկու կամք ունի, աստուածային ու մարդկային։

Հ. *Յիսուս Քրիստոս ազա՞տ կամք ունէր։*

Պ. Այո՛, Յիսուս Քրիստոս ազատ կամք ունէր, բայց չէր կարող չար գործել, որովհետև չար գործելը թե-

րութիւն է և ոչ թէ ազատութեան կատարելութիւն։

Հ. Արդեօք մի եւ նոյն անձն է, որ թէ՛ Աստուծոյ Որդին է եւ թէ՛ Մարիամի։

Պ. Այո՛, մի եւ նոյն անձն է, որ թէ Աստուծու Որդին է և թէ Մարիամի այսինքն՝ Յիսուս Քրիստոս, Որ է ճշմարիտ Աստուած ու ճշմարիտ մարդ։

Հ. Սուրբ կոյս Մարիամ Աստուծոյ Մա՞յրն է։

Պ. Այո՛, Ս. կոյս Մարիամ Աստուծու Մայրն է, որովհետև Մայր է Յիսուս Քրիստոսի՝ որ Աստուած է։

Հ. Ի՞նչպէս Մարիամ Յիսուսի Քրիստոսի Մայրը դարձաւ։

Պ. Մարիամ՝ միայն Սուրբ Հոգու ներգործութեամբն ու զօրութեամբը Յիսուս Քրիստոսի Մայրը դարձաւ։

Հ. Հաւատքի մաս է՞ Մարիամի

միշտ կոյս մնալը։

Պ. Այո՛, Մարիամի միշտ կոյս մնալը հաւատքի մաս է և սրա համար է, որ ըստ գերազանցութեան Կոյս է կոչւում։

ԳԼՈՒԽ Ե.

ՀԱՆԳԱՆԱԿԻ ՉՈՐՐՈՐԴ ՄԱՍԸ

Հ. Ի՞նչ է սովորեցնում հանգանակի չորրորդ մասը՝ չարչարեցաւ ընդ Պոնտացւով Պիղատոսիւ, խաչեցաւ, մեռաւ և թաղեցաւ:

Պ. Հանգանակի չորրորդ մասը սովորեցնում է մեզ թէ՝ Յիսուս Քրիստոս՝ Իւր անգին Արեամբը մարդկանց փրկելու համար, Հրէաստանի Պոնտացի Պիղատոս կառավարչի ձեռքով չարչարւեցաւ, խաչափայտի վրայ մեռաւ,

յետոյ ցած բերելով՝ թաղեց։

Հ. *Ի՞նչ է նշանակում չարչարեցաւ բառը։*

Պ. *Չարչարեցաւ* բառը նշանակում է՝ այն ամեն տանջանքները, որ Յիսուս Քրիստոս կրեց Իւր չարչարանաց ժամանակը։

Հ. *Յիսուս Քրիստոս իբրեւ Աստուա՞ծ չարչարուեց թէ իբրեւ մարդ։*

Պ. Յիսուս Քրիստոս իբրև մարդ չարչարուեց, որովհետև իբրև Աստուած ո՛չ կարող էր չարչարուել, և ո՛չ մեռնել։

Հ. *Ի՞նչպիսի տանջանք էր խաչի տանջանքը։*

Պ. Խաչի տանջանքը՝ նոյն ժամանակուայ ամենաանգութ և ամենաանարգ տանջանքն էր։

Հ. *Ո՞վ Յիսուս Քրիստոսին խաչելու դատապարտեց։*

Պ. Յիսուս Քրիստոսին խաչելու դատապարտողը Հրէաստանի կառավա-

րիչ՝ Պոնտացի Պիղատոսն եղաւ, որ Նրա անմեղութիւնն իմանալով հանդերձ՝ ցածութեամբ Երուսաղէմի ժողովրդի անօրէն խնդիրը կատարեց։

Հ. *Յիսուս Քրիստոս չէ՞ր կարող Ինքն Իրան Հրէաների եւ Պիղատոսի ձեռքից ազատել։*

Պ. Այո, Յիսուս Քրիստոս կարող էր ինքն Իրան Հրէաների և Պիղատոսի ձեռքից ազատել, բայց իմանալով թէ՝ Իւր յաւիտենական Հօր կամքն այն էր, որ Ինքը մեզ փրկելու համար չարչարուէր ու մեռնէր, կամովին յանձն առաւ, մանաւանդ թէ անձամբ Իւր թշնամիներին դիմաւորելու գնաց և ինքնակամ անձնատուր լինելով, թող տուաւ որ մահուան դատապարտուի։

Հ. *Ո՞րտեղ խաչուեցաւ Յիսուս Քրիստոս։*

Պ. Յիսուս Քրիստոս խաչուեցաւ Գողգոթայ լերան վրայ։

Հ. Յիսուս Քրիստոս ի՞նչ արեց խաչի վրայ։

Պ. Յիսուս Քրիստոս խաչի վրայ աղօթեց իւր թշնամիների համար, իւր սուրբ աշակերտ՝ Յովհաննէսին, ու նրա անձով՝ մեզ բոլորիս իբրև Մայր տուաւ, իւր ամենասուրբ Մայր Մարիամին, իւր կեանքը զոհեց և մարդկանց մեղքերի փոխարէն աստուածային Արդարութեանը հատուցում արեց։

Հ. Բաւական չէ՞ր լինի, որ մեր մեղքերի փոխարէն մի հրեշտակ հատուցում անէր։

Պ. Ո՛չ, բաւական չ'էր լինի, որ մեր մեղքերի փոխարէն մի հրեշտակ հատուցում անէր, որովհետև մեղքով Աստծուն արած նախատինքը՝ մի տեսակէտով անսահման էր և այս բանին հատուցում անելու համար պէտք էր մի անձ՝ որի արդիւնքն անսահման լինէր։

Հ. Աստուածային արդարութեանը

հատուցում անելու համար հարկաւո՞ր էր որ Յիսուս Քրիստոս միանգամայն թէ՛ Աստուած լինէր եւ թէ՛ մարդ։

Պ. Այո՛, հարկաւոր էր, որ Յիսուս Քրիստոս մարդ լինէր, որպէսզի կարողանար չարչարուել ու մեռնել, և Աստուած՝ որպէսզի իւր չարչարանքներն անսահման արժէք ունենային։

Հ. Ինչո՞ւ համար հարկաւոր էր, որ Յիսուս Քրիստոսի արդիւնքներն անսահման արժէք ունենային։

Պ. Նրա համար հարկաւոր էր, որ Յիսուս Քրիստոսի արդիւնքներն անսահման արժէք ունենային, որովհետև մեղքով արհամարհուած աստուածային մեծվայելչութիւնը անսահման է։

Հ. Հարկաւո՞ր էր, որ Յիսուս Քրիստոս այնչափ չարչարուէր։

Պ. Ո՛չ, բացարձակապէս հարկաւոր չէր, որ Յիսուս Քրիստոս այնչափ չարչարուէր, որովհետև իւր գործերից իւրա-

քանչիւրն անսահման արժէք ունենալով՝ Նրա չարչարանքներից ամենափոքրն անգամ բաւական պիտի լինէր մեր փրկութեանը։

Հ. Ուրեմն ինչո՞ւ Յիսուս կամեցաւ այնչափ չարչարուիլ։

Պ. Յիսուս Քրիստոս կամեցաւ այնչափ չարչարուիլ՝ աստուածային Արդարութեանը լիովին հատուցում անելու, առ մեզ ունեցած սիրոյ մեծութիւնը ցոյց տալու և դէպի մեղքն մեծ գարշումն ազդելու համար։

Հ. Յիսուսի մահուան ժամանակ հրաշքներ պատահեցա՞ն։

Պ. Այո՛, Յիսուսի մահուան ժամանակ խաւարեց արեգակը, դողաց երկիրը և գերեզմանները բացուելով՝ բազմաթիւ մեռելներ յարութիւն առին։

Հ. Ո՞րտեղ թաղուեց Յիսուս Քրիստոսի մարմինը։

Պ. Յիսուս Քրիստոսի մարմինը

թաղուեց մի վիմափոր նոր գերեզմանի մէջ, որ մօտ էր այն տեղին, ուր թաղւեցաւ։

Հ. Հէնց որ Յիսուս Քրիստոս մեռաւ, Աստուածութիւնը բաժանուե՞ց իւր հոգուց ու մարմնից։

Պ. Հէնց որ Յիսուս Քրիստոս մեռաւ, Աստուածութիւնը ո՛չ հոգուց բաժանուեց և ո՛չ էլ մարմնից, այլ միայն հոգին զատուեցաւ մարմնից։

Հ. Ո՞ւմ համար է մեռել Յիսուս Քրիստոս։

Պ. Յիսուս Քրիստոս բոլոր մարդկանց համար է մեռել և ամենի փոխարէն հատուցում արել։

Հ. Եթէ Յիսուս Քրիստոս բոլոր մարդկանց փրկութեան համար է մեռել, ուրեմն ինչո՞ւ համար ամենքն էլ չեն փրկւում։

Պ. Յիսուս Քրիստոս ամեն մարդկանց համար է մեռել, բայց նրա համար

է, որ ամենքն էլ չեն փրկւում, որովհետև ամենքն էլ չ՛են ուզում Նրան ճանաչել, Նրա պատւիրանները պահել, մեզ սրբացնելու համար հաստատւած միջոցներն 'ի գործ դնել։

Հ. Փրկւելու համար բաւակա՞ն է Յիսուս Քրիստոսի՝ մեզի համար մեռած լինելը։

Պ. Փրկւելու համար բաւական չէ Յիսուս Քրիստոսի՝ մեզի համար մեռած լինելը, այլ պէտք է որ Նրա չարչարանաց ու մահւան պտուղն ու արդիւնքներն էլ մերձեցւեն մեզանից իւրաքանչիւրին, այս բանը կը լինի գլխաւորաբար այն խորհրդների միջոցով, որ Յիսուս Քրիստոս այս վախճանիս համար է հաստատել։ Բայց որովհետև շատերը կամ չեն ընդունում խորհուրդները և կամ էլ պարտ ու պատշաճ կերպով չեն ընդունում, այդ պատճառով իրանց համար անօգուտ են դարձնում Յիսուս Քրիստոսի մահը։

ԳԼՈՒԽ Ձ.

ՀԱՆԳԱՆԱԿԻ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՄԱՍԸ

Հ. Ի՞նչ է սովորեցնում մեզ հանգանակի հինգերորդ մասը՝ էջ 'ի դժոխս, յերրորդ յաւուր յարեաւ 'ի մեռելոց։

Պ. Հանգանակի հինգերորդ մասը սովորեցնում է մեզ, թէ Յիսուս Քրիստոսի հոգին՝ հէնց որ մարմնից բաժանւեց, սուրբ Հայրերի լիմպոսը գնաց և երրորդ օրը Իւր մարմնի հետ միացաւ, որն այլ ևս չը պիտի բաժանւի։

Հ. Ի՞նչ է նշանակում այստեղ դժոխք բառը։

Պ. Դժոխք բառը նշանակում է այստեղ սուրբ Հայրերի լիմպոսն, այսինքն՝ այնտեղն ուր արգելւած կային

արդարների հոգիներն՝ սպասելով Յիսուս Քրիստոսի փրկագործութեանը։

Հ. Ինչո՞ւ համար սուրբ Հայրերի հոգիները՝ Յիսուս Քրիստոսի մահուանից առաջ, արքայութիւն չէին մտել։

Պ. Նրա համար սուրբ Հայրերի հոգիները՝ Յիսուս Քրիստոսի մահուանից առաջ, արքայութիւն չէին մտել, որովհետև Ադամի մեղքովը փակուել էր արքայութիւնը, և կը վայելէր, որ այնտեղ առաջին մտնողը Յիսուս Քրիստոս լինէր, որովհետև Իւր մահուամբը կրկին բաց արեց նրան։

Հ. Ինչո՞ւ Յիսուս Քրիստոս ուզեց յետաձգել Իւր յարութիւնը մինչեւ երրորդ օրը։

Պ. Յիսուս Քրիստոս ուզեց յետաձգել Իւր յարութիւնը, մինչև երրորդ օրը, որպէսզի յայտնի ցոյց տար, թէ իրօք Ինքը մեռել էր։

Հ. Յիսուս Քրիստոս ուրի՞շ յարուցեալ մարդկանց պէս յարութիւն առաւ։

Ո՛չ, Յիսուս Քրիստոս ուրիշ յարուցեալ մարդկանց պէս յարութիւն չ'առաւ, որովհետև Յիսուս Քրիստոս Իւր անձնական զօրութեամբն յարութիւն առաւ, իսկ միւսները միայն Աստուծու զօրութեամբը։

ԳԼՈՒԽ Է.

ՀԱՆԳԱՆԱԿԻ ՎԵՑԵՐՈՐԴ ՄԱՍԸ

Հ. Ի՞նչ է սովորեցնում մեզ Հանգանակի վեցերորդ մասը՝ **համբարձաւ յերկինս, նստաւ ընդ աջմէ Աստուծոյ Հօր ամենակալի։**

Պ. Հանգանակի վեցերորդ մասը սովորեցնում է մեզ թէ Յիսուս Քրիստոս

յարութիւն առնելուց քառասուն օր յետոյ, Իւր անձնական զօրութեամբն երկինք համբարձաւ, իբրև Աստուած՝ փառքով Հօր Աստծուն հաւասար լինելով՝ իբրև Մարդ էլ, բոլոր հրեշտակներից ու սրբերից վեր է դասել և ամէն բանի Տէր դարձել։

Հ. Յիսուս Քրիստոս դեռ երկինք չը համբարձած՝ յարութիւն առնելուց յետոյ՝ ինչո՞ւ քառասուն օր էլ երկրիս վրայ մնաց։

Պ. Յիսուս Քրիստոս յարութիւն առնելուց յետոյ՝ դեռ երկինք չը համբարձած՝ քառասուն օր էլ երկրիս վրայ մնաց, որպէսզի յաճախ երևելով՝ ապացուցանէր, թէ իրօք յարութիւն է առել և Իւր Առաքեալներին աւելի ևս սփոփէր ու հաւատքի ճշմարտութիւնների մէջ հաստատէր։

Հ. Ինչո՞ւ Յիսուս Քրիստոս երկինք է համբարձել։

Պ. Յիսուս Քրիստոս երկինք է համբարձել, 1. Իւր մահուամբն արժանացած թագաւորութիւնը ժառանգելու, 2. մեր փառաց օթևանը պատրաստելու, և Իւր Հօր առաջ մեր Միջնորդն ու Բարեխօսը լինելու, և 3. Առաքեալների վրայ Սուրբ Հոգուն ուղարկելու համար։

Հ. Ինչո՞ւ համար ես ասում, թէ Յիսուս Քրիստոս երկինք համբարձաւ, իսկ Իւր ամենասուրբ Մայրն երկինք վերափոխուեց։

Պ. Նրա համար եմ ասում, թէ Յիսուս Քրիստոս երկինք *համբարձաւ*, իսկ Իւր ամենասուրբ Մայրն երկինք *վերափոխուեց*, որովհետև Յիսուս Քրիստոս Մարդ-Աստուած լինելով՝ Իւր անձնական զօրութեամբն երկինք համբարձաւ, իսկ Իւր Մայրն՝ որ արարած էր, թէպէտև ամենից արժանաւորը, Աստծու զօրութեամբն երկինք վերացաւ։

Հ. *Մեկնի՛ր ինձ՝* Նստաւ ընդ աջմէ Աստուծոյ Հօր ամենակալի *բանը։*

Պ. *Նստաւ* բառը նշանակում է՝ թէ Յիսուս Քրիստոս խաղաղութեամբ վայելում է Իւր փառքը, և *ընդ աջմէ Աստուծոյ Հօր ամենակալի* բառերը յայտնում են թէ բոլոր արարածներից վեր՝ պատւական տեղն է բռնել։

ԳԼՈՒԽ Ը.

ՀԱՆԳԱՆԱԿԻ ԵՕԹՆԵՐՈՐԴ ՄԱՍԸ

Հ. *Ի՞նչ է սովորեցնում մեզ հանգանակի եօթներորդ մասը՝* ուստի գալոց է 'ի դատել զկենդանիս և զմեռեալս։

Պ. Հանգանակի եօթներորդ մասը սովորեցնում է մեզ թէ աշխարհիս

կատարածին Յիսուս Քրիստոս մեծ փառքով ու վայելչութեամբ պիտի գայ ամեն բարի ու չար մարդկանց դատելու և իւրաքանչիւրին արժանացած պարգևը կամ պատիժը տալու համար։

Հ. *Եթէ իւրաքանչիւր ոք մահուանից անմիջապէս յետոյ պիտի դատուի Յիսուս Քրիստոսից առանձնական դատաստանի մէջ, էլ ինչո՞ւ ընդհանրական դատաստանի մէջ էլ պէտք է դատուինք ամենքս։*

Պ. Զանազան պատճառների համար ամենքս էլ պէտք է դատուինք ընդհանրական դատաստանի մէջ, 1. Աստուծու, 2. Յիսուս Քրիստոսի, 3. Սրբերի փառքի, 4. չարերի խայտառակութեան համար, 5. վերջապէս որպէս զի մարմինը հոգու հետ միասին՝ պարգևի կամ պատժի վճիռն ընդունի:

Հ. *Ընդհանրական դատաստանի մէջ ի՞նչպէս պիտի յայտնուի Աստծու-*

փառքը։

Գ. Ընդհանրական դատաստանի մէջ պիտի յայտնուի Աստուծու փառքը, որովհետև ամենքն էլ պիտի ճանաչեն թէ որչափ արդարութեամբ Աստուած կառավարում է աշխարհը, թէպէտ այժմ բարիներն երբեմն նեղութեան մէջ գտնուին, իսկ չարերը՝ բարեբախտութեան։

Հ. Ընդհանրական դատաստանի մէջ ի՞նչպէս պիտի յայտնուի Յիսուս Քրիստոսի փառքը։

Գ. Ընդհանրական դատաստանի մէջ պիտի յայտնուի Յիսուս Քրիստոսի փառքը, որովհետև Ինքն՝ որ անիրաւութեամբ դատապարտուեց մարդկանցից, այն ժամանակ պիտի հանդիսանայ ամբողջ աշխարհին իբրև գերագոյն դատաւոր ամեն մարդկանց։

Հ. Ընդհանրական դատաստանի մէջ ի՞նչպէս պիտի յայտնուի Սրբերի փառքը։

Գ. Ընդհանրական դատաստանի մէջ պիտի յայտնուի Սրբերի փառքը, որովհետև նրանցից շատերն՝ որ չարերից նախատուած մեռան, պիտի փառաւորուին ամբողջ աշխարհի ներկայութեամբը։

Հ. Ընդհանրական դատաստանի մէջ ի՞նչպիսի ամօթ պիտի կրեն չարերը։

Գ. Ընդհանրական դատաստանի մէջ շատ մեծ ամօթ պիտի կրեն չարերը, մանաւանդ նրանք, որ ճնշեցին արդարներին, և նրանք՝ որ իրանց իբրև առաքինի ու բարի մարդիկ ձևացրին այս կեանքումը, որովհետև պիտի տեսնեն որ իրանց ամենածածուկ մեղքերն անգամ ծանօթ են ամբողջ աշխարհին։

ԳԼՈՒԽ Թ.

ՀԱՆԳԱՆԱԿԻ ՈՒԹԵՐՈՐԴ ՄԱՍԸ

Հ. Ի՞նչ է սովորեցնում մեզ Հանգանակի ութերորդ մասը՝ հաւատամ 'ի Հոգին Սուրբ։

Պ. Հանգանակի ութերորդ մասը սովորեցնում է մեզ թէ՝ մի Սուրբ Հոգի կայ, որ ամենասուրբ Երրորդութեան երրորդ Անձն է, եւ թէ Ինքն էլ Հօր ու Որդու նման յաւիտենական, անսահման, ամենակարող եւ ամեն բանի ստեղծող Տէր եւ Աստուած է։

Հ. Սուրբ Հոգին ումի՞ց է բղխում։

Պ. Սուրբ Հոգին բղխում է Հօրից ու Որդուց իբրեւ մի սկզբից *ի ձեռն կամաց եւ սիրոյ։*

Հ. Եթէ Որդին ծնվում է Հօրից ու Սուրբ Հոգին Հօրից ու Որդուց, այնպէս է թւում թէ Հայրն ու Որդին Սուրբ Հոգուց առաջ լինին, ուրեմն ի՞նչպէս են ասում թէ երեք Անձերն էլ յաւիտենական են։

Պ. Նրա համար են ասում թէ երեք Անձերն էլ յաւիտենական են, որովհետեւ Հայրն *ի յաւիտենից* ծնում է Որդուն, եւ թէ Սուրբ Հոգին *ի յաւիտենից* բղխում է Հօրից ու Որդուց։

Հ. Ինչո՞ւ համար ամենասուրբ Երրորդութեան երրորդ Անձը մասնաւորապէս Սուրբ Հոգու անուամբն է կոչւում։

Պ. Ամենասուրբ Երրորդութեան երրորդ Անձն նրա համար է մասնաւորապէս Սուրբ Հոգու անուամբը կոչւում, որովհետեւ բղխում է Հօրից ու Որդուց *ի ձեռն շնչման եւ սիրոյ։*

Հ. Ո՞ր գործն է, որ մասնաւոր կեր-

պով ընծայւում է Սուրբ Հոգուն։

Պ. Այն գործն, որ մասնաւոր կերպով Սուրբ Հոգուն է ընծայւում, հոգիների սրբացուցումն է։

Հ. Արդեօք Հայրն ու Որդին էլ Սուրբ Հոգու պէս ճշմարտապէս սրբացնո՞ւմ են մեզ.

Պ. Այո՛, աստուածային երեք Անձերն էլ հաւասարապէս սրբացնում են մեզ։

Հ. Եթէ այդ այդպէս է, ուրեմն ինչո՞ւ հոգիների սրբացուցումը մասնաւորապէս Սուրբ Հոգուն է ընծայւում։

Պ. Հոգիների սրբացուցումը մասնաւորապէս Սուրբ Հոգուն է ընծայւում, որովհետև այս բանը սիրոյ գործ է, և սիրոյ գործերը Սուրբ Հոգուն են վերագրւում։

Հ. Սուրբ Հոգին ե՞րբ իջաւ Առաքեալների վրայ։

Պ. Սուրբ Հոգին՝ Հոգեգալստեան

օրը, այսինքն Յիսուս Քրիստոսի յարութիւնից յիսուն, իսկ համբարձմանից տասն օր վերջն իջաւ Առաքեալների վրայ։

Հ. Ո՞ւր էին գտնւում Առաքեալները Հոգեգալստից տասն օր առաջ։

Պ. Առաքեալները՝ սուրբ կոյս Մարիամի և ուրիշ աշակերտների հետ հաւաքւած՝ վերնատնում յարատև աղօթք էին անում, սպասելով Յիսուս Քրիստոսի՝ իրանց խոստացած Սուրբ Հոգուն։

Հ. Սուրբ Հոգին ի՞նչ արդիւնքներ առաջ բերաւ Առաքեալների մէջ։

Պ. Սուրբ Հոգին հաստատեց Առաքեալներին հաւատքի մէջ ու լցրեց նրանց լուսով, զօրութեամբ, սիրով և Իւր պարգևների առատութեամբ։

Հ. Սուրբ Հոգին միա՞յն Առաքեալների համար է ուղարկւել։

Պ. Սուրբ Հոգին ամբողջ Եկեղեցու

և ամեն հաւատացեալ անձի համար էլ է ուղարկել։

Հ. Սուրբ Հոգին ի՞նչ գործ է կատարում Եկեղեցու մէջ։

Պ. Սուրբ Հոգին Իւր շնորհքովն ու պարգևներովն այնպէս ոգևորում է Եկեղեցուն, ինչպէս որ հոգին՝ մարմինը, հաստատում է Նրա մէջ ճշմարտութեան և սիրոյ թագաւորութիւնը, օգնում է Նրան, որ արքայութեան ճանապարհի մէջ ապահով կերպով առաջնորդէ իւր որդիներին։

ԳԼՈՒԽ Ժ.

ՀԱՆԳԱՆԱԿԻ ԻՆՆԵՐՈՐԴ ՄԱՍԸ

1. Եկեղեցին ընդհանուր կերպով նկատուած

Հ. Ի՞նչ է սովորեցնում մեզ Հանգանակի իններորդ մասը՝ 'ի Սուրբ կաթուղիկէ Եկեղեցին, 'ի հաղորդութիւն Սրբոց։

Պ. Հանգանակի իններորդ մասը սովորեցնում է մեզ, թէ Յիսուս Քրիստոս երկրիս վրայ մի տեսանելի ընկերութիւն է հաստատել, որ կոչւում է կաթուղիկէ Եկեղեցի, և թէ Նրան կազմող բոլոր անձերը միմեանց հետ հաղորդակցութեան մէջ են գտնւում։

Հ. Ինչո՞ւ Հանգանակի մէջ Սուրբ

Հոգւոյ անմիջապէս վերջ, կաթողիկէ Եկեղեցու վրայ է խօսում։

Պ. Հանգանակի մէջ Սուրբ Հոգուց անմիջապէս վերջ, կաթուղիկէ Եկեղեցու վրայ է խօսում, յայտնելու համար, թէ Նրա սրբութիւնը՝ Սուրբ Հոգուց է առաջ գալիս, Որն ամէն սրբութեան աղբիւրն է։

Հ. Ի՞նչ է նշանակում Եկեղեցի բառը։

Պ. Եկեղեցի բառը նշանակում է՝ միաբանութիւն կամ ժողով բազմաթիւ անձերի։

Հ. Ո՞վ է մեզ Յիսուս Քրիստոսի Եկեղեցու մէջ հաւաքել կամ կոչել։

Պ. Մենք՝ Աստծու առանձին շնորհքով ենք Յիսուս Քրիստոսի Եկեղեցու մէջ կոչուել, որպէս զի հաւատքի լուսով և աստուածային օրէնքի պահպանութեամբն Իրան արժանի պաշտօն մատուցանելով հասնենք յաւիտենական կեանքին։

Հ. Ո՞ւր են գտնւում Եկեղեցու անդամները։

Պ. Եկեղեցու անդամները՝ մասամբ արքայութեան մէջ են գտնւում, և կազմում են *յաղթական Եկեղեցին*, մասամբ քաւարանի մէջ՝ *վշտակիր Եկեղեցին*, մասամբ էլ երկրիս վրայ՝ *զինուորեալ Եկեղեցին*։

Հ. Եկեղեցու այս զանազան մասերը միևնո՞յն Եկեղեցին են կազմում։

Պ. Այո, Եկեղեցու այս զանազան մասերը միևնոյն Եկեղեցին ու մարմինն են կազմում, որովհետև միևնոյն Գլուխն ունին՝ որ Յիսուս Քրիստոս է, միևնոյն հոգին՝ որ ոգևորում և միացնում է նրանց, միևնոյն վախճանն՝ որ յաւիտենական կեանքն է, որն արդէն վայելում են ոմանք, և ոմանք էլ սպասում են նրան։

Հ. Եկեղեցու ո՞ր մասն է նկատի առնւում գլխաւորապէս հանգանակի

այս իններորդ մասը:

Պ. Հանգանակի այս իններորդ մասը գլխաւորաբար նկատի առնում է, *զինուորեալ Եկեղեցին*, որի մէջ գտնըւում ենք այժմ:

2. Եկեղեցին մասնաւոր կերպով նկատուած.

Հ. Ի՞նչ է կաթողիկէ Եկեղեցին:

Պ. Կաթողիկէ Եկեղեցին՝ բոլոր մկրտուած հաւատացեալների ընկերութիւնը կամ միաբանութիւնն է, որոնք երկրիս վրայ ապրելով դաւանում են Յիսուս Քրիստոսի հաւատքն ու օրէնքը, միեւնոյն խորհրդներին մասնակցում, ու հնազանդում օրինաւոր Հովիւներին, գլխաւորաբար Հռովմէական Քահանայապետին:

Հ. Որոշ կերպով ասա ի՞նչ պէտք է

Եկեղեցու անդամ լինելու համար:

Պ. Եկեղեցու անդամ լինելու համար պէտք է մկրտուած լինել, հաւատալ ու դաւանել Յիսուս Քրիստոսի վարդապետութիւնը, միեւնոյն խորհրդներին մասնակցել, ու ճանաչել սրբազան Քահանայապետին և Եկեղեցու միւս օրինաւոր Հովիւներին:

Հ. Որո՞նք են Եկեղեցու օրինաւոր Հովիւները:

Պ. Եկեղեցու օրինաւոր Հովիւներն են՝ Հռովմէական Քահանայապետը, այսինքն՝ Սրբազան Պապն, որ է ընդհանուր Հովիւ, և Եպիսկոպոսները, բայց սրանցից Եպիսկոպոսների և ս. Քահանայապետի հպատակութեան ներքոյ՝ հովիւների պաշտօնն ունին միւս քահանաներն էլ, և մասնաւորապէս ժողովրդապետները:

Հ. Ինչո՞ւ ես ասում թէ՝ Հռովմէական Քահանայապետն է Եկեղեցու

ընդունանում Հոգին։

Պ. Որովհետև Յիսուս Քրիստոս ասաց Սուրբ Պետրոս Առաքեալին՝ որ առաջին Քահանայապետն էր, *դու ես վէմ եւ ի վերայ այդր վիմի շինեցից զԵկեղեցի իմ.... Եւ տաց քեզ զփականս արքայութեան երկնից, եւ զոր մի անգամ կապեսցես յերկրի, եղիցի կապեալ յերկինս, եւ զոր մի անգամ արձակեսցես յերկրի, եղիցի արձակեալ յերկինս* և ուրիշ անգամ, *արածեա զգառինս իմ, արածեա՛ զոչխարս իմ։*

Հ. *Ուրեմն Յիսուսի Քրիստոսի Եկեղեցուն չե՞ն պատկանում մկրտուած մարդկանց այն ամեն ընկերութիւնները, որ չեն ճանաչում իբր իրանց գլուխ՝ Հռովմէական Քահանայապետին։*

Պ. Ո՛չ, նրանք որ իբր իրանց գլուխ չ՛են ճանաչում Հռովմէական Քահանայապետին, չ՛են պատկանում Յիսուս Քրիստոսի Եկեղեցուն։

Հ. *Ի՞նչպէս կարելի է որոշել Յիսուսի Քրիստոսի Եկեղեցին այն քրիստոնեայ կոչուած ընկերութիւններից կամ աղանդներից, որոնք մարդկանցից են հաստատուել։*

Պ. Դիւրաւ կարելի է Յիսուս Քրիստոսի ճշմարիտ Եկեղեցին որոշել այն քրիստոնեայ կոչուած ընկերութիւններից կամ աղանդներից, որոնք մարդկանցից են հաստատուել, այս չորս նշաններով, որ են՝ մի, սուրբ, կաթուղիկէ և առաքելական։

Հ. *Ինչո՞ւ համար ես ասում թէ Եկեղեցին մի է։*

Պ. Նրա համար եմ ասում թէ ճշմարիտ Եկեղեցին մի է, որովհետև Իւր որդիները՝ ինչ ժամանակւայ ու տեղի որ լինին, միացել են միմեանց հետ, միևնոյն հաւատքով, պաշտօնով օրէնքով, միևնոյն խորհրդներին մասնակցելով, միևնոյն երևելի գլխի՝ Հռովմէա-

կամ Քահանայապետի ձեռքի տակը։

Հ. Կարելի չէ՞ որ շատ Եկեղեցիներ լինին։

Պ. Ո՛չ, կարելի չ'է որ շատ Եկեղեցիներ լինին, որովհետև ինչպէս որ մի է Աստուած, մի Հաւատք ու մի Մկրտութիւն, այնպէս էլ ճշմարիտ Եկեղեցին մէկից աւելի չէ՛ և չի էլ կարող լինել։

Հ. Բայց չէ՞ որ մէկ ազգի կամ թէմի միացած հաւատացեալներն էլ Եկեղեցիներ են կոչւում։

Պ. Այո՛, մէկ ազգի կամ թէմի միացած հաւատացեալներն էլ Եկեղեցիներ են կոչւում, բայց միշտ ընդհանուր Եկեղեցու մասերն են, ու Նրա հետ մի Եկեղեցի են կազմում։

Հ. Ինչո՞ւ համար ես ասում թէ՝ ճշմարիտ Եկեղեցին սուրբ *է։*

Պ. Նրա համար եմ ասում թէ ճշմարիտ Եկեղեցին *սուրբ* է, որովհետև

Յիսուս Քրիստոս՝ Նրա աներևոյթ Գլուխը սուրբ է, սուրբ են Նրա անդամներից շատերը, սուրբ՝ Նրա հաւատքն, օրէնքը, խորհուրդները, ու Նրանից դուրս չըկայ ու կարելի չէ ճշմարիտ սրբութիւն լինել։

Հ. Ճշմարիտ Եկեղեցին ինչո՞ւ կաթուղիկէ է կոչւում։

Պ. Ճշմարիտ Եկեղեցին *կաթուղիկէ* կամ *ընդհանրական* է կոչւում, որովհետև ընդգրկում է ամեն ժամանակւայ, տեղի, հասակի, վիճակի հաւատացեալներին, և աշխարհիս բոլոր մարդիկ կանչւել են Նրա մասը կազմելու։

Հ. Ճշմարիտ Եկեղեցին ինչո՞ւ առաքելական է կոչւում։

Պ. Ճշմարիտ Եկեղեցին *առաքելական* է կոչւում, որովհետև առանց ընդմիջահատութեան մինչև Առաքեալներն է հասնում, և հաւատում ու

սովորեցնում է ինչ որ հաւատացին ու սովորեցրին Առաքեալները, և առաջնորդւում ու կառավարւում է Նրանց օրինաւոր Յաջորդներից։

Հ. Ճշմարիտ Եկեղեցին ինչո՞ւ Հռոմեական էլ է կոչւում։

Պ. Ճշմարիտ Եկեղեցին Հռոմեական էլ է կոչւում, որովհետև միութեան, սրբութեան, կաթուղիկէութեան, առաքելականութեան չորս նշանները միայն այն Եկեղեցու մէջ են գտնւում, որ ընդունում է իբրև գլուխ Հռոմի Եպիսկոպոսին, որ Սուրբ Պետրոսի Յաջորդն է։

Հ. Ի՞նչպէս է կազմակերպուել Յիսուս Քրիստոսի Եկեղեցին։

Պ. Յիսուս Քրիստոսի Եկեղեցին կազմակերպւել է ճշմարիտ ու կատարեալ ընկերութեան պէս, ու կարող ենք Նրանում, ինչպէս մի բարոյական անձի մէջ, հոգին զանազանել մարմնից։

Հ. Ի՞նչ բանի մէջ է կայանում Եկեղեցու հոգին։

Պ. Եկեղեցու հոգին կայանում է այն բանի մէջ, որ ներքին է ու հոգևոր այսինքն՝ հաւատքի, յուսոյ, սիրոյ, շնորհքի, Սուրբ Հոգու պարգևների և Փրկչի ու Սրբերի արդիւնքներից առաջ եկած երկնային գանձերի մէջ։

Հ. Ի՞նչ բանի մէջ է կայանում Եկեղեցու մարմինը։

Պ. Եկեղեցու մարմինը կայանում է այն ամեն բանի մէջ, որ տեսնւում է արտաքուստ, ինչպէս են Իւր հաւատացեալների ընկերութիւնը, պաշտօն մատուցանելը, ուսուցանելու պաշտօնէութիւնն, արտաքին կարգադրութիւնը և կառավարութիւնը։

Հ. Փրկուելու համար բաւակա՞ն է կաթողիկէ Եկեղեցու ներս անդամ լինելը։

Պ. Ո՛չ, փրկւելու համար բաւա-

կան չէ կաթուղիկէ Եկեղեցու մի ոսէ անդամ լինելը, այլ պէտք է Նրա կենդանի անդամը լինել։

Հ. *Որո՞նք են Եկեղեցու կենդանի անդամները;*

Պ. Եկեղեցու կենդանի անդամները՝ բոլոր ու միայն արդարներն են, այսինքն՝ նրանք որ իրօք Աստծու շնորհքի մէջ են գտնւում։

Հ. *Իսկ որո՞նք են Եկեղեցու մեռած անդամները։*

Պ. Եկեղեցու մեռած անդամները այն հաւատացեալներն են, որ մահու-չափ մեղքի մէջ են գտնւում։

Հ. *Կարո՞ղ է փրկուիլ մէկը, որ կաթողիկէ, Առաքելական, Հռովմէական Եկեղեցուց դուրս է գտնւում։*

Պ. Ո՛չ, Կաթողիկէ, Առաքելական և Հռովմէական Եկեղեցուց դուրս ո՛չ ոք չի կարող փրկուիլ, ինչպէս որ Նոյի տապանից դուրս՝ որ այս Եկեղեցու օրի-

նակն էր, ո՛չ ոք չը կարողացաւ փրկուիլ ջրհեղեղից։

Հ. *Ուրեմն ի՞նչպէս են փրկուել հին կտակարանի նահապետները, մարգարէները եւ ամեն արդար մարդիկը։*

Պ. Հին կտակարանի ամեն արդարները փրկուել են ապագայ Քրիստոսի վրայ ունեցած հաւատքի պատճառով, որով արդէն հոգեւորապէս պատկանում էին այս Եկեղեցուն։

Հ. *Բայց կարո՞ղ է փրկուիլ նա որ առանց իւր յանցանքի Եկեղեցուց դուրս է գտնւում։*

Պ. Եթէ մկրտուած կամ գոնէ մկրտութիւնն ընդունելու անորոշ կերպով փափագող մէկն՝ առանց իւր յանցանքի, այսինքն՝ բարի հաւատքի մէջ լինելով, Եկեղեցուց դուրս է գտնւում բայց անկեղծութեամբ ճշմարտութիւնը փնտրում և Աստծու կամքը կարելի եղածին չափ լաւ կատարում, թէպէտև

այսպիսին Եկեղեցու մարմնից բաժանուած է, բայց հոգուն միացած լինելով հետևաբար կարող է փրկուիլ:

Հ. Իսկ կարո՞ղ է փրկուիլ նա, որ Եկեղեցու անդամը լինելով՝ չի կատարում նրա սովորեցրած վարդապետութիւնը:

Պ. Նա՝ որ կաթուղիկէ Եկեղեցու անդամն լինելով չի կատարում Նրա սովորեցրած վարդապետութիւնը, մեռած անդամ է, դրա համար չի կարող փրկուիլ, որովհետև չափահաս մարդու փրկութեանը համար ոչ միայն մկրտութիւնն ու հաւատքն են պահանջւում, այլ և հաւատքի համեմատ գործեր:

Հ. Պարտաւո՞ր ենք հաւատալ այն ամեն ճշմարտութիւններին, որ Եկեղեցին սովորեցնում է մեզ:

Պ. Այո՛, պարտաւոր ենք հաւատալու այն ամեն ճշմարտութիւններին, որ Եկեղեցին սովորեցնում է մեզ,

որովհետև Յիսուս Քրիստոս ասել է՝ ով որ չը հաւատայ, նա արդէն դատապարտուած է:

Հ. Պարտաւոր ենք նաև կատարել ինչ որ Եկեղեցին հրամայում է մեզ:

Պ. Այո՛, պարտաւոր ենք նաև կատարելու ինչ որ Եկեղեցին հրամայում է մեզ, որովհետև Յիսուս Քրիստոս ասել է Եկեղեցու Հովիւներին որ *ձեզ լսէ՝ ինձ լսէ, որ զձեզ անարգէ՝ զիս անարգէ:*

Հ. Եկեղեցին կարո՞ղ է սխալուիլ այն ճշմարտութիւնների մէջ, որ առաջարկում է մեզ հաւատալու:

Պ. Ո՛չ, Եկեղեցին չի կարող սխալել այն ճշմարտութիւնների մէջ, որ առաջարկում է մեզ հաւատալու, որովհետև Յիսուս Քրիստոսի խոստման համաձայն օժանդակւած է Սուրբ Հոգուց:

Հ. Ուրեմն կաթողիկէ Եկեղեցին

անսխալ է՞։

Պ. Այո՛, կաթուղիկէ Եկեղեցին անսխալ է, և այս պատճառով է, որ Իւր սահմանադրութիւնները մերժողները կորցնում են հաւատքն ու հերետիկոսներ են դառնում:

Հ. *Կաթողիկէ Եկեղեցին կարո՞ղ է կործանուիլ ու ոչնչանալ։*

Պ. Ոչ՛, կաթուղիկէ Եկեղեցին կարող է հալածանք կրել, բայց ոչ երբեք կործանուիլ ու ոչնչանալ, այլ պիտի տևէ մինչև աշխարհիս կատարածն, որովհետև Յիսուս Քրիստոս՝ ինչպէս որ խոստացել է, մինչև աշխարհիս վերջը Նրա հետը պիտի լինի։

Հ. *Ինչո՞ւ համար կաթողիկէ Եկեղեցին այնչափ հալածուել է։*

Պ. Նրա համար կաթուղիկէ Եկեղեցին այնչափ հալածուելէ, որովհետև Իւր աստուածային Հիմնադիրն էլ այսպէս հալածուեց, վասնզի դիմադրում է

ախտերին, կռիւ է մղում կրքերի դէմ և դատապարտում է բոլոր անիրաւութիւններին ու մոլորութիւններին։

Հ. *Ուղափառներն ուրիշ պարտաւորութիւններ էլ ունի՞ն դէպի Եկեղեցին։*

Պ. Իւրաքանչիւր ուղափառ պարտաւոր է անչափ սէր ունենալու դէպի Եկեղեցին, ինքն իրան պատիւ համարելու և երջանիկ սեպելու Նրան պատկանելուն համար և Նրա փառքի ու պայծառութեան համար իւր ձեռքն ունեցած բոլոր միջոցներն ի գործ դնելու։

3. *Ուսուցանող և Ուսանող Եկեղեցին*

Հ. *Արդեօք Եկեղեցին կազմող անդամների մէջ մի զանազանութիւն կա՞յ։*

Պ. Մի մեծ զանազանութիւն կայ Եկեղեցին կազմող անդամների մէջ որով-

հետև կան ոմանք, որ հրամայում են ու
սովորեցնում և ոմանք էլ հնազանդում
ու սովորում։

Հ. *Ի՞նչպէս է կոչվում Եկեղեցու
սովորեցնող մասը։*

**Պ. Եկեղեցու սովորեցնող մասը
կոչւում է՝** *ուսուցանող* **Եկեղեցի։**

Հ. *Ի՞նչպէս է կոչվում Եկեղեցու
սովորող մասը։*

**Պ. Եկեղեցու սովորող մասը կոչ-
ւում է** *ուսանող* **Եկեղեցի։**

Հ. *Ո՞վ է այս զանազանութիւնը
դրել Եկեղեցու մէջ։*

**Պ. Նոյն ինքն Յիսուս Քրիստոս
է դրել այս զանազանութիւնը Եկեղե-
ցու մէջ։**

Հ. *Ուրեմն ուսուցանող և ուսանող
Եկեղեցին երկու տարբեր Եկեղեցիներ
ե՞ն։*

Պ. *Ուսուցանող* **և** *ուսանող* **Եկեղե-
ցին միևնոյն Եկեղեցու երկու զանազան,**

**ինչպէս որ մարդու մարմնի մէջ գլուխը
տարբեր է միւս անդամներից, բայց և
այնպէս նրանց հետ մի անդամ է կազ-
մում։**

Հ. *Որո՞նցից է բաղկացել ուսուցա-
նող Եկեղեցին։*

Պ. *Ուսուցանող* **Եկեղեցին բաղ-
կացել է աշխարհիս վրայ ցիրուցան
եղած և կամ ժողովի մէջ հաւաքուած
ամէն Եպիսկոպոսներից և Ս. Քահա-
նայապետից՝ որ Նրանց գլուխն է։**

Հ. *Իսկ որո՞նցից է բաղկացել ուսա-
նող Եկեղեցին։*

Պ. *Ուսանող* **Եկեղեցին բաղկացել
է բոլոր հաւատացեալներից։**

Հ. *Ուրեմն ո՞ր անձերն Եկեղեցու
մէջ սովորեցնելու իշխանութիւնն ու-
նին։*

**Պ. Եկեղեցու մէջ սովորեցնելու իշ-
խանութիւնն ունին Ս. Քահանայա-
պետն, Եպիսկոպոսները և Նրանց իշ-**

խանութեան ներքոյ միւս սրբազան պաշտօնեաները։

Հ. Պարտաւո՞ր ենք հնազանդելու ուսուցանող Եկեղեցուն։

Պ. Անտարակոյս, ամենքս էլ պարտաւոր ենք հնազանդելու ուսուցանող Եկեղեցուն, եթէ չենք ուզում յաւիտենական դատապարտութեան պատժին ենթարկուել, որովհետև Յիսուս Քրիստոս Առաքեալների անձովն Եկեղեցու հովիւներին ասաց՝ *Որ ձեզ լսէ՝ ինձ լսէ, որ զձեզ անարգէ՝ զիս անարգէ։*

Հ. Եկեղեցին բացի սովորեցնելու իշխանութիւնից մի ուրիշ իշխանութիւն էլ ունի՞։

Պ. Այո, Եկեղեցին բացի սովորեցնելու իշխանութիւնից ունի նաև սրբազան իրերը մատակարարելու, օրէնքներ տալու և նրանց պահպանութիւնը պահանջելու իշխանութիւնը։

Հ. Արդեօք եկեղեցական նուիրապետութեան անդամներին իշխանութիւն տուողն ժողովուրդն է։

Պ. Ո՛չ, Միայն Աստուած է եկեղեցական նուիրապետութեան անդամներին իշխանութիւն տուողը և ոչ թէ ժողովուրդը, և այս ճշմարտութեան դէմ խօսիլը հերետիկոսութիւն է։

Հ. Ո՞ւմ է վերաբերում այս իշխանութիւնների գործադրութիւնը։

Պ. Այս իշխանութիւնների գործադրութիւնը միայն նուիրապետական դասին է վերաբերում, այսինքն՝ Ս. Քահանայապետին և իրանից կախում ունեցող Եպիսկոպոսներին։

4. Սրբազան Քահանայապետն ու Եպիսկոպոսները.

Հ. Ո՞վ է Սրբազան Պապը։

Պ. Սրբազան Պապը՝ Որին ծայրագոյն կամ Հռովմէական Քահանայապէտ էլ ենք կոչում, Հռովմի գահի վրայ նստած՝ Սուրբ Պետրոսի Յաջորդն է, երկրիս վրայ Յիսուս Քրիստոսի փոխանորդը և Եկեղեցու տեսանելի Գլուխը։

Հ. Հռովմէական Քահանայապետն ինչո՞ւ համար Սուրբ Պետրոսի Յաջորդն է։

Պ. Հռովմէական Քահանայապետը նրա համար Սուրբ Պետրոսի Յաջորդն է. որովհետև սուրբ Պետրոս՝ իւր անձի վրայ միացրեց Հռովմի Եպիսկոպոսութեան և ընդհանուր Եկեղեցու Գլխաւորութեան արժանապատուութիւնը, Աստծու կարգադրութեամբն իւր աթոռը հաստատեց Հռովմում և այնտեղ էլ մեռաւ. դրա համար ով որ Հռովմի Եպիսկոպոս է ընտրւում՝ ժառանգ է լինում Նրա բոլոր իշխանութեանը։

Հ. Ինչո՞ւ համար Հռովմէական Քահանայապետն Յիսուս Քրիստոսի Փոխանորդն է։

Պ. Նրա համար Հռովմէական Քահանայապետը Յիսուս Քրիստոսի Փոխանորդն է, որովհետև Նրան ներկայացնում է երկրիս վրայ ու Նրա փոխարէն կառավարում Եկեղեցին։

Հ. Ինչո՞ւ համար Հռովմէական Քահանայապետն Եկեղեցու տեսանելի Գլուխն է։

Պ. Նրա համար Հռովմէական Քահանայապետն Եկեղեցու տեսանելի Գլուխն է, որովհետև հէնց Յիսուս Քրիստոսի՝ Նրա աներևոյթ Գլխի իշխանութեամբը տեսանելի կերպով կառավարում է Նրան։

Հ. Ո՞րն է ուրեմն Ս. Քահանայապետի արժանապատուութիւնը։

Պ. Ս. Քահանայապետի արժանապատուութիւնն երկրիս վրայ ամենա-

գերազանցն է, որը գերագոյն և անմիջնորդական իշխանութիւն է տալիս Նրան բոլոր Հովիւների և հաւատացեալների վրայ։

Հ. Ս. Քահանայապետը կարո՞ղ է սխալիլ Եկեղեցուն սովորեցնելիս։

Պ. Ս. Քահանայապետը չի կարող սխալիլ, այսինքն՝ հաւատքի ու բարքի վերաբերեալ սահմանադրութիւնների մէջ անսխալ է։

Հ. Ինչո՞ւ համար Ս. Քահանայապետն անսխալ է։

Պ. Նրա համար Ս. Քահանայապետն անսխալ է, որովհետև Յիսուս Քրիստոս է խոստացել այդ ու միշտ օժանդակւած է Սուրբ Հոգուց։

Հ. Ս. Քահանայապետն ե՞րբ է անսխալ։

Պ. Ս. Քահանայապետը միայն այն ժամանակ է անսխալ, երբ իբրև Հովիւ ու Վարդապետ բոլոր քրիստո-

նեաների իր առաքելական գերագոյն իշխանութեան զօրութեամբը սահմանում է հաւատքի կամ բարքի վերաբերեալ մի վարդապետութիւն, որ պէտք է ընդունէ բովանդակ Եկեղեցին։

Հ. Ի՞նչ բանի դէմ կը մեղանչէր նա՝ որ չը հաւատար Սրբազան Քահանայապետի հանդիսաւոր սահմանադրութիւններին։

Պ. Հաւատքի դէմ կը մեղանչէր նա՝ որ չը հաւատար Սրբազան Քահանայապետի հանդիսաւոր սահմանադրութիւններին և կամ միայն կասկածէր նրանց վրայ. և եթէ իր անհաւատութեան մէջ յամառէր՝ այլ ևս ուղափառ չէր լինի, այլ հերետիկոս։

Հ. Աստուած ինչո՞ւ համար անսխալութեան պարգևը շնորհել է Սրբազան Քահանայապետին։

Պ. Աստուած նրա համար է անսխալութեան պարգևը Սրբազան Քա-

հանայապետին շնորհել, որպէս զի ամենքըս էլ ստոյգ ու ապահով լինինք այն ճշմարտութեան վրայ, որ Եկեղեցին սովորեցնում է մեզ:

Հ. Ե՞րբ սահմանուեց թէ Սրբազան Քահանայապետն անսխալ է:

Պ. Վատիկանեան ժողովումն էր որ հաստատուեց թէ Սրբազան Քահանայապետն անսխալ է, և եթէ մէկն յանդգնի այս սահմանադրութեան դէմ խօսելու հերետիկոս ու բանադրուած կը լինի:

Հ. Եկեղեցին Ս. Քահանայապետի անսխալութիւնը սահմանելով արդեօք նոր ճշմարտութիւն է՞ մտցրել հաւատքի մէջ:

Պ. Ո՛չ, Եկեղեցին Ս. Քահանայապետի անսխալութիւնը սահմանելով մի նոր ճշմարտութիւն չի մտցրել հաւատքի մէջ, այլ նորանոր մոլորութիւնների դիմադրելու համար, միայն սահ-

մանել է թէ՝ Ս. Քահանայապետի անսխալութիւնը՝ որ արդէն պարունակուած է Սուրբ գրքի և աւանդութեան մէջ, Աստուծոյ յայտնուած մի ճշմարտութիւն է, և հետևաբար պէտք է հաւատալ նորան իբրև հաւատքի մի ճշմարտութեան կամ մասի:

Հ. Իւրաքանչիւր ուղղափառ իբրեւ ի՞նչ պէտք է ճանաչէ Ս. Քահանայապետին:

Պ. Իւրաքանչիւր ուղղափառ պէտք է Ս. Քահանայապետին ճանաչէ իբրև Հայր, Հովիւ և ընդհանրական Վարդապետ, և մտքով ու սրտով Նրա հետ միացած լինի:

Հ. Որո՞նք են Եկեղեցու մէջ Ս. Քահանայապետից յետոյ՝ աստուածային կարգադրութեամբ ամենայարգոյ անձնաւորութիւնները:

Պ. Եկեղեցու մէջ Ս. Քահանայապետից յետոյ՝ աստուածային կարգա-

ղըրութեամբ ամենայարգոյ անձնաւորութիւններն՝ Եպիսկոպոսներն են։

Հ. Ո՞վքեր են Եպիսկոպոսները։

Պ. Եպիսկոպոսները հաւատացեալների Հովիւներն են, որոնք կարգւել են Սուրբ Հոգուց, որպէս զի Հռովմէական Քահանայապետի իշխանութեան ներքոյ, կառավարեն Աստուծոյ Եկեղեցին, իրանց յանձնւած թեմերի մէջ։

Հ. Ի՞նչ է Եպիսկոպոսն իւր սեփհական թեմի մէջ։

Պ. Եպիսկոպոսն իւր սեփհական թեմի մէջ՝ բոլոր հաւատացեալների թէ եկեղեցականների և թէ աշխարհականների, որ իւր թեմին են պատկանում, օրինաւոր Հովիւը, Հայրը, Վարդապետն ու Մեծաւորն է։

Հ. Եպիսկոպոսն ինչո՞ւ օրինաւոր Հովիւ է կոչւում։

Պ. Եպիսկոպոսն օրինաւոր Հովիւ է կոչւում, որովհետև այն իրաւա

սութիւնն, այսինքն՝ իշխանութիւնը որ ունի իւր սեփհական թեմը կառավարելու, Եկեղեցու կանոնների և օրէնքների համեմատ է տրւել իրան։

Հ. Ս. Քահանայապետն ու Եպիսկոպոսները որո՞նց յաջորդներն են։

Պ. Ս. Քահանայապետը՝ Սուրբ Պետրոսի՝ Առաքեալների իշխանի յաջորդն է, իսկ Եպիսկոպոսներն՝ Առաքեալների յաջորդներն են այն բանի մէջ, որ Եկեղեցու սովորական կառավարութեանն է վերաբերում։

Հ. Արդեօք հաւատացեալը պարտաւո՞ր է իւր Եպիսկոպոսի հետ միացած մնալու։

Պ. Այո, իւրաքանչիւր հաւատացեալ՝ թէ եկեղեցական լինի և թէ աշխարհական, պարտաւոր է իւր Եպիսկոպոսի հետ հոգւով ու սրտով միացած մնալու և նրա միջոցով հաղորդակցութեան մէջ գտնւելու Առաքելական Գա-

հի հետ։

Հ. Հաւատացեալն ի՞նչպէս պէտք է վարուի իւր Եպիսկոպոսի հետ։

Պ. Իւրաքանչիւր հաւատացեալ թէ եկեղեցական լինի և թէ աշխարհական, պէտք է սիրէ, յարգէ, պատուէ իւր Եպիսկոպոսին ու նրան հնազանդի այն ամեն բանի մէջ, որ հոգւոյ փրկութեանն ու թէմի հոգևոր կառավարութեանն է վերաբերում։

Հ. Որո՞նք են Եպիսկոպոսի օգնականները հոգիների խնամակալութեան մէջ։

Պ. Հոգիների խնամակալութեան մէջ Եպիսկոպոսի օգնականները՝ քահանաները և մասնաւորապէս ժողովրդապետներն են։

Հ. Ո՞վ է ժողովրդապետը։

Պ. Ժողովրդապետն այն Քահանան է, որ Եպիսկոպոսի իշխանութեան ներքոյ որոշուած է առաջնորդելու և կառավարելու թէմի մի մասը՝ որ ծուխ է կոչւում։

Հ. Որո՞նք են հաւատացեալների պարտքերը դէպի իրանց ժողովրդապետը։

Պ. Հաւատացեալները պարտաւոր են իրանց ժողովրդապետի հետ միացած մնալու, հլութեամբ նրան հնազանդելու, յարգելու և հպատակելու այն ամեն բանի մէջ, որ ծխի հոգաբարձութեանն է վերաբերում։

5. Սրբերի հաղորդութիւնը

Հ. Ի՞նչ է սովորեցնում մեզ Հաւատամքի իններորդ մասը՝ 'ի հաղորդութիւն Սրբոց խօսքերովը։

Պ. Հաւատամքի իններորդ մասը. *'ի հաղորդութիւն Սրբոց*, խօսքերովը

սովորեցնում է մեզ թէ՝ Եկեղեցու մէջ՝ անդամների սերտ միաւորութեան պատճառով, բոլոր հոգևոր թէ ներքին և թէ՝ արտաքին բարիքները ամենի համար հասարակ են:

Հ. *Որո՞նք են Եկեղեցու մէջ ներքին հասարակ շնորհները:*

Պ. Եկեղեցու մէջ ներքին հասարակ բարիքներն են՝ խորհրդների միջոցով ընդունուած շնորհքը, հաւատքը, յոյսը, սէրը, Յիսուս Քրիստոսի անհուն արժանիքները, ամենասուրբ Կոյսի ու Սրբերի յորդառատ արդիւնքները և Եկեղեցում կատարուած ամեն բարեգործութիւնների պտուղները:

Հ. *Որո՞նք են Եկեղեցու մէջ արտաքին հասարակ շնորհները:*

Պ. Եկեղեցու մէջ արտաքին հասարակ բարիքներն են՝ խորհուրդները, Պատարագի սուրբ զոհը, հասարակական աղօթքները, կրօնական պաշտամունքները և այն ամեն արտաքին կրթութիւնները, որ հաւատացեալներին միացնում են միմեանց հետ:

Հ. *Եկեղեցու բոլոր որդիները կը մասնակցո՞ւմ են այս շնորհներին:*

Պ. Եկեղեցու ներքին բարիքներին մասնակցում են միայն այն քրիստոնեաները, որ Աստծու շնորհքի մէջ են գտնւում և ոչ թէ մահուչափ մեղքի մէջ գտնուողները:

Հ. *Ինչո՞ւ այս շնորհներին չեն մասնակցում մահուչափ մեղքի մէջ գտնուողները:*

Պ. Որովհետև Աստծու շնորհքն է, որ միացնում է հաւատացեալներին Աստծու և միմեանց հետ, դրա համար մահուչափ մեղքի մէջ գտնուողները՝ զուրկ լինելով Աստծու շնորհքից, զրկւում են նաև հոգևոր բարիքների հաղորդութիւնից:

Հ. *Ուրեմն մահուչափ մեղքի մէջ*

գտնուող քրիստոնեաներն ամենևին չե՞ն օգտւում Եկեղեցու ներքին ու հոգևոր բարիքներից։

Պ. Մահուչափ մեղքի մէջ գտնուող քրիստոնեաներն էլ օգտւում են Եկեղեցու այն ներքին ու հոգևոր բարիքներից, որոնցից որ զուրկ են, որովհետև պահած լինելով քրիստոնէական անջնջելի կնիքը, նպաստում են հաւատացեալների աղօթքներից ու բարեգործութիւններից առ Աստուած դառնալու շնորհքն ընդունելու համար։

Հ. Մահուչափ մեղքի մէջ գտնուողները կարո՞ղ են մասնակցիլ Եկեղեցու արտաքին բարիքներին։

Պ. Մահուչափ մեղքի մէջ գտնուողները կարող են մասնակցիլ Եկեղեցու արտաքին բարիքներին, միայն թէ բանադրանքով Եկեղեցուց բաժանուած չը լինին։

Հ. Ինչո՞ւ այս հաղորդութեան

բոլոր անդամները միասին առնելով սուրբ են կոչւում։

Պ. Այս հաղորդութեան բոլոր անդամները միասին առնելով սուրբ են կոչւում, որովհետև ամենքն էլ սուրբ լինելու են կանչւել և սրբւել են Մկրտութեան միջոցով, ու նրանցից շատերն էլ արդէն կատարեալ սրբութեան են հասել։

Հ. Սրբերի հաղորդութիւնը մինչև երկինքն ու քաւարանն էլ է հասնում։

Պ. Այո՛, սրբերի հաղորդութիւնը մինչև երկինքն ու քաւարանն էլ է հասնում, որովհետև սէրը միացնում է այս երեք՝ յաղթական, վշտակիր ու զինուորեալ Եկեղեցիներին. Սուրբերն աղօթում են մեզ ու քաւարանի հոգիների համար, մենք էլ փառք ու պատիւ ենք տալիս Սրբերին ու կարող ենք օգնել քաւարանի հոգիներին, նրանց համար Պատարագներ ասել տալով, ողորմութիւններ անե-

լով, ներողութիւններ վաստըկելով և ուրիշ բարեգործութիւններ կատարելով։

Զ. Եկեղեցուց դուրս գտնուողները

Հ. Որո՞նք են որ չեն պատկանում Սրբերի հաղորդութեանը:

Պ. Սրբերի հաղորդութեանը չեն պատկանում միւս աշխարհում՝ դատապարտեալները, իսկ այս աշխարհում՝ ճշմարիտ Եկեղեցուց դուրս գտնուողները։

Հ. Որո՞նք են ճշմարիտ Եկեղեցուց դուրս գտնուողները։

Պ. Ճշմարիտ Եկեղեցուց դուրս գտնուողներն են՝ անհաւատները, հրեաները, հերետիկոսներն, ուրացողները, հերձուածողներն ու բանադրեալները։

Հ. Ո՞վքեր են անհաւատները։

Պ. Անհաւատները նրանք են, որ

ոչ մկրտուած և ոչ էլ հաւատում են Յիսուս Քրիստոսին, կամ որովհետև չաստուածներին են հաւատում ու երկրպագում, ինչպէս են կռապաշտները, կամ էլ միայն մի ճշմարիտ Աստուած ընդունելով հանդերձ, չեն հաւատում Քրիստոս Մեսիային որ եկել է Յիսուս Քրիստոսի անձովը, և ոչ էլ թէ պիտի գայ, ինչպէս են՝ մահմետականները և ուրիշ սրանց նմանները։

Հ. Ո՞վքեր են հրեաները։

Պ. Հրեաները նրանք են, որ Մովսիսի օրէնքն են դաւանում, ոչ մկրտուել և ոչ էլ հաւատում են Յիսուս Քրիստոսին։

Հ. Ո՞վքեր են հերետիկոսները։

Պ. Հերետիկոսներն այն մկրտուած մարդիկ են, որ յամառութեամբ յանձն չեն առնում հաւատալու մի ճշմարտութեան, որ Աստուած է յայտնել և կաթուղիկէ Եկեղեցին սովորեցնում իբրև հաւատ-

քի մաս, ինչպէս են՝ արիոսականները, նեստորականներն ու բողոքականների զանազան աղանդները։

Հ. Ո՞վքեր են ուրացողները։

Պ. Ուրացողները նրանք են, որ արտաքուստ մերժում և ուրանում են ուղղափառ հաւատքը, որ առաջ դաւանում էին։

Հ. Ո՞վքեր են հերձուածողները։

Պ. Հերձուածողներն այն քրիստոնեաներն են, որ բացարձակապէս չեն ժխտում հաւատքի մի ոեւէ վարդապետութիւն, այլ կամովին բաժանւում են Յիսուս Քրիստոսի Եկեղեցուց կամ օրինաւոր Հովիւներից։

Հ. Ո՞վքեր են բանադրեալները։

Պ. Բանադրեալները նրանք են, որ ամենածանր յանցանքի համար նզովւում են Ս. Քահանայապետից կամ Եպիսկոպոսից, և հետեւաբար իբրեւ անդամներ բաժանւում են Եկեղե-

ցու մարմնից, Որն սպասում ու փափագում է նրանց դարձին։

Հ. Պէ՞տք է վախենալ բանադրանքից։

Պ. Պէտք է մեծապէս վախենալ բանադրանքից, որովհետև այն ամենածանր ու սոսկալի պատիժն է, որ Եկեղեցին տալիս է իւր ապստամբ ու յամառ որդիներին։

Հ. Բանադրեալներն ի՞նչ բարիքներից են զրկւում։

Պ. Բանադրեալները զրկւում են հասարակական աղօթքներից, խորհրդներից, ներողութիւններից և եկեղեցական թաղմանից։

Հ. Կարո՞ղ ենք մի կերպով բանադրեալներին օգնել։

Պ. Մենք կարող ենք մի կերպով օգնել բանադրեալներին ու նրանց բոլորին, որ ճշմարիտ Եկեղեցու դուրս են գտնւում փրկարար խրատներով, աղօթքնե-

րով, բարեգործութիւններով, աղաչելով Աստծուն, որ Իւր ողորմութեամբը դէպի հաւատքը դառնալու և սրբերի հաղորդութեան մէջ մնալու շնորհքը պարգևէ Նրանց։

ԳԼՈՒԽ ԺԱ.

ՀԱՆԳԱՆԱԿԻ ՏԱՍՆԵՐՈՐԴ ՄԱՍԸ

Հ. Ի՞նչ է սովորեցնում մեզ հանգանակի տասներորդ մասն 'ի թողութիւն մեղաց։

Պ. Հանգանակի տասներորդ մասը սովորեցնում է մեզ՝ թէ Յիսուս Քրիստոս Իւր Եկեղեցուն իշխանութիւն է տուել մեղքերը թողնելու։

Հ. Եկեղեցին կարո՞ղ է ամեն տեսակ մեղք թողնել։

Պ. Այո՛, Եկեղեցին կարող է ամեն տեսակ մեղք թողնել, որչափ էլ բազմաթիւ ու ծանր լինին, որովհետև Յիսուս Քրիստոս կապելու և արձակելու լիուլի իշխանութիւն է տուել Նրան։

Հ. Ո՞վքեր են Եկեղեցու մէջ մեղքերը թողնելու իշխանութիւնը գործադրողում։

Պ. Նրանք՝ որ Եկեղեցու մէջ մեղքերը թողնելու իշխանութիւնն են գործադրում, են՝ ամենաառաջինը Ս. Քահանայապետը՝ որ միայն ինքն այս իշխանութեան լրութիւնն ունի, և յետոյ Եպիսկոպոսներն ու սրանց իշխանութեան ներքոյ՝ քահանաները։

Հ. Եկեղեցին ի՞նչպէս է թողնում մեղքերը։

Պ. Եկեղեցին Յիսուս Քրիստոսի արդիւնքների զօրութեամբն է թողնում մեղքերը, մատակարարելով այն խորհուրդները, որ այս վախճանիս համար

են հաստատել, մանաւորապէս Մկրտութիւնն ու Ապաշխարութիւնը։

ԳԼՈՒԽ ԺԲ.

ՀԱՆԳԱՆԱԿԻ ՏԱՍՆՈՒՄԷԿԵՐՈՐԴ ՄԱՍԸ

Հ. Ի՞նչ է սովորեցնում մեզ Հանգանակի տասնումէկերորդ մասն՝ ի յարութիւն մարմնոց։

Պ. Հանգանակի տասնումէկերորդ մասը սովորեցնում է մեզ թէ բոլոր մարդիկ յարութիւն պիտի առնեն և իւրաքանչիւր հոգի այս կեանքում ունեցած մարմնի հետ պիտի միանայ։

Հ. Ի՞նչպէս պիտի լինի մեռելների յարութիւնը։

Պ. Մեռելների յարութիւնը պիտի լինի Աստծու ամենակարող զօրութեամբը՝ Որին անկարելի բան չը կայ։

Հ. Ե՞րբ պիտի լինի մեռելների յարութիւնը։

Պ. Մեռելների յարութիւնը պիտի լինի աշխարհիս կատարածին, և յետոյ տեղի պիտի ունենայ ընդհանրական դատաստանը։

Հ. Աստուած ինչո՞ւ է ուզում մարմինների յարութիւնը։

Պ. Աստուած ուզում է մարմինների յարութիւնը, որովհետև ինչպէս որ հոգին բարի կամ չար է գործել մարմնի հետ միացած ժամանակը, այնպէս էլ նրա հետ իւր պատիժն կամ վարձքն ընդունի։

Հ. Ամեն մարդիկ միևնո՞յն կերպով յարութիւն պիտի առնեն։

Պ. Ո՛չ, ընտրեալների ու դատապարտեալների մարմինների մէջ շատ մեծ տարբերութիւն պիտի լինի, որովհետև միայն ընտրեալների մարմինները՝ յարուցեալ Յիսուս Քրիստոսի նման,

պիտի ունենան փառաւորեալ մարմինների յատկութիւնները:

Հ. *Որո՞նք են այն յատկութիւնները, որոնցով պիտի զարդարուին ընտրեալների մարմինները։*

Պ. Այն յատկութիւնները՝ որոնցով պիտի զարդարուին ընտրեալների փառաւորեալ մարմինները, են՝ *անկրականութիւն*, որով այլ ևս չեն կարող ենթարկուիլ և ոչ մի տեսակ չարիքի ու ցաւի, կարիք չեն զգար կերակրի, հանգստութեան և սրանց նման ուրիշ բաների, *պայծառութիւն*, որով արևի և աստղերի նման պիտի փայլեն, *թեթևութիւն*, որով մի ակնթարթում առանց յոգնութեան կարող են մի տեղից փոխադրուիլ ուրիշ տեղ և երկրից՝ երկինք, *նրբութիւն*, որով՝ առանց արգելքի կարող են որևէ մարմնի միջից անցնել ինչպէս որ յարուցեալ Յիսուս Քրիստոս արեց։

Հ. *Ի՞նչպէս պիտի լինին դատապար-*

տեալների մարմինները։

Պ. Դատապարտեալների մարմինները զուրկ պիտի մնան Երանեալների փառաւոր մարմինների յատկութիւններից ու պիտի կրեն յաւիտենական դատապարտութեան սոսկալի կնիքը։

ԳԼՈՒԽ ԺԳ.

ՀԱՆԳԱՆԱԿԻ ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՄԱՍԸ

Հ. *Ի՞նչ է սովորեցնում մեզ Հանգանակի վերջին մասը՝* ի կեանս յաւիտենականս։

Պ. Հանգանակի վերջին մասը սովորեցնում է մեզ թէ ներկայ կեանքից յետոյ՝ մի ուրիշ կեանք էլ կայ, կամ յաւիտեանս երջանիկ՝ ընտրեալների համար արքայութեան մէջ կամ էլ յաւիտեանս թշուառ՝ դատապարտեալ-

ների համար, դժոխքի մէջ։

Հ. Մենք կարո՞ղ ենք հասկանալ արքայութեան երջանկութիւնը։

Պ. Մենք չենք կարող հասկանալ արքայութեան երջանկութիւնը, վասն զի գերազանցում է մեր սահմանափակ մտքի իմացականութիւնը և կարելի չէ երկնային բարիքներն բաղդատել երկրայինների հետ։

Հ. Ի՞նչ բանի մէջ է կայանում ընտրեալների երջանկութիւնը։

Պ. Ընտրեալների երջանկութիւնը կայանում է Աստծուն՝ որ ամեն բարութեան աղբիւրն է, տեսնելուն, սիրելուն ու ցմիշտ ժառանգելուն մէջ։

Հ. Ի՞նչ բանի մէջ է կայանում դատապարտեալների թշուառութիւնը։

Պ. Դատապարտեալների թշուառութիւնը կայանում է Աստծու տեսութիւնից զրկուելուն ու դժոխքի մէջ յաւիտենական տանջանքներով պատժուելուն մէջ։

Հ. Արքայութեան բարիքներն ու դժոխքի չարիքները միա՞յն հոգիների համար են։

Պ. Արքայութեան բարիքներն ու դժոխքի չարիքները այժմ միայն հոգիների համար են, որովհետև հիմայ միայն հոգիներն են արքայութիւն կամ դժոխք գնում, բայց մարմինների յարութիւնից վերջը, մարդիկ իրանց կատարեալ բնութեամբը, այսինքն՝ հոգւով ու մարմնով միշտ երջանիկ կամ ապերջանիկ պիտի լինին։

Հ. Արքայութեան բարիքները հաւասա՞ր պիտի լինին ընտրեալներին, ու դժոխքի տանջանքները դատապարտեալներին։

Պ. Արքայութեան բարիքներն՝ ընտրեալների և դժոխքի չարիքները դատապարտեալների համար, իրանց էութեանն ու յաւիտենական տևողութեանը նայելով հաւասար պիտի լինին, բայց

չափի կամ աստիճանի կողմից՝ աւելի կամ նուազ՝ իւրաքանչիւրի արդիւնքների և ապարդիւնքների համեմատ։

Հ. *Ի՞նչ է նշանակում հանգանակի վերջին ամէն բառը։*

Պ. Ամէն բառն աղօթքների վերջ, նշանակում է "այսպէս լինի„ իսկ հանգանակի վերջը՝ նշանակում է "այսպէս է„ այսինքն՝ հաւատում եմ թէ բոլորովին ճշմարիտ է, ինչ որ պարունակւում է այս տասներկու մասերի մէջ, և ես աւելի հաստատ եմ այս բաների վրայ, քան թէ նոյն իսկ աչքերովս տեսնէի։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ԱՂՕԹՔԸ.

ԳԼՈՒԽ Ա.

ԱՂՕԹՔՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԵՐՊՈՎ ՆԿԱՏԻԱԾ

Հ. *Ի՞նչ բանի վրայ է խօսում քրիստոնէական վարդապետութեան երկրորդ մասը։*

Պ. Քրիստոնէական վարդապետութեան երկրորդ մասը ընդհանրապէս աղօթքի վրայ է խօսում, իսկ մասնաւորապէս Հայր մերի վրայ։

Հ. *Ի՞նչ է աղօթքը։*

Պ. Աղօթքը մեր մտքի առ Աստուած ամբառնալն է Նրան երկրպագութիւն ու շնորհակալութիւն մատուցանելու և Նրանից մեզի հարկաւոր եղածը խնդրելու համար։

Հ. Բանի՞ տեսակ աղօթք կայ։

Պ. Երկու տեսակ աղօթք կայ՝ մտաւոր ու ձայնաւոր. Մտաւոր աղօթքն այն է, որ միայն մտքով է կատարւում. իսկ ձայնաւորն այն՝ որ մտադիր ու ջերմեռանդ խօսքերով է լինում։

Հ. Կարելի՞ է մի ուրիշ կերպով էլ բաժանել աղօթքը։

Պ. Կարելի է նաև աղօթքը՝ առանձնական և հրապարակական աղօթքի բաժանել:

Հ. Ո՞րն է առանձնական աղօթքը։

Պ. Առանձնական աղօթքն այն է, որ իւրաքանչիւր ոք առանձին՝ իրա կամ ուրիշի համար է անում։

Հ. Ո՞րն է հրապարակական աղօթքը:

Պ. Հրապարակական աղօթքն այն է, որ սրբազան պաշտօնեաներից է կատարւում Եկեղեցու անուամբ ու հաւատացեալ ժողովրդի փրկութեան համար։ Կարելի է նաև հրապարակական կոչել այն աղօթքը, որ հաւատացեալները հասարակութեամբ ու հրապարակաւ կատարում են թափօրների, ուխտագնացութիւնների ու եկեղեցու մէջ։

Հ. Ի՞նչ բանի վրայ է հիմնւած մեր յոյսը թէ՝ աղօթքով կ՚ընդունենք մեզի հարկաւոր եղած օգնութիւնները ու շնորհները։

Պ. Այն յոյսը՝ որ ունինք թէ կ՚ընդունինք Աստծուց մեզի հարկաւոր եղած օգնութիւններն ու շնորհները, հիմնւած է ամենակարող, ամենաողորմ և ամենահաւատարիմ Աստծու խոստումների և Յիսուս Քրիստոսի արդիւնքների վրայ։

Հ. Ո՞ւմ անուամբ պէտք է Աստու-

ծուց խնդրենք մեզի հարկաւոր եղած շնորհքները։

Պ. Յիսուս Քրիստոսի անուամբ պէտք է Աստծուց խնդրենք մեզի հարկաւոր եղած շնորհքներն, ինչպէս որ ինքն է սովորեցրել մեզ այդ բանը և Եկեղեցին էլ կատարում է՝ իւր աղօթքները վերջացնելով՝ *Տէրամբ մերով* Յի*սուսիւ Քրիստոսիւ* բառերով, այսինքն՝ Տէրն մեր Յիսուս Քրիստոսի միջնորդութեամբը։

Հ. *Ինչո՞ւ համար Յիսուս Քրիստոսի անուամբ պէտք է շնորհքներն Աստծուց։ խնդրենք*

Պ՝ Նրա համար պէտք է Յիսուս Քրիստոսի անուամբը շնորհքներն Աստըծուց խնդրենք, որովհետև Ինքն մեր Միջնորդը լինելով՝ միայն Իրա միջոցով ենք կարող Աստծու աթոռի առաջ ներկայանալ։

Հ. *Եթէ աղօթքն այնչափ զօրաւոր*

է, ուրեմն ինչո՞ւ համար շատ անգամ մեր խնդիրներն անկատար են մնում։

Պ. Նրա համար շատ անգամ մեր խնդիրներն անկատար են մնում, որովհետև կամ մեր յաւիտենական փրկութեանը վնասակար բաներ ենք խնդրում և կամ էլ պարտ ու պատշաճ կերպով չենք աղօթում.

Հ. *Գլխաւորապէս ո՞ր բաները պէտք է Աստծուց խնդրենք։*

Պ. Գլխաւորաբար պէտք է խնդրենք Աստծուց՝ Իւր փառքը, մեր յաւիտենական փրկութիւնն ու նրան հասնելու միջոցները։

Հ. *Արդեօք թոյլ տրուած չէ՞ ժամանակաւոր բարիքներ էլ խնդրելու։*

Պ. Այո՛ թոյլ տրուած է նաև ժամանակաւոր բարիքներ Աստծուց խնդրելու, բայց այն պայմանով որ Աստըծու ամենասուրբ կամքին համաձայն լինին և արգելք չը դնեն մեր յաւիտենական

փրկութեանը։

Հ. *Եթէ Աստուած բոլոր մեզի հարկաւոր եղածը գիտէ, ուրեմն էլ ի՞նչու պէտք է աղօթք անել։*

Պ. Թէպէտ Աստուած մեզի հարկաւոր եղածը գիտէ, բայց և այնպէս ուզում է աղօթենք՝ որպէս զի ճանաչենք թէ Ինքն է ամեն բարիքների տուողը, մեր հլու հպատակութիւնը յայտնենք Իրան և Իւր շնորհքներին արժանանանք։

Հ. *Ո՞րն է այն գլխաւոր ու լաւագոյն տրամադրութիւնը, մեր աղօթքներն արդիւնաւոր անելու համար։*

Պ. Մեր աղօթքներն արդիւնաւոր անելու համար գլխաւոր ու լաւագոյն տրամադրութիւնը՝ շնորհքի վիճակի մէջ գտնուելն՝ է, իսկ եթէ զուրկ ենք նրանից, գոնէ առ այն գտնուելու ըղձանքը։

Հ. *Ուրիշ ի՞նչ տրամադրութիւններ են պահանջւում լաւ աղօթելու համար։*

Պ. Լաւ աղօթելու համար պահանջուած մասնաւոր տրամադրութիւններն են՝ մտադրութիւն, խոնարհութիւն, վստահութիւն, յարատևութիւն ու համակերպութիւն Աստծու կամքի հետ։

Հ. *Ի՞նչ ասել է մտադրութեամբ աղօթել։*

Պ. Մտադրութեամբ աղօթել ասել է՝ մտածել թէ Աստծու հետ ենք խօսում, դրա համար պարտաւոր ենք մեծ յարգանքով ու ջերմեռանդութեամբ աղօթք անել, հեռացնելով որչափ որ կարելի է մտքի ցնդումները, այսինքն՝ ոևէ մտածմունք, որ չի վերաբերւում աղօթքին։

Հ. *Արդեօք մտքի ցնդումները պակասեցնո՞ւմ են աղօթքի արդիւնքը։*

Պ. Այո, երբոր մենք ենք նրանց պատճառ և կամ փոյթով չենք մերժում նրանց։ Բայց եթէ մենք ջանանում ենք մեր միտքն ամփոփ պահել

Աստծու վրայ, այն ժամանակ ցնդումները ոչ միայն չեն պակասեցնում մեր աղօթքի արդիւնքն, այլ նաև կարող են աւելացնել։

Հ. Ի՞նչ պէտք է անենք ամփոփութեամբ աղօթելու համար:

Պ. Նախ քան աղօթելը՝ պէտք է որ հեռացնենք ցնդումների առիթները, և աղօթելիս՝ պէտք է մտածենք թէ Աստծու ներկայութեան առաջ ենք, Որը տեսնում ու լսում է մեզ։

Հ. Ի՞նչ ասել է խոնարհութեամբ աղօթել։

Պ. Խոնարհութեամբ աղօթել ասել է անկեղծութեամբ ճանաչել մեր անարժանութիւնը, տկարութիւնն ու թշուառութիւնը, և՝ մարմնի վայելուչ դրութեամբ աղօթք անել։

Հ. Ի՞նչ ասել է վստահութեամբ աղօթել։

Պ. Վստահութեամբ աղօթել ասել

է՝ պէտք է որ հաստատ յոյս ունենանք թէ՝ մեր աղօթքն ընդունելի կը լինի, եթէ նրանից Աստծու փառքն ու մեր ճշմարիտ բարիքն առաջ գայ:

Հ. Ի՞նչ ասել է յարատևութեամբ աղօթել։

Պ. Յարատևութեամբ աղօթել ասել է՝ պէտք չէ դադարենք աղօթելուց, եթէ Աստուած չը լսէ մեզ անմիջապէս, այլ պէտք է աւելի եռանդեամբ շարունակենք աղօթել։

Հ. Ի՞նչ ասել է Աստծու կամքի հետ համակերպութեամբ աղօթել։

Պ. Ասել է թէ պէտք է համակերպվենք Աստծու կամքի հետ, Որը մեզանից աւելի լաւ գիտէ՝ ինչ որ հարկաւոր է մեր յաւիտենական փրկութեանն, եթէ նոյն իսկ մեր աղօթքներն ընդունելի չը լինեին։

Հ. Աստուած միշտ լսու՞մ է լաւ կատարուած աղօթքները:

Պ. Այո՛, Աստուած միշտ լսում է լաւ կատարուած աղօթքները, բայց ո՛չ այն կերպով, որ մենք ենք ուզում, այլ այնպէս ինչպէս որ Ինքը գիտէ թէ աւելի օգտակար է մեր փրկութեանը:

Հ. *Աղօթքն ի՞նչ արդիւնքներ է առաջ բերում մեզանում:*

Պ. Աղօթքն իմացնել է տալիս մեզ՝ թէ ամեն բանի մէջ կախում ունինք Աստծուց՝ Որ գերագոյն Տէրն է, մտածել է տալիս երկնային բաների վրայ, առաջացնում առաքինութիւնների մէջ, մեզ համար ողորմութիւն ընդունում Աստըծուց, փորձութիւնների մէջ՝ զօրացնում, կարօտութիւնների մէջ՝ օգնում և ընդունում է մեզ համար վերջնական յարատեւութեան շնորհքը:

Հ. *Մասնաւորապէս ե՞րբ պէտք է աղօթենք:*

Պ. պէտք է աղօթենք մասնաւորապէս՝ վտանգների, փորձութիւնների ու

մահուան ճգնաժամի մէջ, բացի սրանից պէտք է նաև ստէպ աղօթենք ու լաւ է որ այդ բանն անենք առաւօտ, երեկոյ, և օրւայ կարևոր գործերի սկզբում:

Հ. *Որո՞նց համար պարտաւոր ենք աղօթելու:*

Պ. Ամենի համար էլ պարտաւոր ենք աղօթելու, այսինքն՝ մեզ, մեր ծնողների, մեծաւորների, բարերարների, բարեկամների և թշնամիների համար. խեղճ մեղաւորների դարձի համար, և նրանց՝ որ ճշմարիտ Եկեղեցուց դուրս են գտնւում, ու քաւարանի սուրբ հոգիների համար:

ԳԼՈՒԽ Բ.

ՏԷՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՕԹՔԸ

1.- Տէրունական աղօթքն ընդհանուր կերպով նկատած.

Հ. Ո՞րն է ամենագերազանց ձայնաւոր աղօթքը։

Պ. Ամենագերազանց ձայնաւոր աղօթքը Հայր մերն է, որ Յիսուս Քրիստոս ինքն սովորեցրել է մեզ։

Հ. Ինչո՞ւ Հայր մերն ամենագերազանց աղօթքն է։

Պ. Հայր մերն ամենագերազանց աղօթքն է, որովհետև Յիսուս Քրիստոս ինքն է շարադրել ու սովո-

րեցրել մեզ, և որովհետև պարզ ու համառօտ խօսքերով պարունակում է, ինչ որ կարող ենք Աստծուց յուսալ, և ուրիշ ամեն աղօթքների օրինակն ու տիպարն է։

Հ. Արդեօք Հայր մերն աղօթքների ամենազօրաւո՞րն էլ է։

Պ. Այո՛, Հայր մերն աղօթքների ամենազօրաւորն էլ է, որովհետև ամենից աւելի հաճոյ է Աստծուն այն խօսքերով կատարելուն համար, որ իւր աստուածային Որդին է թելադրել մեզ։

Հ. Ինչո՞ւ Հայր մերը տէրունական աղօթք է կոչւում։

Պ. Հայր մերը տէրունական աղօթք է կոչւում, որ ասել է Տիրոջ աղօթք. որովհետև Յիսուս Քրիստոս ինքն անձամբ սովորեցրել է մեզ։

Հ. Հայր մերի մէջ քանի՞ խնդրուածք կայ։

Պ. Հայր մերի մէջ եօթը խնդրուած

կայ, մի առաջաբանով ու մի վերջաբանով։

Հ. Ասա Հայր մերը։

Պ. Հայր մեր, որ յերկինս ես,

1. Սուրբ եղիցի՛ անուն Քո։

2. Եկեսցէ՛ արքայութիւն Քո։

3. Եղիցին կամք Քո, որպէս յերկինս և յերկրի։

4. Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր։

5. Եւ թո՛ղ մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց։

6. Եւ մի՛ տանիր զմեզ 'ի փորձութիւն։

7. Այլ փրկեա՛ զմեզ 'ի չարէ զի Քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս. ամէն։

Հ. Ինչո՞ւ տէրունական աղօթքի սկզբում Աստծուն աղօթելիս Նրան

Հայր ենք անւանում։

Պ. Տէրունական աղօթքի սկզբում Աստծուն աղօթելիս Նրան Հայր ենք անւանում, որպէս զի վստահութիւն ունենանք Իւր անհուն բարութեան վրայ, քանի որ Իւր զաւակներն ենք։

Հ. Ի՞նչպէս կարող ենք ասել թէ մենք Աստծու զաւակներն ենք։

Պ. Մենք Աստծու զաւակներն ենք՝ 1. որովհետև Ինքն է ստեղծել մեզ Իւր պատկերի նման և Իւր նախախնամութեամբը պահում ու կառավարում է 2. առանձին մարդասիրութեամբ՝ Մկրտութեան մէջ որդեգրել է մեզ իբրև Յիսուս Քրիստոսի եղբայրներ ու Նրա հետ յաւիտենական փառքին ժառանգակից արել։

Հ. Ինչո՞ւ Աստծուն ասում ենք՝ Հայր մեր, *և ոչ* Հայր իմ։

Պ. Մենք Աստծուն ասում ենք *Հայր մեր և ո՛չ Հայր իմ,* որովհետև

ամենքս էլ Նրա որդիներն ենք, դրա համար պարտաւոր ենք միմեանց իբրև եղբայրներ նկատելու, սիրելու և իրարու համար աղօթելու։

Հ. *Աստուած ամեն տեղ է, ուրեմն ինչո՞ւ համար ենք ասում՝ որ յերկինս ես·*

Պ. Աստուած ամեն տեղ է, բայց նրա համար ենք ասում Հայր մեր, որ *յերկինս ես*, որպէս զի մեր միտքը վերացնենք դէպի երկինք, ուր Աստուած փառքի մէջ Ինքն Իրան ցոյց է տալիս Իւր որդիներին։

2 — *Առաջին խնդրուածը*

Հ. *Ի՞նչ ենք խնդրում՝* սուրբ եղիցի անուն Քո, *առաջին խնդրուածով։*

Պ. *Սուրբ եղիցի անուն Քո՝* առաջին խնդրուածով խնդրում ենք, որ ամ-

բողջ աշխարհը և մանաւորապէս մենք ճանաչենք, սիրենք, պատուենք ու ծառայենք Աստծուն։

Հ. *Ի՞նչ է մեր դիտումն երբ խնդրում ենք Աստծուց, որ ամբողջ աշխարհը ճանաչէ, սիրէ, պատուէ ու ծառայէ Իրան։*

Պ. Մեր դիտումն է խնդրել Աստծուց, որ անհաւատները ճշմարիտ Աստծուն ճանաչեն, հերետիկոսներն իրանց մոլորութիւնները տեսնեն, հերձուածողներն Եկեղեցու հետ միանան, մեղաւորները դարձի գան և արդարները լաւութեան մէջ յարատևեն։

Հ. *Ինչո՞ւ համար ամեն բանից առաջ խնդրում ենք որ Աստծու անունը սուրբ լինի։*

Պ. Նրա համար ամեն բանից առաջ խնդրում ենք՝ որ Աստծու անունը սուրբ լինի, որովհետև Աստծու փառքը պէտք է որ մեր ամեն բարիքներից ու

շահերից վեր դասենք։

Հ. *Մենք ի՞նչպէս ենք կարող Աստուծուն փառք տալ։*

Պ. Մենք կարող ենք Աստծուն փառք տալ՝ աղօթքով, բարի օրինակ տալով ու բոլոր մեր մտածմունքներն, զգացմունքներն ու գործերն Իրան ուղղելով։

3 — Երկրորդ խնդրուածը.

Հ. **Աստծու արքայութիւն** *գալով ի՞նչ ենք հասկանում։*

Պ. *Աստուծոյ արքայութիւն* ասելով երեք հոգևոր թագաւորութիւններ ենք հասկանում՝ 1. Աստծու թագաւորութիւնը՝ մեզանում, այսինքն՝ շնորհքի թագաւորութիւնը, 2, Աստծու թագաւորութիւնը՝ երկրիս վրայ, այսինքն՝ սուրբ կաթուղիկէ Եկեղեցին և 3 Աստծու թագաւորութիւնը՝ երկնքում կամ արքայութիւնը։

Հ. **Եկեսցէ արքայութիւն Քո** *բառերով ի՞նչ ենք խնդրում շնորհքի վերաբերմամբ։*

Պ. Շնորհքի վերաբերմամբ խնդրում ենք, որ Աստուած թագաւորէ մեր վրայ Իւր սրբարար շնորհքով, որով Ինքը բարեհաճում է մեր սրտի մէջ բնակել՝ ինչպէս մի թագաւոր իւր արքունիքում, և Իրա հետ միացնէ մեզ հաւատքի, յոյսոյ և սիրոյ առաքինութիւնների միջոցով, որոնցով թագաւորումէ մեր մտքի, սրտի ու կամքի վրայ։

Հ. **Եկեսցէ արքայութիւն Քո** *բառերով ի՞նչ ենք խնդրում Եկեղեցու վերաբերմամբ։*

Պ. Եկեղեցու վերաբերմամբ խնդրում ենք, որ Նա միշտ աճելի ևս ընդարձակւի և ամբողջ աշխարհի մէջ տարածւի մարդկանց փրկութեան հա-

մար։

Հ. **Եկեսցէ արքայութիւն Քո** *գալուստով ի՞նչ ենք խնդրում արքայութեան փառքի վերաբերմամբ։*

Պ. Արքայութեան փառքի վերաբերմամբ խնդրում ենք, որ կարողանանք մի օր արքայութիւն գնալ՝ որի համար ստեղծուել ենք, և ուր լիովին երջանիկ պիտի լինինք։

4— Երրորդ խնդրուածը.

Հ. *Ի՞նչ ենք խնդրում երրորդ խնդրուածում՝* եղիցին կամք Քո, որպէս յերկինս և յերկրի։

Պ. Երրորդ խնդրուածում՝ *եղիցին կամք Քո որպէս յերկինս եւ յերկրի,* խնդրում ենք շնորհք ամեն բանի մէջ Աստուծու կամքը կատարելու՝ այն պատրաստութեամբ Իւր սուրբ պատուիրաններին հնազանդելով, ինչպէս որ հրեշտակներն ու սրբերը հնազանդում են Իրան։ երկնքում. Խնդրում ենք նաև աստուածային ներշնչմանը համապատասխանելու և Աստուծու կամքին համակերպելու շնորհքն, երբ Նա մեր վրայ վշտեր ուղարկելու լինի։

Հ. *Հարկաւո՞ր է Աստուծու կամքը կատարելը։*

Պ. Այնչափ հարկաւոր է Աստուծու կամքը կատարելը, որչափ որ հարկաւոր է յաւիտենական փրկութեան հասնելը, որովհետև Յիսուս Քրիստոս ասել է՝ միայն նա երկնից արքայութիւնը պիտի մտնէ, որ Իւր Հօր կամքը կատարէ:

Հ. *Մենք ի՞նչպէս ենք կարող Աստուծու կամքը ճանաչել։*

Պ. Մենք կարող ենք Աստուծու կամքը ճանաչել մանաւորապէս Եկեղեցու և այն հոգևոր մեծաւորների միջոցով, որոնք Աստուծուց կարգուել են՝

մեզ փրկութեան ճանապարհի մէջ առաջնորդելու համար: Կարող ենք նաև այս ամենասուրբ կամքը ճանաչել աստուածային ազդեցութեանց միջոցով և այն հանգամանքներից, որոնց մէջ Աստուած դրել է մեզ:

Հ. *Արդեօք այս կեանքի թէ յաջող եւ թէ անյաջող դէպքերի մէջ պէ՞տք է միշտ Աստուծոյ կամքը ճանաչենք:*

Պ. Այո՛, ներկայ կեանքի թէ յաջող և թէ անյաջող դէպքերի մէջ էլ պէտք է միշտ Աստծու կամքը ճանաչենք, Որը մեր բարիքի համար կարգադրում ու թոյլ է տալիս ամեն բան:

5.— *Չորրորդ խնդրուածը.*

Հ. *Ի՞նչ ենք խնդրում չորրորդ խնդրուածով՝* զհաց մեր հանապազորդ

տուր մեզ այսօր:

Պ. *Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր* չորրորդ խնդրուածով խնդրում ենք Աստծուց այն ինչ, որ հարկաւոր է ամեն օր մեր հոգուն ու մարմնին:

Հ. *Ի՞նչ ենք խնդրում Աստուծոյ մեր հոգու համար:*

Պ. Մեր հոգու համար խնդրում ենք Աստծուց՝ հոգևոր կեանքի սնունդը, այսինքն՝ աղօթում ենք Աստծուն, որ պարգևէ մեզ Իւր շնորհքն, որին միշտ կարօտ ենք:

Հ. *Ի՞նչպէս է սնւում մեր հոգու կեանքը:*

Պ. Մեր հոգու կեանքը սնւում է մասնաւորապէս աստուածային խօսքի և ամենասուրբ Հաղորդութեան սննդով:

Հ. *Ի՞նչ ենք խնդրում Աստուծոյ մեր մարմնի համար:*

Պ. Մեր մարմնի համար խնդրում

ենք այն ինչ, որ հարկաւոր է նրա ժամանակաւոր ապրուստի համար։

Հ. *Ի՞նչու համար ենք ասում՝ զհաց մեր տուր մեզ այսօր, եւ ոչ թէ հաց տուր մեզ այսօր.*

Պ. Նրա համար ենք ասում՝ *զհաց մեր տուր մեզ այսօր*, և ոչ *հաց տուր մեզ այսօր*, որպէս ուրիշի ինչն ունենալու որևէ բաղձանքը հեռացնենք մեզանից, դրա համար աղօթում ենք Աստծուն, որ օգնէ մեզ արդար և օրինաւոր շահերի մէջ, որպէս զի մեր աշխատանքով և ոչ թէ գողութեամբ ու խաբէութեամբ ձեռք բերենք մեր ապրուստը։

Հ. *Ի՞նչու համար ենք ասում հաց տուր մեզ, եւ ոչ տուր ինձ,*

Պ. Նրա համար ենք ասում՝ *տուր մեզ*, և ոչ *տուր ինձ*, որպէս զի յիշենք թէ ինչպէս որ բարիքներն Աստծուց են գալիս մեզ, այնպէս՝ եթէ մենք ա-

ռատութեամբ է տալիս մեզ, նրա համար է անում այդ, որ աւելորդն աղքատներին բաշխենք։

Հ. *Ի՞նչու համար ենք աւելացնում՝ հանապազորդ բառը։*

Պ. Նրա համար ենք աւելացնում *հանապազորդ բառը*, որովհետև միայն այն բանին պէտք փափագենք, որ հարկաւոր է մեր ապրուստին և ոչ թէ կերակուրների և երկրաւոր բարիքների առատութեանը։

Հ. *Ի՞նչ է նշանակում այսօր բառը չորրորդ խնդրուածի մէջ։*

Պ. Այսօր բառը նշանակում է թէ՝ պէտք չէ՛ որ շատ մտատանջւենք ապագայի համար, այլ պէտք է խնդրենք այն, ինչ որ հարկաւոր է մեզ ներկայումս։

6. — Հինգերորդ խնդրուածը.

Հ. Ի՞նչ ենք խնդրում հինգերորդ խնդրուածով՝ և Թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց:

Պ. Հինգերորդ խնդրուածով՝ և Թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց, խնդրում ենք որ Աստուած ների մեր մեղքերն, ինչպէս որ մենք ներում ենք մեր պարտապաններին:

Հ. Ի՞նչու մեր մեղքերը պարտ են կոչւում:

Պ. Մեր մեղքերը պարտ են կոչւում, որովհետև այս կամ միւս աշխարհում պարտաւոր ենք նրանց փոխարէն հատուցում անելու աստուածային Արդարութեանը:

Հ. Նրանք՝ որ չեն ներում իրանց

ընկերոջը, կարո՞ղ են Աստծուց ներում ստանալու յոյս ունենալ:

Պ. Նրանք՝ որ չեն ներում իրանց ընկերոջը, և ոչ մի իրաւունք չ'ունին Աստծուց ներումն ստանալու յոյս ունենալ. մանաւանդ թէ իրանք իրանց դատապարտում են ասելով Աստծուն՝ որ իրանց ների, ինչպէս որ իրանք էլ ներում են իրանց ընկերոջը:

7 — Վեցերորդ խնդրուածը.

Հ. Ի՞նչ ենք խնդրում վեցերորդ խնդրուածով և մի՛ տանիր զմեզ 'ի փորձութիւն:

Պ. Վեցերորդ խնդրուածով՝ և մի՛ տանիր զմեզ 'ի փորձութիւն, խնդրում ենք Աստծուց, որ ազատէ մեզ փորձութիւններից, կամ թոյլ չըտալով որ փորձւինք և կամ շնորհք տալով որ

չը յաղթւենք։

Հ. Ի՞նչ է փորձութիւնը։

Պ. Փորձութիւնը մեղք գործելու մի հրապոյր է որ առաջ է գալիս սատանայից, կամ չարերից և կամ էլ մեր կրքերից։

Հ. Փորձութիւններ ունենալը մեղք է՞

Պ. Ո՛չ, փորձութիւններ ունենալը մեղք չէ, այլ նրանց հաւանիլը կամ հաւանելու վտանգի մէջ կամովին ինքն իրան ձգելն է մեղք։

Հ. Ինչո՞ւ Աստուած թոյլ է տալիս որ փորձութեան մէջ ընկնենք։

Պ. Աստուած թոյլ է տալիս որ փորձութեան մէջ ընկնենք՝ մեր հաւատարմութիւնը փորձելու, առաքինութիւնները զարգացնելու և արդիւնքներն աճեցնելու համար։

Հ. Ի՞նչ պէտք է անենք փորձութիւնները հեռացնելու համար։

Պ. Փորձութիւնները հեռացնելու համար պէտք է վտանգաւոր առիթներից փախչինք, մեր զգայարանքների վրայ հսկենք, յաճախ Սուրբ խորհրդներին մերձենանք և աղօթք անենք։

8.— Եօթներորդ խնդրուածը.

Հ. Ի՞նչ ենք խնդրում եօթներորդ խնդրուածով՝ այլ փրկեա զմեզ 'ի չարէ։

Պ. Եօթներորդ խնդրուածով՝ այլ փրկեա զմեզ 'ի չարէ, խնդրում ենք Աստծուց, որ ազատէ մեզ՝ անցեալ, ներկայ և ապագայ չարիքներից, մանաւորապէս այն ծայրագոյն չարիքից՝ որ մեղքն է, և յաւիտենական դատապարտութիւնից՝ որ նրա պատիժն է։

Հ. Ինչո՞ւ համար ենք ասում՝ այլ փրկեա զմեզ 'ի չարէ եւ ոչ 'ի չարեաց։

Պ. Նրա համար ենք ասում՝ այլ

փրկեա զմեզ 'ի չարէ և ոչ 'ի չարեաց։ որովհետև պէտք չէ որ բաղձանք ազատ լինել այս կեանքի ամեն չարիքներից, այլ միայն նրանցից՝ որ վնասակար են մեր հոգուն։ Հէնց դրա համար է որ ընդհանուր կերպով խնդրում ենք զերծ մնալ չարիքից, այսինքն՝ այն ամեն բանից, որ Աստուած խմանում է թէ վնասակար է մեզ։

Հ. *Թոյլ տրուած չէ՞ խնդրել մի ոեւէ մասնաւոր չարիքից՝ ինչպէս է հիւանդութիւնից ազատ լինել։*

Պ. Այո՛, թոյլ տրուած է խնդրել մի ոևէ մասնաւոր չարիքից ազատ լինել, բայց համակերպուելով միշտ Աստծու կամքին, Որը կարող է նաև այն վիշտը մեր հոգու բարիքին դարձնել։

Հ. *Ի՞նչ բանի են ծառայում Աստու-ծոյ մեզի ուղարկած վշտերը։*

Պ. Աստծու մեզի ուղարկած վըշ-

տերը ծառայում են՝ մեր յանցանքների վրայ ապաշխարանք անելու, առաքինութիւնները գործադրելու, բայց ամենից աւելի Յիսուս Քրիստոսին նմանելու, որ մեր գլուխն է, Որին իրաւացի է որ նմանինք չարչարանքների մէջ, եթէ կ՚ուզենք Նրա փառքին մասնակից լինել:

Հ. *Ի՞նչ են նշանակում*՝ «զի Քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս» *բառերը։*

Պ. «*Զի Քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս* » բառերը նշանակում են թէ Ինքն է ամենակարող Տէրն, արքայութեան և զօրութեան Թագաւորը, Որին միայն վայելում է յաւիտենական փառքը։

Հ. *Ի՞նչ է նշանակում* Հայր մերի *վերջին* ամէն *բառը։*

Պ. *Ամէն* բառը նշանակում է՝ այսպէս լինի՛, այսպէս եմ փափագում,

այսպէս աղօթում Աստուծուն և այսպէս էլ յոյս ունիմ։

Հ. Հայր մերի մէջ խնդրած շնորհքներն ընդունելու համար բաւակա՞ն է նրան սոսկ կերպով ասել։

Հ. Հայր մերի մէջ խնդրած շնորհքներն ընդունելու համար բաւական չէ նրան սոսկ կերպով ասել, այլ պէտք է առանց շտապելու, մտադրութեամբ ու ջերմեռանդութեամբ ասել։

Հ. Ե՞րբ պէտք է Հայր մերն ասենք

Պ. Ամեն օր պէտք է Հայր մերն ասենք, որովհետև ամեն օր Աստուծու օգնութեանն ենք կարօտ։

ԳԼՈՒԽ Գ.

ՈՂՋՈՅՆ ՔԵԶ ՄԱՐԻԱՄԸ

Հ. Հայր մերից յետոյ ո՞ր աղօթքըն ասելու սովորութիւն ունինք։

Պ. Հայր մերից յետոյ հրեշտակային ողջունատրութիւնն ենք ասում, այսինքն՝ Ողջոյն Քեզ Մարիամը, որի միջոցով դիմում ենք ամենասուրբ Կուսին։

Հ. Ինչո՞ւ Ողջոյն Քեզ Մարիամը՝ հրեշտակային ողջունատրութիւն է կոչւում։

Պ. Ողջոյն Քեզ Մարիամը՝ հրեշտակային ողջունատրութիւն է կոչւում, որովհետև Գաբրիէլ հրեշտակապետի՝ Ս. Կոյս Մարամին տուած ողջունովն է սկսւում։

Հ. Ո՞վ է շարադրել Ողջոյն Քեզ Մարիամի խօսքերը։

Պ. Ողջոյն Քեզ Մարիամի խօսքերը մասամբ՝ Գաբրիէլ հրեշտակապետն է շարադրել, մասամբ՝ սրբուհի Եղիսաբէթ և մասամբ էլ՝ Եկեղեցին։

Հ. Որո՞նք են Գաբրիէլ հրեշտա-

հրեշտակի խօսքերը։

Պ. Գաբրիէլ հրեշտակապետի խօսքերն են՝ *ողջոյն Քեզ Մարիամ, լի շնորհօք, Տէր ընդ Քեզ։*

Հ. Հրեշտակն ե՞րբ այս խօսքերն ասաց Մարիամին:

Պ. Հրեշտակն այս խօսքերն ասաց Մարիամին, երբ Աստծու կողմից եկաւ Նրան աւետելու Մարդեղութեան խորհուրդը, որ պիտի կատարուէր Նրանում։

Հ. Ի՞նչ ենք անում Գաբրիէլ հրեշտակապետի խօսքերովն ամենասուրբ Կուսին ողջունելիս։

Պ. Գաբրիէլ հրեշտակապետի խօսքերովն ամենասուրբ Կուսին ողջունելիս՝ խնդակցում ենք Իրա հետ, յիշելով այն մասնաւոր առանձնաշնորհութիւններն ու պարգևները, որ Աստուած տուել է Նրան՝ գերադասելով միւս բոլոր արարածներից։

Հ. Որո՞նք են սրբուհի Եղիսաբեթի խօսքերը:

Պ. Սրբուհի Եղիսաբէթի խօսքերն են՝ *օրհնեալ ես Դու 'ի կանանս եւ օրհնեալ է պտուղ որովայնի Քո։*

Հ. Սրբուհի Եղիսաբեթ ե՞րբ այս խօսքերն ասաց։

Պ. Սրբուհի Եղիսաբէթ Աստծու ներշնչմամբն այս խօսքերն ասաց, Յովհաննէս Մկրտչին աշխարհ բերելուց երեք ամիս առաջ, երբոր ամենասուրբ Կոյսը՝ որ արդէն կրում էր Իւր որովայնում աստուածային Որդուն, Նրան այցելութեան գնաց:

Հ. Ի՞նչ ենք անում այս խօսքերն ասելիս։

Պ. Սրբուհի Եղիսաբէթի խօսքերն ասելիս ուրախակցում ենք ամենասուրբ Կուսի հետ՝ Աստուածամայրութեան գերագոյն արժանապատւութեան համար, օրհնում ենք Աստծուն և Իրանից

շնորհակալ լինում՝ Մարիամի միջոցով Յիսուս Քրիստոսին մեզ տալուն համար։

Պ. *Ո՞վ է յօրինել* ողջոյն Քեզ Մարիամի *միւս խօսքերը*:

Պ. Սուրբ Եկեղեցին է յօրինել *ողջոյն Քեզ Մարիամի* միւս խօսքերը։

Հ. Ողջոյն Քեզ Մարիամի *վերջին խօսքերովն ի՞նչ ենք խնդրում*։

Պ. *Ողջոյն Քեզ Մարիամի* վերջին խօսքերովը խնդրում ենք ամենասուրբ Կուսի պաշտպանութիւնն այս կեանքի ընթացքում, և մանաւորապէս մեր մահուան ժամին, երբ աւելի մեծ կարօտութիւն պիտի ունենանք Իր օգնութեանը.

Հ. *Ինչո՞ւ* Հայր մերից *յետոյ ասելի ողջոյն Քեզ Մարիամն ենք ասում, քան թէ ուրիշ որևէ մի աղօթք*։

Պ. Որովհետև ամենասուրբ Կոյսը՝ Յիսուս Քրիստոսի մօտ մեր ամենակարող Բարեխօսն է, հէնց դրա համար է,

որ Յիսուս Քրիստոսի մեզի սովորեցրած աղօթքն ասելուց յետոյ՝ աղօթում ենք ամենասուրբ Կուսին, որ մեր խնդրած շնորհքներն ընդունէ մեզ։

Հ. *Ինչո՞ւ ամենասուրբ Կոյսն այնչափ կարող է*։

Պ. Ամենասուրբ Կոյսն այնչափ կարող է, որովհետև Աստծու Մայրն է, և անկարելի է որ Աստուած Նրա խնդիրը չը կատարէ։

Հ. *Ի՞նչ են սովորեցնում մեզ Սուրբերն ամենասուրբ Կուսի ջերմեռանդութեան վրայօք*։

Պ. Սուրբերն ամենասուրբ Կուսի ջերմեռանդութեան վրայօք սովորեցնում են մեզ թէ Նա ամենազօրովալից Մօր սիրով սիրում ու պաշտպանում է Իրան ջերմեռանդ եղողներին, ու Նրա միջնորդութեամբ ապահով են թէ պիտի գտնեն Յիսուսին, և արքայութեան արժանանան։

Հ. Եկեղեցին մասնաւոր կերպով ի՞նչ ջերմեռանդութիւն է յանձնարարում մեզ դէպի սուրբ Կոյսը։

Պ. Այն ջերմեռանդութիւնը՝ որ Եկեղեցին մասնաւոր կերպով յանձնարարում է մեզ դէպի ամենասուրբ Կոյսը, սուրբ Վարդարանն է։

ԳԼՈՒԽ Դ.

ՍՐԲԵՐԻՆ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԿԱՆՉԵԼԸ.

Հ. Լաւ եւ օգտակար բա՞ն է Սրբերի բարեխօսութեան դիմելը։

Պ. Շատ օգտակար բան է Սրբերին աղօթելը, և պէտք է որ իւրաքանչիւր քրիստոնեայ այդ բանն անէ։ Պարտաւոր ենք մասնաւորապէս աղօթելու մեր Պահապան Հրեշտակներին, Սուրբ Յովսեփին՝ որ Եկեղեցու Պաշտպանն է,

Սուրբ Առաքեալներին, այն Սրբերին՝ որոնց անունն ենք կրում և թէմի ու ծխի պաշտպան Սրբերին։

Հ. Ի՞նչ տարբերութիւն կայ Աստուծուն ու Սրբերին ուղղած աղօթքների մէջ։

Պ. Աստծուն ու Սրբերին ուղղած աղօթքների մէջ այս տարբերութիւնը կայ, որ մենք աղօթում ենք Աստծուն, որպէս զի Ինքը՝ շնորհքի Տէրը լինելով, բարիք տայ մեզ և ազատէ չարիքներից, մինչդեռ Սրբերին աղօթում ենք, որպէս զի իբրև մեր միջնորդներ Աստծու մօտ՝ բարեխօսեն մեզի համար։

Հ. Երբոր ասում ենք թէ մի Սուրբ այս ինչ շնորհքն է արել, ի՞նչ ենք ուզում ասել։

Պ. Երբ ասում ենք մի Սուրբ այս ինչ շնորհքն է արել, ուզում ենք ասել թէ այն Սուրբն է այն շնորհքն ընդունել Աստծուց։

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ԱՍՏԾՈՒ ԵՒ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՈՒԻՐԱՆՆԵՐԸ

ԳԼՈՒԽ Ա.

ԱՍՏԾՈՒ ՊԱՏՈՒԻՐԱՆՆԵՐՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԵՐՊՈՎ ՆԿԱՏՈՒԱԾ

Հ. *Ի՞նչ բանի վրայ է խօսում Քրիստոնէական Վարդապետութեան երրորդ մասը:*

Պ. Քրիստոնէական Վարդապետութեան երրորդ մասը խօսում է Աստծու և Եկեղեցու պատուիրանների վրայ:

Հ. *Աստծու օրէնքի պատուիրանները քանի՞ են:*

Պ. Աստծու օրէնքի պատուիրանները տասն են՝

Ես եմ Տէր Աստուած քո,

1. **Մի՛ ունեցիր զայլ Աստուած առաջի իմ:**
2. **Մի՛ առնուցուս զանուն Աստուծոյ քո ընդունայն:**
3. **Յիշեա՛ զօր շաբաթուն սրբել զնա, այսինքն զկիւրակէս:**
4. **Պատուեա՛ զհայր քո և զմայր:**
5. **Մի՛ սպանաներ:**
6. **Մի՛ շնար:**
7. **Մի՛ գողանար:**
8. **Մի՛ սուտ վկայեր զընկերէ քումմէ:**
9. **Մի՛ ցանկար կնոջ ընկերի քո:**
10. **Մի՛ ցանկար ամենայնի՝ որ նորա է:**

Հ. Աստծու պատուիրաններն ինչո՞ւ այս անունն են կրում:

Պ. Աստծու պատուիրաններն այս անունն են կրում, որովհետև Աստուած ինքն է տպաւորել նրանց իւրաքանչիւր մարդու սրտի մէջ, ինքը հրատարակել հին օրէնքում, Սինայ լերան վրայ՝ երկու քարեղէն տախտակների վրայ փորագրելով, և Յիսուս Քրիստոս հաստատել Նոր օրէնքում:

Հ. Որո՞նք են առաջին տախտակի պատուիրանները:

Պ. Առաջին տախտակի պատուիրաններն երեք առաջիններն են, որ ուղղակի Աստծուն և մեր առ Նա ունեցած պարտքերն են նկատի առնում:

Հ. Որո՞նք են երկրորդ տախտակի պատուիրանները:

Պ. Երկրորդ տախտակի պատուիրանները եօթ վերջիններն են, որոնք նկատի են առնում ընկերոջը և մեր առ

Նա ունեցած պարտքերը:

Հ. Պարտաւո՞ր ենք այս պատուիրանները պահելու:

Պ. Այո՛, ամենքս էլ պարտաւոր ենք այս պատուիրանները պահելու, որովհետև ամենքս էլ պարտաւոր ենք ապրելու Աստծու կամքի համաձայն, Որն ստեղծել է մեզ, և բաւական է միայն մէկի դէմ ծանրապէս մեղանչել դժոխքին արժանանալու համար:

Հ. Մենք կարո՞ղ ենք այս պատուիրանները պահել:

Պ. Անտարակոյս, մենք կարող ենք Աստծու պատուիրանները պահել, որովհետև Աստուած անկարելի բան չի հրամայի մեզ, ու նրանց պահելու շնորհքը կըտայ նրան՝ որ պարտուպատշաճ կերպով խնդրէ:

Հ. Ընդհանուր կերպով ի՞նչ պէտք է նկատել իւրաքանչիւր պատուիրանի մէջ:

Պ՝ Իւրաքանչիւր պատուիրանի մէջ պէտք է նկատել մի դրական և մի բացասական մաս, այսինքն՝ ինչ որ հրամայում և ինչ որ արգելում է մեզ։

ԳԼՈՒԽ Բ.

ԱՍՏԾՈՅ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ՊԱՏՈՒԻՐԱՆՆԵՐԸ

1 — *Առաջին պատուիրանը.*

Հ. *Ինչո՞ւ պատուիրանների սկզբում ասում է՝* Ես եմ Տէր Աստուած քո։

Պ. Պատուիրանների սկզբում ասում է՝ *Ես եմ Տէր Աստուած քո,* որպէս զի իմանանք թէ Աստուած մեր Ստեղծողն ու Տէրը լինելով, կարող-է հրամայել մեզ ինչ որ կամենայ, իսկ մենք Նրա արարածները՝ պարտաւոր ենք հնազանդելու։

Հ. *Աստուած ի՞նչ է հրամայում մեզ*

առաջին պատուիրանի՝ մի՛ ունիցիս զայլ աստուած առաջի իմ *խօսքերովը*։

Պ. Աստուած առաջի պատուիրանի *մի՛ ունիցիս զայլ աստուած առաջի իմ* խօսքերովը, հրամայում է որ Իրան միայն ճանաչենք, երկրպագենք, սիրենք, ծառայենք իբրև մեր գերագոյն Տիրոջը։

Հ. *Ինչպէ՞ս պէտք է կատարել առաջին պատուիրանը*։

Պ. Ներքին և արտաքին պաշտօն մատուցանելով պէտք է կատարել առաջին պատուիրանը։

Հ. *Ի՞նչ է ներքին պաշտօնը։*

Պ. Ներքին պաշտօնն այն պատիւն է, որ միայն հոգու կարողութիւններով է տրւում Աստծուն, այսինքն՝ մտքով ու կամքով։

Հ. *Ի՞նչ է արտաքին պաշտօնը*։

Պ. Արտաքին պաշտօնն՝ այն մեծարանքն է, որ արտաքին գործերի և զգալի իրերի միջոցով մատուցւում է

Աստուծուն։

Հ. *Բաւական չէ՞ միայն ներքուստ հոգւով երկրպագութիւն տալ Աստուծուն։*

Պ. Ո՛չ, բաւական չէ միայն ներքուստ՝ հոգւով, այլ պէտք է արտաքուստ էլ երկրպագութիւն անել Աստուծուն, այսինքն՝ հոգւով ու մարմնով, որովհետև ինքն է թէ մէկի և թէ միւսի Ստեղծողն ու բացարձակ Տէրը։

Հ. *Արտաքին պաշտօնը կարո՞ղ է առանց ներքին պաշտօնի լինել։*

Պ. Ո՛չ, արտաքին պաշտօնը և ո՛չ մի կերպով չի կարող առանց ներքին պաշտօնի լինել, որովհետև նա առանց նրան զուրկ է կեանքից, արժէքից ու գործունէութիւնից, ինչպէս որ մարմինն է՝ առանց հոգու։

Հ. *Ի՞նչ է արգելում մեզ առաջին պատուիրանը։*

Պ. Առաջին պատուիրանն արգելում է մեզ՝ կռապաշտութիւնը, աւելորդապաշտութիւնը, սրբապղծութիւնը, հերետիկոսութիւնն ու կրօնի դէմ ուրիշ որևէ մեղք։

Հ. *Ի՞նչ է կռապաշտութիւնը։*

Պ. Կռապաշտութիւնը միակ Աստուծուն յատուկ երկրպագութեան գերագոյն պաշտօնը արարածներին մատուցանելն է, զոր օրինակ՝ մարդուն, արձաններին, պատկերներին։

Հ. *Սուրբ գիրքն ի՞նչպէս է արգելում մեզ այդ բանը։*

Պ. Սուրբ գիրքն այս խօսքերով է արգելում մեզ այդ բանը՝ *մի՛ արարեսցես դու քեզ կուռս եւ ոչ ամենայն նմանութիւն, որ ինչ յերկինս ՚ի վեր են որ ինչ յերկիր ՚ի խոնարհ... մի՛ երկրպագանիցես նոցա, եւ մի՛ պաշտեսցես զնոսա։*

Հ. *Այս խօսքերն ամե՞ն տեսակ պատկերներն էլ արգելում են։*

Պ. Ո՛չ երբէք, այլ միայն չաստուածների պատկերները, որ կռապաշտները շինում էին նրանց երկրպագութիւն անելու համար։ Այս այնչափ ճշմարիտ է, որ Աստուած ինքը հրամայեց Մովսիսին նրանցից մի քանի հատ շինելու, ինչպէս են քերովբէների այն երկու արձանները, որ կային ուխտի տապանակի վրայ, և անապատի պղնձէ օձը;

Հ. Ի՞նչ է աւելորդապաշտութիւնը։

Պ. Աւելորդապաշտութիւնն Եկեղեցու վարդապետութեան ու սովորութեան հակառակ որևէ մի ջերմեռանդութիւն է, ինչպէս նաև մի գործողութեան կամ բանի այն գերբնական զօրութիւն ընծայելը, որ ըստ ինքեան չունի։

Հ. Ի՞նչ է սրբապղծութիւնը։

Պ. Սրբապղծութիւնն Աստծուն նուիրուած և իր ծառայութեան համար սահմանուած տեղն, անձը կամ իրը պղծ-

ծելն է։

Հ. Ի՞նչ է հերետիկոսութիւնը։

Պ. Հերետիկոսութիւնը մտքի մի կամաւոր մոլորութիւն է, որով մէկը յամառութեամբ ուրանում է հաւատքի մի ճշմարտութիւն:

Հ. Էլի ի՞նչ է արգելում առաջին պատուիրանը·

Պ. Առաջին պատուիրանն արգելում է նաև սատանայի հետ հաղորդակցութիւն ունենալն ու հակաքրիստոնեայ աղանդների մէջ մտնելը։

Պ. Արդեօք ծա՞նր մեղք կը գործեր նա, որ դիմեր սատանային կամ նրան օգնութեան կանչեր։

Պ. Շատ ծանր մեղք կը գործէր նա որ դիմէր սատանային կամ նրան օգնութեան կանչէր, որովհետև սատանան Աստծու և մարդկանց ամենաոխերիմ թշնամին է։

Հ. Թոյլ տրուա՞ծ է խօսող կամ

գրող կոչուած սեղաններից հարց ու-փորձ անել կամ որեւէ մի կերպով ոգեհարցութեամբ մեռելների հոգիներից խորհուրդ հարցնել։

Պ. Ոգեհարցութեան բոլոր գործերըն արգելուած են, որովհետեւ աւելորդապաշտական են և յաճախ էլ սատանան միջամուխ է լինում նրանց մէջ, դրա համար Եկեղեցին ամենայն իրաւամբ արգելած է նրանց։

Հ. Առաջին պատուիրանն արգելո՞ւմ է նաեւ Հրեշտակներին ու Սրբերին պատուել եւ օգնութեան կանչել։

Պ. Ո՛չ, արգելուած չէ Հրեշտակներին ու Սրբերին պատուել ու օգնութեան կանչել, մանաւանդ թէ պարտաւոր ենք այդ անելու որովհետեւ մի լաւ, օգտակար և Եկեղեցուց մեզի մեծապէս յանձնարարուած բան է, որովհետեւ Աստուծու բարեկամներն ու Նրա մօտ մեր բարեխօսներն են։

Հ. Քանի որ Յիսուս Քրիստոս է Աստծու մօտ մեր միակ Միջնորդը, էլ ինչո՞ւ ամենասուրբ Կոյսի եւ սրբերի բարեխօսութեանն ենք դիմում։

Պ. Յիսուս Քրիստոս է Աստծու մօտ մեր միակ Միջնորդը, որովհետեւ ճշմարիտ Աստուած ու ճշմարիտ Մարդ լինելով, միայն ինքն է իւր սեփական արդիւնքներով մեզ Աստծու հետ հաշտեցրել և Նրանից ընդունում մեզ ամեն շնորհքները։ Բայց ամենասուրբ Կոյսն ու Սուրբերը՝ Յիսուս Քրիստոսի արդիւնքների միջոցով և այն սիրոյն համար որ Նրանց միացնում է Աստծու ու մեր հետ, իրանց բարեխօսութեամբն ընդունում են Աստծուց մեր խնդրած շընորհքները։ Այս բանը Սրբերի հաղորդութեան ամենամեծ բարիքներից մէկն է։

Հ. Կարո՞ղ ենք առանց Յիսուս Քրիստոսի ու Սրբերի սրբազան պատկերներին պատիւ տալ։

Պ. Այո, որովհետև Յիսուս Քրիստոսի և Սրբերի սրբազան պատկերներին տրուած պատիւը հէնց Նրանց է գնում։

Հ. Սրբերի մասունքներին էլ պէ՞տք է պատիւ տալ։

Պ. Այո, պէտք է նաև Սրբերի մասունքներին պատիւ տալ, որովհետև նրանց մարմինները Յիսուս Քրիստոսի կենդանի անդամներն ու Սուրբ Հոգու տաճարներն եղան, ու փառաւոր յարութիւն պիտի առնեն յաւիտենական կեանքը ժառանգելու համար։

Հ. Ի՞նչ տարբերութիւն կայ Աստուծու ու Սրբերին մատուցուած պաշտօնի մէջ:

Պ. Աստուծուն ու Սրբերին մատուցուած պաշտօնի մէջ այս տարբերութիւնը կայ, որ երկրպագում ենք Աստուծուն՝ իւր անսահման գերազանցութեան համար, իսկ Սրբերին՝ չէ թէ երկրպագում

այլ պատւում ու մեծարում ենք, իբրև Աստուծու բարեկամներն ու Նրա մօտ մեր բարեխօսները։ Այն պաշտօնը՝ որ Աստուծուն ենք տալիս, կոչւում է *երկրպագութեան պաշտօն*, իսկ Սրբերին տրուածը՝ *պատուամեծարութիւն*, այսինքն՝ այն յարգանքը, որ Աստուծու ծառաներին ենք ընծայում, վերջապէս ամենասուրբ Կուսին տրուածը՝ *գերյարգութիւն* այսինքն՝ այն բոլորովին մասնաւոր յարգանքը, որ տրւում է Սուրբ Կուսին, իբրև Աստուծու Մօրը։

2 — *Երկրորդ պատուիրանը.*

Հ. Ի՞նչ է արգելում մեզ երկրորդ պատուիրանը՝ մի՛ առնուցուս զանուն Աստուծոյ քո ընդունայն։

Պ. Երկրորդ պատուիրանը՝ *մի՛ առնուցուս զանուն Աստուծոյ քո ընդու-*

նայն, արգելում է մեզ 1. Աստծու անունն առանց յարգանքի յիշելը, 2. Աստծուն, ամենասուրբ Կուսին ու Սրբերին հայհոյելը, 3. սուտ, անհարկաւոր և կամ որևէ կերպով ապօրինաւոր երդումներ անելը·

Հ. Ի՞նչ ասել է Աստծու անունն առանց յարգանքի յիշելը։

Պ. Աստծու անունն առանց յարգանքի յիշելն ասել է՝ այս Սուրբ անունը և ինչ որ առանձին կերպով Աստծուն է վերաբերում՝ ինչպէս են Յիսուսի, Մարիամի ու սրբերի անունները՝ բարկութեամբ, կատակով կամ ուրիշ որևէ նուազ յարգալից կերպով արտաբերել,

Հ. Ի՞նչ է հայհոյութիւնը։

Պ. Հայհոյութիւնը մի սոսկալի մեղք է, որ կայանում է՝ Աստծու, Ս. Կուսի, Սրբերի կամ սրբազան իրերի դէմ նախատական խօսքեր ասելու, գոր-

ծեր անելու և անէծք տալու մէջ։

Հ. Արդեօք մի տարբերութիւն կա՞յ հայհոյութեան ու անէծքի մէջ։

Պ. Այո՛, տարբերութիւն կայ հայհոյութեան ու անէծքի մէջ, որովհետև հայհոյութեամբ՝ մէկը չարաբանում է Աստծուն, Ս. Կուսին ու Սրբերին կամ Նրանց համար մի չարիք փափագում, մինչդեռ անէծքով մէկն իր անձին կամ ընկերոջն է չարամաղթում։

Հ. Ի՞նչ է երդումը։

Պ. Երդումը մեր ասած կամ խոստացած բանի ճշմարտութեան վրայ, Աստծուն վկայ կանչելն է։

Հ. Արդեօք երդումը միշտ արգելուա՞ծ է։

Պ. Ո՛չ, երդուելը միշտ արգելուած չէ, այլ թոյլ է տրուած, մանաւանդ թէ պատուաբեր է Աստծուն՝ երբոր երդումը հարկը պահանջած ժամանակը և ճշմարտութեամբ, խելքով և արդարութեամբ

լինի։

Հ. Ե՞րբ է որ մէկը չի երդնում ճշմարտութեամբ։

Պ. Երբոր մէկն երդմամբ հաստատում է մի բան, որ գիտէ կամ կարծում է թէ սուտ է, և երբոր երդմամբ խոստանում է՝ ինչ որ միտք չունի կատարելու։

Պ. *Ե՞րբ է որ մէկը չի երդնում խելքով։*

Պ. Երբոր մէկն երդւում է առանց խոհեմութեան ու կատարեալ խորհրդածութեան, և կամ էլ չնչին բաների համար։

Հ. Ե՞րբ է որ մէկը չի երդնում արդարութեամբ։

Պ. Երբոր մէկն երդւում է մի անարդար կամ ապօրէն բան անելու. ինչպէս են՝ վրէժ առնել, գողանալ և սրանց նման ուրիշ բաներ անել։

Հ. Պարտաւո՞ր ենք անարդար

կամ արգելուած բաների համար արած երդումը կատարելու։

Պ. Ո՛չ միայն պարտաւոր չենք, այլ և կը մեղանչենք եթէ կատարենք, որովհետև կամ Աստծու օրէնքն է արգելում մեզ այն բաները և կամ Եկեղեցու։

Հ. Ի՞նչպիսի մեղք է գործում նա՝ որ սուտերդմնութիւն է անում։

Պ. Մահուչափ մեղք է գործում նա որ սուտերդմնութիւն է անում, որովհետև մեծ ապէս անպատւում է Աստծուն՝ որ անսահման ճշմարտութիւն է, Նրան սուտ բանի համար վկայ կանչելով։

Հ. Ի՞նչ է հրամայում մեզ երկրորդ պատուիրանը։

Պ. Երկրորդ պատուիրանը հրամայում է մեզ, որ Աստծու սուրբ անունը պատւենք, ու կատարենք մեր երդումներն ու ուխտերը։

Հ. Ուխտն ի՞նչ է։

Պ. Ուխտն Աստծուն արած մի

խոստում է, որով մենք մեզ պարտաւորեցնում ենք կատարելու մի այնպիսի բան՝ թերև թէ հրամայուած լինէր, որ բարի է և մեզ էլ կարելի, և որի կատարելն աւելի լաւ է քան չկատարելը։

Հ. *Ի՞նչ պէտք է անել երբ ուխտի կատարումն անհնարին կամ մեծապէս շատ դժուար է լինում։*

Պ. Ուխտի բնութեան համեմատ, կարելի է Եպիսկոպոսից կամ ծայրագոյն Քահանայապետից փոփոխումն կամ տնօրինումն խնդրել։

Հ. *Մե՞ղք է ուխտազանց գտնուիլը։*

Պ. Այո՛, մեղք է ուխտազանց գտնուիլը, դրա համար պէտք չէ ուխտել նախ քան լաւ խորհիլը և սովորաբար առանց խոստովանահօրից կամ մի ուրիշ խոհեմ անձից խորհուրդ հարցնելու, որպէսզի մէկն ինքն իրան մեղանչելու վտանգի մէջ չը ձգէ։

Հ. *Կարելի՞ է ուխտ անել Ս. Կուսին ու Սրբերին։*

Պ. Ո՛չ, միայն Աստուծուն կարելի է ուխտ անել, բայց կարող է մէկը խոստանալ Աստուծուն՝ Ս. Կուսի կամ Սրբերի պատւի համար մի բան կատարել։

3 — Երրորդ պատուիրանը.

Հ. *Ի՞նչ է հրամայում մեզ երրորդ պատուիրանը՝ յիշեա՛ զօր շաբաթուն սրբել զնա այսինքն զկիւրակէս։*

Պ. Երրորդ պատուիրանը՝ *յիշեա զօր շաբաթուն սրբել զնա, այսինքն զօր կիւրակէս*, հրամայում է մեզ տօն օրերը կրօնական գործերով Աստուծուն պատւել։

Հ. *Որո՞նք են տօն օրերը։*

Պ. Հին օրէնքում երէայական ժողովրդի տօն օրերը շաբաթ և ուրիշ

մասնաւոր մեծահանդէս օրերն էին, իսկ Նոր օրէնքում՝ կիրակիներն ու Եկեղեցուց հաստատուած ուրիշ տօնախմբութիւններն են։

Հ. Նոր օրէնքում ինչո՞ւ կիրակին են առնում շաբաթ օրուայ փոխարէն։

Պ. Կիրակին՝ որ ասել է տէրունական օր, շաբաթ օրուայ տեղն անցաւ, որովհետև նոյն օրը Տէրն մեր Յիսուս Քրիստոս յարութիւն առաւ։

Հ. Ո՞րն է այն կրօնական գործը, որ հրամայում է մեզ տօն օրերը։

Պ. Պատարագի սուրբ զոհին ջերմեռանդութեամբ ներկայ գտնուիլն է։

Հ. Ուրիշ ո՞ր բարեգործութիւններով է բարի քրիստոնեան սուրբ պահում տօն օրերը։

Պ. Բարի քրիստոնեան սուրբ է պահում տօն օրերը՝ 1. քրիստոնէական վարդապետութեան, քարոզներին և աստուածային պաշտամունքներին ներկայ գտնուելով, 2. ստէպ պարտուպատշաճ պատրաստութիւններով Ապաշխարութեան ու Ս. Հաղորդութեան խորհուրդներն ընդունելով, 3. աղօթելով և ընկերոջ վերաբերեալ քրիստոնէական սիրոյ գործեր կատարելով։

Հ. Ի՞նչ է արգելում մեզ երրորդ պատուիրանը։

Պ. Երրորդ պատուիրանն արգելում է մեզ ծառայական գործերն և այն ամեն աշխատութիւնները, որ արգելք են լինում Աստծու ծառայութեանը։

Հ. Տօն օրերը ո՞ր ծառայական գործերն են արգելած։

Պ. Տօն օրերը՝ այն ծառայական գործերն են արգելած, որ ձեռագործ են կոչւում, այսինքն՝ այն նիւթական աշխատութիւնները, որոնց մէջ մարմինն աւելի է գործում քան միտքը,

ինչպէս են նրանք՝ որ առհասարակ ծառաներից, աշխատաւորներից և արհեստաւորներից են կատարւում։

Հ. Ի՞նչպիսի մեղք կը գործէ նա որ աշխատի տօն օրը։

Պ. Մահուչափ մեղք կը գործէ նա որ աշխատի տօն օրը՝ բայց ծանր մեղք չէ եթէ գործը կարճատև լինի։

Հ. Որո՞նք ծառայական գործեր, որ տօն օրերն էլ թոյլ տրուած լինեն։

Պ. Այն գործերն են թոյլ տրուած, որ անհրաժեշտ են կեանքին կամ Աստծու ծառայութեանը, և նրանք՝ որ մի ծանր պատճառի համար են 'ի գործ դրւում, հրաման խնդրելով իւր սեփհական ժողովրդապետից, եթէ կարելի է։

Հ. Ինչո՞ւ համար ծառայական գործերն արգելուած են տօն օրերը։

Պ. Ծառայական գործերն արգելուած են տօն օրերն, որպէս զի կարողանանք Աստծու ծառայութեանը և մեր

հոգու փրկութեանը վերաբերեալ գործերով զբաղիլ ու հանգստանալ մեր աշխատութիւններից։ Բայց արգելուած չեն համեստ զւարճութիւնները։

Հ. Ամենից աւելի ուրիշ ի՞նչ բաներից պէտք է որ հեռու կենանք տօն օրերը։

Պ. Տօն օրերը պէտք է որ ամենից աւելի հեռու կենանք մեղքից և այն ամեն բաներից, որ դէպի մեղքն են տանում, ինչպէս են վտանգաւոր զւարճութիւնները և ընկերութիւնները։

ԳԼՈՒԽ Գ.

ԸՆԿԵՐՈՋ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ՊԱՏՒԻՐԱՆՆԵՐԸ.

1 — Չորրորդ պատուիրանը.

Հ. Ի՞նչ է հրամայում մեզ չորրորդ

պատուիրանը՝ պատուեմ զհայր քո և զմայր։

Պ. Չորրորդ պատուիրանը՝ պատուեա զհայր քո եւ զմայր, հրամայում է մեզ՝ մեր հօրն ու մօրը յարգել, նըրանց հնազանդել այն ամեն բանի մէջ, որ մեղք չէ, և հոգևոր ու մարմնաւոր կարօտութիւնների մէջ օգնել նրանց։

Հ. Ի՞նչ է արգելում մեզ չորրորդ պատուիրանը։

Պ. Չորրորդ պատուիրանն արգելում է մեզ՝ խօսքերով, գործերով և ուրիշ որևէ կերպով մեր ծնողներին վըշտացնելը։

Հ. Հօրն ու մօր անուան ներքոյ ուրիշ ո՞ր անձերին էլ պէտք է իմանալ այս պատուիրանի մէջ:

Պ. Այս պատուիրանի մէջ հօրն ու մօր անուան ներքոյ պէտք է իմանալ նաև բոլոր թէ հոգևոր և թէ աշխարհական մեծաւորներին, դրա համար

պարտաւոր ենք նրանց էլ հնազանդելու և յարգելու։

Հ. Ո՞վ է ծնողներին իշխանութիւն տուել իրանց զաւակներին հրամայելու, եւ սրանց պարտաւորեցրել նրանց հնազանդելու։

Պ. Աստուած՝ որ ինքն է ընտանիքը հաստատել ու կարգաւորել, ծընողներին իշխանութիւն է տուել իրանց զաւակներին հրամայելու, և սրանց պարտաւորեցրել նրանց հնազանդելու, որպէս զի մարդ ընտանիքի մէջ գտնէ իւր նիւթական ու հոգևոր կատարելութեանը հարկաւոր եղած միջոցները։

Հ. Ծնողները ի՞նչ պարտաւորութիւններ ունին դէպի իրանց զաւակները։

Պ. Ծնողները պարտաւոր են իրանց զաւակներին սիրելու, պահելու, սնուցանելու, նրանց կրօնական ու քաղաքական կրթութեանը հոգ տանելու

և բարի օրինակ տալու, մեղքի առիթներից հեռու պահելու, պակասութիւններն ուղղելու և ձեռնտու լինելու, որ այն վիճակն ընդգրկին, որին Աստուած կանչում է նրանց։

Հ. Աստուած տուե՞լ է մեզ կատարեալ ընտանիքի մի տիպար։

Պ. Այո. Աստուած տուել է մեզ կատարեալ ընտանիքի մի տիպար Սուրբ Ընտանիքով, Որի մէջ Յիսուս Քրիստոս հնազանդեց ամենասուրբ Կուսին ու սուրբ Յովսէփին մինչև երեսուն տարի, այսինքն՝ մինչև որ սկսեց կատարել այն առաքելութիւնը, որ Իւր յաւիտենական Հօրից ընդունել էր Աւետարանը քարոզելու համար։

Հ. Եթէ ընտանիքներն ապրէին միայնակ ու միմեանցից բաժանուած՝ կարո՞ղ էին հոգալ բոլոր իրանց բարոյական ու նիւթական պիտոյքները։

Պ. Եթէ ընտանիքներն ապրէին

միայնակ ու միմեանցից բաժանուած՝ չէին կարող հոգալ բոլոր իրանց պիտոյքները, դրա համար պէտք է որ քաղաքական ընկերութեամբ միացած ապրին՝ փոխադարձաբար միմեանց կատարելութեանն ու հասարակական երջանկութեանն աջակից լինելու համար։

Հ. Ի՞նչ է քաղաքական ընկերութիւնը։

Պ. Քաղաքական ընկերութիւնը՝ մի գլխի իշխանութեան ներքոյ՝ բազմաթիւ ընտանիքների միութիւնն է, միմեանց փոխադարձաբար օգնելու և իրարու կատարելութիւնն ու ժամանակաւոր երջանկութիւնը ձեռք բերելու համար։

Հ. Ո՞վ է տուել այն իշխանութիւնը, որով կառավարւում է քաղաքական ընկերութիւնը։

Պ. Աստուած է տուել այն իշխանութիւնը, որով կառավարւում է քաղա-

քական ընկերութիւնը և ընդհանուրի բարիքի համար է հաստատել այդ։

Հ. *Պարտաւորութիւն կա՞յ քաղաքական ընկերութիւնը կառավարող իշխանութիւնը յարգել ու հնազանդիլ նրան։*

Պ. Այո, Նրանք որ քաղաքական ընկերութեանն են պատկանում, պարտաւոր են այս իշխանութիւնը յարգելու ու Նրան հնազանդելու, որովհետև թէ Աստծուց է գալիս նա և թէ այսպէս էլ պահանջում է հասարակութեան բարիքը։

Հ. *Պէ՞տք է յարգել քաղաքական իշխանութիւնից դրուած բոլոր օրէնքները։*

Պ. Այո, Յիսուս Քրիստոսի հրամանին ու տուած օրինակին համաձայն, պէտք է քաղաքական իշխանութիւնից դրուած բոլոր օրէնքները յարգել, միայն թէ Աստծու օրէնքի դէմ չըլինին։

Հ. *Նրանք՝ որ քաղաքական ընկերութեան մասն են կազմում, բացի իշխանութիւնից դրուած օրէնքներն յարգելուց ու նրանց հնազանդելուց, ուրիշ պարտաւորութիւններ էլ ունի՞ն։*

Պ. Նրանք՝ որ քաղաքական ընկերութեան մասն են կազմում, բացի օրէնքներն յարգելուց ու նրանց հնազանդելուց, պարտաւոր են նաև խաղաղութեամբ ապրելու և իրանց բոլոր կարողութեամբն ու ձեռքն ունեցած միջոցներով ջանալու, որ այս ընկերութիւնն առաքինի, խաղաղ, կարգաւոր լինի հասարակութեան երջանկութեան համար։

2. — Հինգերորդ պատուիրանը.

Հ. *Ի՞նչ է արգելում հինգերորդ պատուիրանը՝* մի սպանաներ:

Պ. Հինգերորդ պատուիրանը՝ մի

սպանաներ, արգելում է՝ ընկերոջ սպանելը, ծեծելը, վիրաւորելը կամ նրա մարմնին՝ թէ անձամբ լինի և թէ ուրիշի ձեռքով որևէ կերպով վնաս հասցնելը, որպէս նաև նախատական խօսքերով նըրան անարգելն ու նրա չարիքը բաղձալը։ Այս պատուիրանով Աստուած արգելում է նաև ինքն իրան սպանելն այսինքն՝ *ինքնասպանութիւնը*։

Հ. *Ինչո՞ւ ընկերոջ սպանելը մահացու մեղք է*։

Պ. Որովհետև մարդասպանը յանդգնութեամբ յափշտակում է այն իրաւունքը, որ միայն Աստուած ունի մարդուս կեանքի վրայ, վերացնում մարդկային ընկերութեան ապահովութիւնը և զրկում ընկերոջն իւր կեանքից, որն երկրիս վրայ նրա ունեցած բընական բարիքներից ամենամեծն է։

Հ. *Կա՞ն այնպիսի դէպքեր որոնց մէջ թոյլ տրուած լինի ընկերոջ սպանելը*։

Պ. Թոյլ տրուած է ընկերոջ սպանելն՝ երբ մէկը կռւում է արդար պատերազմի մէջ, երբ բարձրագոյն իշխանութեան հրամանով մէկը գործադրում է այն մահուան դատապարտութեան վըճիռը, որ իրբև պատիժ տրուել է մի ոճրագործի, և ի վերջոյ երբ մէկը հարկադրուած՝ օրինաւորապէս իւր կեանքն է պաշտպանում մի անիրաւ յարձակողի դէմ։

Հ. *Աստուած հինգերորդ պատուիրանով արգելո՞ւմ է նաև ընկերոջ հոգևոր կեանքին վնաս հասցնելը*։

Պ. Այո, Աստուած հինգերորդ պատուիրանով արգելում է նաև ընկերոջ հոգևոր կեանքին գայթակղութեամբ վընաս հասցնելը։

Հ. *Ի՞նչ է գայթակղութիւնը*։

Պ. Գայթակղութիւնը մի խօսք կամ գործ և կամ էլ զանցառութիւն է,

որ առիթ է լինում ուրիշներին՝ մեղք գործելու։

Հ. Գայթակղութիւնը ծա՞նր մեղք է։

Պ. Այո՛, գայթակղութիւնը ծանր մեղք է, որովհետև հոգիների կորստեան պատճառ լինելով՝ աւերում է Աստծու ամենամեծ գործը, որ փրկագործութիւնն է. սպանում է ընկերոջ հոգին՝ զրկելով նրան իր շնորհքի կեանքից, որն աւելի թանկագին է քան մարմնի կեանքը. պատճառ է լինում բազմաթիւ մեղքերին։ Այդ պատճառով Աստուած ամենախիստ պատիժներ է սպառնում գայթակղութիւն տւողներին։

Հ. Ինչո՞ւ համար Աստուած հինգերորդ պատուիրանով արգելում է անձնասպանութիւնը։

Պ. Նրա համար Աստուած հինգերորդ պատուիրանով արգելում է անձնասպանութիւնը, որովհետև մարդը ոչ իւր

կեանքի տէրն է և ոչ էլ ուրիշների։ Եկեղեցին էլ պատժում է անձնասպաններին՝ զրկելով նրանց եկեղեցական թաղմանից։

Հ. Հինգերորդ պատուիրանով արգելուած է նաև մենամարտութիւնը։

Պ. Այո՛, հինգերորդ պատուիրանով արգելուած է նաև մենամարտութիւնը, որովհետև թէ անձնասպանութեան չարութիւնն ունի իւր մէջ և թէ մարդասպանութեան, և բանադրւում է նա որ կամովին մասնակցում է նրան, նոյն իսկ երբ երբէ սոսկ հանդիսատես է լինում։

Հ. Մենամարտութիւնն արգելուա՞ծ է եթէ նոյն իսկ մահուան վտանգը չը լինի։

Պ. Այո՛, այս տեսակ մենամարտութիւնն էլ է արգելուած, որովհետև ոչ միայն չենք կարող սպանել, այլ և ոչ իսկ կամաւ վիրաւորել ոչ մեզ և ոչ էլ ուրիշներին։

Հ. Գաղտնի պաշտպանութիւնը կարո՞ղ է արդարացնել մենամարտութիւնը։

Պ. Ո՛չ, որովհետև ճշմարիտ չէ, որ մենամարտութեամբ պատիւն իւր տեղն է դրւում, և կարելի չէ մենամարտութեան պէս անիրաւ, անբանական ու բարբարոս գործով պատիւը տեղը դնել։

Հ. Ի՞նչ է հրամայում մեզ հինգերորդ պատուիրանը։

Պ. Հինգերորդ պատուիրանը հրամայում է մեզ՝ մեր թշնամիներին ներել և ամենի բարիքը կամենալ։

Հ. Ի՞նչ պէտք է անէ նա, որ թէ իւր ընկերոջ մարմնին է վնաս հասցրել և թէ հոգուն։

Պ. Նա՝ որ վնաս է հասցրել իւր ընկերոջը, բաւական չէ որ միայն խոստովանուի, այլ պէտք է նաև արած չարիքի հատուցումն անէ, նրան հասցրած

վնասների տեղը լցնելով, սովորեցրած մոլորութիւններն յետ քաշելով ու բարի օրինակներ տալով։

3. — Վեցերորդ և իններորդ պատուիրանները.

Հ. Ի՞նչ է արգելում մեզ վեցերորդ պատուիրանը՝ մի՛ շնար։

Պ. Վեցերորդ պատուիրանը՝ *մի՛ շնար*, արգելում է մեզ որևէ գործ, հայեացք ու խօսք, որ ողջախոհութեան դէմ է, որպէս նաև ամուսնութեան մէջ անհաւատարիմ գտնուիլը։

Հ. Ի՞նչ է արգելում իններորդ պատուիրանը։

Պ. Իններորդ պատուիրանն արգելում է յատկապէս ամեն բաղձանք, որ հակադրում է այն ամուսնական հաւատարմութեանը, որ ամուսնացեալները միմեանց երդուեցին ամուսնանալիս. ար-

գելում է նաև ամեն կամաւոր չար խորհուրդ ու վեցերորդ պատուիրանով արգելւած գործեր անելու փափագը։

Հ. Անմաքրութիւնը մե՞ծ մեղք է։

Պ. Շատ ծանր՝ և՛ Աստծու և՛ մարդկանց առաջ էլ այնպիսի զզվելի մեղք է, որ ստորնացնում է մարդուն մինչև անբան անասունների աստիճանը, քարշելով նրան ուրիշ բազմաթիւ մեղքերի և ախտերի մէջ և ամենասոսկալի պատիժներին արժանացնում թէ այս և թէ միւս աշխարհում։

Հ. Մաքրութեան դէմ ունեցած չար մտածմունքները մե՞ղք են։

Պ. Մաքրութեան դէմ ունեցած չար մտածմունքներն ըստ ինքեան մեղք չեն այլ աւելի փորձութիւններ ու մեղք գործելու հրապոյրներ։

Հ. Երբ է որ չար մտածմունքները մեղք են լինում։

Պ. Չար մտածմունքները՝ թէպէ-

տև 'ի գործ չը դրւին, այն ժամանակ մեղք են լինում, երբ կամովին մենք առիթ ենք տալիս նրանց, կամ հաւանում և կամ էլ նրանց հաւանելու մերձաւոր վըտանգի մէջ ձգում մեզ։

Հ. Ի՞նչ են հրամայում մեզ վեցերորդ եւ իններորդ պատուիրանները։

Պ. Վեցերորդ պատուիրանը հրամայում է մեզ պարկեշտ ու համեստ լինել մեր գործերի, նայւածքի, շարժման ու խօսքերի մէջ։ Իսկ իններորդը հրամայում է մեզ ներքուստ էլ այսինքն՝ մըտքով ու սրտով զգաստ ու մաքուր լինել։

Հ. Ի՞նչ պէտք է անել վեցերորդ եւ իններորդ պատուիրանները լաւ պահելու համար:

Պ. Վեցերորդ և իններորդ պատուիրանները լաւ պահելու համար պէտք է յաճախ սրտագին Աստծուն աղօթել, ամենասուրբ Կուսին՝ մաքրութեան Մօրը ջերմեռանդ լինել, Աստծու ներկա-

յուԹիւնը յիշել, մահուան, աստուածային պատիժների և Յիսուս Քրիստոսի չարչարանաց վրայ մտածել, մեր զգայարանաց վրայ հսկել, քրիստոնէական մահացուցումն 'ի գործ դնել ու պահանջուած պատրաստուԹիւններով սուրբ խորհրդներին մերձենալ։

Հ. *Մեզ զգաստ պահելու համար ի՞նչ բաներից պէտք է խորշինք:*

Պ. Մեզ զգաստ պահելու համար պէտք է խորշինք դատարկուԹիւնից, չար ընկերներից, գէշ գրքերից ու լրագրներից, անժուժկալուԹիւնից, անհամեստ նկարներից, անպարկեշտ տեսարաններից, վտանգաւոր խօսակցուԹիւններից ու մեղքի ամեն առիԹներից։

4 — ԵօԹներորդ պատուիրանը.

Հ. *Ի՞նչ է արգելում եօԹներորդ պատուիրանը՝ մի գողանար։*

Պ. ԵօԹներորդ պատուիրանը՝ *մի՛ գողանար*, արգելում է ուրիշի ինչքն անիրաւաբար առնելն ու պահելը, և ուրիշ որևէ կերպով ընկերոջ ստացուածքին վնաս հասցնելը։

Հ. *Ի՞նչ ասել է գողանալ։*

Պ. Գողանալն ասել է ուրիշի ինչքն անիրաւուԹեամբ առնել՝ հակառակ իւր տիրոջ կամքին, այսինքն՝ երբ նա լիուլի իրաւունք ունի չզրկուելու իւր ընչից։

Հ. *ԳողուԹիւնն ինչո՞ւ է արգելւած։*

Պ. Որովհետև արդարուԹեան դէմ է և ընկերոջն էլ նախատինք՝ նրա իրաւունքին ու կամքին հակառակ նրան պատկանածն առնելն ու պահելը։

Հ. *Ուրիշի ինչքն ասելով ի՞նչ ես հասկանում։*

Պ. Ուրիշի ինչքն ասելով հասկանում եմ՝ այն ամեն ինչ որ ընկերոջն

է պատկանում, որովհետև կամ այն բանի տէրն է, կամ նրան գործածելու իրաւունքն ունի և կամ էլ իբրև աւանդ պահում է իրա մօտ։

Հ. Քանի՞ կերպով կարելի է ուրիշի ինչքն անիրաւութեամբ առնել։

Պ. Երկու կերպով՝ գողութեամբ ու յափշտակութեամբ։

Հ. Ի՞նչպէս է կոչւում գողութիւնը։

Պ. Գողութիւնը լինում է ուրիշի ինչքն ծածուկ առնելով։

Հ. Ի՞նչպէս է կոչւում յափշտակութիւնը։

Պ. Յափշտակութիւնը լինում է ուրիշի ինչքը բռնութեամբ ու յայտնի բացայայտ կերպով առնելով։

Հ. Ո՞ր դէպքերի մէջ կարելի է ուրիշի ինչքն առնել առանց մեղանչելու։

Պ. Երբոր տէրը չի դիմադրում, կամ երբ անիրաւութեամբ չի ուզում տալ, այսինքն երբ մէկը՝ վերջին

կարօտութեան մէջ գտնւելով, ուրիշի ընչից այնչափ է վեր առնում, որչափ որ ճիշտ հարկաւոր է իւր հարկադրիչ ու վերջին կարօտութիւնը լցնելու համար:

Հ. Միայն գողութեամբ ու յափշտակութեա՞մբ կարելի է ընկերոջ ընչին վնաս հասցնել։

Պ. Ո՛չ, այլ նաև խաբէութեամբ, վաշխառութեամբ ու նրա բարիքի դէմ ուրիշ որևէ անիրաւութեամբ։

Հ. Ի՞նչպէս է կոչւում խաբէութիւնը։

Պ. Խաբէութիւնը լինում է վաճառականութեան մէջ սուտ կշիռներ ու չափեր գործածելով, կեղծ դրամ ու վատ ապրանք տալով, գրութիւններ և արձանագրութիւններ խարդախելով, մէկ խօսքով առևտուրի և ուրիշ որևէ դաշնադրութեան մէջ խաբեբայութիւններ անելով, ինչպէս նաև չուզելով վճարել ճիշտ և արդէն որոշւած գինը։

Հ. *Ի՞նչ բանի մէջ է կայանում վաշխառութիւնը։*

Պ. Վաշխառութիւնը կայանում է փոխ տուած գումարի համար՝ առանց օրինաւոր իրաւունքի՝ մի ապօրինաւոր շահ պահանջելու մէջ, օգտուելով ուրիշի կարօտութիւնից ու տգիտութիւնից։

Հ. *Ուրիշ ի՞նչ կերպով է անիրաւութիւն գործւում ընկերոջ բարիքի դէմ։*

Պ. Անարդարութեամբ պատճառ լինելով, որ նա իւր ունեցածը կորցնէ, նրա ստացւածքին վնաս հասցնելով, չաշխատելով ինչպէս որ պէտք է, պարտքերն ու գնած ապրանքների գինը չը վճարելով, նրան պատկանած անասուններին վիրաւորելով կամ սպանելով, իրա պահպանութեանն յանձնուած բաների վրայ հոգ չը տանելով, ուրիշի արդար վաստակին արգելք լինելով. գողերին ձեռնտու լինելով ու գողունի բաներ ընդունելով, թաքցնելով կամ գը-

նելով։

Հ. *Գողութիւնը ծա՞նր մեղք է։*

Պ. Գողութիւնը արդարութեան դէմ ծանր մեղք է, երբ գողացւած նիւթը ծանր է, որովհետև իւրաքանչիւրի իւր ընչի վրայ ունեցած իրաւունքն յարգելը մեծ բան է, և այդ լաւ է նաև անհատների, ընտանիքների և հասարակութեան բարիքի համար։

Հ. *Ե՞րբ է գողութեան նիւթը ծանր։*

Պ. Երբոր մէկը մի մեծագին բան է գողանում, և երբ՝ մի չնչին բան վերցնելով հանդերձ, ընկերը ծանր վնաս է կրում։

Հ. *Ի՞նչ է հրամայում մեզ եօթներորդ պատուիրանը։*

Պ. Եօթներորդ պատուիրանը հրամայում է մեզ ուրիշի ինչքն յարգել, աշխատաւորների արդարացի վարձը տալ և ուրիշի սեփհականութեան նկատմամբ

արդարութիւն պահել։

Հ. Ո՞վ որ մեղանչել է եօթներորդ պատուիրանի դէմ, բաւակա՞ն է որ միայն խոստովանի։

Պ. Ով որ մեղանչել է եօթներորդ պատուիրանի դէմ, բաւական չէ որ միայն խոստովանի, այլ պէտք է բոլոր իւր ջանքը թափէ ուրիշի ինչքն յետ դարձնելու ու վնասների տեղը լցնելու։

Հ. Ի՞նչ է վնասների տեղը լցնելը։

Պ. Վնասների տեղը լցնելն այն հատուցումն է, որ մէկը պէտք է անէ ընկերոջն, այն վնասի փոխարէն, որ գողութեամբ և ուրիշ անիրաւութիւններով պատճառել է նրա բերքերին ու շահերին։

Հ. Ո՞ւմ պէտք է դարձնել գողացած բանը։

Պ. Նրան՝ որից որ գողացել է,

եթէ ինքը մեռած է՝ իւր ժառանգներին, իսկ եթէ այդ իրօք անկարելի է, պէտք է այն բանի գինն աղքատներին բաշխել և բարեգործութիւնների համար գործածել։

Հ. Ի՞նչ պէտք է անել երբ մի թանկագին բան է գտնում։

Պ. Պէտք է մեծ փութով նրա տիրոջը փնտռել ու հաւատարմութեամբ նրան դարձնել։

5. — *Ութերորդ պատուիրանը.*

Հ. Ի՞նչ է արգելում մեզ ութերորդ պատուիրանը մի՛ սուտ վկայեր։

Պ. Ութերորդ պատուիրանը՝ մի՛ սուտ վկայեր, արգելում է մեզ դատաստանի մէջ սուտ վկայութիւն տալն. արգելում է նաև բամբասանքը կամ չարախօսութիւնը, զրպարտութիւնը, շողոքորթութիւնը, յանդուգն դատա-

ղութիւնն ու կասկածը և ամեն տեսակ ստախօսութիւն։

Հ. *Ի՞նչ է բամբասանքը կամ չարախօսութիւնը։*

Պ. բամբասանքը կամ չարախօսութիւնը մի մեղք է, որ կայանում է ուրիշների մեղքերն ու պակասութիւններն առանց արդար պատճառի յայտնելու մէջ։

Հ. *Ի՞նչ է զրպարտութիւնը։*

Պ. Զրպարտութիւնը մի մեղք է, որ կայանում է չարութեամբ ընկերոջ վրայ այնպիսի յանցանքներ ու պակասութիւններ ձգելու մէջ, որ չունի։

Հ. *Ի՞նչ է շողոքորթութիւնը։*

Պ. Շողոքորթութիւնը մի մեղք է, որ կայանում է մէկին խաբելու մէջ, կեղծաւորութեամբ նրա կամ ուրիշի վրայօք լաւ խօսելով, նրանից մի օգուտ քաղելու նպատակով։

Հ. *Ի՞նչ է յանդուգն դատողութիւնը*

կամ կասկածը։

Պ. Յանդուգն դատողութիւնը կամ կասկածը մի մեղք է, որ կայանում է՝ առանց արդար պատճառի, ընկերոջ վրայ չար դատում ու կարծիք ունենալու մէջ։

Հ. *Ի՞նչ է ստախօսութիւնը։*

Պ. Ստախօսութիւնը մի մեղք է, որով մէկը խօսքերով կամ գործերով մի բան իբրև ճշմարիտ կամ սխալ է հաստատում որի այնպէս լինելուն ինքն էլ չի հաւատում։

Հ. *Ստախօսութիւնը քանի՞ տեսակ է։*

Պ. Ստախօսութիւնը երեք տեսակ է՝ կատակական, պաշտօնական ու վնասակար։

Հ. *Ո՞րն է կատակական ստախօսութիւնը։*

Պ. Կատակական ստախօսութիւնն այն է, որ մէկը սոսկ զւարճութեան

համար է ասում, առանց ուրիշին վնաս հասցնելու։

Հ. Ո՞րն է պաշտօնական ստախօսութիւնը։

Պ. Պաշտօնական ստախօսութիւնն այն է, որ մէկն իրա կամ ուրիշի օգտի համար է ասում, առանց ուրիշին վնաս հասցնելու:

Հ. Ո՞րն է վնասակար ստախօսութիւնը։

Պ. Վնասակար ստախօսութիւնն այն է, որ մէկն ասում է ընկերոջը վնասելու համար։

Հ. Երբեք թոյլ տրուած չէ՞ սուտ խօսիլը։

Պ. Սուտ խօսիլն երբէք թոյլ տրուած չէ, ո՛չ կատակի, ո՛չ իր և ո՛չ էլ ուրիշի օգտի համար, որովհետև ըստ ինքեան վատ բան է։

Հ. Ստախօսութիւնն ի՞նչպիսի մեղք է։

Պ. Երբոր ստախօսութիւնը՝ կատակական է կամ պաշտօնական ներելի մեղք է, իսկ երբ վնասակար՝ այն ժամանակ մահուչափ մեղք է, երբոր հասցրած վնասը ծանր է։

Հ. Միշտ հարկ կա՞յ բոլոր իր մտածածն յայտնելու։

Պ. Ո՛չ, միշտ հարկ չըկայ բոլոր իր մտածածն յայտնելու, մանաւորապէս երբ հարցնողն իրաւունք չունի իմանալու՝ ինչ որ հարցնում է։

Հ. Երբ մէկն ութերորդ պատուիրանի դէմ է մեղանչել, բաւակա՞ն է որ միայն խոստովանի։

Պ. Երբ մէկն ութերորդ պատուիրանի դէմ մեղանչել է, բաւական չէ որ միայն խոստովանի, այլ պարտաւոր է նաև յետ քաշելու ինչ որ զրպարտելով ասել է ընկերոջ վրայ, և կարելի եղածին պէս լաւագոյն կերպով նրան պատճառած վնասների տեղը լցնելու։

Հ. Ի՞նչ է հրամայում մեզ ութերորդ պատուիրանը։

Պ. Ութերորդ պատուիրանը հրամայում է մեզ ժամանակին ու տեղին ճշմարտութիւնն ասել ու մեր կարողացածին չափ ընկերոջ գործերին բարի մեկնութիւն տալ։

6 — Տասներորդ պատուիրանը.

Հ. Ի՞նչ է արգելում մեզ տասներորդ պատուիրանը՝ և մի՛ ամենայնի՛ որ նորա է։

Պ. Տասներորդ պատուիրանն՝ և մի՛ ամենայնի՝ որ նորա է, արգելում է մեզ ուրիշին իր ընչից զրկելու փափագը, և անիրաւ միջոցներով հարստութիւն ձեռք բերելու բաղձանքը։

Հ. Աստուած ինչո՞ւ համար է արգելում նոյն իսկ ուրիշի ինչքն ունե-

նալու բաղձանքը։

Պ. Աստուած նրա համար է արգելում նոյն իսկ ուրիշի ինչքն ունենալու բաղձանքը, որովհետև ուզում է ներքուստ էլ արդար լինինք, և աւելի ևս հեռու կենանք անիրաւ գործերից։

Հ. Ի՞նչ է հրամայում մեզ տասներորդ պատուիրանը։

Պ. Տասներորդ պատուիրանը հրամայում է մեզ գոհ լինել այն վիճակից, որի մէջ Աստուած դրել է մեզ, ու համբերութեամբ տանել աղքատութիւնն, երբ Աստուած կամենայ, որ այն վիճակի մէջ գտնուինք։

Հ. Քրիստոնեան ի՞նչպէս է կարող աղքատ վիճակի մէջ գոհ լինել:

Պ. Քրիստոնեան կարող է աղքատ վիճակի մէջ էլ գոհ լինել, մտածելով թէ՝ մեծ բարիք է մաքուր ու խաղաղ խիղճ ունենալը, մեր ճշմարիտ հայրենիքն՝ երկինքն է, և թէ Յիսուս Քրիս-

տոս մեր սիրոյն համար աղքատ դարձաւ և առանձին պարգև է խոստացել նրանց, որ համբերութեամբ տանեն աղքատութիւնը:

ԳԼՈՒԽ Դ.

ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՈՒԻՐԱՆՆԵՐԸ

1 — Եկեղեցու պատուիրանների ընդհանուր կերպով նկատած.

Հ. Բացի Աստծու պատուիրաններից էլ ի՞նչ պարտաւոր ենք պահելու:

Պ. Բացի Աստծու պատուիրաններից պարտաւոր ենք նաև Եկեղեցու պատուիրանները պահելու:

Հ. Պարտաւո՞ր ենք Եկեղեցուն հնազանդելու:

Պ. Անտարակոյս, պարտաւոր ենք Եկեղեցուն հնազանդելու, որովհետև նոյն ինքն Յիսուս Քրիստոս է հրա-

մայում մեզ այդ բանը, և որովհետև Եկեղեցու պատուիրաններն օգնում են մեզ Աստծու պատուիրանները պահելու:

Հ. Ե՞րբ է սկսում Եկեղեցու պատուիրանները պահելու պարտաւորութիւնը:

Պ. Եկեղեցու պատուիրանները պահելու պարտաւորութիւնն սկսում է առհասարակ բանաւորութիւնը բացւելու ժամանակից:

Հ. Արդեօք մե՞ղք է Եկեղեցու մի պատուիրանի դէմ զանցառութիւնը:

Պ. Ծանր նիւթի մէջ Եկեղեցու մի պատուիրանի դէմ կամովին զանցառութիւնը՝ մահուչափ մեղք է:

Հ. Ո՞վ կարող է տնօրինել Եկեղեցու մի որևէ պատուիրանից:

Պ. Միայն Ս. Քահանայապետը և նրանք՝ որ Նրանից իշխանութիւն են ստացել, կարող են տնօրինել Եկեղեցու պատուիրաններից:

Հ. Եկեղեցու պատուիրանները քանի՞ են եւ որո՞նք։

Պ. Եկեղեցու պատուիրանները հինգ են՝

1. Յաւուրս կիւրակէից և հրամայեալ տօնից տեսանել զպատարագ։

2. Պահել զքառասնորդական և զայլ պահս և զծոմապահս հրամայեալս, հրաժարել ՚ի մսոյ և ՚ի կթեղինաց յաւուրս արգելեալս։

3. Խոստովանիլ գոնէ մի անգամ ՚ի տարւոջ և հաղորդիլ ՚ի Զատկի Յարութեան Տեառն, իւրաքանչիւր ոք յիւր ժողովրդապետական եկեղեցւոջ։

4. Տալ զտասանորդս Եկեղեցւոյ՝ ըստ սովորութեան։

5. Մի՛ առնել հարսանիս յարգելեալ ժամանակս, այսինքն ՚ի Յինանց բարեկենդանէ մինչև ցվերջ Առաջաւորաց, ՚ի բուն բարեկենդանէ մինչև ցվերջ ութօրէից Հոգեգալստեան և յաւուրս շարաթապահոց։

2 — Եկեղեցու առաջին պատուիրանը

Հ. Ի՞նչ է հրամայում մեզ Եկեղեցու առաջին պատուիրանը՝ Յաւուրս կիւրակէից և հրամայեալ տօնից տեսանել զպատարագ։

Պ. Եկեղեցու առաջին պատուիրանը՝ Յաւուրս կիւրակէից եւ հրամայեալ տօնից տեսանել զպատարագ, հրամայում է մեզ ամեն կիրակի և հրամայեալ տօն օրերը ջերմեռանդութեամբ սուրբ պատարագին ներկայ գտնուիլ։

Հ. Եկեղեցին ո՞ր պատարագին է փափագում, որ ներկայ գտնուինք կիրակի եւ հրամայեալ տօն օրերը։

Պ. Եկեղեցին փափագում է, որ կարելի եղածին չափ ծխական պատարագին ներկայ գտնուինք կիրակի և հրամայեալ տօն օրերը։

Հ. Եկեղեցին ինչո՞ւ է յանձնարարում հաւատացեալներին, որ ծխական պատարագին ներկայ գտնուին։

Պ. Եկեղեցին յանձնարարում է հաւատացեալներին, որ ծխական պատարագին ներկայ գտնուին, որպէս զի 1. Նրանք՝ որ մէկ ծխի են պատկանում, միանան աղօթելու ժողովրդապետի հետ միասին, որ իրանց գլուխն է, 2. Աւետարանի ճշմարտութիւնները լսեն, որ ժողովրդապետները պարտաւոր են մեկնելու սուրբ Պատարագի ժամանակ, և 3. այն պատուէրներն ու յայտարարութիւններն իմանան, որ հրատարակւում են վերոյիշեալ Պատարագի ժամանակ։

Հ. Ի՞նչ ասել է կիրակի բառը։

Պ. Կիրակի բառն ասել է՝ Տիրոջ օր, այսինքն՝ այն օրը, որ մասնաւոր կերպով նուիրուած է Աստծու ծառայութեանը։

Հ. Ինչո՞ւ համար եկեղեցու առա-

ջին պատուիրանի մէջ մասնաւոր կերպով Կիրակին է յիշատակւում։

Պ. Նրա համար Եկեղեցու առաջին պատուիրանի մէջ մասնաւոր կերպով կիրակին է յիշատակւում, որովհետև քրիստոնեաների գլխաւոր տօնն է, ինչպէս որ Աստծու կարգադրութեամբ շաբաթը հրեաներինն էր։

Հ. Եկեղեցին ուրիշ ի՞նչ տօներ էլ է հաստատել։

Պ. Եկեղեցին հաստատել է նաև Տեառն մերոյ, ամենասուրբ Կուսի, Հրեշտակների ու Սրբերի տօները։

Հ. Եկեղեցին ինչո՞ւ է հաստատել Տեառն մերոյ այլ և այլ տօները։

Պ. Եկեղեցին հաստատել է Տեառն մերոյ այլ և այլ տօները, Նրա աստուածային խորհուրդներն յիշելու համար։

Հ. Ինչո՞ւ համար են հաստատուել ամենասուրբ Կուսի, Հրեշտակների ու Սրբերի տօները։

Պ. Նրա համար են հաստատուել ամենասուրբ Կուսի, Հրեշտակների ու Սրբերի տօները, որպէսզի՝ 1 այն շնորհքները յիշենք, որ Աստուած արել է նրանց, և աստուածային բարութիւնից շնորհակալ լինենք, 2. նրանց պատուենք, օրինակներին հետևենք և աղօթքներից օգնութիւն գտնենք:

3. — Եկեղեցու երկրորդ պատուիրանը.

Հ. Ի՞նչ է հրամայում Եկեղեցու երկրորդ պատուիրանը պահել պահս և զծոմապահս հրամայեալս:

Պ. Եկեղեցու երկրորդ պատուիրանը *պահել զպահս եւ զծոմապահս հրամայեալս:*

Հ. Ի՞նչ բանի մէջ է կայանում ծոմապահութիւնը:

Պ. Ծոմապահութիւնը կայանում է

օրը մի անգամ ճաշելու և արգելուած կերակրներից ժուժկալելու մէջ:

Հ. Ծոմի օրերը կարելի՞ է երեկոյեան մի փոքր ընթրիք էլ անել:

Պ. Այո՛, Եկեղեցու զիջողութեամբ կարելի է ծոմի օրերն երեկոյեան մի փոքր ընթրիք էլ անել:

Հ. Ի՞նչ բանի է ծառայում ծոմապահութիւնը:

Պ. Ծոմապահութիւնը ծառայում է մեզ լաւագոյն ես աղօթելու տրամադիր անելու, գործած մեղքերի վրայ ապաշխարելու և նորանոր մեղքեր գործելուց պահելու համար:

Հ. Ո՞վքեր են պարտաւորուած ծոմ պահելու:

Պ. Այն ամեն քրիստոնեաներն են պարտաւորուած ծոմ պահելու, որոնք լրացրել են քսանումէկերորդ տարին և տնօրինուած կամ մի օրինաւոր պատճառ չունին ծոմ չը պահելու:

*Հ. Մանկացուցում անելո՞ւց էլ ա-
զատ են մնում նրանք, որ պարտաւոր-
ուած չեն ծոմ պահելու։*

Պ. Ոչ, մանկացուցում անելուց ա-
զատ չեն մնում նրանք, որ պարտա-
ւորուած չեն ծոմ պահելու, որովհետև ա-
մենքս էլ պարտաւոր ենք ապաշխարանք
անելու։

*Հ. Ինչո՞ւ համար է հաստատուել
քառասնորդական պահքը։*

Պ. Քառասնորդական պահքը հաս-
տատուել է մի կերպով այն քառասնօր-
եայ խիստ պահքին նմանելու համար,
որ Յիսուս Քրիստոս պահեց անապա-
տի մէջ, և որպէսզի ապաշխարութեան
միջոցով մենք մեզ պատրաստենք զատ-
կի տօնը սրբութեամբ կատարելու։

*Հ. Ինչո՞ւ համար է հաստատուած
ծննդեան պահքը։*

Պ. Նրա համար է հաստատուած
ծննդեան պահքը, որպէս զի մենք մեզ

պատրաստենք մեր Տէր Յիսուս Քրիս-
տոսի ծնունդը սրբութեամբ կատարե-
լու։

*Հ. Ի՞նչ բան է արգելուած մեզ չը-
տնօրինուած չորեքշաբթի եւ ուրբաթ
օրերը։*

Պ. Չը տնօրինուած չորեքշաբթի
և ուրբաթ օրերը, բացի հարկաւորու-
թեան դէպքից, միս ուտելն է արգելուած
մեզ։

*Հ. Եկեղեցին ինչո՞ւ է ուզացել, որ
այս օրերը միս չուտենք։*

Պ. Որպէս զի ամեն շաբաթ ապաշ-
խարանք անենք, ու չորեքշաբթի Յի-
սուս Քրիստոսի մատնուիլն, և ուրբաթ՝
Չարչարանքներն ու Մահը պատուենք։

4 — Եկեղեցու երրորդ պատուիրանը.

Հ. Եկեղեցին ի՞նչ է հրամայում

մեզ երրորդ պատուիրանի՝ խոստովանել գոնէ մի անգամ 'ի տարւոջ խօսքերովը։

Պ. Եկեղեցին երրորդ պատուիրանի՝ խոստովանիլ գոնէ մի անգամ 'ի տարւոջ խօսքերովը պարտաւորեցնում է բանաւորութիւնը բացած բոլոր քրիստոնեաներին ամեն տարի գոնէ մի անգամ Ապաշխարութեան խորհրդին մերձենալու։

Հ. Ո՞րն է տարեկան խոստովանութեան պարտքը կատարելու յարմարագոյն ժամանակը։

Պ. Տարեկան խոստովանութեան պարտքը կատարելու յարմարագոյն ժամանակը՝ քառասնորդականն է, ըստ այն սովորութեան, որ բովանդակ Եկեղեցու մէջ ընդունուած և հաստատուած է։

Հ. Ինչո՞ւ համար Եկեղեցին ասում է, որ խոստովանենք գոնէ տարին մի անգամ։

Պ. Եկեղեցին նրա համար է ասում գոնէ մեզ յայտնելու համար թէ իւր բաղձանքն այն է, որ աւելի ստէպ սուրբ խորհրդներին մերձենանք։

Հ. Ուրեմն ստէպ խոստովանիլը օգտակա՞ր բան է։

Պ. Շատ օգտակար բան է ստէպ խոստովանիլը, գլխաւորաբար նրա համար, որ դժուար է լաւ խոստովանիլ ու մահուչափ մեղքից հեռու կենալ, երբ մէկը շատ քիչ անգամ է խոստովանում։

Հ. Եկեղեցին ի՞նչ է հրամայում մեզ երրորդ պատուիրանի միւս խօսքերովը՝ հաղորդուիլ գոնէ 'ի Զատկի Յարութեան Տեառն, իւրաքանչիւր ոք յիւր ժողովրդապետական եկեղեցւոջ։

Պ. Եկեղեցին երրորդ պատուիրանի միւս խօսքերովը՝ հաղորդուիլ գոնէ 'ի Զատկի Յարութեան Տեառն, իւրաքանչիւր ոք յիւր ժողովրդապետական եկեղեցւոջ, պարտաւորեցնում է ամեն չափա-

հաս քրիստոնեաներին, որ ամեն տարի զատկական օրերում ամենասուրբ Հաղորդութիւնն ընդունեն իրանց ծխական եկեղեցու մէջ։

Հ. *Բացի Զատկից՝ էլի ե՞րբ պէտք է հաղորդուիլ։*

Պ. Պէտք է հաղորդուինք նաեւ մահուան վտանգի մէջ։

Հ. *Եկեղեցին ինչո՞ւ է ասում՝ որ գոնէ Զատկին հաղորդուինք։*

Պ. Որովհետեւ Եկեղեցին խիստ է փափագում որ ոչ միայն Զատկին, այլ նաեւ կարելի եղածին չափ ստէպ մերձենանք սուրբ Հաղորդութեան, Որը մեր հոգիների աստուածային սնունդն է։

Հ. *Մէկը սրբապիղծ խոստովանութեամբ ու հաղորդութեամբ կատարած կլինի՞ այս պատուիրանը։*

Պ. Ո՛չ, մէկը սրբապիղծ խոստովանութեամբ ու հաղորդութեամբ կատարած չի լինի Եկեղեցու երրորդ պատուիրանը, վասնզի Եկեղեցու նպատակն է՝ որ խորհուրդներն ընդունելին այն վախճանով որի համար որ հաստատուել են, այսինքն՝ մեր սրբացուցման համար։

5. — Եկեղեցու չորրորդ պատուիրանը.

Հ. *Մէկն ի՞նչպէս է կարող կատարել Եկեղեցու չորրորդ պատուիրանը,* տալ տասանորդս Եկեղեցւոյ։

Պ. Մէկը կարող է կատարել չորրորդ պատուիրանը՝ *տալ տասանորդս Եկեղեցւոյ,* տալով այն նուէրներն ու տուրքերը, որ որոշուել են Աստծու՝ ամեն բաների վրայ գերագոյն տէրութիւնը ճանաչելու եւ իւր պաշտօնեաների վայելուչ ապրուստը հոգալու համար։

Հ. *Ի՞նչպէս պէտք է տասանորդները տալ։*

Պ. Պէտք է այն բաներից և այն կերպով տասանորդները տալ, ինչպէս որ պահանջում է տեղերի սովորութիւնը:

6 — *Եկեղեցու հինգերորդ պատուիրանը*

Հ. Ի՞նչ է արգելում մեզ Եկեղեցին հինգերորդ պատուիրանով մի՛ անել հարսանիս յարգելեալ ժամանակս:

Պ. Եկեղեցին հինգերորդ պատուիրանով չէ թէ Պսակի խորհուրդն է արգելում, այլ միայն մեծ հանդիսով նրան կատարելը՝ Յինանկաց բարեկենդանից մինչև Առաջաւորաց բարեկենդանին, բուն բարեկենդանից մինչև Հոգեգալստեան ութօրէի վերջն ու շաբաթապահոց օրերը:

Հ. Ամուսնանալիս ո՞ր մեծ հանդէսն է արգելուած:

Պ. Ամուսնանալիս արգելուած են՝

եկեղեցական մեծահանդէս արարողութիւններն ու հարսանեաց արտասովոր շքեղութիւնները:

Հ. Ինչո՞ւ համար հանդիսաւոր հարսանիքը չի վայելում այս արգելուած ժամանակներին:

Պ. Նրա համար հանդիսաւոր հարսանիքը չի վայելում այս արգելուած ժամանակներին, որովհետև սրանք մանաւորապէս ապաշխարութեան և աղօթքի նուիրուած օրեր են:

ԳԼՈՒԽ Ե.

ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐ ՎԻՃԱԿԻՆ ՅԱՏՈՒԿ ՊԱՐՏՔԵՐԸ ԵՒ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԽՐԱՏՆԵՐԸ.

1. — *Իւրաքանչիւր վիճակին յատուկ պարտքերը.*

Հ. Ի՞նչ են հասկանում Իւրաքանչիւր վիճակին յատուկ պարտքերն ա-

ձեւով։

Պ. Իւրաքանչիւր վիճակին յատուկ պարտքերն ասելով այն առանձին պարտականութիւններն եմ հասկանում, որ իւրաքանչիւր ոք ունի իւր վիճակի, դրութեան ու պաշտօնի բերման համեմատ։

Հ. Ո՞վ է զանազան վիճակների վրայ առանձին պարտականութիւններ դրել։

Պ. Աստուած ինքն է զանազան վիճակների վրայ առանձին պարտականութիւններ դրել, որովհետև այս պարտքերն իւր աստուածային պատուիրաններից են առաջ գալիս։

Հ. Մի օրինակով մեկնիր ինձ թէ ի՞նչպէս առանձին պարտականութիւններն Աստծու տասը պատուիրաններից են առաջ գալիս։

Պ. Չորրորդ պատուիրանի մէջ հօրըն ու մօրն անուան ներքոյ իմացւում են նաև մեր բոլոր մեծաւորները. դրա

համար այս պատուիրանից ծագում են հնազանդութեան, սիրոյ ու յարգանքի այն պարտքերը, որ հպատակներն ունին դէպի իրանց մեծաւորները, և մեծաւորների հոգողութեան պարտքը՝ դէպի իրանց հպատակները։

Հ. Ո՞ր պատուիրաններից են ծագում արհեստաւորների, վաճառականների, մատակարարների և ուրիշ սրանց նմանների պարտականութիւնները։

Պ. Նրանց ունեցած հաւատարմութեան, անկեղծութեան արդարութեան պարտքերը ծագում են եօթներորդ, ութերորդ ու տասներորդ պատուիրաններից, որոնք արգելում են որևէ խաբէութիւն, անիրաւութիւն, անհոգութիւն ու նենգութիւն։

Հ. Աստծուն նուիրուած անձերի պարտականութիւնները ո՞ր պատուիրանից են առաջ գալիս։

Պ. Երկրորդ պատուիրանից են առաջ գալիս Աստուծուն նուիրուած անձերի պարտականութիւնները, որը հրամայում է կատարել Աստուծուն արած ուխտերն ու խոստումները, որովհետև այս կերպով սոյն անձերը պարտաւորեցրել են իրանց աւետարանական կամ ամեն խրատները պահելու կամ նրանցից մի քանիսը։

2.—Աւետարանական խրատները.

Հ. *Ի՞նչեր են աւետարանական խրատները։*

Պ. Աւետարանական խրատները մի քանի միջոցներ են, որ Յիսուս Քրիստոս թելադրել է սուրբ Աւետարանի մէջ քրիստոնէական կատարելութեանը հասնելու համար։

Հ. *Որո՞նք են աւետարանական խրատները։*

Պ. Աւետարանական խրատներն են՝ կամաւոր աղքատութիւնը, մշտնջենական ողջախոհութիւնը և ամեն մեղք չեղած բաների մէջ հնազանդութիւնը։

Հ. *Ի՞նչ բանի են ծառայում աւետարանական խրատները։*

Պ. Աւետարանական խրատները ծառայում են Աստուծու պատուիրանների պահելը դիւրացնելու և յաւիտենական փրկութիւնն ապահովացնելու համար։

Հ. *Աւետարանական խրատներն ինչո՞ւ համար են դիւրացնում Աստուծու պատուիրանների պահելը։*

Պ. Աւետարանական խրատները նրա համար են դիւրացնում Աստուծու պատուիրանների պահելը, որովհետև օգնում են մեզ մեր՝ սրտերը հարստութեան, հաճոյքներին, պատիւներին չը կապելու, այսպէս մեզ հեռացնում են մեղքից։

ՄԱՍՆ ՉՈՐՐՈՐԴ

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ

ԳԼՈՒԽ Բ.

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԵՐՊՈՎ ՆԿԱՏՈՒԱԾ.

1. — *Խորհրդների բնութիւնը.*

Հ. Ի՞նչ բանի վրայ է խօսում քրիստոնէական վարդապետութեան չորրորդ մասը։

Պ. Քրիստոնէական վարդապետութեան չորրորդ մասը խօսում է խորհուրդների վրայ։

Հ. Ի՞նչ է նշանակում խորհուրդ բառը։

Պ. Խորհուրդ բառը նշանակում է շնորհքի մի զգալի և ազդու նշան, որ Յիսուս Քրիստոս հաստատել է մեր

հոգիներին սրբացնելու համար։

Հ. Ինչո՞ւ համար ես ասում թէ խորհուրդները շնորհքի զգալի եւ ազդու նշաններ են։

Պ. Նրա համար եմ ասում թէ խորհուրդները շնորհքի զգալի և ազդու նշաններ են, որովհետև բոլոր խորհուրդներն՝ զգալի իրերի միջոցով՝ նշանակում են այն աստուածային շնորհքը, որ առաջ են բերում մեր հոգու մէջ։

Հ. Մի օրինակով մեկնի՛ր թէ ի՞նչպէս խորհուրդները շնորհքի զգալի եւ ազդու նշաններ են։

Պ. Մկրտութեան մէջ մկրտուողի գլխին ջուր ածելը և *ես մկրտեմ ըզքեզ, այսինքն լուանամ զքեզ, յանուն Հօր եւ Որդւոյ Հոգւոյն Սրբոյ* խօսքերն ասելը, զգալի նշան են այն արդիւնքի, որ մկրտութիւնը ներգործում է հոգու մէջ, որովհետև ինչպէս որ ջուրը լուանում է մարմինն, այսպէս էլ մկրը-

տութեամբ տրւած շնորհքը մաքրագործում է հոգուն իւր մեղքից։

Հ. Խորհուրդները քանի՞ են եւ որո՞նք։

Պ՝ Խորհուրդները եօթ հետեւեալներն են՝ Մկրտութիւն, Դրոշմ, Հաղորդութիւն, Ապաշխարութիւն, Վերջին օծումն, Կարգ Քահանայութեան ու Պսակ։

Հ. Մի խորհուրդ կատարելու համար քանի՞ բան է հարկաւոր։

Պ. Մի խորհուրդ կատարելու համար երեք բան է հարկաւոր՝ նիւթ, ձեւ ու պաշտօնեայ, որը պէտք է Եկեղեցու արածն անելու դիտաւորութիւնն ունենայ։

Հ. Ի՞նչ է խորհուրդների նիւթը։

Պ. Խորհրդների նիւթն այն զգալի իրն է, որ գործածւում է խորհուրդը կատարելիս, օրինակի համար՝ ջուրը՝ մկրտելիս, ձէթն ու բալասանը՝

դրոշմելիս։

Հ. Ի՞նչ է խորհուրդների ձեւը։

Պ. Խորհրդների ձեւն այն խօսքերն են, որ խորհուրդները կատարելիս արտաբերւում են նիւթի վրայ։

Հ. Ո՞վ է խորհուրդների պաշտօնեան։

Պ. Խորհրդների պաշտօնեան այն անձն է, որ կատարում կամ էլ մատակարարում է խորհուրդը։

2.— Խորհրդների գլխաւոր արդասիքը որ շնորհքն է.

Հ. Ի՞նչ է շնորհքը։

Պ. Աստծու շնորհքը մի ներքին ու գերբնական պարգեւ է, որն առանց մեր արդիւնքի՝ միայն Յիսուս Քրիստոսի արժանեաց համար է տրւում մեզ՝ յաւիտենական փրկութեանը հասնելու համար։

Հ. *Քանի՞ տեսակ շնորհք կայ։*

Պ. Երկու տեսակ շնորհք կայ՝ *սըր-բարար, որ ունակական էլ է կոչւում ու ներգործական շնորհք։*

Հ. *Ի՞նչ է սրբարար շնորհքը։*

Պ Սրբարար շնորհքը մեր հոգու մէջ տարրացած մի գերբնական պար-գև է, որ մեզ արդարացնում, Աստծու որդեգրական որդիներ և արքայու-թեան ժառանգներ է դարձնում։

Հ. *Քանի՞ տեսակ է սրբարար շնորհքը։*

Պ. Սրբարար շնորհքն երկու տե-սակ է՝ *առաջին* և *երկրորդ* շնորհք։

Հ. *Ո՞րն է* առաջին *շնորհքը։*

Պ. *Առաջին* շնորհքն այն է, որով մարդը մահուչափ մեղքի վիճակը թող-տալով ընդգրկւում է շնորհքի վիճակը։

Հ. *Իսկ ո՞րն է երկրորդ շնորհքը։*

Պ. *Երկրորդ* շնորհքն *առաջինի* աճումն է։

Հ. *Ի՞նչ է ներգործական շնորհքը։*

Պ. Ներգործական շնորհքը մի գերբնական պարգև է, որ լուսաւորում է մեր միտքը և շարժում ու զօրացնում մեր կամքը, որպէս զի գործենք բարին ու հեռանանք չարից։

Հ. *Մենք կարո՞ղ ենք Աստծու շը-նորհքին դէմ կենալ։*

Պ. Այո, մենք կարող ենք Աստծու շնորհքին դէմ կենալ, որովհետև նա չի ոչնչացնում մեր ազատ կամքը։

Հ. *Մենք կարո՞ղ ենք միայն մեր անձնական զօրութեամբ յաւիտենա-կան փրկութեան համար մի օգտակար գործ կատարել։*

Պ. Առանց Աստծու շնորհքի օգ-նութեան մենք չենք կարող և ոչ մի օգ-տակար գործ կատարել մեր յաւիտենա-կան փրկութեան համար։

Հ. *Աստուած ի՞նչ բանի միջոցով է տալիս մեզ շնորհքը։*

Պ. Աստուած գլխաւորաբար խորհրդների միջոցով է տալիս մեզ շնորհքը։

Հ. Խորհուրդները բացի սրբարար շնորհից մի ուրիշ շնորհք էլ տալի՞ս են մեզ։

Պ. Խորհուրդները՝ բացի սրբարար շնորհքից՝ տալիս են մեզ նաեւ խորհրդական շնորհքը։

Հ. Ի՞նչ բանի մէջ է կայանում խորհրդական շնորհը։

Պ. Խորհրդական շնորհքը կայանում է այն իրաւունքի մէջ, որ մէկը՝ մի խորհուրդ ընդունելով՝ ստանում է այն ներգործական շնորքներն էլ ընդունելու, որոնք հարկաւոր են ընդունած խորհրդից առաջ եկած պարտքերը յարմար ժամանակին լաւ կատարելու համար։ Այսպէս երբ մենք մկրտւեցանք, իրաւունք ստացանք այն շնորհքներն ունենալու, որոնք հարկաւոր են քրիստոնէաբար ապրելու։

Հ. Խորհուրդները միշտ շնորհք կըտա՞ն իրանց ընդունողներին։

Պ. Խորհուրդները միշտ շնորհք կը տան, միայն թէ պահանջւած պատրաստութիւններով ընդունւեն։

Հ. Ո՞վ է խորհրդներին շնորհք պարգեւելու կարողութիւն տուել։

Պ. Յիսուս Քրիստոս է իւր չարչարանքներով ու մահւամբ խորհրդներին շնորհք պարգեւելու կարողութիւն տւել։

Հ. Ո՞ր խորհուրդներն են առաջին սրբարար շնորհը տալիս։

Պ. Այն խորհուրդները՝ որ տալիս են առաջին սրբարար շնորհքը, որով Աստծու բարեկամներն ենք դառնում, երկու են՝ Մկրտութիւնն ու Ապաշխարութիւնը։

Հ. Դրա համար ի՞նչպէս են կոչւում այս երկու խորհուրդները։

Պ. Այս երկու խորհուրդներն, այս-

ինքը՝ Մկրտութիւնն ու Ապաշխարութիւնը, կոչւում են *մեռելների խորհուրդներ*, որովհետեւ գլխաւորապէս նրա համար են հաստատւել, որ վերադարձնեն շնորհքի կեանքը մեղքով մեռած հոգիներին:

Հ. *Ո՞ր խորհուրդներն են աճեցընում շնորհքը նրանում, որ արդէն նոյնն ունի:*

Պ. Այն խորհուրդները՝ որ աճեցընում են շնորհքը նրանում, որ արդէն նոյնն ունի, հինգ մնացածներն են, այսինքն՝ Դրոշմը, Հաղորդութիւնը, Վերջին Օծումը, Քահանայութեան Կարգն ու Պսակը, որոնք *երկրորդ շընորհքն* են տալիս:

Հ. *Դրա համար այս հինգ խորհուրդներն ի՞նչպէս են կոչւում:*

Պ. Այս հինգ խորհուրդներն, այսինքն Դրոշմը, Հաղորդութիւնը, Վերջին օծումը, Քահանայութեան Կարգն

ու Պսակը կոչւում են *կենդանիների խորհուրդներ*, որովհետեւ պէտք է որ մահուչափ մեղքից ազատ՝ այսինքն սրբարար շնորհքով կենդանի լինի նա, որ ընդունում է սրանց:

Հ. *Ի՞նչպիսի մեղք է գործում նա՝ որ իմանալով թէ զուրկ է Աստծու շընորհքից, ընդունում է կենդանիների խորհրդներից մէկը,*

Պ. Մի ծանր սրբապղծութիւն է գործում նա՝ որ իմանալով թէ զուրկ է Աստծու շնորհքից, ընդունում է կենդանիների խորհրդներից մէկը:

Հ. *Ո՞րոնք են փրկութեան համար ամենաանհրաժեշտ խորհուրդները:*

Պ. Փրկութեան համար ամենահարկաւոր խորհուրդներն երկու են՝ Մըկըրտութիւնն ու Ապաշխարութիւնը: Մկրտութիւնը հարկաւոր է ամենին, իսկ Ապաշխարութիւնը՝ նրանց որ Մկըրտութիւնից յետոյ մահուչափ մեղք են

գործել։

Հ. Խորհուրդների մէջ ո՞րն է ամենամեծը։

Պ. Խորհրդների մէջ ամենամեծը՝ Սուրբ Հաղորդութեան Խորհուրդն է, որովհետև չէ թէ միայն շնորհք է պարունակում, այլ և Յիսուս Քրիստոսին, որ խորհրդների հաստատողը և շնորհքի պատճառն է։

3. — Մի քանի խորհրդների դրոշմած կնիքը.

Հ. Ո՞ր խորհուրդներն են, որ միանգամից աւելի չեն կարող ընդունուիլ։

Պ. Այն խորհուրդները՝ որ մի անգամից աւելի չեն կարող ընդունուիլ, երեք են՝ Մկրտութիւնը, Դրոշմն ու Քահանայութեան Կարգը։

Հ. Ինչո՞ւ այս երեք խորհուրդները՝ Մկրտութիւնը, Դրոշմն ու Քահանա-

յութեան կարգը մի անգամից աւելի չեն կարող ընդունուիլ։

Պ. Այս երեք խորհուրդները՝ Մկրտութիւնը, Դրոշմն ու Քահանայութեան կարգը մի անգամից աւելի չեն կարող ընդունուիլ, որովհետև նրանցից իւրաքանչիւրը մի կնիք է դրոշմում։

Հ. Ի՞նչ է այն կնիքը՝ որ այս երեք խորհուրդներից իւրաքանչիւրը դրոշմում է հոգու մէջ։

Պ. Այն կնիքը՝ որ այս երեք խորհրդներից իւրաքանչիւրը դրոշմում է հոգու մէջ, մի հոգևոր նշան է, որն անջնջելի կը մնայ։

Հ. Ի՞նչ բանի է ծառայում այն կնիքը՝ որ այս երեք խորհուրդները տպաւորում են հոգու մէջ։

Պ. Այն կնիքը՝ որ այս երեք խորհուրդները տպաւորում են հոգու մէջ, ծառայում է՝ մեզ Մկրտութեան մէջ Յիսուս Քրիստոսի անդամները, Դրոշմի

մէջ՝ Նրա զինուորներն ու Քահանայութեան կարգի մէջ՝ Նրա պաշտօնեաները դարձնելու:

ԳԼՈՒԽ Բ.

ՄԿՐՏՈՒԹԻՒՆԸ

1.— *Մկրտութեան բնութիւնն ու արգասիքները.*

Հ. Ի՞նչ է Մկրտութիւնը:

Պ. Մկրտութիւնը մի խորհուրդ է, որի միջոցով վերածնւում ենք Աստծու շնորհքի մէջ ու քրիստոնեայ դառնում:

Հ. Որո՞նք են Մկրտութեան խորհրդի արգասիքները:

Պ. Մկրտութեան խորհուրդը տալիս է առաջին սրբարար շնորհքը, որը ոչ միայն ջնջում է սկզբնական մեղքն՝ այլ և ներգործականը, եթէ գտնւի. թողնում է նրանից արժանի եղած ամեն պատիժը, դրոշմում է քրիստոնէական կնիքը, մեզ Աստծու որդիներ, Եկեղեցու անդամներ, արքայութեան ժառանգներ դարձնում և ընդունակ անում միւս խորհուրդներն ընդունելու։

Հ. Ո՞րն է Մկրտութեան նիւթը։

Պ. Մկրտութեան նիւթը բնական ջուրն է։

Հ. Ո՞րն է Մկրտութեան ձեւը։

Պ. Մկրտութեան ձեւն ըստ Հայոց *(այս անուն ծառայս կամ աղախին Աստուծոյ) մկրտի ի ձեռն իմ յանուն Հօր † եւ Որդւոյ † եւ Հոգւոյն Սրբոյ †* **խօսքերն են։**

2—. *Մկրտութեան Պաշտօնեան.*

Հ. Ո՞ւմ է վերաբերում Մկրտութիւն տալը։

Պ, Մկրտութիւն տալն ըստ իրաւունքի Եպիսկոպոսներին ու ժողովրդա-

պետներին է վերաբերում, բայց հարկաւորութեան դէպքում, որեւէ մէկը, թէ մարդ լինի եւ թէ կին, հերետիկոսը՝ անհաւատն անգամ կարող է մկրտել, միայն թէ Մկրտութեան արարողութիւնը կատարէ եւ Եկեղեցու արածն անելու դիտաւորութիւնն ունենայ:

Հ. Բազմաթիւ ներկայ եղող անձերից ո՞ւմ պարտքն է մկրտելոյ նրան, որ մահուան վտանգի մէջ գտնուելով մկրտուելոյ կարեւորութիւնն ունի:

Պ. Բազմաթիւ ներկայ եղող անձերից քահանայի՝ եթէ այնտեղ գտնուի՝ պարտքն է մկրտելու նրան, որ մահուան վտանգի մէջ գտնուելով մկրտուելու հարկաւորութիւնն ունի, եւ եթէ քահանայ չը գտնուի՝ նրանից ստորադաս կղերականի, իսկ սրա էլ բացակայութեան դէպքում՝ եթէ կինն աւելի փորձառու չէ եւ կամ էլ վայելչութիւնը չի պահանջում, աւելի էրիկ մարդուն է ընկնում մկրտելը:

Հ. Մկրտողն ի՞նչ դիտաւորութիւն պէտք է ունենայ:

Պ. Մկրտողը պէտք է այն բանն անելու դիտաւորութիւնն ունենայ, որ Եկեղեցին անում է մկրտելիս:

3. — *Մկրտութեան արարողութիւնն ու չափահասներից մկրտուելու համար պահանջուած պատրաստութիւնները.*

Հ. Ի՞նչպէս պէտք է մկրտել:

Պ. Ըստ Հայաստանեայց Եկեղեցւոյ պէտք է մկրտուողին ջրի մէջ ընկղմել, եթէ այդ անկարելի է, պէտք է նրա գլխի կամ մարմնի ուրիշ գլխաւոր մասի վրայ երեք անգամ ջուր ածել միեւնոյն ժամանակ ասելով (*այս անուն ծառայս կամ աղախինս Աստուծոյ*) *մկրտի 'ի ձեռն իմ յանուն Հօր † եւ Որդւոյ † եւ Հոգւոյն Սրբոյ †*:

Հ. Մկրտուած կը լինի՞ր այն ան-

ձը, որի վրայ եթէ մէկը ջուրն ածէր իսկ ուրիշը խօսքերն արտաբերէր։

Պ. Ո՛չ, մկրտուած չէր լինի այն անձը, որի վրայ եթէ մէկը ջուրն ածէր, իսկ ուրիշը խօսքերն արտաբերէր, դրա համար պէտք է միևնոյն անձը թէ՛ ջուրն ածէ և թէ՛ խօսքերն արտաբերէ։

Հ. Արդեօք պէտք չէ՞ մկրտել այն անձին, որի կենդանի կամ մեռած լինելը յայտնի չէ։

Պ. Երբ մէկ անձի կենդանի կամ մեռած լինելը տարակուսական է, պէտք է նրան թէութեամբ մկրտել, ասելով *եթէ (ծառայս կամ աղախինս Աստուծոյ) կենդանի է, մկրտի 'ի ձեռն իմ, յանուն Հօր † եւ Որդւոյ † եւ Հոգւոյն Սրբոյ † ։*

Հ. Ե՞րբ պէտք է երեխաներին եկեղեցի տանել, որպէսզի մկրտուին։

Պ. Կարելի եղածին չափ շուտ պէտք է երեխաներին եկեղեցի տանել,

որպէս զի մկրտուին։

Հ. Ինչո՞ւ համար մեծ փոյթ պէտք է ունենալ, որ երեխաները մկրտուին։

Պ. Նրա համար պէտք է մեծ փոյթ ունենալ, որ երեխաները մկրտուին, որովհետև իրանց մատղաշ հասակի պատճառով ենթարկուած են մահուան բազմաթիւ վտանգներին և առանց Մկրտութեան չեն կարող փրկուիլ։

Հ. Ուրեմն մեղանչո՞ւմ են այն հայրերն ու մայրերը, որ անհոգութեամբ թող են տալիս, որ իրանց զաւակներն առանց Մկրտութեան մեռնին, կամ էլ մկրտել տալն ուշացնում են։

Պ. Այո՛, այն հայրերն ու մայրերը, որ անհոգութեամբ թող են տալիս, որ իրանց զաւակներն առանց Մկրտութեան մեռնին, մեղանչում են ծանրապէս, որովհետև զրկում են իրանց զաւակներին, յաւիտենական կեանքից. դարձեալ մահուչափ մեղք են գործում

չատ ուշացնելով Մկրտութիւնը, որովհետև դեռ չը մկրտուած՝ մեռնելու վըտանգի մէջ են ձգում նրանց։

Հ. *Երբ մկրտուողը չափահաս է, ի՞նչ տրամադրութիւններ պէտք է ունենայ։*

Պ. Երբ մկրտուողը չափահաս է, բացի հաւատքից պէտք է նաև իր գործած մահուչափ մեղքերի վրայ գոնէ անկատար զղջում ունենայ։

Հ. *Եթէ չափահասի մէկն առանց այս զղջման՝ մահուչափ մեղքի մէջ գտնուելով՝ մկրտուէր, ի՞նչ բան կ՚ընդունէր։*

Պ. Եթէ չափահասի մէկն առանց այս զղջման՝ մահուչափ մեղքի մէջ գտնուելով՝ մկրտուէր, միայն մկրտութեան կնիքը կընդունէր, և ո՛չ թէ մեղքերի թողութիւնը, և ո՛չ էլ սրբարար շնորհքը։ Եւ այս արգասիքները կախակայեալ կը մնային մինչև որ մեղքերի վրայ կամ կատարեալ զղջում ունենալով, կամ Ապաշխարութեան խորհրդի միջոցով արգելքը

վերանար։

4.— *Մկրտութեան հարկաւորութիւնն ու մկրտածների պարտքերը*

Հ. *Մկրտութիւնը հարկաւո՞ր է փրկութեան համար։*

Պ. Մկրտութիւնը բացարձակապէս հարկաւոր է փրկութեան համար, որովհետև Յիսուս Քրիստոս յայտնի բացայայտ ասել է՝ *եթէ ոչ ոք ծնցի 'ի ջրոյ եւ 'ի Հոգւոյ, ոչ կարէ մտանել յարքայութիւնն Աստուծոյ։*

Հ. *Կա՞յ մի բան, որ կարենայ Մըկրտութեան տեղը բռնել։*

Պ. Այո՛, Մկրտութեան տեղը կարող է բռնել մարտիրոսութիւնը՝ որն *արեան Մկրտութիւն* է կոչւում, և կամ Աստծու կատարեալ սէրը, ու կամ էլ զղջման կատարեալ ներգործութիւնը, որը միացած լինի Մկրտութիւնն ընդ-

դունելու գոնէ անորոշ բաղձանքի հետ, այս էլ կոչւում է *մկրտութիւն երդ կամ դաւանանք*:

Հ. *Ի՞նչ բանի է պատրաստւում նա, որ Մկրտութիւնն է ընդունում*:

Պ. Նա՝ որ Մկրտութիւնն է ընդունում, պարտաւորւում է միշտ հաւատքը դաւանելու, Յիսուս Քրիստոսի և Եկեղեցու օրէնքը պահելու:

Հ. *Ի՞նչ բանից է հրաժարւում մկրտւողը*:

Պ. Մկրտւողը հրաժարւում է ընդմիշտ սատանայից, նրա գործերից ու փառաւորութիւններից:

Հ. *Ի՞նչ են հասկանում սատանայի գործերն ու փառաւորութիւններն անելով*:

Պ. Սատանայի *գործերն ու փառաւորութիւններն* **ասելով, հասկանում ենք մեղքերն, սուրբ Աւետարանի սկզբունքներին հակառակող աշխարհիս**

սկզբունքները:

5. — *Անունն ու կնքահայրերը.*

Հ. *Ինչո՞ւ համար են մկրտւողին մի Սրբի անունը տալիս*:

Պ. Նրա համար են մկրտւողին մի Սրբի անունը տալիս, որպէս զի մի երկնային պաշտպանի մասնաւոր հովանաւորութեան ներքոյ դրւելով՝ խրախուսւի նրա օրինակներին նմանելու:

Հ. *Որո՞նք են Մկրտութեան կնքահայրերն ու կնքամայրերը*:

Պ. Մկրտութեան կնքահայրերն ու կնքամայրերն այն անձերն են, որ Եկեղեցու կարգադրութեամբը Մկրտութեան ժամանակ երեխաներին իրանց գիրկն են առնում, նրանց փոխարէն պատասխանում և Աստծու առաջ երաշխաւոր լինում նրանց քրիստոնէա-

կան կրթութեան համար, մասնաւորապէս երբ ծնողներ չունենան։

Հ. *Պարտաւո՞ր ենք այն խոստումներն ու հրաժարումը կատարելու, որ մեր կնքահայրերն արել են մեր փոխարէն։*

Պ. Անտարակոյս, պարտաւոր ենք այն խոստումներն ու հրաժարումը կատարելու, որ մեր կնքահայրերն արել են մեր փոխարէն, որովհետև Աստուած միայն այս պայմանով է Իւր շնորհքի մէջ ընդունել մեզ։

Հ. *Ո՞րպիսի անձերին պէտք է կնքահայր ու կնքամայր ընտրել։*

Պ. Պէտք է ուղղափառ, բարի վարքի տէր և Եկեղեցու օրէնքներին հնազանդ անձերին կնքահայր ու կնքամայր ընտրել։

Հ. *Որո՞նք են կնքահայրերի ու կնքամայրերի պարտքերը։*

Պ. Կնքահայրերն ու կնքամայրերը պարտաւոր են հոգ տանելու, որ իրանց հոգևոր որդիները սովորեն հաւատքի գլխաւոր ճշմարտութիւններն ու բարի քրիստոնեաների պէս ապրեն. պարտաւոր են նաև նրանց բարի օրինակ տալու։

Հ. *Կնքահայրերն ի՞նչ կապակցութիւն են ունենում իրանց սանի հետ։*

Պ. Կնքահայրերն հոգևոր ազգականութիւն են ունենում իրանց սանի և նրա ծնողների հետ, ուսկից մի արգելք է ծագում, որի պատճառով չեն կարող միմեանց հետ ամուսնանալ։

ԳԼՈՒԽ Գ.

ԴՐՈՇՄԸ.

Հ. *Ի՞նչ է Դրոշմի խորհուրդը։*

Պ. Դրոշմը մի խորհուրդ է, որ տալիս է մեզ Սուրբ Հոգուն, Յիսուս Քրիստոսի գինուորների կնիքը տպաւորում մեր հոգու մէջ ու մեզ կատարեալ

քրիստոնեաներ դարձնում:

Հ. Դրոշմի խորհուրդը մեզ ի՞նչպէս է կատարեալ քրիստոնեաներ դարձնում:

Պ. Դրոշմը մեզ կատարեալ քրիստոնեաներ է դարձնում, որովհետև հաստատում է հաւատքի մէջ, կատարելագործում Մկրտութեան մէջ ընդունած առաքինութիւններն ու պարգևները:

Հ. Որո՞նք են Սուրբ Հոգու պարգևները, որ մենք ընդունում ենք Դրոշմի մէջ:

Պ. Սուրբ Հոգու պարգևները, որ մէկն ընդունում է Դրոշմի մէջ եօթ հետևեալներն են՝ Իմաստութիւն, Հանճար, Խորհուրդ, Զօրութիւն, Գիտութիւն, Աստուածպաշտութիւն և Աստուծու Երկիւղ:

Հ. Ո՞րն է այս խորհրդի նիւթը:

Պ. Այս խորհրդի նիւթը՝ բացի դրոշմողի ձեռնադրութիւնից՝ այն օծու-

մըն էլ է, որով պաշտօնեան սուրբ Մեռոնով խաչաձև օծում է մկրտուած անձի ճակատն, աչքերն, ականջները, քիթը, բերանը, ձեռքերը, սիրտը, կռնակն ու ոտքերը:

Հ. Ի՞նչ է սուրբ Մեռոնը:

Պ. Սուրբ Մեռոնը բալասանի հետ խառնուած ձէթ է, որ Եպիսկոպոսն օրհնում է Աւագ հինգշաբթի օրը:

Հ. Ի՞նչ են նշանակում ձէթն ու բալասանը այս խորհրդի մէջ:

Պ. Ձէթը՝ որ տարածւում ու զօրացնում է, այս խորհրդի մէջ նշանակում է շնորհքի առատութիւնը, որ հեղւում է քրիստոնէի հոգու մէջ՝ նրան հաւատքի մէջ հաստատելու համար. իսկ Բալասանը՝ որ անուշահոտ է և ապականութիւնից պահում, նշանակում է թէ քրիստոնեան արդէն այս շնորհքով զօրացած, կարող է քրիստոնէական առա-

քինութիւնների անուշահոտութիւնը բուրել և ինքնիրան ախտերի ապականութիւնից պահել։

Հ. *Ո՞րն է Դրոշմի խորհրդի ձեւը։*

Պ. Դրոշմի խորհրդի ձևն է՝ *Իւղ անոյշ հեղեալ յանուն Յիսուսի Քրիստոսի ի վերայ քո՝ կնիք † աստուածային եւ երկնաւոր պարգեւաց։ Յանուն Հօր † եւ Որդւոյ † եւ Հոգւոյն Սրբոյ † ամէն։*

Հ. *Ո՞վ է Դրոշմի խորհրդի պաշտօնեան։*

Պ. Արևմտեան Եկեղեցում՝ Դրոշմի կարգաւոր պաշտօնեան միայն Եպիսկոպոսն է, իսկ Արևելեան Եկեղեցու սովորութիւնն է, որ քահանան էլ՝ իբրև արտաքոյ կարգի պաշտօնեայ, դրոշմում է։

Հ. *Ի՞նչ արարողութիւններով է Դրոշմի պաշտօնեան այս խորհուրդը մատակարարում։*

Պ. Հայ արարողութեան մէջ Դրոշմի պաշտօնեան՝ այս խորհուրդը մատակարարելիս նախ՝ աջ ձեռքը դնում է դրոշմւողի գլխին և յետոյ տանում է նրա վրայ, Սուրբ Հոգուն բածում նրա վրայ հրաւիրելով, վերջը սուրբ Մեռոնով խաչաձև օծում նրա ճակատն ասելով. *Իւղ անոյշ հեղեալ.....* յետոյ հինգ զգայարանքները, ոտքերը սիրտն ու կռնակը, յարելով միևնոյն ժամանակ իւրաքանչիւրին յատուկ ձևը, վերջապէս նրան խաղաղութիւն մաղթելով արձակում է։

Հ. *Ինչո՞ւ համար ճակատն են օծում։*

Պ. Նրա համար ճակատն են օծում, ուր երևում են ամօթի ու վախի նշանները, որպէս զի դրոշմւողն իմանայ թէ՝ պէտք չէ ամաչի քրիստոնէական անունից ու դաւանմունքից, և ոչ էլ վախենայ հաւատքի թշնամիներից, այլ պէտք է

պատրաստ լինի՝ Յիսուս Քրիստոսի հաւատքի համար ամեն տեսակ թշնամանք ու նեղութիւն կրելու։

Հ. Ամե՞նքն էլ պարտաւոր են փոյթ ունենալ Դրոշմի խորհուրդն ընդունելու։

Պ. Այո, ամենքն էլ պարտաւոր են փոյթ ունենալ Դրոշմի խորհուրդն ընդունելու և իրանց հպատակներին էլ ընդունել տալու։

Հ. Եկեղեցին երբ է տալիս Դրոշմի խորհուրդը։

Պ. Արևելեան Եկեղեցին՝ Մկրտութիւնից անմիջապէս վերջն է տալիս Դրոշմի խորհուրդը։

Հ. Ի՞նչ պատրաստութիւններ են պահանջւում Դրոշմի խորհուրդն արժանապէս ընդունելու համար։

Պ. Եթէ պատահմամբ բանաւորութիւնը բացւած մէկն է դրոշմւում, այս խորհուրդն արժանապէս ընդունելու հա-

մար պարտաւոր է Աստծու շնորհքի մէջ գտնւելու, մեր սուրբ հաւատքի գլխաւոր խորհուրդները գիտենալու և մեծ յարգանքով ու ջերմեռանդութեամբ մերձենալու Նրան։

Հ. Կը մեղանչէ՞ր մէկն եթէ երկրորդ անգամ Դրոշմն ընդունէր։

Պ. Սրբապղծութիւն կը գործէր, որովհետև Դրոշմը հոգու մէջ կնիք գարնող խորհրդներից մինը լինելով մի անգամից աւելի չի կարող ընդունւիլ։

Հ. Ի՞նչ պէտք է անէ քրիստոնեան Դրոշմի շնորհքը պահելու համար։

Պ. Քրիստոնեան՝ Դրոշմի շնորհքը պահելու համար, պէտք է ստէպ աղօթք անէ, բարեգործութիւններ կատարէ և չը նայելով մարդկային նկատմունքներին՝ Յիսուս Քրիստոսի օրէնքի համեմատ ապրի։

Հ. Ինչո՞ւ համար Դրոշմի խոր-

հուրդը մատակարարելիս՝ կնքահայր ու կնքամայր են որոշում։

Պ. Նրա համար Դրոշմի խորհուրդը մատակարարելիս՝ կնքահայր ու կնքամայր են որոշում, որպէս զի խօսքերով ու բարի օրինակներով փրկութեան ճանապարհի մէջ ուղղեն և հոգևոր պատերազմի մէջ օգնեն դրոշմուողին։

Հ. Կնքահայրն ի՞նչ յատկութիւններ պէտք է ունենայ։

Պ. Կնքահայրը պէտք է չափահաս, ուղղափառ, դրոշմուած, կրօնի ամենահարկաւոր բաներին տեղեակ, ու բարի վարքի տէր մէկը լինի։

Հ. Դրոշմի կնքահայրը դրոշմուողի և նրա ծնողների հետ ազգականութիւն չի՞ ունենում։

Պ. Դրոշմի կնքահայրը՝ Մկրտութեան կնքահօր ունեցած հոգևոր ազգականութիւնն է ունենում։

ԳԼՈՒԽ Դ.

ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆԸ

1.— Այս խորհրդի էութիւնն ու նոյնի մէջ Յիսուս Քրիստոսի իսկական ներկայութիւնը.

Հ. Ի՞նչ է Ս. Հաղորդութեան խորհուրդը։

Պ. Ս. Հաղորդութիւնը մի խորհուրդ է, որի մէջ՝ հացի բովանդակ գոյութիւնը հրաշապէս փոխարկուելով Յիսուս Քրիստոսի Մարմնին ու գինու բովանդակ գոյութիւնը՝ Նրա անգին Արեանը, պարունակւում է՝ ճշմարտապէս, իսկապէս ու գոյացապէս հացի ու գինու տեսակների ներքոյ, միևնոյն Տեառն մերոյ Յիսուս Քրիստոսի Մարմինն, Արիւնը, Հոգին ու Աստուածութիւնը մեր հոգևոր կերակուրը լինելու համար։

Հ. Միևնո՞յն Յիսուս Քրիստոս է Ս. Հաղորդութեան մէջ գտնւում, որ

այժմ երկնքումն է, եւ թէ երկրիս վե-
րայ ամենասուրբ Կուսից ծնաւ։

Պ. Այո, Ս. Հաղորդութեան մէջ
ճիշտ միևնոյն Յիսուս Քրիստոս է գտը-
նըւում, որ այժմ երկնքումն է, և թէ եր-
կրքիս վրայ ամենասուրբ Կուսից ծնւեց։

Հ. Ինչո՞ւ ես հաւատում թէ Ս.
Հաղորդութեան մէջ Յիսուս Քրիստոս
իրօք ներկայ է։

Պ. Ես հաւատում եմ թէ Ս. Հա-
ղորդութեան մէջ Յիսուս Քրիստոս իրօք
ներկայ է, որովհետև հէնց Ինքն է յայտ-
նել այս ճշմարտութիւնն ու սուրբ Ե-
կեղեցին էլ սովորեցնում ինձ։

Հ. Ո՞րն է Ս. Հաղորդութեան
խորհրդի նիւթը։

Պ. Ս Հաղորդութեան խորհրդի
նիւթը Յիսուս Քրիստոսի գործա-
ծածն է, այսինքն՝ ցորենի հացը և որ-
թի գինին։

Հ. Ո՞րն է Ս. Հաղորդութեան խոր-

հրդի ձեւը։

Պ. Ս. Հաղորդութեան խորհրդի
ձևը Յիսուս Քրիստոսի գործածած
խօսքերն են՝ *այս է Մարմին իմ, այս*
է Արիւն իմ։

Հ. Ուրեմն ի՞նչ է նշխարքը սրբա-
գործութիւնից առաջ։

Պ. Նշխարքը սրբագործութիւնից
առաջ՝ հաց է։

Հ. Ի՞նչ է նշխարքը սրբագործու-
թիւնից յետոյ։

Պ. Սրբագործութիւնից յետոյ նըշ-
խարքը հացի տեսակների ներքոյ՝
Յիսուս Քրիստոսի ճշմարիտ Մարմինն
է։

Հ. Ի՞նչ է գտնւում բաժակի մէջ
սրբագործութիւնից առաջ։

Պ. Սրբագործութիւնից առաջ բա-
ժակի մէջ գտնւում է մի քանի կաթիլ
ջրի հետ խառնւած գինի։

Հ. Սրբագործութիւնից յետոյ ի՞նչ

է գտնւում բաժակի մէջ.

Պ. Սրբագործութիւնից յետոյ բաժակի մէջ գտնւում է գինու տեսակների ներքոյ Յիսուս Քրիստոսի ճշմարիտ Արիւնը:

Հ. Ե՞րբ է կատարւում հացի ու գինու փոխարկութիւնը Յիսուս Քրիստոսի Մարմնի ու Արեան:

Պ. Այն ժամանակ է կատարւում հացի ու գինու փոխարկութիւնը Յիսուս Քրիստոսի Մարմնին ու Արեանը, երբ քահանան սուրբ Պատարագի մէջ սրբագործութեան խօսքերն է արտաբերում:

Հ. Ի՞նչ է սրբագործութիւնը:

Պ. Սրբագործութիւնը՝ քահանայի միջնորդութեամբ՝ այն հրաշքի նորոգումն է, որ Յիսուս Քրիստոս կատարեց, երբ վերջին ընթրիքում հացն ու գինին իւր երկրպագելի Մարմնին ու Արեանը փոխարկեց, ասելով. *այս է*

Մարմին իմ, այս է Արիւն իմ:

Հ. Ի՞նչպէս է կոչւել Եկեղեցուց հացի եւ գինու՝ Յիսուս Քրիստոսի Մարմնի եւ Արեան հրաշալի փոխարկութիւնը:

Պ. Այն հրաշալի փոխարկութիւնը՝ որ ամեն օր մեր խորանների վրայ է կատարւում, *գոյացափոխութիւն* է կոչւել Եկեղեցուց:

Հ. Ո՞վ է սրբագործութեան խօսքերին այնպիսի մեծ կարողութիւն տւել:

Պ. Նոյն ինքն Յիսուս Քրիստոս՝ ամենակարող Աստուածն է այնպիսի մեծ կարողութիւն տւել սրբագործութեան խօսքերին:

Հ. Սրբագործութիւնից յետոյ հացից ու գինուց էլ ոչինչ չի՞ մնում:

Պ. Սրբագործութիւնից յետոյ միայն հացի ու գինու տեսակներն են մնում:

Հ. Ի՞նչեր են հացի եւ գինու տեսակները:

Պ. Տեսակները՝ հացի և գինու քանակութիւնը և զգալի որպիսութիւններն են, ինչպէս են՝ ձևը, գոյնն ու համը:

Հ. Հացի եւ գինու տեսակները ի՞նչպէս են կարող առանց իրանց գոյութեան մնալ:

Պ. Հացի և գինու տեսակներն Աստծու ամենակարող զօրութեամբն են մնում առանց իրանց գոյութեանը:

Հ. Հացի տեսակների ներքոյ միայն Յիսուս Քրիստոսի Մարմի՞նն է գտնւում եւ գինու տեսակների ներքոյ միայն Նրա Արիւնը:

Պ. Յիսուս Քրիստոս կենդանի լինելով՝ թէ՛ հացի տեսակների ներքոյ է ամբողջապէս գտնւում և թէ՛ գինու, այսինքն՝ Մարմնով, Արեամբ, Հոգւով ու Աստուածութեամբ:

Հ Կարող ես ինձ ասել թէ ինչո՞ւ է Յիսուս Քրիստոս նշխարքի ու բաժակի մէջ էլ ամբողջապէս գտնւում:

Պ. Յիսուս Քրիստոս թէ՛ հացի և թէ՛ բաժակի մէջ էլ ամբողջապէս է գտնւում, որովհետև ինքն Ս. Հաղորդութեան մէջ այնպէս կենդանի է ու անմահ, ինչպէս որ երկնքումն է. դրա համար որտեղ որ լինի իւր Մարմինն այնտեղ են նաև իւր Արիւնը, Հոգին ու Աստուածութիւնը, և ուր որ Արիւնն՝ այնտեղ են նաև Մարմինը, Հոգին ու Աստուածութիւնը, վասըն զի այս ամենքն անբաժանելի են այժմ Յիսուս Քրիստոսի մէջ:

Հ. Յիսուս Քրիստոս նշխարքի մէջ գալիս՝ երկինքը թողնո՞ւմ է:

Պ. Յիսուս Քրիստոս նշխարքի մէջ գալիս՝ երկինքը չի թողնում, այլ միևնոյն ժամանակ թէ՛ երկնքումն է և թէ՛ Ս. Հաղորդութեան մէջ:

Հ. Յիսուս Քրիստոս նշխարքիս

բոլո՞ր սրբագործուած նշխարքների մէջ էլ է գտնւում։

Պ. Այո՛, Յիսուս Քրիստոս աշխարհիս բոլոր սրբագործուած նշխարքների մէջ էլ է գտնւում։

Հ. *Ինչպէ՞ս է կարելի, որ Յիսուս Քրիստոս բոլոր սրբագործուած նշխարքների մէջ էլ գտնւի։*

Պ. Աստծու՝ Որին անհնարին բան չը կայ, ամենակարող զօրութեամբն է, որ Յիսուս Քրիստոս ամեն սրբագործուած նշխարքների մէջ էլ գտնւում է։

Հ. *Նշխարքը կոտրատելիս Յիսուս Քրիստոսի Մարմի՞նն էլ է կոտրատւում։*

Պ. Նշխարքը կոտրատելիս Յիսուս Քրիստոսի Մարմինը չի կոտրատւում, այլ միայն հացի տեսակները։

Հ. *Նշխարքի ո՞ր մասի մէջ է մնում Յիսուս Քրիստոսի Մարմինը։*

Պ. Յիսուս Քրիստոսի Մարմինը

նշխարքի ամեն մի բաժանուած մասի մէջ էլ ամբողջ է մնում։

Հ. *Արդեօք Յիսուս Քրիստոս թէ՛ մեծ նշխարքի մէջ է գտնւում եւ թէ մի փոքր մասնկի մէջ։*

Պ. Այո՛, թէ մեծ նշխարքի և թէ մի փոքր մասնկի մէջ էլ միևնոյն Յիսուս Քրիստոս է գտնւում։

Հ. *Ինչո՞ւ համար են եկեղեցիների մէջ Ս. Հաղորդութիւնը պահում։*

Պ. Նրա համար են եկեղեցիների մէջ Ս. Հաղորդութիւնը պահում, որպէս զի հաւատացեալներից պաշտուի, և ըստ կարօտութեան հիւանդներին տրուի։

Հ. *Պէ՞տք է երկրպագութիւն մատուցանել Ս. Հաղորդութեանը։*

Պ. Այո՛, պէտք է Ս. Հաղորդութեանը երկրպագութիւն մատուցանել, որովհետև ճշմարտապէս, իսկապէս ու գոյացապէս պարունակւում է մեր Տէր

Յիսուս Քրիստոսին։

2.—Ս. Հաղորդութեան հաստատւիլը և արդասիքները.

Հ. Յիսուս Քրիստոս ե՞րբ հաստատեց Ս. Հաղորդութեան խորհուրդը։

Պ. Յիսուս Քրիստոս Ս. Հաղորդութեան խորհուրդը հաստատեց վերջին ընթրիքն իւր աշակերտների հետ ուտելիս, իւր չարչարանքների նախընթաց երեկոյ։

Հ. Յիսուս Քրիստոս ինչո՞ւ համար է հաստատել Ս. Հաղորդութեան խորհուրդը։

Պ. Յիսուս Քրիստոս երեք գլխաւոր պատճառների համար է հաստատել Ս. Հաղորդութեան խորհուրդը՝

1. Որպէս մի նոր օրէնքի զոհը,
2. մեր հոգու կերակուրը,
3. Իւր Չարչարանաց ու մահուան

մշտնջենաւոր յիշատակը, և առ մեզ ունեցած սիրոյ ու յաւիտենական կեանքի անգին գրաւականը լինի։

Հ. Ինչո՞ւ համար Յիսուս Քրիստոս հացի եւ գինու տեսակների ներքոյ հաստատեց այս խորհուրդը։

Պ. Նրա համար Յիսուս Քրիստոս հացի և գինու տեսակների ներքոյ հաստատեց այս խորհուրդը, որովհետև Ս. Հաղորդութիւնը մեր հոգեւոր կերակուրը պիտի լինէր, դրա համար կը վայելէր, որ կերակրի և ըմպելիքի տեսակների ներքոյ տրուէր մեզի։

Հ. Ս. Հաղորդութիւնն ի՞նչ արդիւնքներ է առաջ բերում մեզանում։

Պ. Այն գլխաւոր արդասիքները՝ որ Ս. Հաղորդութիւնն առաջ է բերում Իրան արժանապէս ընդունողի մէջ, են՝

1. պահում և աճեցնում է հոգու կեանքը՝ որ շնորհքն է, ինչպէս որ նիւթա-

կան կերակուրը պահում ու աճեցնում է մարմնի կեանքը, 2. թողութիւն է տալիս ներելի մեղքերին, ու պահում մահացուներից և 3. հոգևոր մխիթարութիւն պատճառում։

Հ. Ս. Հաղորդութիւնն էլ ուրիշ արդիւնքներ առաջ չի՞ բերում մեզանում։

Պ. Այո, Ս. Հաղորդութիւնն ուրիշ արդիւնքներ էլ է առաջ բերում մեզանում, այսինքն՝ 1. տկարացնում է մեր կրքերը, ու մասնաւորապէս մարեցնում մեր մէջ ցանկութեան բոցը, 2. աճեցնում մեր մէջ սիրոյ եռանդը դէպի Աստուած ու ընկերը, և օգնում մեզ Յիսուս Քրիստոսի սրտին համաձայն գործելու, 3. արքայութեան փառքին ու մեր մարմնի յարութեան գրաւական տալիս մեզ։

3.— Լաւ հաղորդուելու համար պահանջուած պատրաստութիւնները.

Հ. Ս. Հաղորդութեան խորհուրդը միշտ առաջ է բերո՞ւմ մեզանում՝ իւր հրաշալի արդիւնքները։

Պ. Ս. Հաղորդութեան խորհուրդն առաջ է բերում մեզանում իւր հրաշալի արդիւնքներն, երբ պահանջուած պատրաստութիւններով է ընդունւում։

Հ. Քանի՞ բան է հարկաւոր լաւ հաղորդուելու համար։

Պ. Լաւ հաղորդուելու համար երեք բան է հարկաւոր 1. Աստծու շնորհքի մէջ գտնուիլ, 2. կէս գիշերից մինչև հաղորդուելու ժամանակը ծոմ պահել, 3. ինչ ընդունելն իմանալ ու ջերմեռանդութեամբ Ս. Հաղորդութեանը մերձենալ։

Հ. Ի՞նչ ասել է Աստծու շնորհքի մէջ գտնուիլ։

Պ. Աստծու շնորհի մէջ գտնուիլը ասել է՝ մահուչափ մեղքից ազատ լինել, ու մաքուր խիղճ ունենալ։

Հ. Ի՞նչ պէտք է անէ հաղորդուելուց առաջ նա, որ իմանում է թէ մահուչափ մեղքի մէջ է գտնւում։

Պ. Նա՛ որ իմանում է թէ մահուչափ մեղքի մէջ է գտնւում, հաղորդուելուց առաջ պէտք է լաւ խոստովանի, որովհետև պարտաւորուած կերպով հաղորդուելու համար կատարեալ զղջումն՝ առանց խոստովանութեան, բաւական չէ նրան, որ մահուչափ մեղքի մէջ է գտնւում։

Հ. Ինչո՞ւ համար նոյն իսկ կատարեալ զղջումը հաղորդուելու համար, բաւական չէ նրան, որ մահուչափ մեղքի մէջ է գտնւում։

Պ. Որովհետև Եկեղեցին՝ այս խորհուրդը յարգելու համար որոշել է, որ մահուչափ մեղքի մէջ գտնուողը չը

համարձակւի հաղորդուելու։

Հ. Թէ որ մէկը մահուչափ մեղքի մէջ լինելով հաղորդի՝ կ'ընդունի՞ Յիսուս Քրիստոսին։

Պ. Թէ որ մէկը մահուչափ մեղքի մէջ լինելով հաղորդի՝ կ'ընդունի Յիսուս Քրիստոսին, բայց ո՛չ Նրա շնորհքը, մանաւանդ թէ սրբապղծութիւն կը գործէ, ու դատապարտութեան վճռին կ'արժանանայ։

Հ. Ո՞րպիսի ծոմ է պահանջւում հաղորդուելու համար։

Պ. Հաղորդուելու համար պահանջւում է բնական ծոմ, որն աւերւում է որևէ կերակրի և ըմպելիքի պէս առնըւած բաների գործածութեամբը։

Հ. Նա՛ որ ատամների մէջ մնացած մի բան եւ կամ բերանը մտած մի քանի կաթիլ ջուր է կուլ տալիս, կարո՞ղ է հաղորդել։

Պ. Նա՝ որ ատամների մէջ մնացած մի բան և կամ բերանը մտած մի քանի կաթիլ ջուր է կուլ տալիս, կարող է հաղորդվիլ, որովհետև այս բաներն իբրև կերակուր և ըմպելիք չեն առնւում և կամ էլ կորցնում են իրանց էութիւնը։

Հ. *Երբեք թոյլ տրւած չէ՞ հաղորդվիլ առանց ծոմ պահելու։*

Պ. Առանց ծոմ պահելու հաղորդվիլը թոյլ տրւած է այն հիւանդներին, որ մահւան վտանգի մէջ են գտնւում, և նրանց՝ որ երկար հիւանդութեան պատճառով մի մասնաւոր տնօրինում են ընդունել Ս. Քահանայապետից։ Մահւան վտանգի մէջ գտնւող հիւանդների հաղորդութիւնը կոչւում է Թոշակ, որովհետև կազդուրում է նրանց այս կեանքից դէպի յաւիտենականութիւնն անելու ճանապարհորդութեան մէջ։

Հ. *Ի՞նչ ասել է ի՞նչ բան ընդունելն իմանալը։*

Պ. *Ինչ բան ընդունելն իմանալն* ասել է՝ Քրիստոնէական վարդապետութեան մէջ այս խորհրդի վրայօք սովորեցրածը գիտենալ, ու հաստատապէս հաւատալ նրան։

Հ. *Ի՞նչ ասել է՝ ջերմեռանդութեամբ հաղորդվիլը։*

Պ. *Ջերմեռանդութեամբ հաղորդվիլն* ասել է՝ թէ՛ հոգու և թէ՛ մարմնի խոնարհութեամբ ու պարկեշտութեամբ Ս. Հաղորդութեանը մերձենալ, և հաղորդվելուց առաջ պատրաստութիւն տեսնել, ու վերջն էլ շնորհակալութիւն մատուցանել։

Հ. *Հաղորդվելուց առաջ ի՞նչպէս պէտք է պատրաստութիւն տեսնել։*

Պ. Հաղորդվելուց առաջ պէտք է պատրաստութիւն տեսնել մտածելով թէ ո՛ւմ ընդունելու վրայ ենք, մենք ո՛վ ենք, և հաւատոյ, յուսոյ, սիրոյ, զղջման, երկրպագութեան, խոնարհու-

թեան ու փափագի ներգործութիւններ անելով:

Հ. Հաղորդուելուց յետոյ ի՞նչպէս պէտք է շնորհակալութիւն մատուցանել։

Պ. Հաղորդուելուց յետոյ պէտք է մեր սրտի մէջ եկած Տիրոջը պատուել հաւատքի, յուսոյ, սիրոյ, երկրպագութեան, շնորհակալութեան ու նուիրման ներգործութիւններ անելով և խնդրելով այն շնորհքները, որոնք մեծապէս հարկաւոր են մեզ և այն անձերին, որոնց համար պարտաւոր ենք աղօթելու։

Հ. Մեկն ի՞նչպէս պէտք է անցկացնէ այն օրը, որ հաղորդուել է։

Պ. Մէկը պէտք է կարելի եղածին չափ ամփոփութեամբ, բարեպաշտական գործերով զբաղուելով և մեծ փութով անձնական վիճակի պարտքերը կատարելով անցկացնէ այն օրը, որ հաղորդուել է։

Հ. Հաղորդուելուց յետոյ Յիսուս Քրիստոս ո՞րչափ ժամանակ է մնում մեզանում։

Պ. Հաղորդուելուց յետոյ Յիսուս Քրիստոս այնչափ ժամանակ է մնում մեզանում իւր շնորհքովը, որչափ որ մահուչափ մեղք չենք գործել, իսկ իւր *իսկական ներկայութեամբը՝* մինչև խորհրդական տեսակների սպառուիլը։

4.— Հաղորդուելու կերպը

Հ. Ի՞նչպիսի դիրք պէտք է բռնել հաղորդուելիս։

Պ. Հաղորդուելիս պէտք է ծնկի գալ, գլուխը չափաւոր կերպով բարձրացնել, աչքերը համեստութեամբ դէպի սրբազան նշխարքը դարձնել, չափաւորապէս բերանը բանալ ու լեզուն ստորին շրթունքի վրայ երկարացնել։

Հ. Ի՞նչպէս պէտք է բռնել այն սփռոցը, որ ծառայում է հաղորդուելու ժամանակ:

Պ. Հաղորդուելու համար ծառայւած սփռոցը այնպէս պէտք է բռնել, որ սրբազան նշխարքը՝ ընկնելու դէպքում՝ նրա վրայ ընկնի:

Հ. Ե՞րբ պէտք է կուլ տալ սրբազան նշխարքը:

Պ. Կարելի եղածին չափ շուտ պէտք է կուլ տալ սրբազան նշխարքը, ու բաւական ժամանակ թքելուց զգուշանալ:

Հ. Ի՞նչ պէտք է անել՝ եթէ սրբազան նշխարքը քիմքին կպչելու լինի:

Պ. Եթէ սրբազան նշխարքը քիմքին կպչելու լինի, պէտք է լեզուով անջատել նրան, և ո՛չ երբէք մատով:

5.— *Հաղորդուելու պարտաւորութիւնը.*

Հ. Մէկն ե՞րբ է պարտաւորուած հաղորդուելու:

Պ. Մէկը պարտաւորուած է հաղորդուելու ամեն տարի՝ զատկին, իր ծխական եկեղեցում, նաև մահուան վըտանգի մէջ:

Հ. Ո՞ր հասակից է սկսում զատկական հաղորդութեան պատուիրանը կատարելու պարտականութիւնը:

Պ. Զատկական հաղորդութեան պատուիրանը կատարելու պարտականութիւնն սկսում է այն հասակից, երբ մանուկն ընդունակ է լինում պահանջուած պատրաստութիւններով այս խորհրդին մերձենալու:

Հ. Մեղանչո՞ւմ են նրանք, որ հաղորդուելու հասակին հասած չլինելով՝ չեն հաղորդուում:

Պ. Անտարակոյս, մեղանչում են նրանք, որ հաղորդուելու հասակին հասած լինելով՝ չեն հաղորդւում, կամ որովհետև չեն ուզում և կամ էլ իրանց յանցանքով պահանջուած բաները չեն սովորել։ Մեղանչում են նաև նրանց ծնողները կամ սրանց տեղը բռնողներն, եթէ հաղորդուելու յետաձգումն իրանց պատճառովը լինի, ու մեծապէս պատասխանատու պիտի լինին Աստծու առաջ։

Հ. Լա՞ւ ու օգտակա՞ր բան է ստէպ հաղորդուիլը։

Պ. Շատ լաւ բան է ստէպ հաղորդուիլը, միայն թէ պահանջուած պատրաստութիւններով կատարուի։

Հ. Մէկը կարո՞ղ է ստէպ հաղորդուիլ։

Պ. Այո՛, իւրաքանչիւր ոք՝ բարեպաշտ ու գիտուն խոստովանահօր խորհրդի համաձայն, կարող է ստէպ հաղորդուիլ։

ԳԼՈՒԽ Ե.

ՊԱՏԱՐԱԳԻ ՍՈՒՐԲ ԶՈՀԸ

1. — Պատարագի սուրբ զոհի էութիւնը, հաստատուիլն ու փախճանները.

Հ. Ս. Հաղորդութիւնը միայն խորհո՞ւրդ է։

Պ. Ս. Հաղորդութիւնը ոչ միայն խորհուրդ է, այլ նաև Նոր օրէնքի մնայուն զոհը, որ Յիսուս Քրիստոս յանձնեց իւր Եկեղեցուն՝ որպէս զի քահանաների ձեռքով Աստծուն նուիրուի։

Հ. Զոհն ընդհանրապէս ի՞նչ բանի մէջ է կայանում։

Պ. Զոհն ընդհանրապէս կայանում է՝ Աստծուն մի զգալի իր նուիրելուն և նոյնի մի կերպով ոչնչացնելուն մէջ, Աստծու այն գերագոյն տէրութիւնը

ճանաչելու համար, որ ունի մեր և ամեն բաների վրայ։

Հ. *Ինչպէս է կոչւում նոր օրէնքի այս զոհը։*

Պ. Նոր օրէնքի այս զոհը կոչւում է՝ սուրբ Պատարագ։

Հ. *Ուրեմն ի՞նչ է սուրբ Պատարագը։*

Պ. Սուրբ Պատարագը Յիսուս Քրիստոսի Մարմնի և Արեան զոհն է, որ հացի և գինու տեսակների ներքոյ նուիրւում է մեր խորանների վրայ, խաչի զոհի յիշատակի համար։

Հ. *Պատարագի զոհը նոյն խաչի՞ զոհն է։*

Պ. Պատարագի զոհը գոյացապէս նոյն է Խաչի զոհի հետ, որովհետև նոյն Յիսուս Քրիստոս՝ որ Խաչի վրայ զոհուեց, զոհւում է նաև քահանաների՝ իւր պաշտօնեաների ձեռքով մեր խորանների վրայ. բայց պատարագի զոհը

նուիրւելու կերպի մէջ տարբերւում է Խաչի զոհից, պահելով միանգամայն Սրա հետ մի ամենասերտ և էական կապակցութիւն։

Հ. *Ո՞րն է ուրեմն այն տարբերութիւնն ու կապակցութիւնը, որ կայանում է Պատարագի ու Խաչի զոհի մէջ։*

Պ. Պատարագի ու Խաչի զոհի մէջ եղած տարբերութիւնն ու կապակցութիւնը սրա մէջ է կայանում, որ Յիսուս Քրիստոս Խաչի վրայ զոհուեց իւր Արիւնը թափելով ու մեզի համար արդիւնք շահելով, մինչդեռ մեր խորանների վրայ զոհւում է առանց արիւն հեղելու, և մերձեցնում մեզ իւր Չարչարանաց ու Մահուան արժանիքները։

Հ. *Պատարագի զոհն ուրիշ ի՞նչ կապակցութիւն ունի Խաչի զոհի հետ։*

Պ. Պատարագի զոհի՝ Խաչի զոհի հետ ունեցած ուրիշ կապակցութիւնն այն է, որ պատարագի զոհն զգալի կեր-

պով ներկայացնում է Յիսուս Քրիստոսի՝ Խաչի վրայ արեան հեղումը, որովհետև սրբագործութեան խօսքերի զօրութեամբը՝ հացի տեսակների ներքոյ մեր Փրկչի միայն Մարմինն է ներկայ լինում, և գինու տեսակների ներքոյ միայն Արիւնը, թէպէտև բնական զուգընթացութեան և անձնական միաւորութեան պատճառով իւրաքանչիւր տեսակի ներքոյ կենդանի ու ճշմարիտ Յիսուս Քրիստոս ներկայ գտնւի։

Հ. Միթէ Խաչի զոհը նոր օրէնքի միակ զոհը չէ՞։

Պ. Խաչի զոհը Նոր օրէնքի միակ զոհն է, որովհետև նրա միջոցով մեր Տէրը մեղմացրեց աստուածային Արդարութիւնը, մեզ փրկելու համար հարկաւոր եղած արդիւնքները շահեց և այսպէս Իւր կողմից մեր փրկագործութիւնը կատարեց։ Բայց այս արդիւնքները մերձեցնում է մեզ այն միջոցնե-

րով, որ հաստատել է Իւր Եկեղեցու մէջ, որոնցից մէկն է նաև Պատարագի սուրբ զոհը։

Հ. Ուրեմն ի՞նչ վախճանների համար է Պատարագի սուրբ զոհը մատուցանում Աստուծուն։

Պ. Պատարագի սուրբ զոհը չորս վախճանների համար է մատուցւում Աստուծուն՝ 1. Նրան արժանապէս պատւելու, դրա համար կոչւում է *փառաբանական*, 2. Նրա բարիքների փոխարէն շնորհակալ լինելու, այս պատճառով անւանւում է *գոհացողական*, 3. Նրա բարկութիւնն իջեցնելու, մեր մեղքերին արժանի եղած հատուցումն անելու և քաւարանի հոգիներին օգնելու, այսպէս *քաւչական* անունն է կրում և 4. մեզի հարկաւոր եղած ամեն շնորհքներն ընդունելու համար, ըստ այսմ էլ յորջորջւում է *մաղթական*։

Հ. Ո՞վ է մատուցանում Աստուծուն

Պատարագի սուրբ զոհը։

Պ. Պատարագի զոհի առաջին ու գլխաւոր մատուցանողը Յիսուս Քրիստոս է, իսկ քահանան՝ պաշտօնեայ, որ Յիսուս Քրիստոսի անունով նոյն զոհը մատուցանում է յաւիտենական Հօրը։

Հ. Ո՞վ է հաստատել Պատարագի սուրբ զոհը։

Պ. Նոյն ինքն Յիսուս Քրիստոս է հաստատել Պատարագի սուրբ զոհը, երբ Ս. Հաղորդութեան խորհուրդը հաստատեց, և ասաց՝ որ Իր Չարչարանքներն յիշելու համար այս բանն անեն։

Հ. Ո՞ւմ է մատուցանում Պատարագի Ս. զոհը։

Պ. Պատարագի Ս. զոհը մատուցւում է միայն Աստծուն։

Հ. Եթէ Պատարագի Ս. զոհը միայն Աստծուն է մատուցանում, ապա ինչո՞ւ

այնչափ Պատարագներ ենք մատուցանում Ամենասուրբ Կուսի ու Սրբերի պատուի համար։

Պ. Ամենասուրբ Կուսի ու Սրբերի պատուի համար մատուցւած զոհը՝ միակ Աստծուն մատուցւած զոհն է, բայց տրւում է ամենասուրբ Կուսի ու Սրբերի պատուի համար մատուցւած, Աստծուց այն պարգևների փոխարէն շնորհակալ լինելու համար, որ արել է Նրանց, ու Նրանց միջնորդութեամբ մեզ հարկաւոր եղած շնորհներն աւելի առատութեամբ ընդունելու համար։

Հ. Ո՞վ է մասնակից լինում Պատարագի Պտուղներին։

Պ. Պատարագի պտուղներին մասնակից է լինում բովանդակ Եկեղեցին, բայց մասնաւորապէս 1. Քահանան ու Պատարագին ներկայ գտնուողները, որոնք քահանայի հետ մի են համարւում, 2. այն կենդանիները կամ մե-

ռածները, որոնց համար որ մերձեցնում է Պատարագը։

2.— Ս. Պատարագին ներկայ գտնուելու կերպը.

Հ. Քանի՞ բան պէտք է Ս. Պատարագին լաւ եւ օգտակար կերպով ներկայ գտնուելու համար։

Պ. Ս. Պատարագին լաւ և օգտակար կերպով ներկայ գտնուելու համար երկու բան պէտք է՝ 1. արտաքին համեստութիւն, 2. սրտի ջերմեռանդութիւն։

Հ. Ի՞նչ բանի մէջ է կայանում արտաքին համեստութիւնը։

Պ. Արտաքին համեստութիւնը կայանում է մանաւորապէս պարկեշտութեամբ հագնուելուն, լուռ և անփոփ լինելուն ու կարելի եղածին չափ չոքե-

լուն մէջ, բացի այն ժամանակից՝ երբ երկու աւետարաններն են կարդում, որոնց պէտք է ոտքի վրայ կանգնած լսել։

Հ. Ո՞րն է Ս. Պատարագը ջերմեռանդութեամբ լսելու լաւագոյն կերպը։

Պ. Ս. Պատարագը ջերմեռանդութեամբ լսելու լաւագոյն կերպը հետևեալն է՝

1. Սկզբից իւր դիտաւորութիւնը միացնել քահանայինի հետ, Ս. զոհը մատուցանելով Աստծուն այն վախճանների համար, որոնց համար որ հաստատուել է։

2. Ընկերանալ քահանային՝ զոհի իւրաքանչիւր աղօթքի և գործողութեան մէջ։

3. Մտածել Յիսուս Քրիստոսի Չարչարանաց ու Մահուան վրայ, և բոլոր սրտով ատել մեղքը, որ նրանց պատճառն է եղել։

4. Ս. Հաղորդութիւնն ընդունել,

կամ գոնէ հոգեւորապէս հաղորդէլ, քահանայի հաղորդւած ժամանակը։

Հ. *Ի՞նչ ասել է հոգեւորապէս հաղորդիլը։*

Պ. Հոգեւորապէս հաղորդիլն ասել է՝ մեծ փափագ ունենալ Յիսուս Քրիստոսի հետ միանալու Ս. Հաղորդութեան միջոցով, այսպէս ասելով՝ Տէր *իմ Յիսուս Քրիստոս, քանզի սրտով փափագում եմ Քո հետը միանալու, հիմայ եւ ամբողջ յաւիտենականութեան մէջ*, միանգամայն այն ներգործութիւններն անելով, որ հաղորդւելուց առաջ ու յետոյ անելու սովորութիւն կայ։

Հ. *Պատարագի ժամանակ վարդարան եւ ուրիշ աղօթքներ անելն արգե՞լք է լինում Պատարագը շահաւէտ կերպով տեսնելուն։*

Պ. Այսպիսի աղօթքներ անելն արգելք չի լինում Պատարագը շահաւէտ

կերպով տեսնելուն, միայն թէ կարելի եղածին չափ մէկը ջանայ Ս. զոհի արարողութիւններին հետեւելու։

Հ. *Լա՞ւ բան է Ս. Պատարագի ժամանակ ուրիշի համար աղօթելը։*

Պ. Այո՛, լաւ բան է Ս. Պատարագի ժամանակ ուրիշի համար աղօթելը, նա մանաւանդ կենդանիների ու մեռելների համար աղօթելու յարմարագոյն ժամանակը՝ Պատարագի ժամանակն է։

Հ. *Ի՞նչ պէտք է անել, հենց որ Պատարագը վերջանայ։*

Պ. Հէնց որ Պատարագը վերջանայ, պէտք է Աստծուց շնորհակալ լինել այս մեծ զոհին ներկայ գտնւելու շնորհքը մեզ անելուն համար, ու Պատարագը տեսնելիս՝ գործած պակասութիւնների համար Նրանից թողութիւն խնդրել։

ԳԼՈՒԽ Զ.

ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

1.—Ապաշխարութեան խորհուրդն ընդհանուր կերպով նկատած

Հ. Ի՞նչ է Ապաշխարութեան խորհուրդը։

Պ. Ապաշխարութիւնը՝ որ Խոստովանութիւն էլ է կոչւում, Յիսուս Քրիստոսից հաստատուած մի խորհուրդ է, Մկրտութիւնից յետոյ գործած մեղքերը թողնելու համար։

Հ. Ինչո՞ւ համար են այս խորհրդին Ապաշխարութեան անունը տալիս։

Պ. Նրա համար են այս խորհրդին Ապաշխարութեան անունը տալիս, որովհետև մեղքերի թողութիւնն ստանալու համար՝ պէտք է զղջալով նրանց ատել, և որովհետև ով որ մի յանցանք

է գործել՝ պարտաւոր է քահանայի տըւած պատիժն ընդունելու։

Հ. Ինչո՞ւ այս խորհուրդը Խոստովանութիւն էլ է կոչւում։

Պ. Այս խորհուրդը Խոստովանութիւն էլ է կոչւում, որովհետև մեղքերի թողութիւնն ստանալու համար լոկ նրանց ատելը բաւական չէ, այլ պէտք է նաև ամբաստանել քահանային, այսինքն՝ խոստովանիլ։

Հ. Յիսուս Քրիստոս ե՞րբ հաստատեց Ապաշխարութեան խորհուրդը։

Պ. Յիսուս Քրիստոս Իւր յարութեան օրը հաստատեց Ապաշխարութեան խորհուրդը, երբ վերնատունը մտնելով՝ հանդիսապէս Իւր Առաքեալներին մեղքերը թողնելու իշխանութիւնը տուեց։

Հ. Յիսուս Քրիստոս ի՞նչպէս Իւր Առաքեալներին մեղքերը թողնելու իշխանութիւնը տուեց։

Պ. Յիսուս Քրիստոս Իւր Առաքեալներին մեղքերը թողնելու իշխանութիւնը տուեց՝ Նրանցերեսին փչելով ու ասելով՝ *Առէք Հոգին Սուրբ. եթէ ումեք թողուցուք զմեղս՝ թողեալ լիցի նոցա. եթէ զուրուք ունիցիք՝ կալեալ լիցի*:

Հ. Ո՞րն է Ապաշխարութեան խորհրդի նիւթը:

Պ. Ապաշխարութեան խորհրդի նիւթը բաժանւում է հեռաւոր ու մերձաւոր նիւթի: Հեռաւոր նիւթն այն մեղքերն, են որ ապաշխարողը գործել է Մկրտութիւնից յետոյ, իսկ մերձաւորը՝ նրա կատարելու ներգործութիւններն, այսինքն զղջումն, ամբաստանութիւնն ու ապաշխարանաց կատարումը:

Հ. Ո՞րն է Ապաշխարութեան խորհրդի ձեւը:

Պ. Ապաշխարութեան խորհրդի ձեւը հետեւեալն է՝ *Ես արձակեմ զքեզ ամենայն մեղաց քոց*:

Հ. Ո՞վ է Ապաշխարութեան խորհրդի պաշտօնեան:

Պ. Ապաշխարութեան խորհրդի պաշտօնեան՝ Եպիսկոպոսից խոստովանութիւնները լսելու հրաման ունեցող քահանան է:

Հ. Ինչո՞ւ ասացիր թէ քահանան պէտք է Եպիսկոպոսից հրաման ունենայ:

Պ. Պէտք է քահանան Եպիսկոպոսից հրաման ունենայ խոստովանութիւնները լսելու, որովհետեւ այս խորհուրդը վաւերապէս մատակարարելու համար միայն կարգի իշխանութիւնն ունենալը բաւական չէ, այլ պէտք է նաեւ իրաւասութեան իշխանութիւնն ունենալ, այսինքն՝ դատելու կարողութիւնը, որ Եպիսկոպոսը պէտք է տայ:

Հ. Քանի՞ են Ապաշխարութեան

խորհրդի մասերը։

Պ. Ապաշխարութեան խորհրդի մասերն են՝ ապաշխարողի զղջումը, խոստովանութիւնը, ապաշխարանաց կատարումն ու քահանայի տուած արձակումը։

Հ. Ի՞նչ է զղջումը։

Պ. Զղջումը սրտի մի ցաւ է, որով մէկն ատում է իւր գործած մեղքերը և առաջադրում այլ ևս ապագայում նրանց չը գործելու։

Հ. Ի՞նչ ասել է զղջում բառը։

Պ. Զղջում բառն ասել է՝ խորտակումն, բեկումն, ինչպէս որ քարը փշրելով փոշի է դառնում։

Հ. Ինչո՞ւ են խորտակման անունը տալիս մեղքերի վրայ ունեցած զղջմանը։

Պ. Մեղքերի վրայ ունեցած զղջմանը *խորտակման* անունն են տալիս նշանակելու համար թէ՝ մեղաւորի կարծր

սիրտը մի կերպով կակղանում է Աստծուն վշտացրած լինելուն զղջմամբը։

Հ. Ի՞նչ բանի մէջ է կայանում մեղքերի խոստովանութիւնը։

Պ. Խոստովանութիւնը կայանում է՝ մեղքերի այն որոշ ամբաստանութեան մէջ, որ անում ենք խոստովանահօրը՝ նրանից արձակումն ու ապաշխարանք ընդունելու նպատակով։

Հ. Ինչո՞ւ համար է խոստովանութիւնն ամբաստանութիւն *կոչւում։*

Պ. Խոստովանութիւնը նրա համար է ամբաստանութիւն կոչւում, որովհետև պէտք չէ որ նա մի անտարբեր պատմութիւն լինի, այլ մեր մեղքերի ճշմարիտ ու ցաւագին արտայայտութիւն։

Հ. Ի՞նչ է ապաշխարանքը։

Պ. Ապաշխարանքն այն տօժքը կամ բարեգործութիւնն է, որ խոստովանահայրը դնում է ապաշխարողի

վրայ՝ նրա մեղքերի քաւութեան համար։

Հ. Ի՞նչ է արձակումը։

Պ. Արձակումն այն վճիռն է, որ քահանան արտաբերում է Յիսուս Քրիստոսի անունով՝ ապաշխարողի մեղքերը թողնելու համար։

Հ. Ո՞րն է Ապաշխարութեան խորհրդի ամենահարկաւոր մասը։

Պ. Ապաշխարութեան խորհրդի ամենահարկաւոր մասը զղջումն է, որովհետև առանց նրան անկարելի է մեղքերի թողութիւնն ստանալ, այնպէս որ երբ սա կատարեալ լինի, միայնակ էլ կարող է մեղքերի ներումն ընդունել, միայն թէ խոստովանելու գոնէ անորոշ բաղձանքի հետ միացած լինի։

2.— Ապաշխարութեան խորհրդի արդիւնքները, հարկաւորութիւնն ու նրան լաւ ընդունելու համար պահանջուած պատրաստութիւնները.

Հ. Որո՞նք են Ապաշխարութեան խորհրդի արդիւնքները։

Պ. Ապաշխարութեան խորհուրդը տալիս է սրբարար շնորհքը, որով թողնւում են բոլոր մահուչափ ու ներելի մեղքերը, որ մէկը խոստովանել ու զղջացել է նրանց վրայ. յաւիտենական պատիժը ժամանակաւոր պատժի դարձնում, որն շատ կամ քիչ ներւում է նայելով իւրաքանչիւրի տրամադրութիւններին, կենդանացնում մահուչափ մեղք գործելուց առաջ արած բարի գործերի արդիւնքները, մասնաւոր օգնութիւններ տալիս հոգուն՝ նորից մեղքի մէջ չընկնելու և խաղաղութիւն պատճառում սրտին.

Հ. Ապաշխարութեան խորհուրդը

ամենի՞ն էլ հարկաւոր է փրկութեան համար։

Պ. Ապաշխարութեան խորհուրդը փրկութեան համար հարկաւոր է նրանց, որ Մկրտութիւնից յետոյ մահուչափ մեղք են գործել։

Հ. Յաճախ խոստովանիլը լա՞ւ բան է։

Պ. Յաճախ խոստովանիլը շատ լաւ բան է, որովհետև Ապաշխարութեան խորհուրդը ո՛չ միայն մեղքերն է ջնջում, այլ նաև մասնաւոր շնորհք տալիս ապագայում նրանց մէջ չ'ընկնելու։

Հ. Ապաշխարութեան խորհուրդը կարո՞ղ է ամեն մեղքերը թողնել, որչափ էլ բազմաթիւ ու մեծ լինին։

Պ. Այո՛, Ապաշխարութեան խորհուրդը կարող է ամեն մեղքերը թողնել, որչափ էլ որ բազմաթիւ ու մեծ լինին, միայն թէ պարտուպատշաճ

պատրաստութիւններով ընդունել։

Հ. Լաւ խոստովանելու համար քանի՞ բան պէտք է անել։

Պ. Լաւ խոստովանելու համար հինգ բան պէտք է անել 1. խիղճը քննել, 2. Աստծուն վշտացնելուն համար զղջալ, 3. այլ ևս չը մեղանչելու առաջադրութիւն անել, 4, իւր մեղքերը ն ամբաստանել, 5. հատուցումն անել կամ ապաշխարանքը կատարել։

Հ. Ամենից առաջ ի՞նչ պէտք է անենք լաւ խոստովանելու համար։

Պ. Լաւ խոստովանելու համար ամենից առաջ պէտք է սրտանց Աստըծուն աղօթենք, որ լոյս ու զօրութիւն տայ մեզ բոլոր մեր մեղքերը ճանաչելու և ատելու։

3. — Խղճի քննութիւնը

Հ. Ի՞նչ է խղճի քննութիւնը:

Պ. Խղճի քննութիւնը մի փութաջան հետազօտութիւն է այն մեղքերի, որ մէկը գործել է վերջին լաւ կատարած խոստովանութիւնից յետոյ:

Հ. Ի՞նչպէս պէտք է խիղճը քննել:

Պ. Պէտք է խիղճը քննել՝ Աստծու առաջ փութաջանութեամբ մտաբերելով այն մեղքերը, որ մէկը խորհրդով, խօսքով, գործով ու զանցառութեամբ գործել է Աստծու և Եկեղեցու պատուիրանների ու իւր անձնական վիճակի պարտքերի դէմ, և որոնց բնաւ չի խոստովանել:

Հ. Ուրիշ ի՞նչ բանի վերայօք պէտք է քննենք մեզ:

Պ. Պէտք է քննենք մեզ նաև չար ունակութիւնների ու մեղքի առիթների վերայօք:

Հ. Խիղճը քննելիս մեղքերի թի՞ւն էլ պարտաւոր ենք հետազօտելու:

Պ. խիղճը քննելիս պարտաւոր ենք նաև մահուչափ մեղքերի թիւը հետազօտելու:

Հ. Քանի՞ բան պէտք է, որ մի մեղք մահուչափ լինի:

Պ. Երեք բան պէտք է, որ մի մեղք մահուչափ լինի՝ ծանր նիւթ, լիովի մտադրութիւն ու կամքի կատարեալ հաւանութիւն:

Հ. Ե՞րբ է նիւթը ծանր:

Պ. Նիւթը ծանր է՝ երբ խնդիրն այնպիսի բանի վրայ է, որ մեծապէս հակառակում է Աստծու և Եկեղեցու օրէնքին:

Հ. Ե՞րբ է որ մէկը լիովի ճանաչողութիւն ունի մեղանչելիս:

Պ. Այն ժամանակ մէկը լիովի ճանաչողութիւն ունի մեղանչելիս, երբ կատարելապէս իմանում է թէ մեծ չա-

րեք է գործում։

Հ. Ե՞րբ է մէկը մեղքին կամքի կատարեալ համաձայնութիւն տալիս։

Պ. Մէկը մեղքին կամքի կատարեալ համաձայնութիւն է տալիս, երբ կըշռադատելով ուզում է անել այն բանը որ իմանում է թէ մեղք է։

Հ. Ո՞րպիսի փութաջանութեամբ պէտք է ինքն իրան քննել։

Պ. Պէտք է ինքն իրան քննել այն փութաջանութեամբ, որ հարկաւոր է մի ծանրակշիռ գործ կատարելու համար։

Հ. Ո՞րչափ ժամանակ պէտք է դնել խիղճը քննելու համար։

Պ. Խիղճը քննելու համար այնչափ ժամանակ պէտք է դնել, որչափ որ պահանջում է իւրաքանչիւրի կարօտութիւնն, այսինքն որչափ որ պէտք է իւր խիղճը բռնաւորող մեղքերի թիւըն ու տեսակը ճանաչելու համար, և

պէտք է նայել իւր վերջին լաւ կատարած խոստովանութիւնից անցած միջոցին։

Հ. Մէկն ի՞նչպէս է կարող դիւրացնել խղճի քննութիւնը խոստովանելու համար։

Պ. Մէկը կարող է խոստովանելու համար խղճի քննութիւնը դիւրացնել ամեն երեկոյ՝ օրւայ մէջ կատարած գործերի վրայօք քննելով իւր խիղճը։

4. — Զղջումը։

Հ. Ի՞նչ է զղջումը։

Պ. Զղջումը մի ցաւ և անկեղծ ատելութիւն է Աստծուն արած անարգանաց համար։

Հ. Քանի՞ տեսակ զղջում կայ։

Պ. Երկու տեսակ զղջում կայ՝ կա-

տարեալ, այսինքն խորտակման և անկատար կամ բեկման զղջում։

Հ. *Ի՞նչ է կատարեալ կամ խորտակման զղջումը։*

Պ. Կատարեալ զղջումն Աստուծուն վշտացրած լինելուն ցաւն է, որովհետև Ինքն անսահման բարի և ըստ Իւրեան արժանի է սիրոյ։

Հ. *Ինչո՞ւ համար է խորտակման զղջումը կատարեալ կոչւում։*

Պ. Երկու պատճառի համար է *խորտակման* զղջումը *կատարեալ* կոչւում 1. որովհետև միայն Աստծու բարութիւնն է նկատի առնում և ո՛չ թէ մեր օգուտը կամ վնասը, 2. անմիջապէս մեր մեղքերի թողութիւնն ըստանում, բայց և այնպէս մնալով մեզ նրանց խոստովանելու պարտականութիւնը։

Հ. *Ուրեմն կատարեալ զղջումը մեր մեղքերի թողութիւնն ստանում է ա-*

ռանց խոստովանութիւնից կախում ունենալո՞ւ։

Պ. Ո՛չ, կատարեալ զղջումն առանց խոստովանութիւնից կախում ունենալու մեր մեղքերի թողութիւնը չի ստանում, որովհետև ենթադրում է միշտ խոստովանելու բաղձանքը։

Հ. *Ինչո՞ւ կատարեալ կամ խորտակման զղջումը մեզ Աստծու շնորհքի մէջ է դնում։*

Պ. Կատարեալ կամ խորտակման զղջումը մեզ Աստծու շնորհքի մէջ է դնում, որովհետև Աստծու սիրուց է առաջ գալիս, որը մահուչափ մեղքի հետ միասին չի կարող հոգու մէջ գտնուիլ։

Հ. *Ի՞նչ է անկատար կամ բեկման զղջումը։*

Պ. *Անկատար կամ բեկման* զղջումն այն է՝ որով ցաւում ենք Աստծուն՝ իբրև մեր վերագոյն Դատաւորին վըշ-

տացնելուն համար, այսինքն՝ այն պատիժների վախից, որոնց արժանացել ենք այս կամ միւս կեանքում, և կամ էլ մեղքի տգեղութեան պատճառով։

Հ. *Զղջումը լաւ լինելու համար քանի՞ յատկութիւններ պէտք է ունենայ։*

Պ. Զղջումը լաւ լինելու համար չորս յատկութիւններ պէտք է ունենայ պէտք է լինի՝ *ներքին, գերբնական, ծայրագոյն եւ ընդհանուր։*

Հ. *Զղջումը ներքին լինելու է ասելով, ի՞նչ ես հասկանում։*

Պ. Զղջումը *ներքին* լինելու է ասելով, հասկանում եմ թէ պէտք է նա սրտի ու կամքի՝ և ոչ թէ սոսկ խօսքերի մէջ կայանայ։

Հ. *Ինչո՞ւ համար զղջումը պէտք է ներքին լինի։*

Պ. Նրա համար զղջումը պէտք է ներքին լինի, որովհետև ինչպէս որ

կամքն է մեղքով Աստծուց հեռացել, այսպէս էլ ինքը պէտք է մեղքն ատելով վերադառնայ առ Աստուած։

Հ. *Զղջումը գերբնական լինելու է ասելով, ի՞նչ ես հասկանում։*

Պ. Զղջումը *գերբնական լինելու* է ասելով, հասկանում եմ թէ պէտք է Աստծու շնորհքից դրդուի մեզանում, և այն շարժառիթներից առաջ գայ, որ հաւատքն է ընծայում։

Հ. *Ինչո՞ւ զղջումը պէտք է գերբնական լինի։*

Պ. Զղջումը պէտք է գերբնական լինի, որովհետև ղիմում է մի գերբնական վախճանի՝ որ է Աստծուց ներումն ստանալը, սրբարար շնորհքը ձեռք բերելն ու յաւիտենական փառաց վրայ իրաւունք ունենալը։

Հ. *Աւելի լաւ մեկնի՞ր ինձ գերբնական ու բնական զղջման մէջ եղած տարբերութիւնը։*

Պ. Գերբնական զղջում ունի նա, որ անհուն բարի և ըստ ինքեան սիրոյ արժանի Աստծուն վշտացնելուն, արքայութիւնը կորցնելուն ու դժոխքին արժանանալուն կամ էլ մեղքիներքին չարութեան համար է զղջում, որովհետև սրանք հաւատքի ընծայած շարժառիթներ են: Ընդ հակառակը բնական զղջում կ'ունենար նա, որ մարդկանցից ընդունած միայն անպատուութեան, կամ պատժի կամ էլ սոսկ մի ժամանակաւոր վնասի համար ցաւելու լինէր, որովհետև այս զղջումը միայն մարդկային շարժառիթներից է առաջ գալիս։

Հ. Ինչո՞ւ զղջումը պէտք է ծայրագոյն լինի։

Պ. Զղջումը պէտք է ծայրագոյն լինի, որովհետև մեղքը վշտացնում է անհուն բարի Աստծուն, դրա համար պարտաւոր ենք նրան նկատելու և

ատելու իբրև չարիքների ծայրագոյնը։

Հ. Մեղքերի վրայ զղջալու համար հարկ կա՞յ այնպէս լաց լինել, ինչպէս որ մէկը լալիս է այս կեանքի դժբախտութիւնների համար։

Պ. Ո՛չ, մեղքերի վրայ զղջալու համար հարկ չըկայ նիւթապէս լաց լինել, այլ բաւական է, որ մէկը սրտանց աւելի Աստծուն վշտացրած լինելուն՝ քան թէ ուրիշ դժբախտութեան վրայ ցաւի։

Հ. Զղջումն ընդհանուր լինելու է ասելով, ի՞նչ ես հասկանում։

Պ. Զղջումն ընդհանուր լինելու է ասելով, հասկանում եմ թէ պէտք է նա բոլոր գործած մահուչափ մեղքերի վրայ տարածուի։

Հ. Ինչո՞ւ համար զղջումը պէտք է բոլոր գործած մահուչափ մեղքերի վրայ տարածուի։

Պ. Որովհետև Աստծու թշնամի

է մնում նա. որ միայն մի մահուչափ մեղքի վրայ էլ չի գղջում:

Հ. *Ի՞նչ պէտք է անենք մեր մեղքերի վրայ զղջում ունենալու համար:*

Պ. Մեր մեղքերի վրայ գղջում ունենալու համար պէտք է ջերմ սրտով նրան Աստուծուց խնդրենք ու գործունեայ լինենք մեզանում՝ մտածելով թէ ինչ մեծ չարիք ենք գործել մեղանչելով:

Հ. *Ի՞նչ պէտք է անենք մեղքն ատելու համար:*

Պ. Մեղքն ատելու համար պէտք է մտածենք 1. Աստուծոյ անհուն արդարութեան խստութեան ու մեղքի տգեղութեան վրայ, որ ադտեղում է հոգին ու դժոխքի յաւիտենական տանջանքներին արժանացնում, 2. թէ կորցրել ենք Աստուծոյ շնորհքը, բարեկամութիւնը, որդեգրութեան և արքայութեան ժառանգութեան իրաւունքը, 3. թէ վշտացրել ենք մեր Փրկչին՝ որ

մեզ համար է մեռել և թէ մեր մեղքերն են նրա մահուան պատճառն եղել, 4. անարգել ենք մեր Ստեղծողին, Աստուծուն, հեռացել ենք նրանից, որ մեր գերագոյն Բարիքն է, և արժանի է, որ Իրան ամեն բանից վեր սիրենք ու հաւատարմութեամբ ծառայենք:

Հ. *Պարտաւո՞ր ենք մեծ փոյթ ունենալու, որ խոստովանելիս մեր մեղքերի վրայ ճշմարիտ զղջում ունենանք:*

Պ. Անշուշտ, պարտաւոր ենք մեծ փոյթ ունենալու, որ խոստովանելիս մեր մեղքերի վրայ ճշմարիտ զղջում ունենանք, որովհետև զղջումն ամենաէական բանն է, առանց որի խոստովանութիւնն անվաւեր է:

Հ. *Նա՛ որ միայն ներելի մեղքեր է խոստովանում, պարտաւոր է անոնց վրայ էլ զղջալու:*

Պ. Երբ որ մէկը միայն ներելի մեղքեր է խոստովանում, խոստովա-

նութիւնը վաւերական դարձնելու համար՝ բաւական է որ նրանցից մի քանիսի վրայ զղջայ, բայց բոլորի էլ ներումն ընդունելու համար, պէտք է այն ամենի վրայ զղջայ, որոնց որ խմանում է թէ գործել է։

Հ. Լա՞ւ է խոստովանում նա, որ միայն ներելի մեղքեր խոստովանելով՝ եւ ոչ մէկի վրայ էլ չի զղջում։

Պ. Նա՝ որ միայն ներելի մեղքեր խոստովանելով և ոչ մէկի վրայ չի զղջում, խոստովանութիւնն անվաւեր է դարձնում. բացի սրանից սրբապիղծ խոստովանութիւն է անում, եթէ ընդրադարձնալով չի զղջում։

Հ. Ի՞նչ պէտք է անել խոստովանութիւնն ապահովացնելու համար երբ մէկը միայն ներելի մեղքեր է խոստովանում։

Պ. Երբոր մէկը միայն ներելի մեղքեր է խոստովանում, խոստովանութիւնն ապահովացնելու համար աւելի խոհեմ բան կ'անէ եթէ ճշմարիտ զղջմամբ անցեալ կեանքի ծանր մեղքերից մէկին ամբաստանի, թէպէտև ուրիշ անգամ արդէն նրան ամբաստանած լինի։

Հ. Լաւ բան է՞ ստէպ զղջման ներգործութիւն անելը։

Պ. Շատ լաւ բան է ստէպ զղջման ներգործութիւն անելը, գլխաւորաբար քուն լինելուց առաջ, և երբ մէկն ընդրադառնում կամ կասկածում է թէ մահուչափ մեղքի մէջ է ընկել Աստծու շնորհքը ձեռք բերելու համար. բայց ամենից աւելի օգնում է մեծագոյն կարօտութեան ժամանակ, այսինքն՝ մահուան վտանգում նոյն ներգործութիւնն անելու շնորհքն աւելի դիւրութեամբ Աստծուց ընդունելու։

5.— *Առաջադրութիւնը.*

Հ. *Ի՞նչ բանի մէջ է կայանում առաջադրութիւնը։*

Պ. Առաջադրութիւնը կայանում է այլ ևս մեղք չը գործելու և նրանից փախչելու համար հարկաւոր եղած ամէն միջոցներն ի գործ դնելու հաստատուն կամքի մէջ։

Հ. *Որպէս զի առաջադրութիւնը լաւ լինի ի՞նչ յատկութիւններ պէտք է ունենայ։*

Պ. Որպէս զի առաջադրութիւնը լաւ լինի պէտք է երեք գլխաւոր յատկութիւններ ունենայ, պէտք է լինի՝ բացարձակ, ընդհանուր, և գործունեայ։

Հ. *Առաջադրութիւնը պէտք է բացարձակ լինի ասելով, ի՞նչ ես հասկանում։*

Պ. Առաջադրութիւնը պէտք է

բացարձակ լինի ասելով, հասկանում եմ թէ պէտք չէ ժամանակի, տեղւոյ կամ անձի պայմանովն եզրակացել։

Հ. *Առաջադրութիւնը ընդհանուր լինելու է ասելով ի՞նչ ես հասկանում։*

Պ. Առաջադրութիւնը ընդհանուր լինելու է ասելով, հասկանում եմ թէ պէտք է հաստատուն կամք ունենանք թէ այն մեղքերից հեռու կենալու, որոնց արդէն ուրիշ անգամ գործել ենք, և թէ նրանցից՝ որ կարող ենք գործել։

Հ. *Առաջադրութիւնը պէտք է գործունեայ լինի ասելով, ի՞նչ ես հասկանում։*

Պ. Առաջադրութիւնը պէտք է գործունեայ լինի ասելով, հասկանում եմ թէ պէտք է հաստատ կամք ունենանք աւելի ամէն բան կորցնելու քան թէ մի նոր մեղք գործելու, նրա վտանգաւոր առիթներից փախչելու, չար ունակու-

թիւնները ոչնչացնելու և մեր մեղքերից առաջ եկած պարտաւորութիւնները կատարելու։

Հ. *Ի՞նչ է չար ունակութիւնը։*

Պ. *Չար ունակութիւնն մի* տրամադրութիւն է՝ որ մէկն ստացել է դիւրութեամբ այն մեղքերը գործելու, որոնց մէջ սովորութիւն ունի ընկնելու։

Պ. *Ի՞նչ պէտք է անել չար ունակութիւններն ուղղելու համար։*

Պ. Չար ունակութիւններն ուղղելու համար պէտք է մեր վրայ հսկենք, շատ աղօթենք, ստէպ խոստովանուինք, բարի հոգևոր առաջնորդ ունենանք ու նրան չը փոխենք, նրա տուած խորհուրդներն ու միջոցներն ի գործ դնենք։

Հ. *Մեղքի* վտանգաւոր առիթներն *ի՞նչ են։*

Պ. Մեղքի վտանգաւոր առիթները՝ ժամանակի. տեղի, անձերի այն պարագաներն են, որ իրանց բնութեան կամ մեր տկարութեան պատճառաւ, մեզ դէպի մեղքն են տանում։

Հ. *Պարտաւո՞ր ենք մեծապէս մեղքի ամեն վտանգաւոր առիթներից հեռու կենալու։*

Պ. Այո՛, մեծապէս պարտաւոր ենք մեղքի այն վտանգաւոր առիթներից հեռու կենալու, որոնք առհասարակ մահուչափ մեղքի մէջ են ձգում մեզ ու մեղքի մերձաւոր առիթներ կոչւում։

Հ. *Ի՞նչ պէտք է անէ նա՝ որ չի կարողանում մեղքի մի առիթից փախչել։*

Պ. Նա՝ որ չի կարողանում մեղքի մի առիթից փախչել, պէտք է իւր խոստովանահօրն ասէ, ու նրա խորհրդների համաձայն շարժի։

Հ. *Ի՞նչ խորհրդածութիւններ պէտք է անել առաջադրելու համար։*

Պ. Առաջադրելու համար պէտք է նոյն խորհրդածութիւններն անել, որոնք ծառայում էին զղջալու համար, այսինքն պէտք է մտածել այն վախի վրայ որ պէտք է ունենալ Աստծու արդարութիւնից և Նրա անհուն բարութեան սիրոյ վրայ։

6. — Մեղքերի խոստովանահօրն անելու ամբաստանութիւնը.

Հ. Խիղճդ քննելուց, մեղքերիդ վրայ զղջալուց, առաջադրութիւն անելուց եւ այսպէս խոստովանելու պատրաստուելուց յետոյ ի՞նչ կ'անես։

Պ. Խիղճս քննելուց, մեղքերիս վրայ զղջալուց, առաջադրութիւն անելուց և այսպէս խոստովանելու պատրաստուելուց յետոյ, կ'երթամ մեղքերս կ'ամբաստանեմ խոստովանահօրը, Նրանից արձակում ստանալու համար։

Հ. Ո՞ր մեղքերն ենք պարտաւոր խոստովանելու։

Պ. Մենք պարտաւոր ենք բոլոր մահուչափ մեղքերը խոստովանելու, բայց լաւ է ներելիներն ես խոստովանիլ։

Հ. Ի՞նչ յատկութիւններ պէտք է ունենայ մեղքերի ամբաստանութիւնը կամ խոստովանութիւնը։

Պ. Մեղքերի ամբաստանութեան ունենալիք գլխաւոր յատկութիւնները հինգ են, պէտք է լինի՝ *խոնարհ*, *ամբողջ*, *անկեղծ*, *խոհեմ*, ու *կարճ*։

Հ. Ի՞նչ ասել է՝ ամբաստանութիւնը պէտք է լինի խոնարհ։

Պ. *Ամբաստանութիւնը պէտք է լինի խոնարհ* ասել է՝ թէ ապաշխարողը պէտք չէ հպարտութեամբ ու գոռոզ խօսքերով ինքն իրան ամբաստանէ խոստովանահօրը, այլ այն ոճրագործի զգացմունքներով, որ ճանաչում է իւր

յանցանքն ու ներկայանում դատաւորին։

Հ. *Ի՞նչ ասել է՝ ամբաստանութիւնը պէտք է լինի ամբողջ:*

Պ. *Ամբաստանութիւնը պէտք է* լինի ամբողջ ասել է՝ թէ պէտք է յայտնել այն ամէն մահուչափ մեղքերըն՝ իրանց պարագաներով ու թւով, որ մէկն յիշում է թէ վերջին լաւ կատարած խոստովանութիւնից յետոյ գործել է։

Հ. *Ո՞ր պարագաները պէտք է յայտնել, որպէսզի խոստովանութիւնը ամբողջ լինի։*

Պ. Որպէս զի խոստովանութիւնն ամբողջ լինի, պէտք է այն պարագաներն յայտնել, որոնք մեղքի տեսակն են փոխում։

Հ. *Որո՞նք են մեղքի տեսակը փոխող պարագաները։*

Պ. Մեղքի տեսակը փոխող պարագաները նրանք են՝ 1. որոնց միջո-

ցով մի ներելի մեղք՝ մահուչափ է լինում, 2. նրանք՝ որոնց միջոցով մի յանցանք՝ երկու կամ աւելի մահուչափ մեղքերի չարութիւնը պարունակում։

Հ. *Ինձ մի պարագայի օրինակ տուր, որ ներելի մեղքը մահուչափ դարձնէ։*

Պ. Նա՝ որ ինքն իրան արդարացնելու համար մի սուտ է խօսում, որով իւր ընկերոջը մի ծանր վնաս է հասնում, պարտաւոր է յայտնելու այս պարագան, *որ պաշտօնական սուտը* փոխում է ծանրապէս *վնասակարի*։

Հ. *Պարագայի մի ուրիշ օրինակ էլ տուր ինձ, որի միջոցով մի եւ նոյն մեղքը երկու կամ աւելի մեղքերի չարութիւնն ունենայ։*

Պ. Նա՝ որ մի սրբազան առարկայ է գողացել, պարտաւոր է յայտնելու այս պարագան՝ որ գողութեան վե-

րայ աւելացնում է նաև սրբապղծութեան չարութիւնը։

Հ. Եթէ մէկն ստոյգ չէ թէ մի մեղք է գործել, պարտաւո՞ր է նրան խոստովանելու։

Պ. Եթէ մէկն ստոյգ չէ թէ մի մեղք է գործել, պարտաւոր չէ նրան խոստովանելու, բայց եթէ ուզենայ նրան էլ ամբաստանել, պէտք է աւելացնէ՝ *ստոյգ չեմ եթէ այդ բանն արել եմ։*

Հ. Ի՞նչ պէտք է անէ նա՝ որ իւր մեղքերի ճշգրիտ թիւը չի յիշում։

Պ. Նա՝ որ իւր մեղքերի ճշգրիտ թիւը չի յիշում, պէտք է այն թիւն ասէ, որ աւելի մօտ է ճշմարտութեանը։

Հ. Լաւ խոստովանուած կլինի՞ նա՝ որ սոսկ մոռացմամբ մի մահուչափ մեղք կամ մի հարկաւոր. պարագայ բաց թողնէ։

Պ. Լաւ խոստովանուած կը լինի նա որ սոսկ մոռացմամբ մի մահուչափ մեղք կամ մի հարկաւոր պարագայ բաց թողնէ, միայն թէ խղճի քննութիւնը փութաջանութեամբ արած լինի։

Հ. Եթէ խոստովանելուց յետոյ մոռացուած մահուչափ մեղքը մեր միտքը գայ, պարտաւո՞ր ենք ուրիշ խոստովանութեան մէջ նրան ամբաստանելու։

Պ. Անտարակոյս, պարտաւոր ենք խոստովանութեան մէջ մոռացած մահուչափ մեղքն ամբաստանելու, եթէ յիշելու լինինք, առաջին անգամ որ խոստովանինք։

Հ. Ի՞նչ մեղք է գործում նա՝ որ ամօթի կամ ուրիշ պատճառի համար խոստովանելիս չարութեամբ մի մահուչափ մեղք է ծածկում։

Պ. Նա՝ որ ամօթի կամ ուրիշ

պատճառի համար չարութեամբ մի մահուչափ մեղք է ծածկում, չարաչար գործածում է խորհուրդն ու սրբապղծութիւն գործում։

Հ. Ով որ խոստովանելիս չարութեամբ մի մահուչափ մեղք է ծածկել, ի՞նչ պէտք է անէ իւր խիղճը բարեկարգելու համար։

Պ. Ով որ խոստովանելիս չարութեամբ մի մահուչափ մեղք է ծածկել, պէտք է ծածկած մեղքն յայտնէ խոստովանահօրը, և ասէ թէ քանի անգամ խոստովանելիս նոյնը պահել է, և իւր վերջին լաւ կատարած խոստովանութիւնից յետոյ բոլոր արած խոստովանութիւնները վերանորոգէ։

Հ. Ի՞նչ խորհրդածութիւններ պէտք է անէ նա՝ որ փորձւում է խոստովանութեան մէջ մի մեղք պահելու։

Պ. Նա՝ որ փորձւում է խոստովանութեան մէջ մի մեղք պահելու,

պէտք խորհրդածէ թէ՝

1. չի ամաչել ամենատես Աստուծու առաջ մեղք գործելու,

2. աւելի լաւ է իւր մեղքերը խոստովանահօրը ծածուկ յայտնելը քան թէ մեղքի մէջ մնալով մտատանջւելը, թշւառ մահ ունենալը և հետևաբար ընդհանրական դատաստանում ամեն մարդկանց առաջ խայտառակւելը,

3. խոստովանահայրը շատ ծանր մեղք կը գործէ, եթէ խորհրդական կնիքի դէմ պակասելու լինի, ու թէ ժամանակաւոր և թէ յաւիտենական պատիժների սպառնալիքով պարտաւոր է գաղտնիքը պահելու։

Հ. Ի՞նչ ասել է՝ խոստովանութիւնը պէտք է լինի անկեղծ։

Պ. Խոստովանութիւնը պէտք է լինի անկեղծ ասել է թէ պէտք է այնպէս իւր մեղքերն յայտնել, ինչպէս որ են, առանց արդարացնելու, պակասեց-

նելու կամ աւելացնելու։

Հ. *Ի՞նչ ասել է՝ խոստովանութիւնը* պէտք է լինի խոհեմ։

Պ. *Խոստովանութիւնը պէտք է լինի խոհեմ* ասել է թէ խոստովանւելիս պէտք է ամենահամեստ խօսքերով մեղքերն յայտնել, և զգոյշ լինել ուրիշների մեղքերը չը յայտնելու։

Հ. *Ի՞նչ ասել է խոստովանութիւնը* պէտք է լինի կարճ։

Պ. *Խոստովանութիւնը պէտք է լինի կարճ* ասել է թէ պէտք չէ անօգուտ բաներ ասել խոստովանահօրը։

Հ. *Ծանր բան չէ՞ իւր մեղքերն ուրիշին խոստովանիլը, մանաւանդ որ այսպէս նոքա ամօթալի են։*

Պ. Թէպէտև իւր մեղքերն ուրիշին խոստովանիլը ծանր բան լինի, բայց և այնպէս պէտք է անել, որովհետև աստուածային պատուիրան է, ապա թէ ոչ կարելի չէ գործած մեղքե-

րի թողութիւնն ստանալ, և բացի սըրանից խոստովանւելու դժւարութիւնը փոխարինւում է մեծամեծ օգուտներով ու մխիթարութիւններով։

7.— Խոստովանւելու կերպը.

Հ. *Ի՞նչպէս կը մերձենաս խոստովանահօրը։*

Պ. Ծունկ կը չոքեմ խոստովանահօր առաջ ասելով՝ *օրհնեա՛ ինձ, Հայր, որովհետև մեղանչեցի ես։*

Հ. *Ի՞նչ կ՚ասես խոստովանահօրը քեզ օրհնելիս։*

Պ. Խոնարհաբար կը ծռեմ նրա օրհնութիւնն առնելու, և ինքն իրանս կը խաչակնքեմ։

Հ. *Ինքն իրան խաչակնքելուց յետոյ ի՞նչ պէտք է անել։*

Պ. Ինքն իրան խաչակնքելուց յե-

տոյ պէտք է *խոստովանիմ* աղօթքն ասել:

Հ. *Յետոյ ի՞նչ պէտք է անել:*

Պ. Յետոյ պէտք է ասել "*Թէ որչափ ժամանակից ի վեր է խոստովանւել, եթէ Աստծու շնորհքով արձակուել, մին ստացել, ապաշխարանքը կատարել, հաղորդուել է:* Ի վերջոյ պէտք է մեղքերըն ամբաստանել:

Հ. *Մեղքերդ ամբաստանելուց յետոյ ի՞նչ կ'անես:*

Պ. Մեղքերս ամբաստանելուց յետոյ կ'ասեմ՝ ամբաստանում եմ ինձ անցած կեանքիս բոլոր մեղքերի վրայօք, մանաւորապէս այս ինչ առաքինութեան՝ զոր օրինակ մաքրութեան կամ չորրորդ պատուիրանի դէմ եղողի վրայօք:

Հ. *Այս ամբաստանութիւնից յետոյ ի՞նչ պէտք է անել:*

Պ. Պէտք է ասել՝ բոլոր այս մեղ-

քերիս և նրանց որ չեմ յիշում Աստծուց թողութիւն եմ խնդրում, ու քեզանից, հոգևոր հայր, ապաշխարանք ու արձակում:

Հ. *Մեղքերի ամբաստանութիւնն այսպէս վերջացնելուց յետոյ, ի՞նչ պէտք է անել:*

Պ. Մեղքերի ամբաստանութիւնը վերջացնելուց յետոյ, պէտք է յարգութեամբ լսել խոստովանահօր խրատներըն, ապաշխարանքն ընդունել՝ անկեղծ սրտով նրան կատարելու նպատակով, ու նրա արձակում տուած ժամանակը՝ սրտանից զղջման ներգործութիւնը նորոգել:

Հ. *Արձակում առնելուց յետոյ ի՞նչ պէտք է անել:*

Պ. Արձակում ստանալուց յետոյ՝ պէտք է Աստծուց շնորհակալ լինել, կարելի եղածին չափ շուտ ապաշխարանքը կատարել և խոստովանահօր

տուած խրատներն ի գործ դնել։

8. — Արձակումը.

Հ. *Խոստովանահայրերը պարտաւո՞ր են միշտ արձակում տալու նրանց՝ որ խոստովանում են։*

Պ. Խոստովանահայրերը պարտաւոր են արձակում տալու միայն նրանց՝ որոնց որ դատում են թէ լաւ տրամադրուած են նրան ընդունելու։

Հ. *Խոստովանահայրերը կարո՞ղ են երբեմն արձակում տալը յետաձգել կամ ժխտել։*

Պ. Խոստովանահայրերն՝ այս խորհուրդը չարաչար չը գործածելու համար, մի քանի դէպքերի մէջ ոչ միայն կարող այլ և պարտաւոր են արձակում տալը յետաձգելու կամ ժխտելու։

Հ. *Ո՞ր ապաշխարողներին պէտք է*

անտրամադիր սեպել, եւ որո՞նց ան-վերաքար արձակում տալը ժխտել կամ յետաձգել։

Պ. Այն անձերը՝ որոնց որ պէտք է անտրամադիր սեպել, գլխաւորաբար սրանք են՝

1. Նրանք որ չեն իմանում հաւատքի գլխաւոր խորհուրդները կամ հոգ չեն տանում սովորելու քրիստոնէական վարդապետութեան գլխաւոր կէտերը, որոնց պարտաւոր են գիտենալու իրանց վիճակին համեմատ,

2. Նրանք որ մեծապէս անհոգ են գտնւում իրանց խիղճը քննելու, կամ զղջման ու ցաւի նշաններ ցոյց չեն տալիս,

3. Նրանք որ կարողանալով՝ չեն ուզում ուրիշի ինչքն կամ համբաւին հասցրած վնասը հատուցանել,

4. Նրանք որ սրտանց չեն ներում իրանց թշնամիներին,

5. Նրանք որ չեն ուզում իրանց չար ունակութիւններն ուղղելու համար հարկաւոր եղած միջոցներն 'ի գործ դնել,

6. Նրանք որ չեն ուզում մեղքի մերձաւոր առիթներից փախչել։

Հ. Շատ խստութիւն չի՞ գործադրում այն խոստովանահայրը, որ յետաձգում է ապաշխարողին արձակում տալը, կարծելով թէ լաւ չէ տրամադրուած տակաւին։

Պ. Այն խոստովանահայրը՝ որ յետաձգում է ապաշխարողին արձակում տալը, կարծելով թէ լաւ չէ տրամադրուած տակաւին, շատ խստութիւն չի գործադրում, մանաւանդ թէ շատ մարդասիրութիւն ցոյց տալիս շարժելով մի բարի բժշկի պէս, որը բոլոր՝ նոյն տհաճելի ու դառը դարմաններին ձեռք է զարնում հիւանդի կեանքը փրկելու համար։

Հ. Յուսահատուելու կամ խոստովանելուց բոլորովին յետ կենալու է՞ այն մեղաւորը, որին խոստովանահայրը յետաձգում կամ մերժում է արձակում տալը։

Պ. Պէտք չէ յուսահատուի կամ խոստովանելուց բոլորովին յետ կենայ այն մեղաւորը, որին յետաձգում կամ մերժում է արձակում տալը, այլ պէտք է խոնարհի, ճանաչէ իւր ողբալի վիճակը, խոստովանահօր՝ իրան տուած բարի խրատներիցն օգուտ քաղէ, և այսպէս կարելի եղածին չափ շուտ վիճակը փոխելով՝ արձակումն ստանալու արժանանայ։

Հ. Ապաշխարողը ի՞նչ պիտի անէ մի խոստովանահայր ընտրելու համար։

Պ. Ճշմարիտ ապաշխարողը՝ մի բարեպաշտ, գիտուն ու խոհեմ խոստովանահայր ընտրելու համար, պէտք է ինքն իրան Աստծուն յանձնէ, յետոյ խոստովանահօր առաջնորդութեան

տակը դրելով՝ հնազանդի նրան, իբրև իւր դատաւորին ու բժշկին։

9.— Հատուցումն կամ ապաշխարանքը.

Հ. Ի՞նչ է հատուցումը։

Պ· Հատուցումը՝ որ խորհրդական ապաշխարանք էլ է կոչւում, ապաշխարողի ներգործութիւններից մէկըն է, որի միջոցով իւր գործած մեղքերի փոխարէն Աստծու արդարութեանը հատուցում է անում կատարելով խոստովանահօր իւր վրայ դրած գործերը։

Հ. Ապաշխարողը պարտաւո՞ր է խոստովանահօր տուած ապաշխարանքն ընդունելու։

Պ· Այո, ապաշխարողը պարտաւոր է խոստովանահօր տուած ապաշխարանքն ընդունելու, եթէ կարող

է կատարել, իսկ եթէ ոչ, պէտք է խոնարհութեամբ այդ բանն ասէ խոստովանահօրն ու մի ուրիշը խնդրէ։

Հ. Ե՞րբ պէտք է կատարել ապաշխարանքը։

Պ. Եթէ խոստովանահայրը ժամանակը չի որոշել, պէտք է կարելի եղածին չափ շուտ կատարել և ջանալ աշնորհքի մէջ գտնւելով կատարել ապաշխարանքը։

Հ. Ինչպէ՞ս պէտք է կատարել ապաշխարանքը։

Պ. Պէտք է ամբողջապէս ու ջերմեռանդութեամբ կատարել ապաշխարանքը։

Հ. Ինչո՞ւ համար է խոստովանութեան մէջ ապաշխարանք դրւում։

Պ. Նրա համար է խոստովանութեան մէջ ապաշխարանք դրւում, որովհետև խորհրդական արձակումից յետոյ՝ որը թողնում է մեղքն ու նրա

յաւիտենական պատիժը, մնում է առհասարակ այս աշխարհիս կամ քաւարանի մէջ տուժելու մի ժամանակաւոր պատիժ։

Հ. Ի՞նչ պատճառի համար է Տէրն մեր ուզացել, որ մեղքերի բոլոր պատիժը թողնէր Մկրտութեան եւ ոչ թէ Ապաշխարութեան խորհրդի մէջ։

Պ. Նրա համար է Տէրն մեր ուզացել, որ մեղքերի բոլոր պատիժը թողնելի Մկրտութեան և ոչ թէ Ապաշխարութեան խորհրդի մէջ, որովհետև Մըկրտութիւնից յետոյ գործած մեղքերն աւելի ծանր են լիուլի գիտութեամբ գործած լինելուն և Աստծու բարերարութեանցն ապերախտ գտնւելուն պատճառով, և որպէս զի հատուցում անելու պարտականութիւնը մի միջոց լինի այլևս մեղք չը գործելու։

Հ. Մենք մեզանից կարո՞ղ ենք Աստծուն հատուցում անել։

Պ. Ո՛չ, մենք մեզանից չենք կարող Աստծուն հատուցում անել, այլ կարող ենք Յիսուս Քրիստոսի հետ միացած՝ Որն իւր Չարչարանաց ու Մահուան միջոցով արժէք է տալիս մեր գործերին։

Հ. Խոստովանահօր տուած ապաշխարանքը բաւակա՞ն է միշտ մեղքերին արժանի եղած պատիժը թողնելու։

Պ. Խոստովանահօր տուած ապաշխարանքը միշտ բաւական չէ մեղքերին արժանի եղած պատիժը թողնելու, դրա համար պէտք է ջանալ ուրիշ կամովին ապաշխարանքներով Նրա պակասը լցնել։

Հ. Որո՞նք են ապաշխարական գործերը։

Պ. Ապաշխարական գործերը կարող են երեք տեսակի վերածւել, այսինքն՝ աղօթքի, ծոմապահութեան ու ողորմութիւն տալուն։

Հ. Ի՞նչ ես հասկանում աղօթք անելով։

Պ. Աղօթք անելով հասկանում եմ ամեն տեսակ բարեպաշտական կրթութիւններ։

Հ. Ի՞նչ ես հասկանում ծոմապահութիւն անելով։

Պ. Ծոմապահութիւն անելով հասկանում եմ՝ ամեն տեսակ մահացուցումներ։

Հ. Ողորմութիւն տալ անելով ի՞նչ ես հասկանում։

Պ. Ողորմութիւն տալ ասելով՝ հասկանում եմ հոգեւոր ու մարմնաւոր ողորմութեան ամեն գործերը։

Հ. Խոստովանահօր տուած ապաշխարա՞նքն է աւելի արդիւնաւոր, թէ այն որ մեր կամքով ենք կատարում։

Պ. Խոստովանահօր մեզ տուած ապաշխարանքն աւելի արդիւնաւոր է, որովհետև խորհրդի մասը լինելով ա-

ւելի մեծ արժէք է ստանում Յիսուս Քրիստոսի Չարչարանաց արդիւնքներից։

Հ. Արդեօք ուղղակի արքայութի՞ւն են գնում նրանք, որ արձակում ընդունելուց յետոյ, մեռնում են առանց աստուածային Արդարութեանը լիուլի հատուցում անելու։

Պ. Ո՛չ, գնում են քաւարան, որպէս զի այնտեղ աստուածային արդարութեանը հատուցում անեն, ու բոլորովին մաքրուին։

Հ. Մենք կարո՞ղ ենք թեթեւացնել քաւարանի հոգիների տանջանքները։

Պ. Այո՛, մենք կարող ենք թեթեւացնել քաւարանի հոգիների տանջանքները՝ աղօթքով, ողորմութիւն տալով, ուրիշ բարեգործութիւններ կատարելով, ներողութիւններ շահելով, բայց ամենից աւելի Պատարագի Ս. զոհով։

Հ. Ապաշխարողը՝ բացի ապաշխա-

րանքը կատարելուց, եւ ի՞նչ պէտք է անել խոստովանելուց յետոյ։

Պ. Ապաշխարողը՝ խոստովանելուց յետոյ, բացի ապաշխարանքը կատարելուց, եթէ ընկերոջ ընչին կամ պատուին անիրաւութեամբ վնաս է հասցրել, կամ նրան գայթակղութիւն տուել, պէտք է որչափ որ կարող է, շուտով նրա ինչքն յետ դարձնէ, պատիւը տեղը դնէ և տուած գայթակղութեանը ճար գտնէլ։

Հ. Մեկն ի՞նչպէս է կարող տուած գայթակղութեանը ճար գտնել։

Պ. Մէկը կարող է տուած գայթակղութեանը ճար գտնել՝ նրա առիթը վերցնելով, խօսքերով ու բարի օրինակով գայթակղեցրած անձերին շինութիւն տալով։

Հ. Եթէ մեկը վշտացրել է իւր ընկերոջը, ի՞նչպէս պէտք է նրան հատուցում անէ։

Պ. Եթէ մէկը վշտացրել է իւր ընկերոջը, պէտք է հատուցում անէ կամ նրանից ներումն խնդրելով, կամ մի ուրիշ յարմար փոխարինումն անելով։

Հ. Ի՞նչ արդիւնքներ է առաջ բերում մեզանում լաւ կատարուած խոստովանութիւնը։

Պ. Լաւ կատարուած խոստովանութիւնը՝ 1. թողնում է մեր գործած մեղքերը, և Աստծու շնորհքը տալիս մեզ, 2. վերադարձնում խղճի խաղաղութիւնն ու անդորրութիւնը, 3. բաց անում արքայութեան դռներն, ու դժոխքի յաւիտենական պատիժը՝ ժամանակաւորի դարձնում, 4. մեզ մեղքի մէջ ընկնելուց պահում և ընդունակ անում, որ ներողութիւնների գանձը ձեռք բերենք։

10. — Ներողութիւնները.

Հ. Ի՞նչ է ներողութիւնը։

Պ. Ներողութիւնն այն մեղքերի ժամանակաւոր պատժի ներումն է, որոնք, իբրև յանցանք՝ արդէն ներուած են և այս ներումն Եկեղեցին շնորհում է Ապաշխարութեան խորհրդից դուրս։

Հ. Եկեղեցին ումի՞ց է ներողութիւններ տալու իշխանութիւն ստացել։

Պ. Եկեղեցին ներողութիւններ տալու իշխանութիւնն ստացել է Յիսուս Քրիստոսից։

Հ. Եկեղեցին ի՞նչպէս է ներողութիւնների միջոցով թողնում մեր ժամանակաւոր պատիժը։

Պ. Եկեղեցին ներողութիւնների միջոցով թողնում է մեր ժամանակաւոր պատիժը, ընձեռնելով մեզ Յիսուս Քրիստոսի, ամենասուրբ Կուսի

ու Սրբերի առաւելեալ արդիւնքները, որոնցից բաղկանում է այն՝ որ կոչւում է Եկեղեցու գանձը։

Հ. Ո՞վ ներողութիւններ տալու իշխանութիւն ունի։

Պ. Միայն Ս. Քահանայապետն իշխանութիւն ունի ներողութիւններ տալու բովանդակ Եկեղեցուն, իսկ Եպիսկոպոսն իւր թեմին, Ս. Քահանայապետից ընդունած իշխանութեան համեմատ։

Հ. Քանի՞ տեսակ ներողութիւն կայ։

Պ. Երկու տեսակ ներողութիւն կայ՝ լիակատար ու մասնակի։

Հ. Ո՞րն է լիակատար ներողութիւնը։

Պ. Լիակատար ներողութիւնն այն է, որ ներում է մեր մեղքերի ժամանակաւոր բոլոր պատիժը։ Դրա համար եթէ մէկն այս ներողութիւնն ըն-

տանելուց յետոյ մեռնէր, ուղղակի արքայութիւն կ'երթար, առանց քաւարանի պատիժները կրելու։

Հ. Ո՞րն է մասնական *ներողութիւնը։*

Պ. *Մասնական* ներողութիւնն այն է, որ ներում է մեր մեղքերի ժամանակաւոր պատժի միայն մէկ մասը։

Հ. Եկեղեցին ի՞նչ նպատակով է ներողութիւնները բաշխում։

Պ. Եկեղեցին այն նպատակով է ներողութիւնները բաշխում, որպէս զի օգնութեան հասնի մեզ՝ որ անկարող ենք այս աշխարհում մեր ժամանակաւոր բոլոր պատիժը քաւելու, բարեպաշտական ու քրիստոնէական սիրոյ գործերով շահել տալ, ինչ որ առաջին դարերում ընդունել էր տալիս ապաշխարութեան կանոնների խստութեամբը։

Հ. Ի՞նչ են նշանակում քառասնօրեայ, հարիւրօրեայ կամ եօթը տար-

ւան եւ սրանց նման ներողութիւններ ասելով։

Պ. Քառասնօրեայ, հարիւրօրեայ, կամ եօթը տարուան և սրանց նման ներողութիւններ ասելով, հասկանում եմ այն ժամանակաւոր պատժի թողութիւնը, որ մէկը պիտի կրէր քառասուն կամ հարիւր օր, կամ էլ եօթը տարի, հին ժամանակ Եկեղեցուց սահմանուած ապաշխարանքն անելով։

Հ. Ի՞նչ համարմունք պէտք է ունենանք ներողութիւնների վրայ։

Պ. Շատ մեծ համարմունք պէտք է ունենանք ներողութիւնների վրայ, որովհետև նրանց միջոցով հատուցում է լինում Աստծու արդարութեանը և աւելի շուտ ու դիւրութեամբ ձեռք բերւում արքայութեան ժառանգութիւնը։

Հ. Ո՞րք են ներողութիւնները վաստըկելու համար պահանջուած պայ-

մանները:

Պ. Ներողութիւնները վաստըկելու համար պահանջւած պայմաններն են 1. շնորհքի վիճակի մէջ գտնւիլ, (գոնէ վերջին գործը կատարելիս) և զերծ լինել նաև այն ներելի յանցանքներից, որոնց պատիժը մէկն ուզում է քաւել, 2. ներողութիւնը շահելու համար Եկեղեցուց որոշւած գործերը կատարել, 3. Նրան վաստըկելու դիտաւորութիւնն ունենալ:

Հ. Մէկը կարո՞ղ է ներողութիւնները մերձեցնել քաւարանի հոգիներին:

Պ. Այո՛, մէկը կարող է ներողութիւնները մերձեցնել քաւարանի հոգիներին, երբոր նրանց շնորհողն յայտարարէ թէ կարելի է վերոյիշեալներին մերձեցնել:

Հ. Ի՞նչ է Յոբելեան ներողութիւնը:

Պ. Յոբելեան ներողութիւնը՝ որ առ հասարակ քսան ու հինգ տարի մի

անգամ կը շնորհւի, մի լիակատար ներողութիւն է, որի հետ միացած են բազմաթիւ արտօնութիւններ և առանձին թոյլտւութիւններ, օրինակի համար մի քանի վերապահեալ մեղքերի և եկեղեցական պատիժների արձակումըն ստանալու և մի քանի ուխտերի փոփոխութիւնը:

ԳԼՈՒԽ Է.

ՎԵՐՋԻՆ ՕԾՈՒՄԸ.

Հ. Ի՞նչ է Վերջին Օծման խորհուրդը:

Պ. Վերջին Օծումը մի խորհուրդ է, որ հաստատւել է մահւան վտանգի մէջ գտնւող հիւանդներին հոգւոր ու նաև մարմնաւոր թեթևութիւն տալու համար:

Հ. Ի՞նչ արդիւնքներ է առաջ բերում վերջին Օծման խորհուրդը։

Պ. Վերջին Օծման խորհուրդը հետեւեալ արդիւնքներն է առաջ բերում՝ 1. աճեցնում է Սրբարար շնորհքը, 2. ջնջում ոչ միայն ներելի՝ այլ նաև մահուչափ մեղքերը, որոնց վրայ հիւանդը զղջացած լինելով, այլևս չի կարողանում խոստովանել, 3. վերացնում այն տկարութիւնն ու բարին գործելու թուլութիւնը, որ մեղքերի թողութիւնն ստանալուց վերջն էլ մնում է, 4. զօրութիւն տալիս համբերութեամբ տանելու ցաւերը, փորձութիւններին դէմ դնելու և սրբութեամբ մեռնելու, 5. օգնում մարմնաւոր առողջութիւն ստանալու, եթէ հոգու փրկութեանն օգտակար լինի։

Հ. Ե՞րբ պէտք է վերջին Օծումն ընդունել։

Պ. Պէտք է վերջին Օծումն ընդու-

նել, երբ հիւանդութիւնը վտանգաւոր է և եթէ կարելի է՝ հիւանդի Ապաշխարութեան ու Ս. Հաղորդութեան խորհուրդները ընդունելուց յետոյ. և լաւ է, որ այնժամանակ ընդունի, քանի որ չի կորցրել, իւր խելքն ու տակաւին ապրելու մի յոյս կայ։

Հ. Ինչո՞ւ համար լաւ է որ հիւանդը վերջին Օծումն ընդունի քանի որ չի կորցրել իւր խելքը եւ տակաւին ապրելու մի յոյս կայ։

Պ. Նրա համար լաւ է որ հիւանդը վերջին Օծումն ընդունի քանի որ չի կորցրել իւր խելքը և տակաւին ապրելու մի յոյս կայ, նախ որովհետև այս խորհուրդն լաւագոյն տրամադրութեամբ ընդունելով՝ կարող է նրանից առատագոյն օգուտ քաղել. և երկրորդ որովհետև այս խորհուրդը բնական ոյժերին օգնութեան հասնելով է մարմնին առողջութիւն տալիս, եթէ նպաստաւոր է հոգուն, դրա համար

պէտք չէ այնչափ սպասել, որ առողջութիւնը յուսահատական լինի:

Հ. Ի՞նչ պատրաստութիւններով պէտք է ընդունել վերջին Օծումը:

Պ. Վերջին Օծումն ընդունելու գլխաւոր պատրաստութիւններն են՝ Աստծու շնորհքի մէջ գտնւիլն, այս խորհրդի արդիւնքի և Աստծու ողորմութեան վրայ յոյս ունենալն ու Նրա կամքի հետ համակերպիլը՝

Հ. Ի՞նչ զգացմունքներ պէտք է ունենայ հիւանդը քահանային տեսնելուն պէս:

Պ. Հիւանդը քահանային տեսնելուն պէս՝ պէտք է շնորհակալ լինի Աստծուց, որ Նրան իւր մօտն ուղարկեց. պէտք է կամովին Նրան ընդունէ, և եթէ կարելի է ինքը խնդրէ հաւատքի վերջին օգնութիւնները:

ԳԼՈՒԽ Ը.

Քահանայութեան կարգը.

Հ. Ի՞նչ է Քահանայութեան կարգը:

Պ. Քահանայութեան կարգը մի խորհուրդ է, որ իշխանութիւն է տալիս Աստծու ծառայութեանն ու հոգիների փրկութեանը վերաբերեալ սրբազան պաշտօնները կատարելու, և Աստծու պաշտօնեաների կնիքը դրոշմում Նրա հոգու մէջ, որ ընդունում է:

Հ. Ինչո՞ւ համար է այս խորհուրդը կարգ կոչւում:

Պ. Նրա համար է այս խորհուրդը կարգ կոչւում, որովհետև զանազան աստիճաններից է բաղկացած, որոնք՝ մէկը միւսից ստորադաս լինելով, կազմում են սրբազան նուիրապետութիւնը:

Հ. Որո՞նք են այս աստիճանները:

Պ. Նրանց գերագոյնն՝ Եպիսկոպոսութիւնն է, որը քահանայութեան լրութիւնն է, ապա Երիցութիւնը կամ պարզ քահանայութիւնը, յետոյ Սարկաւագութիւնը, կիսասարկաւագութիւնը և փոքր կոչուած աստիճանները:

Հ. Յիսուս Քրիստոս անձա՞մբ է հաստատել Կարգի բոլոր աստիճանները:

Պ. Յիսուս Քրիստոս անձամբ է հաստատել Կարգի երկու բարձրագոյն աստիճանները, որ են՝ Եպիսկոպոսութիւնն ու պարզ Քահանայութիւնն իսկ Առաքեալների միջոցով՝ Սարկաւագութիւնը, որից առաջ են գալիս միւս փոքր աստիճանները:

Հ. Յիսուս Քրիստոս ե՞րբ է հաստատել քահանայութեան կարգը:

Պ. Յիսուս Քրիստոս Քահանայութեան կարգը հաստատել է վերջին ընթրիքում, երբ Առաքեալներին ու

նրանց յաջորդներին Ս. Հաղորդութիւնը սրբագործելու իշխանութիւնը տուեց: Իսկ իւր յարութեան օրը նոյներին՝ մեղքերն արձակելու և կապելու իշխանութիւնն էլ տուեց՝ Նոր օրէնքի լիուլի իշխանութեամբ օժտուած առաջին քահանաներ հաստատելով:

Հ. Ո՞վ է այս խորհրդի պաշտօնեան:

Պ. Այս խորհրդի պաշտօնեան միայն Եպիսկոպոսն է:

Հ. Ուրեմն մե՞ծ է քրիստոնէական Քահանայութեան արժանապատուութիւնը:

Պ. Այո, շատ մեծ է քրիստոնէական Քահանայութեան արժանապատուութիւնն այն երկու իշխանութեանց պատճառով, որ Յիսուս Քրիստոս տուել է նրան իւր իսկական ու խորհրդական Մարմնի վրայ՝ որ Եկեղեցին է,

և այն աստուածային առաքելութեան
համար, որ յանձնել է քահանաներին,
որպէս զի դէպի յաւիտենական կեան-
քըն առաջնորդեն բոլոր մարդկանց։

*Հ. Ուղղափառ Քահանայութիւնը
հարկաւո՞ր է Եկեղեցուն։*

Պ. Այո՛, ուղղափառ Քահանա-
յութիւնը հարկաւոր է Եկեղեցուն, ո-
րովհետև առանց նրան հաւատացեալ-
ները կը զրկուէին Պատարագի Ս. զո-
հից ու խորհրդների մեծամասնութիւ-
նից, չէին ունենալ մէկը, որ ի-
րանց դաստիարակէր հաւատքի մէջ ու
կը մնային առանց հովուի՝ գայլերի ձեռ-
քը մնացած ոչխարների պէս, մէկ խօս-
քով Եկեղեցին չէր մնալ այնպէս,
ինչպէս որ Յիսուս Քրիստոս հաստա-
տել է։

*Հ. Ուրեմն ուղղափառ Քահանա-
յութիւնը չը պիտի վերանայ երկրի երե-
սից։*

Պ. Ուղղափառ Քահանայութիւ-
նը՝ չը նայելով դժոխքի նրա դէմ մղ-
ած պատերազմին, պիտի տևէ մինչև
աշխարհիս կատարածը, որովհետև Յի-
սուս Քրիստոս խոստացել է թէ՝ դը-
ժոխքի զօրութիւնը չը պիտի յաղթա-
հարէ Եկեղեցուն։

*Հ. Մեղք է՞ Քահանաներին անարգե-
լ։*

Պ. Շատ ծանր մեղք է, որովհե-
տև քահանաներին արած անարգանքն
ու թշնամանքը Յիսուս Քրիստոսին է
գնում, Որն ասել է Իւր Առաքեալնե-
րին՝ *որ զձեզ անարգէ, զիս անարգէ։*

*Հ. Ի՞նչ վախճան պէտք է ունենայ
նա, որ եկեղեցական վիճակն է ընդ-
գրկում։*

Պ. Նա՝ որ եկեղեցական վիճակն
է ընդգրկում, պէտք է իբրև վախճան
ունենայ միայն Աստծու փառքն ու հո-
գիների փրկութիւնը։

Հ. Ի՞նչ է հարկաւոր եկեղեցական վիճակն ընդգրկելու համար։

Պ. Եկեղեցական վիճակն ընդգրկելու համար ամենից առաջ հարկաւոր է *աստուածային կոչումն։*

Հ. Ի՞նչ պէտք է անել Աստծուց եկեղեցական վիճակին կանչուած լինելն իմանալու համար։

Պ. Աստծուց եկեղեցական վիճակին կանչուած լինելն իմանալու համար պէտք է՝

1. եռանդով Աստծուն աղօթել, որ իւր կամքն յայտնէ,

2. խորհուրդ հարցնել իւր Եպիսկոպոսից կամ մի գիտուն ու խոհեմ խոստովանահօրից,

3. փութաջանութեամբ քննել թէ ուսմունք անելու, պաշտօնները և այս վիճակի պարտքերը կատարելու հարկաւոր եղած ձիրքերն ունի՞, թէ ո՛չ։

Հ. Մե՞ծ չարիք կը գործէր նա, որ առանց աստուածային կոչումն ունենալու եկեղեցական վիճակն ընդգրկէր։

Պ. Այո՛, մեծ չարիք կը գործէր նա, որ առանց աստուածային կոչումն ունենալու՝ եկեղեցական վիճակն ընդգրկէր, և ինքն իրան դատապարտութեան վտանգի մէջ կը ձգէր։

Հ. Վա՞տ բան են գործում այն ծնողները, որ ժամանակաւոր նպատակների համար, ստիպում են իրանց զաւակներին առանց կոչման՝ եկեղեցական վիճակն ընդգրկելու։

Պ. Շատ ծանր յանցանք են գործում այն ծնողներն էլ, որ ժամանակաւոր նպատակների համար ստիպում են իրանց զաւակներին առանց կոչման՝ եկեղեցական վիճակն ընդգրկելու, որովհետև այս բանով յափշտակում են այն իրաւունքը, որ Աստուած միայն իրան է վերապահել իւր պաշտօնեաներն ընտրելու, և իրանց զաւակներին յաւի-

տենական դատապարտութեան վտանգին ենթարկում։

Հ. Որո՞նք են հաւատացեալների պարտքերը դէպի նրանց, որոնք Քահանայութեան կարգն ընդգրկելով կոչուած են։

Պ. Հաւատացեալները պարտաւոր են՝

1. իրանց զաւակներին ու հպատակներին լիուլի ազատութիւն տալու, որ Աստծու կոչմանը հետևին,

2. Աստծուն աղօթելու, որ բարեհաճի բարի հովիւներ ու եռանդուն պաշտօնեաներ պարգևելու Իւր Եկեղեցուն, 3. առանձին յարգանք ունենալու դէպի նրանց, որոնք Ս. Կարգի միջոցով Աստծու ծառայութեանն են նուիրուել։

ՊՍԱԿԸ

1— Պսակի խորհրդի բնութիւնը

Հ. Ի՞նչ է Պսակի խորհուրդը։

Պ. Պսակը Տէրն մեր Յիսուս Քրիստոսից հաստատուած մի խորհուրդ է, որ մի սուրբ և անլուծանելի միաւորութիւն է հաստատում մարդու և կնոջ մէջ, ու նրանց շնորհք տալիս միմեանց սրբութեամբ սիրելու և իրանց զաւակներին քրիստոնէաբար դաստիարակելու։

Հ. Ո՞վ հաստատեց ամուսնութիւնը։

Պ. Աստուած Ինքը հաստատեց ամուսնութիւնը դրախտի մէջ, ու Տէրն մեր Յիսուս Քրիստոս նոր օրէնքում բարձրացրեց Նրան խորհրդի սուրբ աստիճանին։

Հ. Պսակի խորհուրդը մի մասնա-

նոր նշանակութիւն ունի՞։

Պ. Պսակի խորհուրդը նշանակում է այն անլուծանելի միութիւնը, որ Յիսուս Քրիստոս ունի Եկեղեցու հետ՝ որ Իւր հարսն է և մեր ամենասիրելի մայրը։

Հ. Ինչո՞ւ համար է ասում թէ ամուսնութեան կապն անլուծանելի է։

Պ. Նրա համար է ասում թէ ամուսնութեան կապն անլուծանելի է, այսինքն չի կարելի, որ քակուի, եթէ ոչ ամուսնացեալների մէկի մահւամբը, որովհետև Աստուած է սկզբից ի վեր այսպէս հաստատել, և Յիսուս Քրիստոս էլ հանդիսաւոր կերպով հրատարակել, որ այսպէս լինի։

Հ. Քրիստոնէական ամուսնութեան մէջ կարելի՞ է դաշնադրութիւնը խորհրդից բաժանել։

Պ. Ո՛չ, քրիստոնեաների ամուսնութեան մէջ կարելի չէ դաշնադրու-

թիւնը խորհրդից բաժանել, որովհետև նրանց ամուսնութիւնն ուրիշ բան չէ, եթէ ոչ միենոյն բնական դաշնադրութիւնը, որ Յիսուս Քրիստոս բարձրացրեց խորհրդի սուրբ աստիճանին։

Հ. Ուրեմն քրիստոնեաների մէջ կարելի չէ՞ ճշմարիտ ամուսնութիւն տեղի ունենալ առանց խորհուրդ լինելու։

Պ. Ո՛չ, քրիստոնեաների մէջ կարելի չէ ճշմարիտ ամուսնութիւն տեղի ունենալ առանց խորհուրդ լինելու:

Հ. Ի՞նչ արդիւնքներ է առաջ բերում Պսակի խորհուրդը։

Պ. Պսակի խորհուրդը՝ 1. աճեցնում է սրբարար շնորհքը 2. մասնաւոր շնորհք տալիս ամուսնական բոլոր պարտքերը հաւատարմութեամբ կատարելու։

2.— Պաշտօնեաներն, արարողութիւնն ու պատրաստութիւնները.

Հ. *Որո՞նք են այս խորհրդի պաշտօնեաները։*

Պ. Այս խորհրդի պաշտօնեաները նոյն իսկ ամուսնացող անձերն են, որոնք փոխադարձաբար մատակարարում և ընդունում են խորհուրդը։

Հ. *Ի՞նչպէս է մատակարարւում այս խորհուրդը։*

Պ. Այս խորհուրդը դաշինքի բնութիւնը պահելով, մատակարարւում է ամուսնացողներից, որոնք իրանց ժողովրդապետի կամ նրա փոխանորդի և երկու վկաների ներկայութեամբն յայտարարում են թէ՝ միմեանց հետ միանում են ամուսնութեամբ։

Հ. *Ուրեմն ի՞նչ բան է ծառայում ժողովրդապետի՝ ամուսնացողներին տուած օրհնութիւնը։*

Պ. Ժողովրդապետի՝ ամուսնացողներին տուած օրհնութիւնը հարկաւոր չէ խորհուրդը կացուցանելու համար, այլ տրւում է՝ Եկեղեցու անւամբը նրանց միաւորութիւնը հաստատելու և Աստծու օրհնութիւնը ևս առաւել հրաւիրելու նրանց վրայ։

Հ. *Ի՞նչ նպատակ պէտք է ունենայ նա, որ ամուսնանում է։*

Պ. Նա՝ որ ամուսնանում է, պէտք է իբրև նպատակ ունենայ՝

1. Աստծու կամքը կատարելը՝ Որն այս վիճակին է կանչում նրան, 2. այս վիճակում իւր հոգու փրկութիւնր ձեռք բերելը, 3. իւր զաւակներին՝ եթէ Աստուած տալու լինի, քրիստոնէաբար դաստիարակելը։

Հ. *Ամուսնացողները ի՞նչպէս պէտք է պատրաստուին Պսակի խորհուրդը շահաւէտ կերպով ընդունելու համար։*

Պ. Ամուսնացողները Պսակի խոր-

հուրդը չահաւէտ կերպով ընդունելու համար, պէտք է՝ 1. իրանք իրանց եռանդով Աստծուն յանձնեն, Նրա սուրբ կամքը ճանաչելու և Նրանից այս վիճակին հարկաւոր եղած շնորհքներն ընդունելու համար, 2. խօսք տալուց առաջ՝ իրանց ծնողներից խորհուրդ հարցնեն, ինչպէս որ պահանջում է այն հնազանդութեան ու յարգանաց պարտականութիւնը, որ ունին դէպի իրանց ծնողները, 3. պատրաստուին մի լաւ՝ և եթէ հարկը պահանջէ, բոլոր կեանքի վրայ ընդհանուր խոստովանանք լինելու, 4. փախչին խօսակցութեան մէջ՝ վարմանց ու խօսքերի վտանգաւոր ընտանութիւնից։

Հ. Որո՞նք են ամուսնացեալ անձերի գլխաւոր պարտականութիւնները։

Պ. Ամուսնացեալ անձերը պարտաւոր են՝ 1. անբռնաբարելի պահել

ամուսնական հաւատարմութիւնը և ամեն բանի մէջ միշտ քրիստոնէաբար վարուելու, 2. միմեանց փոխադարձաբար սիրելու՝ համբերութեամբ իրարու պակասութիւնները տանելով, ու խաղաղութեամբ և միաբանութեամբ ապրելու, 3. եթէ զաւակներ ունին՝ լըրջութեամբ պէտք եղածին չափ նրանց վրայ հոգ տանելու, նրանց քրիստոնէական կրթութիւն տալու և ազատ թողնելու, որ այն վիճակն ընտրեն, որին Աստուած կանչել է նրանց։

3. — Պայմաններն ու արգելքները.

Հ. Ի՞նչ է հարկաւոր վաւերաբար քրիստոնէական ամուսնութիւն անելու համար։

Պ. *Վաւերաբար* Քրիստոնէական ամուսնութիւն անելու համար, հարկաւոր է ամուսնութիւնը *լուծող* ա-

մեն արգելքներից ազատ լինել, և ժողովրդապետի կամ նրա փոխանորդի և երկու վկաների ներկայութեամբն ազատաբար հաւանութիւն տալ ամուսնութեան դաշնագրութեանը։

Հ. *Ի՞նչ է հարկաւոր օրինաւորապէս քրիստոնէական ամուսնութեան համար։*

Պ. Քրիստոնէական ամուսնութիւնն *օրինաւորապէս* անելու համար հարկաւոր է ամուսնութիւնը *խափանող* ամեն արգելքներից ազատ լինել, կրօնի գլխաւոր բաները գիտենալ ու շնորհքի վիճակի մէջ գտնուել, ապա թէ ոչ սրբապղծութիւն կը գործուի։

Հ. *Ի՞նչեր են ամուսնութեան արգելքները։*

Պ. Ամուսնութեան արգելքներն այնպիսի պարագաներ են, որ կամ *անվաւեր* են դարձնում ամուսնութիւնը, կամ էլ *ապօրինաւոր*։ Առաջին

դէպքում արգելքները կոչւում են *լուծիչ*, իսկ երկրորդում՝ *խափանիչ* արգելքներ։

Հ. *Մի օրինակ տուր ինձ, որի մէջ արգելքը* լուծիչ *լինի։*

Պ. *Լուծիչ* արգելքներ են՝ արենակցութիւն՝ մինչև չորրորդ աստիճան, հոգևոր ազգակնութիւնը, ողջախոհութեան հանդիսաւոր ուխտը, մկրտուածների և չը մկրտուածների մէջ կրօնի զանազանութիւնը.....։

Հ. *Մի օրինակ տուր ինձ, որի մէջ արգելքը* խափանիչ *լինի։*

Պ. *Խափանիչ* արգելքներ են՝ արգելած ժամանակը, ողջախոհութեան *պարզ* ուխտը.....։

Հ. *Հաւատացեալները պարտաւո՞ր են եկեղեցական իշխանութեան յայտնելու ամուսնութեան այն արգելքները, որ ճանաչում են։*

Պ. Այո, հաւատացեալները պար-

տաւոր են եկեղեցական իշխանութեանը յայտնելու ամուսնութեան այն արգելքները, որ ճանաչում են:

Հ. *Ո՞վ իշխանութիւն ունի ամուսնութեան արգելքները դնելու, նրանցից տնօրինելու եւ քրիստոնէական ամուսնութեան վաւերականութիւնը դատելու:*

Պ. Մի միայն Եկեղեցին իշխանութիւն ունի արգելքներ դնելու ու քրիստոնեաների մէջ ամուսնութեան վաւերականութիւնը դատելու, նմանապէս միայն ինքն է կարող իրա սահմանած արգելքներից *տնօրինել:*

Հ. *Ինչո՞ւ համար միայն Եկեղեցին իշխանութիւն ունի արգելքներ սահմանելու եւ ամուսնութեան վաւերականութիւնը դատելու:*

Պ. Նրա համար միայն Եկեղեցին իշխանութիւն ունի արգելքներ սահմանելու, ամուսնութեան վաւերա-

կանութիւնը դատելու, և իւր դրած արգելքներից տնօրինելու, որովհետև քրիստոնէական ամուսնութեան մէջ դաշնադրութիւնը չը կարենալով խորհրդից բաժանել՝ *դաշնադրութիւնն* էլ Եկեղեցու իշխանութեան ներքոյ է ընկնում, Որին միայն Յիսուս Քրիստոս իրաւունք տւեց սրբազան իրերի մէջ օրէնքներ ու վճիռներ տալու:

Հ. *Քաղաքական իշխանութիւնը կարո՞ղ է քրիստոնէական ամուսնութեան կապը ապահարզանով լուծել:*

Պ. Ո՛չ, քաղաքական իշխանութիւնը չի կարող լուծել քրիստոնէական ամուսնութեան *կապը*, որովհետև չի կարող խորհրդներին վերաբերեալ բաների մէջ խառնուել ու *մեկնել զոր Աստուած զուգեաց:*

ՄԱՍՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԳԼԽԱՒՈՐ ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆՆԵՐՆ ՈՒ ՔՐԻՍՏՈՆԵԱՅԻ ԻՄԱՑՆԱԼՈՒ ԿԱՐԵՒՈՐ ԲԱՆԵՐԸ.

ԳԼՈՒԽ Ա.

ԳԼԽԱՒՈՐ ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

1. — *Աստուածաբանական առաքինութիւնները.*

Հ. Ի՞նչ է առաքինութիւնը:

Պ. Առաքինութիւնը հոգու մի ունակութիւն է, որով մէկը միտում, դիւրութիւն ու փոյթ է ունենում բարին ճանաչելու և գործելու:

Հ. Քանի՞ են գլխաւոր առաքինութիւնները:

Պ. Գերբնական գլխաւոր առաքինութիւններն եօթն են, երեքն աստուածաբանական ու չորսը՝ գլխաւոր:

Հ. Որո՞նք են աստուածաբանական առաքինութիւնները:

Պ. Աստուածաբանական առաքինութիւններն են՝ Հաւատք, Յոյս ու Սէր:

Հ. Ինչո՞ւ համար Հաւատքը, Յոյսն ու Սէրն աստուածաբանական առաքինութիւններ են կոչւում:

Պ. Նրա համար Հաւատքը, Յոյսն ու Սէրն աստուածաբանական առաքինութիւններ են կոչւում, որովհետև նրանց անմիջական ու գլխաւոր առարկան՝ Աստուած է, և ինքն է նրանց հեղում մեր հոգու մէջ:

Հ. Աստուած ի՞նչպէս աստուածաբանական առաքինութիւնների անմիջական առարկան է:

Պ. Աստուած աստուածաբանական առաքինութիւնների անմիջական ա-

ուրկան է, որովհետև Հաւատքով հաւատում ենք Աստծուն և այն ամեն բաներին, որ Ինքն է յայտնել, Յուսով յոյս ունինք թէ կը ժառանգենք Աստծուն ու Սիրով սիրում ենք Նրան ու Նրա սիրոյն համար՝ մեզ ու մեր ընկերոջը:

Հ. Աստուած ե՞րբ է հեղում մեր հոգու մէջ աստուածաբանական առաքինութիւնները:

Պ. Աստուած Իւր բարութեամբն այն ժամանակ է հեղում աստուածաբանական առաքինութիւնները մեր հոգու մէջ, երբ տալիս է մեզ Իւր սրբարար շնորհքը, դրա համար երբ Մկրտութիւնն ընդունեցանք՝ այս առաքինութիւնների հետ միասին Ս. Հոգու պարգևներով զարդարուեցանք:

Հ. Փրկուելու համար հարկաւո՞ր է Մկրտութեան մէջ աստուածաբանական առաքինութիւններն ընդունած լինել:

Պ. Նրանք՝ որոնց բանաւորութիւնը բացուել՝է, բաւական չէ Մկրտութեան մէջ աստուածաբանական առաքինութիւններն ընդունած լինելն, այլ պէտք է նաև յաճախ նրանց ներգործութիւններն անեն:

Հ. Ե՞րբ ենք պարտաւոր Հաւատքի, Յուսոյ ու Սիրոյ ներգործութիւններն անելու:

Պ. Այն ժամանակ պարտաւոր ենք Հաւատքի, Յուսոյ Սիրոյ ներգործութիւններն անելու, 1. երբ մեր բանաւորութիւնը բացուի, 2. սուէպ կեանքի ընթացքում և 3. մահուան վտանգում:

2. — Հաւատքը.

Հ. Ի՞նչ է Հաւատքը:

Պ. Հաւատքն Աստծուց մեր հոգու մէջ հեղուած մի գերբնական առաքինութիւն է, որով մենք Աստծու հե-

ղինակութեան վրայ հիմնւելով՝ հաւատում ենք թէ ճշմարիտ է այն ամէն ինչ, որ Ինքն յայտնել է և Եկեղեցու միջոցով առաջարկում մեզ հաւատալու։

Հ. Ի՞նչպէս ենք ճանաչում Աստուծոյ յայտնած ճշմարտութիւնները։

Պ. Մենք Աստծուց յայտնուած ճշմարտութիւնները ճանաչում ենք անսխալ ու Ս. Եկեղեցու միջոցով, այսինքն՝ Ս. Քահանայապետի՝ որ Ս. Պետրոսի յաջորդն է և Եպիսկոպոսների միջոցով, որոնք այն Առաքեալների յաջորդներն են, որ Յիսուս Քրիստոսից սովորեցին։

Հ. Արդեօք մենք ապահո՞վ ենք Ս. Եկեղեցու մեզի սովորեցրած վարդապետութեան վրայ։

Պ. Այո, մենք ամենաապահով ենք Ս. Եկեղեցու՝ մեզի սովորեցրած վարդապետութեան վրայ, որովհետև Յիսուս Քրիստոս խոստացել է թէ Եկեղեցին ամենևին չը պիտի սըխալի։

Հ. Հաւատքը ո՞ր մեղքով է կորսւում։

Պ. Հաւատքը կորսւում է՝ մեզի հաւատալու առաջարկւած մի ճշմարտութիւն ուրանալով, կամ Նրա վրայ կամովին կասկածելով։

Հ. Ի՞նչպէս է ձեռք բերւում կորսւած Հաւատքը։

Պ. Կորսւած Հաւատքը ձեռք է բերւում գործած մեղքի վրայ զղջալով և Ս. Եկեղեցու դաւանած ճշմարտութիւններին վերստին հաւատք ընծայելով։

3. — *Խորհուրդները.*

Հ. Մենք կարո՞ղ ենք Հաւատքի ամեն ճշմարտութիւնները հասկանալ։

Պ. Ո՛չ, մենք չենք կարող Հա-

ւատքի ամեն ճշմարտութիւնները հասկանալ, որովհետև այս ճշմարտութիւններից մի քանիսը *խորհուրդներ* են։

Հ. Ի՞նչեր են խորհուրդները։

Պ. Խորհուրդները մեր խելքի կարողութիւնից վեր ճշմարտութիւններ են, որոնց պարտաւոր ենք հաւատալու, թէպէտև չը կարողանանք հասկանալ։

Հ. Ինչո՞ւ համար ենք պարտաւոր խորհրդներին հաւատալու։

Պ. Նրա համար ենք պարտաւոր խորհրդներին հաւատալու, որովհետև Աստուած է նրանց յայնել մեզ, Որն անհուն Ճշմարտութիւն ու Բարութիւն լինելով՝ չի կարող ո՛չ խաբիլ և ո՛չ էլ խաբել մեզ։

Հ. Խորհուրդները բանականութեան հակառակ բաներ են՞

Պ. Խորհուրդները բանականութիւնից վեր՝ և ո՛չ թէ հակառակ բաներ են, մանաւանդ թէ նոյն իսկ բանականու-

թիւնը համոզեցնում է մեզ խորհուրդներն ընդունելու։

Հ. Ինչո՞ւ համար խորհուրդները չեն կարող բանականութեան հակառակ լինել։

Պ. Նրա համար խորհուրդները չեն կարող բանականութեան հակառակ լինել, որովհետև միևնոյն Աստըւած է մեզի բանականութեան լոյսը տւել ու խորհուրդներն յայտնել, Որը չի կարող Ինքն Իրան հակառակել։

4. — Սուրբ Գիրքը.

Հ. Ո՞ւր են պարունակւում Աստծու յայտնած ճշմարտութիւնները։

Պ. Աստծու յայտնած ճշմարտութիւնները պարունակւում են Ս. Գրքի և Աւանդութեան մէջ։

Հ. Ի՞նչ է Ս. Գիրքը։

Պ. Ս. Գիրքը՝ Մարգարէներից, սրբազան Գրողներից, Առաքեալներից և Աւետարանիչներից Ս. Հոգու ներշնչմամբը գրուած գրքերի մի հաւաքածու է, որոնք իբրև ներշնչուած ընդունել են Եկեղեցուց։

Հ. Ս. Գիրքը քանի՞ մասերի է բաժանւում։

Պ. Ս. Գիրքն երկու մասերի է բաժանւում՝ Հին ու Նոր Կտակարանների։

Հ. Ի՞նչ է պարունակում Հին Կտակարանը։

Պ. Հին Կտակարանը պարունակում է այն ներշնչուած գրքերը, որոնք Յիսուս Քրիստոսի գալստից առաջ են գրուել։

Հ. Ի՞նչ է պարունակում Նոր Կտակարանը։

Պ. Նոր Կտակարանը պարունակում է այն ներշնչուած գրքերը, որոնք

Յիսուս Քրիստոսի գալստից յետոյ են գրուել։

Հ. Ս. Գիրքը հասարակօրէն ի՞նչպէս է կոչւում։

Պ. Ս. Գիրքը հասարակօրէն կոչւում է Աստուածաշունչ՝ որը սրբազան գրքերի մի հաւաքածու, բոլոր գրքերից գերազանցագոյն և Աստծուց ներշնչուած գիրքն է։

Հ. Ինչո՞ւ Ս. գիրքը գերազանցագոյն գիրք է կոչւում։

Պ. Ս. Գիրքը գերազանցագոյն գիրք է կոչւում՝ թէ իւր պարունակած նիւթի գերազանցութեան և թէ իւր Հեղինակի պատճառով։

Հ. Կարելի՞ է, որ Ս. գրքում մի սխալ բան գտնուի։

Պ. Ո՛չ, կարելի չէ, որ Ս. գրքում մի սխալ բան գտնուի, որովհետև ներշնչուած լինելով նրա ամեն մի մասի հեղինակն Աստուած է։ Բայց այս

չի արգելում որ օրինակների ու թարգմանութեանց մէջ՝ օրինակողներից կամ թարգմանողներից մի քանի սխալներ սպրդած չը լինին։ Բայց Կաթողիկէ Եկեղեցուց քննուած ու վաւերացուած տպագրութիւնների մէջ կարելի չէ, որ հաւատքի ու բարքի վերաբերեալ բաների դէմ վրիպակ լինի։

Հ. Ս. գրքի ընթերցանութիւնը հարկաւո՞ր է բոլոր քրիստոնեաներին։

Պ. Ո՛չ, Ս. Գրքի ընթերցանութիւնը հարկաւոր չէ բոլոր քրիստոնեաներին, քանի որ Եկեղեցին սովորեցնում է նրանց, բայց շատ օգտակար և ամենին էլ յանձնարարուած բան է։

Հ. Թոյլ տրուած է՞ աշխարհիկ լեզուով թարգմանուած որեւէ Ս. Գիրք կարդալը։

Պ. Թոյլ տրուած է աշխարհիկ լեզուով թարգմանուած այն Ս. Գիրքը

կարդալ, որի հաւատարմութիւնը ծանօթ է Եկեղեցուն, և որը ճոխացել է նոյն Եկեղեցուց վաւերացուած բացատրութիւններով։

Հ. Ինչո՞ւ համար Ս. գրքի միայն այն թարգմանութիւնները կարելի է կարդալ, որոնք Եկեղեցուց են վաւերացուել։

Պ. Նրա համար Ս. Գրքի միայն այն թարգմանութիւնները կարելի է կարդալ, որոնք Եկեղեցուց են վաւերացուել, որովհետև միայն ինքն է Աստուածաշնչի հարազատ պահապանը։

Հ. Ո՞ւմ միջոցով ենք կարող Ս. Գրքի ճշմարիտ իմաստը ճանաչել։

Պ. Միայն Եկեղեցու միջոցով ենք կարող Ս. Գրքի ճշմարիտ իմաստը ճանաչել, որովհետև միայն Եկեղեցին չի կարող սխալիլ նրան մեկնելու ժամանակ։

Հ. Ի՞նչ պէտք է անէ այն քրիստոնեան, երբ մի բողոքական համբո-

ղութականների գործածածին նման մի Ս. Գիրք է առնում:

Պ. Այն քրիստոնեան, որին մի բողոքական կամ բողոքականների գործակալը մի Ս. Գիրք է նւիրում, պէտք է սոսկումով բաց նետէ նրան, որովհետև Եկեղեցուց արգելւած է. իսկ եթէ առանց զգուշանալու է ընդունած, պէտք է կրակի մէջ ձգէ, կամ իւր ժողովրդապետին յանձնէ:

Հ. Ինչո՞ւ համար է Եկեղեցին բողոքականների Ս. Գրքերն արգելում:

Պ. Նրա համար է Եկեղեցին բողոքականների Ս. Գրքերն արգելում, որովհետև կամ այլայլած են, կամ մոլորութիւններ պարունակում և կամ էլ վաւերացած չը լինելով ու մթին իմաստները բացատրող ծանօթութիւններ չունենալով, կարող են Հաւատացեալներին վնաս հասցնել: Դրա համար Եկեղեցին արգելում չէ նաև Ս. Գրքի

այն թարգմանութիւնները, որ արդէն իրանից վաւերացած լինելով բայց վերատպած են առանց վաւերացած ծանօթութիւնների:

5. — *Աւանդութիւնը*

Հ. Ասա ինձ, ի՞նչ է աւանդութիւնը:

Պ. Աւանդութիւնն Աստծու անգիր խօսքն է, որը կենդանի ձայնով Յիսուս Քրիստոսից և Առաքեալներից աւանդւելով դարից դար Եկեղեցու միջոցով առանց փոփոխութեան հասել է մինչև մեզ:

Հ. Ո՞ւր են պարունակւում Աւանդութեան հրահանգները:

Պ. Աւանդութեան հրահանգները պարունակւում են գլխաւորաբար ժողովների տւած վճիռների, Ս. Հայրերի

գրուածների, Ս. Գահի արձանագրութեանց, սրբազան Արարողութեան խօսքերի և օրէնքների մէջ։

Հ. *Ի՞նչ համարմունք պէտք է ունենանք Ս. Աւանդութեան վրայ։*

Պ. Պէտք է նոյն համարմունքն ունենանք Ս. Աւանդութեան վրայ, որն ունինք Ս. Գրքի մէջ պարունակուած Աստծու խօսքի վրայ։

6. — Յոյս

Հ. *Ի՞նչ է յոյսը։*

Պ. Յոյսն Աստծուց մեր հոգու մէջ հեղուած մի գերբնական առաքինութիւն է, որով փափագում և ակնկալում ենք յաւիտենական կեանքը, որ Աստըւած խոստացել է Իրան ծառայողներին, ու Նրան ձեռք բերելու հարկաւոր եղած շնորհքները։

Հ. *Ի՞նչու համար ենք պարտաւոր*

Աստծուց արքայութիւնն ու նրան ձեռք բերելու շնորհքները յուսալու։

Պ. Նրա համար ենք պարտաւոր Աստծուց արքայութիւնն ու նրան ձեռք բերելու հարկաւոր եղած շնորհքները յուսալու, որովհետև ամենագութըն Աստուած՝ մեր Տէր Յիսուս Քըրիստոսի արդիւնքների համար, խոստացել է տալու նրան, որ եռանդով Իրան ծառայէ, և ինքն ամենահաւատարիմ և ամենակարող լինելով՝ միշտ պահում է իւր խոստումը։

Հ. *Որո՞նք են արքայութիւնը ձեռք բերելու հարկաւոր եղած պայմանները։*

Պ. Արքայութիւնը ձեռք բերելու հարկաւոր եղած պայմաններն են՝ Աստըծու շնորհքը, բարեգործութեանց գործադրութիւնը, և մինչև ց՚մահ Նրա սուրբ սիրոյն մէջ յարատևելը։

Հ. *Ի՞նչպէս է կորսւում Յոյսը։*

Պ. Յոյսը կորսւում է՝ ամեն ան-

գամ որ մէկը կորցնում է հաւատքը·
կորսւում է նաև յուսահատութեան ու
յանդգնութեան մեղքովը։

Հ. Ի՞նչպէս է ձեռք բերւում կորսւած Յոյսը։

Պ. Կորսւած Յոյսը դարձեալ ձեռք
է բերւում գործած մեղքի վրայ զղջալով, վերստին իր վստահութիւնը աստւածային բարութեան վրայ դնելով։

7. — Սէրը.

Հ. Ի՞նչ է Սէրը։

Պ. Սէրն Աստուծոյ մեր հոգու
մէջ հեղւած մի գերբնական առաքինութիւն է, որով Աստծուն ամէն բանից վեր ենք սիրում՝ Իրա համար, ու
մեր ընկերոջը՝ մեր անձի պէս; Աստծու սիրոյն համար։

Հ. Ի՞նչու համար ենք պարտաւոր

Աստծուն սիրելու։

Պ. Նրա համար ենք պարտաւոր Աստծուն սիրելու, որովհետև ինքն անհուն բարի է ու կատարեալ, բացի սրանից Ինքն է հրամայում մեզ այս բանը, և որովհետև անչափ բարիքներ ենք ընդունում Իրանից։

Հ. Ի՞նչպէս պէտք է Աստծուն սիրել։

Պ. Աստծուն պէտք է սիրել, ամէն բանից վեր, բոլոր սրտով, մտքով, հոգւով ու կարողութեամբ։

Հ. Ի՞նչ ասել է Աստծուն ամէն բանից վեր սիրելը։

Պ. Աստծուն ամէն բանից վեր սիրելն ասել է՝ թէ պէտք է Նրան ամէն արարածներից վեր դասել, նաև նրանցից՝ որ ամենասիրելի են ու կատարեալ, և պատրաստ լինել նաև ամէն բան կորցնելու, քան թէ Նրան վշտացընելու և սիրելուց յետ կենալու։

Հ. Ի՞նչ ասել է Աստուծոյ բոլոր սրտով սիրելը։

Պ. Աստուծուն բոլոր սրտով սիրելն ասել է՝ մեր բոլոր զգացմունքներն իրան նուիրել։

Հ. Ի՞նչ ասել է Աստուծոյ բոլոր մտքով սիրելը։

Պ. Աստուծուն բոլոր մտքով սիրելն ասել է՝ Նրան ուղղել մեր բոլոր մտածմունքները։

Հ. Ի՞նչ ասել է Աստուծոյ բոլոր հոգւով սիրելը։

Պ. Աստուծուն բոլոր հոգւով սիրելն ասել է՝ Նրան նուիրել մեր հոգու բոլոր կարողութիւնների գործառնութիւնը։

Հ. Ի՞նչ ասել է Աստուծոյ մեր բոլոր կարողութեամբ սիրելը։

Պ. Աստուծուն բոլոր կարողութեամբ սիրելն ասել է՝ ջանալ Նրա սիրոյն մէջ միշտ աւելի առաջանալ, այն-

պէս որ բոլոր մեր գործողութիւնների նպատակն ու վախճանն իւր սէրն և իրան հաճոյք պատճառելը լինի։

Հ. Ինչո՞ւ համար ենք պարտաւոր մեր ընկերոջը սիրելու։

Պ. Նրա համար ենք պարտաւոր մեր ընկերոջը սիրելու Աստուծու սիրոյն համար, որովհետև ինքն է հրամայում մեզ այդ բանը, և որովհետև իւրաքանչիւր մարդ Նրա պատկերն է կրում։

Հ. Մեր թշնամիներին էլ պարտաւո՞ր ենք սիրելու։

Պ. Այո, մեր թշնամիներին էլ պարտաւոր ենք սիրելու, որովհետև նրանք էլ մեր ընկերներն են, և թէ Յիսուս Քրիստոս մասնաւոր կերպով պատուիրել է մեզ այդ։

Հ. Ի՞նչ ասել է ընկերոջն իւր անձի պէս սիրելը։

Պ. Ընկերոջն իւր անձի պէս սիրելն ասել է՝ ոչ միայն նրա չարիքը չը բաղ-

ձալ ու Նրան չարիք չը հասցնել, այլ նաև կարելի եղածին չափ այն բարիքը բաղձալ և անել, որ պարտաւոր ենք բաղձալու մեզ։

Հ. *Ե՞րբ է որ մենք մեզ սիրում ենք ինչպէս որ պէտք է։*

Պ. Այն ժամանակ է, որ մենք մեզ սիրում ենք ինչպէս որ պէտք է, երբ ջանում ենք Աստուծուն ծառայել, և Նրա վրայ դնել մեր երջանկութիւնը։

Հ. *Ի՞նչպէս է կորսւում Սէրը։*

Պ. Սէրը կորսւում է որևէ մահուչափ մեղքով։

Հ. *Ի՞նչպէս է ձեռք բերւում Սէրը։*

Հ. Սէրը ձեռք է բերւում Աստծու Սիրոյ ներգործութիւններն անելով, զղջալով ու պէտք եղածին պէս խոստովանելով։

8. — Գլխաւոր կոչւած առաքինութիւնները.

Հ. *Որո՞նք են գլխաւոր կոչւած առաքինութիւնները։*

Պ. Գլխաւոր կոչւած առաքինութիւններն են՝ Խոհեմութիւն, Արդարութիւն, Արիութիւն ու Ժուժկալութիւն։

Հ. *Ինչո՞ւ համար Խոհեմութիւնն, Արդարութիւնն, Արիութիւնն ու Ժուժկալութիւնը գլխաւոր առաքինութիւններ են կոչւում։*

Պ. Նրա համար Խոհեմութիւնն, Արդարութիւնն, Արիութիւնն ու Ժուժկալութիւնը գլխաւոր առաքինութիւններ են կոչւում, որովհետև բարոյական առաքինութիւնների արմատն ու հիմքն են։

Հ. *Ի՞նչ է Խոհեմութիւնը։*

Պ. Խոհեմութիւնն այն առաքինութիւնն է, որ իւրաքանչիւր գործողութիւնն իւր յարմար վախճանին է

ուղղում, և պատշաճ միջոցների ձեռք զարնում, որ գործը լաւ և Աստծուն հաճելի կերպով կատարուի։

Հ. Ի՞նչ է Արդարութիւնը։

Պ. Արդարութիւնն այն առաքինութիւնն է, որով տալիս ենք իւրաքանչիւրին՝ ինչ որ իւր իրաւունքն է։

Հ. Ի՞նչ է Արիութիւնը։

Պ. Արիութիւնն այն առաքինութիւնն է, որ քաջալերում է մեզ և ոչ մի վտանգից՝ մինչև անգամ մահուանից էլ չը վախենալու Աստծու ծառայութեան համար։

Հ. Ի՞նչ է Ժուժկալութիւնը։

Պ. Ժուժկալութիւնն այն առաքինութիւնն է, որով սանձահարում ենք զգայական հաճոյքների անկարգ բաղձանքներն, ու չափաւորութեամբ գործածում ժամանակաւոր բարիքները։

ԳԼՈՒԽ Բ.

ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ՊԱՐԳԵՒՆԵՐԸ

Հ. Քանի են որո՞նք են Ս. Հոգու պարգևները։

Պ. Ս. Հոգու պարգևները եօթն են՝ 1. Իմաստութիւն, 2. Հանճար, 3. Խորհուրդ 4. Զօրութիւն, 5. Գիտութիւն, 6 Աստուածպաշտութիւն և 7. Աստծու երկիւղ։

Հ. Ի՞նչ բանի են ծառայում Ս. Հոգու պարգևները։

Պ. Ս. Հոգու պարգևները ծառայում են՝ մեզ Հաւատքի, Յուսոյ ու Սիրոյ մէջ հաստատելու և մտադիր դարձնելու, որպէս զի այն առաքինութիւնների ներգործութիւններն անենք, որոնք հարկաւոր են քրիստոնէական կենաց կատարելութիւնը ձեռք բերելու համար։

Հ. Ի՞նչ է Իմաստութիւնը։

Պ. Իմաստութիւնը մի պարգև է, որով մեր միտքն երկրի անցաւոր բաներից վերացնելով՝ մտածում ենք երկընայինների՝ այսինքն՝ յաւիտենական ճշմարտութեան վրայ, որ Աստուած է. ու Նրա վրայ՝ Որ մեր գերագոյն Բարիքն է, դնում մեր հաճոյքն ու սէրը։

Հ. Ի՞նչ է Հանճարը։

Պ. Հանճարը մի պարգև է, որով դիւրանում է՝ որչափ որ կարելի է մահկանացու մարդուն, Հաւատքի ճշմարտութիւնների և աստուածային խորհրդների հասկացողութիւնը, որոնց չենք կարող հասկանալ մեր բնական խելքի լուսովը։

Հ. Ի՞նչ է Խորհուրդը։

Պ. Խորհուրդը մի պարգև է, որով մարդկային կեանքի տարակոյսների և անստուգութիւնների մէջ ճանաչում ենք այն, ինչ որ նպաստաւոր

է Աստծու փառքին ու մեր և ընկերոջ փրկութեանը։

Հ. Ի՞նչ է Զօրութիւնը

Պ. Զօրութիւնը մի պարգև է, որ սիրտ և արիութիւն է տալիս մեզ Աստծու և Եկեղեցու սուրբ օրէնքները պահելու, մեր թշնամիների յարուցած ամեն արգելքներին ու յարձակմունքներին յաղթելով։

Հ. Ի՞նչ է Գիտութիւնը։

Պ. Գիտութիւնը մի պարգև է, որով արարածների վրայ ուղիղ դատումըն ենք անում և ճանաչում նրանց լաւ գործածելու և վերջին վախճանին՝ որ Աստուած է, ուղղելու կերպը։

Հ. Ի՞նչ է Աստուածպաշտութիւնը։

Պ. Աստուածպաշտութիւնը մի պարգև է, որով յարգում ու սիրում ենք Աստծուն ու Սրբերին, և Աստծու սիրոյն համար գթած ու բարեացակամ սիրտ ունենում դէպի մեր ընկերը։

Հ. Ի՞նչ է Աստծու Երկիւղը։

Պ. Աստծու Երկիւղը մի պարգև է, որով յարգում ենք Աստծուն և վախենում չը լինի թէ Նրա աստուածային մեծվայելչութիւնը վշտացնենք, և հեռացնում է մեզ չարից՝ յորդորելով դէպի բարին։

ԳԼՈՒԽ Գ.

ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵՐԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

Հ. Քանի են ու որո՞նք են աւետարանական Երանութիւնները։

Պ. Աւետարանական Երանութիւններն ութ հետևեալներն են՝

1. Երանի՜ աղքատաց հոգւով, զի նոցա է արքայութիւն երկնից։

2. Երանի՜ հեզոց, զի նոքա ժառանգեսցեն զերկիր։

3. Երանի՜ սգաւորաց, զի նոքա մխիթարեսցին։

4. Երանի՜ որ քաղցեալ իցեն արդարութեան, զի նոքա յագեսցին։

5. Երանի՜ ողորմածաց, զի նոքա ողորմութիւն գտցեն։

6 Երանի՜ որ սուրբ են սրտիւք, զի նոքա զԱստուած տեսցեն։

7. Երանի՜ խաղաղարարաց, զի նոքա որդիք Աստուծոյ կոչեսցին։

8. Երանի՜ այնոցիկ, որ հալածեալ իցեն վասն արդարութեան, զի նոցա է արքայութիւն երկնից։

Հ. Ի՞նչու համար է Յիսուս Քրիստոս առաջարկել մեզ Երանութիւնները։

Պ. Նրա համար է Յիսուս Քրիստոս առաջարկել մեզ Երանութիւնները, որպէս զի ատեցնել տայ մեզ աշխարհիս սկզբմունքներն ու սիրեցնել և գործադրել՝ իւր Աւետարանի սկզբունքները։

Հ. Աշխարհն ո՞ւմ է երանի տալիս։

Պ. Աշխարհը նրանց է երանի տալիս, որ մեծ հարստութեան ու պատւի տէր լինելով՝ ուրախութեամբ են ապրում, և բնաւ վիշտ ու տառապանք քաշելու առիթ չունին։

Հ. Ո՞վքեր են հոգւով աղքատները, որոնց Յիսուս Քրիստոս երանի է տալիս։

Պ. Հոգւով աղքատները՝ ըստ աւետարանին, նրանք են որ իրանց սիրտը չեն կապում այս աշխարհիս հարստութիւններին, լաւ են գործածում՝ եթէ արդէն ունին իսկ, եթէ նրանցից զուրկ են, անձկութեամբ նրանց ետևից չեն ընկնում, և Աստծու կամքի հետ համակերպելով, տանում նրանց կորուստը, եթէ իրանց ձեռքից յափշտակւելու լինին:

Հ. Ո՞վքեր են հեզերը։

Պ. Հեզերը նրանք են, որ քաղցրու-

թեամբ են վարւում ընկերոջ հետ, համբերութեամբ տանում նրա պակասութիւններն ու արած անիրաւութիւններն, առանց գանգատի, ոխապահութեան ու վրէժխնդրութեան։

Հ. Որո՞նք են նրանք, որ լաց լինելով հանդերձ, երանելի են կոչւում։

Պ. Նրանք՝ որ լաց լինելով հանդերձ, երանելի են կոչւում, նրանք են որ Աստծու կամքին հետ համակերպւելով՝ համբերում են վշտերին, վշտագնում աշխարհիս մէջ գործւած մեղքերի, չարութիւնների, ու գայթակղութիւնների վրայ և արքայութիւնից հեռու լինելուն ու նրան կորցնելու վտանգի մէջ գտնւելուն համար։

Հ. Որո՞նք են արդարութեան քաղց ու ծարաւ ունեցողները։

Պ. Արդարութեան քաղց ու ծարաւ ունեցողները նրանք են, որ եռանդով փափագում են Աստծու չը-

նորհքի ու բարի և առաքինի գործերի մէջ միշտ աւելի ևս առաջանալու։

Հ. Որո՞նք են ողորմածները։

Պ. Ողորմածները նրանք են, որ Աստծոյ և Աստծու սիրոյն համար սիրում են իրանց ընկերոջը, ցաւակցում նրանց թէ հոգևոր և թէ մարմնաւոր թշուառութիւնների համար և իրանց կարողութեան ու վիճակին համեմատ ջանանում նրանց օգնել։

Հ. Որո՞նք են սուրբ սիրտ ունեցողները։

Պ. Սուրբ սիրտ ունեցողները նրանք են, որ ոչ մի յօժարութիւն չունին դէպի մեղքը, նրանից հեռու են կենում, մասնաւորապէս զգուշանում ամեն տեսակ անմաքրութիւնից։

Հ. Որո՞նք են խաղաղարարները։

Պ. Խաղաղարարները նրանք են, որ խաղաղապահ են թէ ընկերոջ և թէ իրանց անձի հետ, ու ջանանում նաև

խաղաղութիւն հաստատել անմիաբանների մէջ։

Հ. Որո՞նք են արդարութեան սիրոյն համար հալածանք կրողները։

Պ. Արդարութեան սիրոյն համար հալածանք կրողները նրանք են, որ հաւատքի և Յիսուս Քրիստոսի օրէնքի համար համբերութեամբ տանում են հեղնութիւնները, յանդիմանութիւններն ու հալածանքները։

Հ. Ի՞նչ են նշանակում Յիսուս Քրիստոսից Երանութիւնների մէջ խոստացուած զանազան պարգևները։

Պ. Յիսուս Քրիստոսից Երանութիւնների մէջ խոստացուած զանազան պարգևներն այլևայլ անունների ներքոյ նշանակում են արքայութեան յաւիտենական փառքը։

Հ. Երանութիւններն արքայութեան միայն յաւիտենական փառք՞ն են հայթայթում մեզ։

Պ. Երանութիւնները ոչ միայն յաւիտենական փառքն են հայթայթում մեզ, այլ նաեւ միջոցներ են այս աշխարհում էլ կարելի եղածին չափ երջանիկ կեանք վարելու։

Հ. Նրանք որ Երանութիւններին են հետեւում, արդեն այս աշխարհումն էլ չե՞ն ընդունում մի վարձք։

Պ. Այո՛, անտարակոյս, նրանք որ Երանութիւններին են հետեւում, արդէն այս աշխարհումն էլ ընդունում են մի վարձք, որովհետեւ արդէն վայելում են մի ներքին խաղաղութիւն և անդորրութիւն, որը թէպէտեւ անկատար է, բայց և այնպէս յաւիտենական երջանկութեան սկիզբն է։

Հ. Կարո՞ղ են երջանիկ կոչուիլ նրանք, որ հետեւում են աշխարհիս սկզբունքներին։

Պ. Ո՛չ, երջանիկ չեն նրանք որ հետեւում են աշխարհիս սկզբունքներին, որովհետեւ չունին հոգու ճշմարիտ խաղաղութիւնն ու դատապարտուելու վտանգի մէջ են գտնւում։

ԳԼՈՒԽ Դ.

ՈՂՈՐՄՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԵՐԸ.

Հ. Որո՞նք են այն բարեգործութիւնները, որոնց վրայօք մասնաւոր համար պիտի պահանջուի մեզանից Դատաստանի օրը։

Պ. Այն բարեգործութիւնները, որոնց վրայօք մասնաւոր համար պիտի պահանջուի մեզանից Դատաստանի օրը, ողորմութեան գործերն են։

Հ. Ի՞նչ է ողորմութեան գործը։

Պ. Ողորմութեան գործն այն է, որով օգնում ենք մեր ընկերոջն՝ իւր հոգեւոր կամ մարմնաւոր կարօտու-

թիւնների մէջ։

Հ. Ո՞րոնք են ողորմութեան մարմնաւոր գործերը։

Պ. Ողորմութեան մարմնաւոր գործերն են՝

1. Սովածներին կերակրել։
2. Ծարաւներին խմացնել։
3. Մերկերին հագցնել։
4. Պանդխտներին իջեան տալ։
5. Հիւանդներին այցելել.
6. Բանդարկեալներին տեսութեան գնալ։
7. Մեռելներին թաղել։

Հ. Ո՞րոնք են ողորմութեան հոգեւոր գործերը։

Պ. Ողորմութեան հոգեւոր գործերն են։

1. Տարակուսեալներին խորհուրդ տալ։
2. Տգէտներին սովորեցնել։
3. Մեղաւորներին խրատել։

4. Վշտացեալներին մխիթարել։
5. Ընկերոջ յանցանքները ներել։
6. Համբերութեամբ տանել նեղութիւն պատճառող անձանց։
7. Կենդանիների ու մեռելների համար Աստծուն աղօթել։

ԳԼՈՒԽ Ե.

ՄԵՂՔԵՐՆ ՈՒ ՆՐԱՆՑ ԳԼԽԱՒՈՐ ՏԵՍԱԿՆԵՐԸ.

Հ. Քանի՞ տեսակ մեղք կայ։

Պ. Երկու տեսակ մեղք կայ՝ *սկզբնական ու ներգործական*։

Հ. Ո՞րն է սկզբնական մեղքը։

Պ. Սկզբնական մեղքն այն է, որով ծնւում ենք ամենքս էլ, և որն ըստանձնել ենք մեր նախածնող Ադամի անհնազանդութեան պատճառով։

Հ. Ի՞նչ վնասներ է պատճառել մեզ Ադամի մեղքը:

Պ. Ադամի մեղքի պատճառած վնասներն են՝ շնորհքից զրկուիլը, արքայութեան կորուստը, տգիտութիւնը, դէպի չարը միտումը, մահը և ուրիշ ամեն թշուառութիւնները։

Հ. Ի՞նչով է ջնջւում սկզբնական մեղքը։

Պ. Սկզբնական մեղքը ջնջւում է Սուրբ Մկրտութեամբ։

Հ. Ո՞րն է ներգործական մեղքը։

Պ. Ներգործական մեղքն այն է, որ մարդը՝ գործում է բանականութիւնը բացւելուց յետոյ իւր ազատ կամքով։

Հ. Քանի՞ տեսակ ներգործական մեղք կայ։

Պ. Երկու տեսակ ներգործական մեղք կայ՝ *մահացու ու ներելի։*

Հ. Ի՞նչ է մահացու մեղքը։

Պ. Մահուչափ մեղքն աստուածային օրէնքին անհնազանդիլն է, որով մէկը ծանրապէս պակասում է Աստծու, ընկերոջ և իւր անձի նկատմամբ ունեցած պարտքերի դէմ։

Հ. Ի՞նչու համար է մահացու կոչւում։

Պ. Նրա համար է մահուչափ կոչւում, որովհետև մեռցնում է հոգուն, զրկելով նրան սրբարար շնորհքից՝ որ նրա կեանքն է, ինչպէս որ հոգին մարմնի կեանքն է։

Հ. Մահացու մեղքն ի՞նչ վնասներ է հասցնում հոգուն։

Պ. Մահուչափ մեղքը 1. զրկում է հոգուն Աստծու շնորհքից ու բարեկամութիւնից. 2. կորցնել տալիս նրան արքայութիւնը. 3. զրկում շահած արդիւնքներից և անկարող դարձնում նորանոր արդիւնքներ վաստկելու, 4։ գերի դարձնում սատանային, 5. արժա-

նացնում դժոխքին և նաև այս կեանքէս պատիժներին։

Հ. Բացի նիւթի ծանրութիւնից՝ էլ ի՞նչ է պահանջւում, որ մի մեղք մահացու լինի։

Պ. Բացի նիւթի ծանրութիւնից՝ որպէս զի մի մեղք մահուչափ լինի, պահանջւում է նաև նոյն ծանրութեան վրայ լիուլի մտադրութիւն ունենալն ու մեղք գործելու կամքի կատարեալ հաւանութիւն տալը։

Հ. Ի՞նչ է ներելի մեղքը։

Պ. Ներելի մեղքն աստուածային օրէնքին մի թեթև անհնազանդութիւն է, որով մէկը թեթև կերպով պակասում է Աստծու, ընկերոջ և իւր անձի նկատմամբ ունեցած պարտքերի մէջ։

Հ. Ինչո՞ւ համար է ներելի կոչւում։

Պ. Որովհետև մահուչափ մեղքի բաղդատմամբը թեթև է, մեզ կորցնել չի

տալիս Աստծու շնորհքը և աւելի դիւրութեամբ է Աստծուց ներումն ընդունում։

Հ. Ուրեմն բանի տեղ դնելու չէ՞ ներելի մեղքը։

Պ. Շատ ծանր սխալ կը լինէր այդ, որովհետև ներելի մեղքը թէ վշտացնում է Աստծուն, և թէ մեծ վնասներ հասցնում հոգուն։

Հ. Ի՞նչ վնասներ է հասցնում ներելի մեղքը։

Պ. Ներելի մեղքը 1. տկարացնում ու պաղեցնում է մեզանում սիրոյ եռանդը, 2. մահուչափ մեղք գործելու տրամադրում և այս կամ միւս աշխարհում ժամանակաւոր մեծ պատիժներին արժանացնում մեզ։

ԳԼՈՒԽ Զ.

ԳԼԽԱՒՈՐ ԱԽՏԵՐԸ ԵՒ ՈՒՐԻՇ ԾԱՆՐ ՄԵՂՔԵՐԸ.

Հ. Ի՞նչ է ախտը։

Պ. Ախտը հոգու մի չար դրամադրութիւն է, որն յօժարեցնում է մարդուն բարուց փախչելու և չար գործելու, և որն առաջ է գալիս չար գործերի յաճախ կրկնելուց։

Հ. Ի՞նչ բանի մէջ է կայանում մեղքի եւ ախտի մէջ եղած տարբերութիւնը։

Պ. Նրա մէջ է կայանում մեղքի և ախտի մէջ եղած տարբերութիւնը, որ մեղքը մի անցողական գործ է, մինչդեռ ախտն այն սովորութիւնն է, որ մէկն ստացել է որևէ մեղքի մէջ ընկնելու։

Հ. Որո՞նք են գլխաւոր կոչուած ախտերը։

Պ. Գլխաւոր կոչուած ախտերն եօթ հետևեալներն են՝ 1. Հպարտութիւն, 2. Ագահութիւն, 3. Բղջախոհութիւն, 4. Բարկութիւն, 5. Որկրամոլութիւն, 6. Նախանձ, 7. Ծուլութիւն։

Հ. Մէկն ի՞նչպէս է կարող գլխաւոր ախտերն յաղթահարել։

Պ. Մէկը կարող է գլխաւոր ախտերն յաղթահարել նրանց դէմ եղող առաքինութիւնների գործադրութեամբ։ Այսպէս կարող է հպարտութիւնն յաղթել՝ խոնարհութեամբ, ագահութիւնն՝ առատաձեռնութեամբ, բղջախոհութիւնը՝ ողջախոհութեամբ, բարկութիւնը՝ համբերութեամբ, որկրամոլութիւնը՝ ժուժկալութեամբ, նախանձն՝ եղբայրական սիրով ու ծուլութիւնը՝ փութաջանութեամբ և Աստծուն եռանդեամբ

ծառայելով։

Հ. Այս ախտերն ինչո՞ւ համար են գլխաւոր կոչւում։

Պ. Այս ախտերը նրա համար են գլխաւոր կոչւում, որովհետև ուրիշ բազմաթիւ ախտերի և մեղքերի աղբիւրն ու պատճառն են։

Հ. Քանի՞ են Սուրբ Հոգու դէմ եղած մեղքերը։

Պ. Սուրբ Հոգու դէմ եղած մեղքերը վեց են՝ 1. փրկութիւնից յոյս կտրելն, 2. առանց արդիւնքի փրկելու յանդգնութիւնը, 3. ծանուցեալ ճշմարտութեան դէմ կենալը, 4. ուրիշի շնորհքի վրայ նախանձիլը, 5. մեղքերի վրայ յամառիլը, 6. վերջնական անզեղջութիւնը։

Հ. Ինչո՞ւ համար են ասում թէ այս մեղքերը մասնաւորապէս Ս. Հոգու դէմ են։

Պ. Նրա համար են ասում թէ

այս մեղքերը մասնաւորապէս Ս. Հոգու դէմ են, որովհետև սոսկ չարութեամբ են գործւում, որը Ս. Հոգուն ընծայւած բարութեան դէմ է։

Հ. Ո՞ր մեղքերն են, որոնք, կ'ասեն թէ, Աստծու առաջ վրէժխնդրութիւն են բողոքում։

Պ. Այն մեղքերը, որոնք, կ'ասեն թէ, Աստծու առաջ վրէժխնդրութիւն են բողոքում, հետևեալներն են՝ 1. կամաւոր մարդասպանութիւնը, 2. բնութեան դէմ անմաքրութեան մեղքը, 3. աղքատներին ճնշելը, 4. գործաւորներին՝ իրանց վարձից զրկելը։

Հ. Ինչո՞ւ համար են ասում թէ այս մեղքերն Աստծու առաջ վրէժխնդրութիւն են բողոքում։

Պ. Նրա համար են ասում թէ այս մեղքերն Աստծու առաջ վրէժխնդրութիւն են բողոքում, որովհետև Ս. Հոգին է ասում այդ բանը, և թէ այնչափ

ծանր ու բացայայտ է նրանց անօրէնութիւնը, որ գրգռում է Աստծու բարկութիւնը, որպէս զի ամենախիստ պատիժներով պատժէ նրանց։

ԳԼՈՒԽ Է.

ՄԱՐԴՈՒՍ ՎԵՐՋԻՆՔԸ ԵՒ ՄԵՂՔԻՑ ՀԵՌՈՒ ԿԵՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՕՒՐԻՑ ԳԼԽԱՒՈՐ ՄԻՋՈՑՆԵՐԸ.

Հ. *Ի՞նչ ես հասկանում մարդուս վերջինքն ասելով:*

Պ. Ս. Գրքի մէջ մարդուս *վերջինք* են կոչւում այն վերջին բաները, որոնք պիտի պատահին մարդուն։

Հ. *Քանի՞ են մարդուս վերջինքը։*

Պ. Մարդուս վերջինքը չորս են՝ Մահ, Դատաստան, Դժոխք և Արքայութիւն։

Հ. *Ինչո՞ւ համար ես ասում թէ*

սրանք մարդուս պատահելիք վերջին բաներն են։

Պ. Նրա համար եմ ասում թէ սրանք մարդուս պատահելիք վերջին բաներն են, որովհետև Մահն աշխարհիս մէջ մեզ պատահած բաների վերջինն է, Աստծու Դատաստանը՝ մեր դատաստանների վերջինը, Դժոխքը՝ մեղաւորների ունենալիք ծայրագոյն չարիքը և Արքայութիւնը՝ բարիների գերագոյն բարիքը։

Հ. *Ե՞րբ պէտք է մտածենք մեր վերջինքի վրայ։*

Պ. Լաւ է որ ամեն օր մտածենք մեր վերջինքի վրայ և մասնաւորապէս առաւօտն՝ արթնանալուց յետոյ աղօթքն անելիս, երեկոյեան՝ քնանալուց առաջ և ամեն անգամ որ փորձւենք մեղք գործելու, որովհետև այս մտածմունքը մեղքից հեռու կենալու ամենաազդու միջոցն է։

ԳԼՈՒԽ Ը.

ՔՐԻՍՏՈՆԵԱՅԻՆ ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԱԾ ԱՄԵՆՕՐԵԱՅ ԲԱՐԵՊԱՇՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆՆԵՐ.

Հ. *Ի՞նչ պէտք է անէ բարի քրիստոնեան առաւօտը՝ քնից զարթնելուն պէս։*

Պ. Բարի քրիստոնեան՝ առաւօտը՝ քնից զարթնելուն պէս, պէտք է ինքն իրան խաչակնքէ և իւր սիրտն Աստուծուն նուիրէ, այս կամ սրանց նման խօսքեր ասելով՝ *Աստուած իմ, Քեզ եմ նուիրում սիրտս ու հոգիս։*

Հ. *Ի՞նչ բանի վրայ պէտք է մտածել անկողնուց ելնելիս ու հագնուելիս։*

Պ. Անկողնուց ելնելիս ու հագնուելիս պէտք է մտածել Աստուծու ներկայութեան վրայ, թէ կարելի է, որ նոյն օրը մեր կեանքի վերջինը լինի և կարելի եղածին չափ պարկեշտութեամբ ելնել ու հագնուիլ։

Հ. *Ելնելուց ու հագնուելուց յետոյ, ի՞նչ պէտք է անէ բարի քրիստոնեան։*

Պ. Բարի քրիստոնեան ելնելուց ու հագնուելուց յետոյ, պէտք է ինքն իրան Աստուծու ներկայութեան առջևը դնէ, և եթէ կարելի է, մի ջերմեռանդ պատկերի առաջ չոքէ, ասելով՝ *երկրպագում եմ Քեզ Աստուած իմ, սիրում եմ Քեզ ու շնորհակալ լինում Քեզանից իմ ստեղծելուդ, քրիստոնեայ անելուդ եւ այս գիշեր պահելուդ համար։ Քեզ եմ ընծայում բոլոր գործերս ու խօսքերս, որ [illegible] պահես ինձ այսօր մեղքից եւ ազատես ամեն չարից. ամէն։* Եւ յետոյ սրտի ջերմեռանդութեամբ ասէ՝ Հայր մերը, Ողջոյն Քեզ Մարիամը, Հաւատամքը, Հաւատքի, Յուսոյ ու Սիրոյ ներգործութիւնները։

Հ. *Քրիստոնեան ի՞նչ բարեպաշտ կրթութիւններ պէտք էր կատարէր ամեն օր, եթէ կարողանար։*

Պ. Քրիստոնեան՝ եթէ կարողանար, պէտք էր ամեն օր 1. ջերմեռանդութեամբ Ս. Պատարագին ներկայ գտնուէր, 2. Ամենասուրբ Հաղորդութեանը մի այցելութիւն անէր, թէև կարճ ժամանակ լինի, 3. Ս. Վարդարանի երրորդ մասն ասէր։

Հ. *Ի՞նչ պէտք է անել գործ սկսելուց առաջ։*

Պ. Գործ սկսելուց առաջ պէտք է նրան Աստուծուն նուիրել, սրտանց ասելով՝ Տէ՛ր, *Քեզ եմ ընծայում աշխատանքս, օրհնի՛ր ինձ։*

Հ. *Ի՞նչ վախճանի համար պէտք է աշխատել։*

Պ. Աստուծու փառքի և Նրա կամքը կատարելու համար պէտք է աշխատել։

Հ. *Ի՞նչ պէտք է անել կերակուրը ուտելուց առաջ։*

Պ. Կերակուր ուտելուց առաջ

պէտք է ոտքի վրայ կանգնած ինքն իրան խաչակնքել և յետոյ ջերմեռանդութեամբ ասել՝ Տէ՛ր *Աստուած, օրհնի՛ր մեզ և այս կերակուրը, որ այժմ պիտի ուտենք, որպէս զի կարողանանք Քո ծառայութեան մէջ հաստատուն մնալ։*

Հ. *Կերակուր ուտելուց յետոյ ի՞նչ պէտք է անել։*

Պ. Կերակուր ուտելուց յետոյ պէտք է ինքն իրան խաչակնքելով, ասել՝ *Շնորհակալ եմ Քեզանից,* Տէ՛ր, *ինձ տուած կերակրի համար, արժանացրո՛ւ ինձ երկնային սեղանին մասնակից լինելու։*

Հ. *Ի՞նչ պէտք է անէ նա, որ մի փորձութիւն է կրում։*

Պ. Նա, որ մի փորձութիւն է կրում, պէտք է հաւատքով օգնութեան կանչէ Յիսուսի կամ Մարիամի Ս. Անունը, կամ ջերմագին սրա նման մի

սլաքական աղօթք անէ՝ *Տո՛ւր ինձ, Տէ՛ր, Քո շնորհքը, որ երբէք չը վշտացնեմ* Քեզ, կամ ինքն իրան խաչակնքէ, բայց զգուշանայ, որ արտաքին նշաններից ուրիշները չիմանան իր փորձուած լինելը։

Հ. Երբոր մէկն իմանում կամ տարակուսում է թէ մի մահուչափ մեղք է գործել, ի՞նչ պէտք է անէ։

Պ. Երբոր մէկն իմանում կամ տարակուսում է թէ մի մահուչափ մեղք է գործել, պէտք է իսկոյն կատարեալ զղջման ներգործութիւն անէ և ջանայ, որ կարելի եղածին չափ շուտ խոստովանուի։

Հ. Երբոր մէկն եկեղեցուց դուրս, լսում է հանդիսաւոր Պատարագի ժամանակ սրբագործութեան կամ Ս. Հաղորդութեամբ տրուած օրհնութեան նշանը, ի՞նչ պէտք է անէ։

Պ. Պէտք է գոնէ սրտումն երկրպագութեան ներգործութիւն անէ, ասելով՝ *օրհնեալ եւ գովեալ լինի միշտ ամենասուրբ եւ աստուածային Խորհուրդը։*

Հ. Առաւօտը, կէսօրին ու երեկոյեան ո՞ր աղօթքը պէտք է անել։

Պ. Բարի քրիստոնեան առաւօտը, կէսօրին ու երեկոյեան պէտք է *Հրեշտակ Տեառն* աղօթքն ասէ երեք *ողջոյն Քեզ Մարիամով* հանդերձ։

Հ. Երեկոյեան՝ պառկելուց առաջ, ի՞նչ պէտք է անել։

Պ. Երեկոյեան՝ պառկելուց առաջ, պէտք է, առաւօտեան պէս, ինքն իրան Աստուծու ներկայութեան առջևը դնել, ջերմեռանդութեամբ նոյն աղօթքներն ասել, խղճի կարճ քննութիւն անել և օրուան մէջ գործած մեղքերի վրայ Աստուծուց թողութիւն խնդրել։

Հ. Քուն մտնելուց առաջ, ի՞նչ կ՚անես։

Պ. Քուն լինելուց առաջ, ինքս ինձ կը խաչակնքեմ, կը մտածեմ թէ կարելի է, որ այս գիշեր մեռնիմ ու սիրտս Աստծուն կըտամ, ասելով՝ *Տէր եւ Աստուած իմ, Քեզ եմ տալիս սիրտս, Ամենասուրբ Երրորդութիւն, տուր ինձ լաւ ապրելու եւ մեռնելու շնորհքը, Յիսուս, Մարիամ, Յովսէփ, Ձեզ եմ յանձնում հոգիս։*

Հ. Բացի առաւօտեան, երեկոյեան աղօթքներից, էլ ի՞նչպէս կարելի է Աստծուն դիմել օրուան ընթացքում։

Պ. Օրուան ընթացքում կարելի է յաճախ Աստծուն] դիմել ուրիշ կարճ աղօթքներով, որոնք *սլաքական* են կոչւում։

Հ. Ասա մի քանի սլաքական աղօթքներ։

Պ. Տէր, օգնիր ինձ։ Տէր, Քո ամենասուրբ կամքը լինի։ Յիսուս իմ, ուզում եմ բոլորովին Քոնը լինել։ Յիսուս

իմ, ողորմութիւն։ Ո՛վ
Յիսուսիս սիրտ սիրելի,
այնպէս արա, որ սիրեմ Քեզ միշտ աւելի։

Հ. Օգտակա՞ր բան է օրուան ընթացքում շատ սլաքական աղօթքներ անելը։

Պ. Շատ օգտակար բան է օրուան ընթացքում շատ սլաքական աղօթքներ անելը և մէկը կարող է անել սրտի մէջ՝ առանց խօսքերն արտաբերելու, քայլելիս, աշխատելիս....։

Հ. Բարի քրիստոնեան՝ բացի սլաքական աղօթքներից, էլ ի՞նչ բանի պէտք է վարժեցնէ ինքն իրան։

Պ. Բարի քրիստոնեան՝ բացի սլաքական աղօթքներից, պէտք քրիստոնէական մահացուցման վարժեցնէ ինքն իրան։

Հ. Ի՞նչ ասել է՝ մահացուցում անելը։

Պ. Մահացուցում անելն ասել է՝

Աստծու սիրոյն համար թող տալ այն, ինչ որ հաճելի է մեզ, և յանձն առնել ինչ որ տհաճում է զգայարանքներին կամ անձնական սիրոյն։

Հ. Ի՞նչ պէտք է անել, երբ Ամենասուրբ Հաղորդութիւնը մի հիւանդի են տանում։

Գ. Երբ Ամենասուրբ Հաղորդութիւնը մի հիւանդի են տանում, պէտք է ջանալ՝ և եթէ կարելի է, համեստութեամբ ու ամփոփութեամբ ընկերակցել Նրան, իսկ եթէ ոչ, պէտք է երկրպագութեան ներգործութիւն անել, ասելով՝ *մխիթարիր, Տէ՛ր, այս հիւանդին, շնորհք տուր նրան, որ Քո ամենասուրբ կամքի հետ համակերպի ու փրկութեան հասնի։*

Հ. Ի՞նչ կ'անես եթէ մէկի հոգեվարքի մէջ լինելը իմանաս։

Գ. Երբոր մէկի հոգեվարքի մէջ լինելն իմանամ, եթէ կարողանամ եկեղեցի կ'երթամ, նրա համար աղօթելու, իսկ եթէ ոչ, Աստծուն կը յանձնեմ նրա հոգին, մտածելով թէ ես էլ քիչ ժամանակից յետոյ նոյն վիճակի մէջ պիտի գտնուիմ։

Հ. Ի՞նչ կ'անես երբոր մէկի մահուան լուրն առնես։

Գ. Երբոր մէկի մահուան լուրն առնեմ, կը ջանամ մեռելի հոգու համար *ննջեցելոց* կամ *հանգիստ յաւիտենական* աղօթքներն ասել, ու մահուան վրայ կը մտածեմ։

ՑԱՆԿ

Վաւերացում . . . .

Առաւօտեան աղօթք 7

Երեկոյեան աղօթք 19

Պատրաստութիւն խոստովանութեան 28

Խոստովանութիւնից յետոյ 40

Համառօտ պատրաստութիւն Ս. Հաղորդութեան 41

Համառօտ շնորհակալութիւն Ս. Հաղորդութիւնից յետոյ 43

ԸՆԴԱՐՁԱԿ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԴԱՍ

Քրիստոնէական վարդապետութիւնը և իր գլխաւոր մասերը 47

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ԱՌԱՔԵԱԼՆԵՐԻ ՀԱՆԳԱՆԱԿԸ ԿԱՄ ԸՍՏ ՍՈՎՈՐՈՒԹԵԱՆ "ՀԱՒԱՏԱՄՔԸ"

Գլ. Ա.— Հաւատամքն ընդհանուր կերպով նկատուած 53

Գլ. Բ.— Հանգանակի առաջին մասը 57

1. — Հայրն Աստուած և արարչագործութիւնը 57
2. — Հրեշտակները 62
3. — Մարդը 67
Գլ. Գ. — Հանգանակի երկրորդ մասը 76
Գլ. Դ. — Հանգանակի երրորդ մասը 83
Գլ. Ե. — Հանգանակի չորրորդ մասը 87
Գլ. Զ. — Հանգանակի հինգերորդ մասը 95
Գլ. Է. — Հանգանակի վեցերորդ մասը 97
Գլ. Ը. — Հանգանակի եօթներորդ մասը 100
Գլ. Թ. — Հանգանակի ութերորդ մասը 104
Գլ. Ժ. — Հանգանակի իններորդ մասը 109
1. — Եկեղեցին ընդհանուր կերպով նկատուած 109

2. — Եկեղեցին մասնաւոր կերպով նկատուած 112
3. — Ուսուցանող և Ուսանող Եկեղեցին 125
4. — Ս. Քահանայապետն ու Եպիսկոպոսները 129
5. — Սրբերի հաղորդութիւնը 139
6. — Եկեղեցուց դուրս գտնուողները 144
Գլ. ԺԱ. — Հանգանակի տասներորդ մասը 148
Գլ. ԺԲ. — Հանգանակի տասնումէկերորդ մասը 150
Գլ. ԺԳ. — Հանգանակի տասներկուերորդ մասը 153

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ԱՂՕԹՔԸ

Գլ. Ա. — Աղօթքն ընդհանուր կերպով նկատուած 157
Գլ. Բ. — Տէրունական աղօթքը . 168
1. — Տէրունական աղօթքն ընդհանուր կերպով նկատուած 168

2. — Առաջին խնդրուածը . . 172
3. — Երկրորդ խնդրուածը . . 174
4. — Երրորդ խնդրուածը . . 176
5. — Չորրորդ խնդրուածը . . 178
6. — Հինգերորդ խնդրուածը. 182
7. — Վեցերորդ խնդրուածը . 183
8. — Եօթներորդ խնդրուածը. 185
Գլ. Գ. — Ողջոյն քեզ Մարիամը. 188
Գլ. Դ. — Սրբերին օգնութեան կանչելը 194

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ
ԱՍՏԾՈՒ ԵՒ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՒԻՐԱՆՆԵՐԸ

Գլ. Ա. — Աստծու պատուիրաններն ընդհանուր կերպով նկատուած 196
Գլ. Բ. — Աստծուն վերաբերեալ պատուիրանները 200
1. — Առաջին պատուիրանը . 200
2. — Երկրորդ պատուիրանը . 209
3. — Երրորդ պատուիրանը . 215
Գլ. Գ. — Ընկերոջ վերաբերեալ պատուիրանները 219

1. — Չորրորդ պատուիրանը . 219
2. — Հինգերորդ պատուիրանը 225
3. — Վեցերորդ և իններորդ պատուիրանները 231
4. — Եօթներորդ պատուիրանը 234
5. — Ութերորդ պատուիրանը . 241
6. — Տասներորդ պատուիրանը 246
Գլ. Դ. — Եկեղեցու պատուիրանները 248
1. — Եկեղեցու պատուիրաններն ընդհանուր կերպով նկատուած . . 248
2. — Եկեղեցու առաջին պատուիրանը 251
3. — Եկեղեցու երկրորդ պատուիրանը 254
4. — Եկեղեցու երրորդ պատուիրանը 257
5. — Եկեղեցու չորրորդ պատուիրանը 261
6. — Եկեղեցու հինգերորդ պատուիրանը 262
Գլ. Ե. — Իւրաքանչիւր վիճակին յա-

տուկ պարտքերը և աւետարանական խրատները . . . 263

1. — Իւրաքանչիւր վիճակին յատուկ պարտքերը . . . 263

2. — Աւետարանական խրատները . . . 266

ՄԱՍՆ ՉՈՐՐՈՐԴ

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ

Գլ. Ա. — Խորհուրդներն ընդհանուր կերպով նկատուած . . . 268

1. — Խորհրդների բնութիւնը 268

2. — Խորհրդների գլխաւոր արգասիքը՝ որ շնորհքն է . . . 271

3. — Մի քանի խորհրդների դրոշմած կնիքը . . . 278

Գլ. Բ. — Մկրտութիւնը . . . 280

1. — Մկրտութեան բնութիւնն ու արգասիքները . . . 280

2. — Մկրտութեան պաշտօնեան . . . 281

3. — Մկրտութեան արարողութիւնն ու չափահասներից՝ մկրտուելու

համար պահանջուած պատրաստութիւնները . . . 283

4. — Մկրտութեան հարկաւորութիւնն ու մկրտուածների պարտքերը 287

5. — Անունն ու կնքահայրերը 289

Գլ. Գ. — Դրոշմը . . . 291

Գլ. Դ. — Ամենասուրբ Հաղորդութիւնը . . . 299

1. — Այս խորհրդի էութիւնն ու նոյնի մէջ Յիսուս Քրիստոսի իսկական ներկայութիւնը . . . 299

2. — Ս. Հաղորդութեան հաստատուիլը և արգասիքները . . . 308

3. — Լաւ հաղորդուելու համար պահանջուած պատրաստութիւնները . 311

4. — Հաղորդուելու կերպը . . 317

5. — Հաղորդուելու պարտաւորութիւնը . . . 319

Գլ. Ե. — Պատարագի Ս. Զոհը . 321

1. — Պատարագի Ս. Զոհի էութիւնը, հաստատուիլն ու վախճանները 321

2. — Ս. Պատարագին ներկայ գըտ-

նելու կերպը 328
Գլ. Զ. — Ապաշխարութեան խորհուրդը 332
1. — Ապաշխարութեան խորհուրդըն ընդհանուր կերպով նկատուած 332
2. — Ապաշխարութեան խորհրդի արգասիքները, հարկաւորութիւնն ու նըրան լաւ ընդունելու համար պահանջուած պատրաստութիւնները 339
3. — Խղճի քննութիւնը . . . 342
4. — Զղջումը 345
5. — Առաջադրութիւնը . . . 356
6. — Մեղքերի՝ խոստովանահօրն անելու ամբաստանութիւնը . . . 360
7. — Խոստովանելու կերպը 369
8. — Արձակումը 372
9. — Հատուցումն կամ ապաշխարանքը 376
10. — Ներողութիւնները . . 384
Գլ. Է. — Վերջին Օծումը 389
Գլ. Ը. — Քահանայութեան Կարգը 393
Գլ. Թ. — Պսակը 401

1. — Պսակի խորհրդի բնութիւնը 401
2. — Պաշտօնեաներն, արարողութիւններն ու պատրաստութիւնը . 404
3. — Պայմաններն ու արգելքները 407

ՄԱՍՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԳԼԽԱՒՈՐ ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆՆԵՐՆ ՈՒ ՔՐԻՍՏՈՆԵԱՅԻ ԻՄԱՆԱԼՈՒ ԿԱՐԵՒՈՐ ԲԱՆԵՐԸ.

Գլ. Ա. — Գլխաւոր առաքինութիւնները 412
1. — Աստուածաբանական առաքինութիւնները 412
2. — Հաւատքը 415
3. — Խորհուրդները 417
4. — Ս. Գիրքը 419
5. — Աւանդութիւնը 425
6. — Յոյսը 426
7. — Սէրը 428
8. — Գլխաւոր կոչուած առաքինութիւնները 433

Գլ. Բ. — Ս. Հոգու պարգևները . 435
Գլ. Գ. — Աւետարանական երանութիւնները 438
Գլ. Դ. — Ողորմութեան գործերը . 445
Գլ. Ե. — Մեղքերը և իրանց գլխաւոր տեսակները 447
Գլ. Զ. — Գլխաւոր ախտերը և ուրիշ ծանր մեղքերը 452
Գլ. Է. — Մարդուս վերջինքը և մեղքից հեռու կենալու համար ուրիշ գլխաւոր միջոցները 456
Գլ. Ը. — Քրիստոնեայն յանձնարարւած ամենօրեայ բարեպաշտական կըրթութիւններ 458

ՎՐԻՊԱԿՆԵՐ

էջ	տող	սխալ	ուղիղ
7	6	Քրիստնեայ	Քրիստոնեայ
49	17	ջրիստոնէական	քրիստոնէական
62	16	արարածանները	արարածները
79	1	Նւիրեալ	Նուիրեալ
90	7	Մարիամ ին	Մարիամին
91	17	Յիսուս	Յիսուս
93	2	թաղւեցաւ	խաչւեցաւ
94	19	պատշած	պատշաճ
,,	20	չեն	չեն
95	1	սովորեցեում	սովորեցնում
102	7	գետնըւին	գլանըւին
105	19	Հօրըց	Հօրից
110	7	հոգուց·	Հոգուց
121	14	մըկըրտութիւնն	մկրտութիւնն
126	21	,	մասերն են,
132	15	այդ	այդ
136	3	Եպիսկոպոսնները	Եպիսկոպոսները
138	12	խնամակալութեան	խնամակալութեան
140	5	հաւասարեն	հաւասար են
143	15	երեկ	երեք
144	13	անհաւատնները	անհաւատները
146	14	Քրիստոսի	Քրիստոսի
,,	18	Նզովում	Նզովւում
147	20	Եկեղեցու ցդուրս	Եկեղեցուց դուրս
152	1	փառաորեալ	փառաւորեալ

էջ	տող	սխալ	ուղիղ
160	14	Աստծուց: խնդրենք	Աստծուց խնդրենք:
162	17	գտնուիլն՝ է,	գտնուիլն է,
165	18	նոնյ	նոյն
171	14	մարդասիրութէամբ	մարդասիրութեամբ
175	9	Ինքը	Ինքը
,,	12	յոյսոյ	յուսոյ
,,	14	թագաւորումէ	թագաւորում է
176	11	խնըդրւածով	խընդրւածով
,,	17	կատրելու	կատարելու
177	3	Իրան: երկնքում	Իրան երկնքում:
179	14	Ին՞չպէս	Ի՞նչպէս
182	14	կոչում	կոչւում
195	1	Առաքելներին	Առաքեալներին
201	3	առաջի	առաջին
202	6	հոգով	հոգւով
223	21	կառաւարւում	կառավարւում
254	15	:	հրամայում է քառասնորդական և ուրիշ պահքի ու ծոմի օրերը պահել:
269	3	Գլուխ Բ.	Գլուխ Ա.
313	1	:	տանից խոստովա-նութեան:
318	15	կպչեյու	կպչելու
326	11	[illegible]աստատել	հաստատել

էջ	տող	սխալ	ուղիղ
334	3	Նրանցերեսին	Նրանց երեսին
342	14	խսստովանել	խոստովանել
352	20	ժառագութեան	ժառանգութեան
362	11	պարագանները	պարագաները
396	2	Քա[illegible]անաներին	Քահանաներին
,,	8	[illegible]արկաւոր	հարկաւոր
,,	10	գլկւին	գլկւէին
406	20	Ամսւսնացեալ	Ամուսնացեալ
413	11	Հաւտքը	Հաւատքը
414	1	Հաւատքով	Հաւատքով
432	16	Հ.	Գ.
,,	,,	Աստծըու	Աստծու
436	4	երկընայիններին	երկնայիններին
466	1	այն, ինչ	այն ինչ.
,,	16	ամենասորբ	ամենասուրբ

(ԱԲՕ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ
1960
ՆՈՐ - ՋՈՒՂԱ

در چمانی رشتی دیده گل بینی قد شکر شکنی تیشه دلکش
دام نهاده بیرون [illegible]
شعاعی علم تو هست شده جام لبت جان بنیاد در نام تو سرو روان

ՄՄ Հայագիտական գրադարան
MAL031908